Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Պեռոդիկ
246

491.99-87
Պ-63

1879

# ՃԱՇԱԿ
# ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

438

## ԾԱՂԿԱՔԱՂ

բ. 152

ՅԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԷ

ՀԱՆԴԵՐՁ ԴՐԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ
ԵՒ ԱՅԼ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
Ա. ՊԻՊԵՐՃԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԱՎԱՓԵԱՆ
1879

491-99-87 27
ող
m- 63
50

# ՃԱՇԱԿ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

## ԾԱՂԿԱՔԱՂ

ՅԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԷ

ՀԱՆԴԵՐՁ ԳՐԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ
ԵՒ ԱՅԼ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Ա. ՊԻՊԵՐՃԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԱՎԱՖԵԱՆ

1879

Printed in Turkey

2010

2002

11732

(ԳԳ19
39)

246-2016
կֆ 246

Ի ՅԻՇԱՏԱԿ

ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ԾԻԿՆՈՋ

# ԼՈՒՍԱԲԵՐԻ ՀԱՐԷՆՑ

ՋԱՅՄ ԱՐՋԱՆ

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԻՐՈՅ

ԿԱՆԳՆԷ

Մ. ՀԱՐԷՆՑ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս Ծաղկաքաղը Հայ Հեղինակաց զանազան երկասիրութիւններէն քաղեցինք . հետզհետէ կարդալով բազմաթիւ գրական գործեր , քերթուածք , բանաստեղծական վէպք եւայլն , խիստ ընտրողութեամբ անոնցմէ ընտիր հատուածներ առնելով գրքիս մէջ ամփոփեցինք , ջանացինք որ քաղուած նիւթերն ոչ միայն խնամալից ըլլան այլ և ընդհանրապէս մաքուր աշխարհաբար և միօրինակ լեզուաւ գրուած : Եւ ահա ի լոյս կ՚ընծայենք ոչ թէ ընթերցասէր հասարակութեան կազմնք մի կատարեալ Հաւաքածոյք ներկայացնելու միտք . որովհետեւ կը խոստովանինք բացորոշապէս որ մեր բոլոր աշխատանաց հակառակ ակամայ դուրս մնացին շատ մը հեղինակներ : Մեր միջոցներն այնչափ անձուկ էին որ անհնար եղաւ ձեռք բերել նոցա գործերը , թող որ կատարեալ Հաւաքածոյք մը պատրաստելու համար պէտք է ազգային ճոխ մատենադարան մը՝ ժողովրդին յատկացած :

Այլ մեր միմիայն նպատակն եղաւ՝ լեցնել այն պակասն որ խիստ զգալի էր ազգին և վարժարանաց մէջ . այսինքն , աշխարհաբար լեզուէ Ծաղկաքաղ մը որ կարելի ըլլար աշակերտաց ընթերցանութեան և սերտողութեան յատկացնել , մանաւանդ որ այսօր աշխարհաբարը մեր ամէն կարգի վարժարանաց մէջ մուտ գտած է :

Թէ եւ կան մէկ երկու աշխարհաբար նմանօրինակ հրատարակութիւններ , բայց սոքա կամ խիստ ընդարձակ են և կամ աւելի երգարան մը , զուրկ դասագրքի ամէնակարեւոր պայմաններէ :

Ինչպէս կը տեսնէ ընթերցողը , այս գիրքը չորս մասերու բաժնուած է արձակ և ոտանաւոր խառն , նիւթոց դասակարգութիւնը

եղած է ոչ թէ անձնիր հեղինակի գործերով, այլ խմբովի համեմատ կարելի եղածին չափ: Շատ տեղեր յաւելցուցինք պրակներ, կենսագրական և այլ ծանօթութիւնք առանց որոց չոր ու ցամաք աշխատութիւն տուած կ'ըլլայինք, թերեւս խոկ անօգուտ:

Աշխարհիկ լեզուէ այսպիսի Ծաղկաքաղ մը կրնայ օգտակարութեամբ կարդալ ամէն Հայ ուսման մանուկ ուսանող պատանին եթէ դաստառուն նորա աստիճանն որոշելով ամէնէ դիւրինէն սկսեալ ուսուցանէ ընտիր հատուածները, ցոյց տայ ոճերը, լեզուին նրբութիւնքը, համեմատէ [illegible] կամ ուսանելին և պարբերութիւնները սերտել տայ. այս միջոցներով միայն կարելի կ'ըլլայ աշակերտ մը մայրենի լեզուին մէջ հրահանգել իր ճաշակն արթնցնել և կրթել:

Այն հաւաքածոյքը քաղած աղբիւրներս մեր աչաց առջեւ ունէինք. Ալիշանի՝ Նուագք ու Յուշիկք. Քամառ-Քաթիպայի՝ Զանազան Բանաստեղծութիւնք. Աբովեանի՝ Վէրք. Պէշիկթաշլեանի՝ Մատենագրութիւնք. Թէրզեանի՝ Զանազան Քերթուածք. Նալբանդեանցի՝ Յիշատակարանք. Խորէնի՝ Սոխակք. Պէրպէրեանի՝ Տաղերք. Դուրեանի՝ Տաղք. Շահազիզեանի՝ Բանաստեղծութիւնք, և ուրիշ բազում՝ գրեանք, առանձին հրատարակուած երգեր, տաղեր եւ այլն:

Բայց ցաւելով կ'ըսենք թէ այս գործը շատ աւելի ստուար հատոր մը պիտի կազմէր եթէ Հաստարակաց կրթութեան ժողովոյ ներկայացնել չի ստիպուէինք, որ խստութեամբ կատարելով իր պաշտօնի գործադրութիւնը բաւական հատուածներ գլխաւորաբար Նալբանդեանցի, Խրիմեանի և Սրուանձտեանցի և այլոց գրուածքներէն ջնջեց, շատ տեղեր հայրենի, ազատութիւն, Հայաստան բառերը միտեց զորս կէտադրութեամբք նշանակեցինք:

Երախտագիտական զգացումը մեր վրայ պարտ կը դնէ շնորհակալ ըլլալ ազգային նշանաւոր բարերար Մեծ. Մարտիրոս Էֆ. Հարէնցի որ իր սովորական առատաձեռնութեամբ պսակեց մեր աշխատութիւնը. դարձեալ,



Մեծ. Բարունակեան Սոսիփանի
» Եսայեան եղբարց
» Թօփալեան Գէորգի
» Շնորհքեան եղբարց
» Վ.ասիլեան եղբարց

որոնք չի խնայեցին իրենց ազնիւ աջակցութիւնն ամէն առթիւ ձեռնտու ըլլալով մեզ:

Ի վերջոյ ընթերցողին ներողամտութիւնը կը խնդրենք մեր թերութեանցը և կը յուսանք որ քաջալերութիւն պիտի տայ մեզ ապագային աւելի կատարելագործելու համար: Ահա այս առեն մենք մեր աշխատութեան վարձքն ընդունած պիտի ըլլանք:

1879 Յուլիս 28
Օրթագիւղ

Ա. ՊԻՊԷՐՃԵԱՆ

# ՃԱՇԱԿ
# ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

---

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ՀԱՏՆՏԻՐՔ

### ՊԱՏՄԱԿԱՆՔ–ԴԻՒՑԱԶՆԵՐԳԱԿԱՆՔ

---

### Ա. ՀԱՅԿ

#### Ա.

*Հայր իմ, Հա՛յկ . . . ո՛վ հարց հարանց մերոց հայր*
*Ո՛վ դու փառաց մեր հայրենեաց հիմն ու ծայր .*
*Ո՛վ որով Հայն այսօր ունի հայրենիք՝*
*Եւ մարդկութեան մէջ կնիք ։*

*Լո՛ւր հա՛յր , ըղձեղ կարդայ յետին քո որդի ,*
*Որ քո շնորհիւդ անուն մի վեհ իւր ունի ,*
*Անուն՝ յոր սիրտ իւր մեծաթունդ որոտայ*
*Եւ ընդ աշխարհ նա պանծայ ։*

*Այո՛ , յաշխարհ համօրէն Հայն է կարող*
*Խրոխտալ , Ո՛վ ինձ պէս ունի վե՛հ ծընող ,*
*Հըսկայ՝ ահեղ , ում առջև քաջք ձեր բոլոր*
*Թըզո՛ւկք են անզօր ։*

Նորա անուան չորս ծագք երկրի ոչ բաւեն ,
Բոյլք աստեղաց յերկնից երես զայն հեգեն ,
Եւ փառք նորա լցեալ զերկիր մեծապանծ
Խառնի ընդ դարս յաւիտեանց ։

Ազգեր , Հայուն թշուառութեամբ մի՛ սոնքայք(1) ,
Թէպէտ բազուկքն արդ ծանրանան ի շղթայք ,
Բայց սիրտ նորա երկաթիւ ո՛չ կաշկանդի . . .
Ազատութեա՛ն է որդի ։

Ազատութիւն և Հայն՝ միմեանց են եղբա՛յր ,
Եւ զերկոսին իսկ միեւնոյն ծընաւ հայր .
Միոյն՝ տըւաւ ժառանգութիւն զՀայաստան ,
Միւսոյն՝ զաշխա՛րհ ամենայն ։

Յառաջ քան զՀայկ՝ տակաւին մարդ ոչ գիտէր
Թէ քաջութիւն ի՞նչ է , զի՞նչ փառք անվեհեր .
Սա՝ փառք կարծէր գազանաց հետ մարտընչել ,
Նա՝ շինել խօլն(2) ըզ Բաբէլ ։

Եկաւ Հայկ՝ նա սովրեցոյց նախ առաջին
Կըռուել վանել զազատութեան թըշնամին ,
Եւ կանգնել՝ ո՛չ թէ անխորհուրդ աշտարակ ,
Այլ ըզփառա՛ց ամբարտակ ։

Ինքն առաջին եղաւ հըզօր ախոյեան
Սուրբ իրաւանց զոր ետ երկինք մարդկութեան .
Նորա ձայնէն ահաւոր նախ արթընցան
Սըրտեր ընդդէմ բըռնութեան ։

Երբ գերութիւն՝ երկրակործան քան հեղեղ
Ծաւալեցաւ քանդեց տիրեց ամէն տեղ ,
Վազեց մեծն Հայկ , և զՀայաստան իւր վըսեմ
Կանգնեց պատուար բըռանց դէմ ։

(1) Հպարտանալ . (2) Անխորհուրդ , անխելք ։



Առաւ ըզնետն . ըզփըրկութեանն գործի՝
Զոր ինքն իսկ Տէր ցուցուց իրեն յերազի ,(1)
Զարդարադատ երկին կոչեց իւր վըկայ՝
Եւ ըզդարերն ապագայ ։

Զիւր լայնալիճ քարշեց բազկաւն ահագին ,
Եւ իբր յամպոց ըզշանթ թըռոյց սուր փըքին(2) .
Շեշտ(3) տապալեց որոտընդոստ ընդ գետին
Ըզբռնաւորն առաջին ։

Եւ Զըւարթունք պահպանք ազգաց ամենայն
Որ սըրտաթունդ խըռներ հանդէս էին յայն ,
Հրեղէն թեւօք յաղթանակին ծափ զարկին ,
Ըզ նախկին Քաջն երգեցին ։

Ապա Հայոց լերանց վերայ եւ Հըսկան ,
Իբր աշխարհի միահեծան տէր իշխան ,
Եւ մինչ երկիր խոնարհեցոյց պարանոց
Առնուլ ըզ լուծ Հօրն Հայոց ։

« Աշխա՛րհ գոչեց , դու իմ բաժին ես այսօր .
« Ահա իմ ձեռս է լինել քո բըռնաւոր .
« Բայց ես ընտրեմ քեզ հայր լինել հարազատ ,
« Հայր մարդկութեա՛ն մի ազատ » ։

Եւ սուր աչվին ձըգեալ յերկիրն այն անհուն՝
Գոչեց հըսկայն , « Ե՛լ աշխարհ յազատութիւն » . —
Լերինք և ծովք որոտացին ի թընդիւն ,
« Ե՛լ աշխարհ յազատութիւն » . . .

Բնութիւն անդէն իբրու թէ նոր նորոգէր՝
Զուարթացաւ քան ի գարուն կենսաբեր ,

(1) Ազգային աւանդութիւն է որ ցարդ կը պատմուի ի բերանս բնակչաց Հայոց ձորոյ ։ Ծ. Հ.

(2) Նետ ։ (3) Ուժով ։

Եւ սիրտք մարդկան նոր շունչ առեալ յորդառատ
Եւ գոչէին « Եմք ազատ » ։

Եւ հաշտութեան կամարն ի գլուխ անդ Մասեաց
Եօթնաճաճանչ եւ և ըղ շող արձակեաց․
Արեւ, լուսին տօնեցին զօր պանծալի
Ազատութեան աշխարհի ։

Իսկ ինքըն Հայրըն ազատութեան աշխարհի՝
Ի փառաց այն բարձրութենէն գերարփի՝
Ցոր ոչ յառաջ ոչ յետոյ ոք մահացուաց
Երբէք հասնել ժամանեաց ։

Ցայն երկնամերձ գահաւանդէն ի խոնարհ
Վըսեմափայլ յօնօք նայէր ընդ աշխարհ,
Եւ ի վեհին ակնարկութիւն և ժըպիտ
Փայլակք ընկան խիտ առ խիտ ։

Ամպ լուսավառ շուրջ ըզՀըսկայն պարփակեց,
Ազատութեան Ոգին զնա պըսակեց․
Նա՝ վերջին մ'աղ ի Հայաստան նայեցաւ . . .
Ցանմահութիւն ծածկեցաւ ։

Բ.

Ո՛վ հայրդ Հայոց, երբ յերկնակէտ քոց աստեղաց
Ըզ յօնս շարժեալ լուսազգեաց․
Եւ սըրտաթունդ ի վայր նայիս դու յայն երկիր
Զոր քո նետով փըրկեցիր․

Տեսնես ըզՁորն-Հայոց՝ փառացդ հանդիսարան,
Բելեանցն ոսկոց արդ կոխան . . .
Տեսնես զանյաղթ ձեռացդ ըզ գործ կուռ Հայկաշէն
Ցերկիր կործան ի բաղդէն․



Տեսնես որդւոց քոյոց ի ձեռս՝ ոչ նետ սուսեր,
Այլ ժանգահար շըղթաներ . . .
Տեսնես զազատ որդիսդ՝ անկեալ բազմաոըխուր
Որդւոց Քամայ առաթուր . . .

Հա՛յր, ինչ արդեօք ըզգայ քո զինչ սիրտ որդեսէր
Ցայսչափ աղէտ ցաւոց մեր,
Ցայսչափ ահեղ թըշուառութիւն բազմադարեան
Ցոր կորընչի Հայաստան . . . .

Եւ զինչ ասես, Հա՛յր, ապերախտ այն մարդկութեան
Որ երախտեացդ անբաւ՝ փոխան,
Ըզ քո զաշխարհ՝ զազատութեան բուն խանձարուր՝
Ի գերութեան արկ յանուր ։

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . .

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊ. ՆԱՐՊԷՅ *Ստուերք Հայկականք*

---

## Չ. ՀԱՅ ՔԱՋՈՐԴԻ

Ապառաժուտ լերան մը կող
Ցեցեալ ի քար գերեզմանի,
Աչք մերթ յերկինս և մերթ 'ի հող
Խարտիշագեղ կայր պատանի․
Ո՛վ դու որդիդ լերանց հովտաց
Ինչո՞ւ այդպէս սիրտդ է ցաւած ։

Կուզես որ մեծ փոթորկեալ ծով
Մատուցանէ քեզ մխիթար

Կոհակաշարժ իւր լարերով
Երգեալ 'ի շունչ մրրրկավար .
Ո՛վ դու որդիդ լերանց հովտաց
Ինչո՛ւ այդպէս սիրտդ է ցաւած :

Կուզե՞ս որ քեզ ահեղաշուք
Խնդայ կամարն աստեղց անթիւ ,
Եւ բընութիւն պայծառ զարդուք
Ժըպտի ծաղկամբ և զեփիւռիւ .
Ո՛վ դու որդիդ լերանց հովտաց
Ինչո՛ւ այդպէս սիրտդ է ցաւած .

Կամ փափկագոյն այլ ըսփոփանք
Միթէ կուզե՞ս մօր քաղցուենի
Եւ սիրուհւոյ անոյշ գգուանք
Որ քու կսկիծդ փարատի .
Դեռ ի՞նչ կուզես , ո՛հ մի՛ ծածկեր . . .
— Կուզե՛մ . . . . . . . . . .

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ(1) . *Մատենագրութիւնք*

(1) Մկրտիչ Պէշիքթաշլեան (1829—1868). Երեւելի բանաստեղծ, Մխիթարեանց վարժարանի համբաւաւոր աշակերտներէն մին՝ ուր իւր ուսումն աւարտելէն յետոյ Կ. Պոլիս գալով զանազան տեղեր հայերէն լեզուի դասախօսութեան պաշտօն վարեց մեծ յաջողակութեամբ եւ արժանաւորութեամբ , որով գրեթէ իւր կեանքը մաշեցուց : Անուանի է սա իւր քերթուածներովը եւ նա մանաւանդ հայրենասիրական երգերովը որոց ամէն մէկ տողին մէջ սրտին անհուն կրակը եւ հայրենեաց խանդավառ սէրը կը փայլին : Ոճը գեղեցիկ եւ ներդաշնակ է , տեղ տեղ ալ վսեմ ։

Պէշիքթաշլեանի յիշատակն կրկին անմահացած է որ իւր մէկ քանի սրտառուչ ողբերգութեամբքը հայկական Թատրոնին հիմնադիրը եղաւ ։

## 3. ՄԱՀ ՔԱՋՈՐԴԻՈՅՆ(1)

Դու զի՞նչ խնդրես մայր իմ անոյշ .
Ե՛կ , մի՛ դողար , մօտեցի՛ր հոս .
Անլաց աչօք դիտէ զորդիդ
Ու իւր վէրքերն արիւնահոս :
Խուժից մայրեր թող լան՝ ու դուն
Ուրախ լուրեր տար . . . . :

Ինչպէս երբեմն որրանիս մէջ
Կակուղ ձեռքով փայփայելով
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր
Իբրեւ հրեշտակ նըւագելով ,
Զիս հանգչեցու 'ի հող՝ և դուն
Ուրախ լուրեր տար . . . . :

« Նորեկ որդւոյս կենացն արև
Ձեզի համար փայլի՛ Հայեր »
Այսպէս յայնժամ դու կերգէիր

(1) «1862 Թուականի վերջերը, Զէյթունի անցքերէն անմիջա-
«պէս յետոյ, այդ երկրի նշանաւոր Տէր Մովսէս քահանան, որ ե-
«րեսփոխանութեան պաշտօնով Պոլիս եկած էր , մեր տունը հիւր
»եղաւ . դորա սրտաշարժ պատմութիւնները լսելու համար մեզ մօտ
«յաճախող երիտասարդների թիւը օրէց օր շատանում էր : Սովո-
«րականից առէպ յաճախողը եւ ժամերով Տէր Մովսէսի մօտ նըս-
«տողը Պէշիքթաշլեանն էր ։ Մի սրտաշարժ տեսարան էր հայ
«մարդու համար , երբ Տէր Մովսէսի արած Զէյթունցոց նկարագ-
«րութիւնը Պէշիքթաշլեանի խոշոր աչուըները արտասուօք կը լե-
«ցնէին եւ հետեւաբար այդ երկու հայասէր անձանց հոգւոյն կըր-
«քերը կը գրգռէին : 1863ի սկզբում , ձմեռային մի ցուրտ երե-
«կոյ էր , Տէր Մովսէսի հետաքրքրական վէպերը գրաւած էին
«չորս կողմը խմբուած երիտասարդների ուշադրութիւնը . Նա պատ-

Օրօրոցիս նստեալ քովեր ·
Անոնց համար չիջաւ, և դուն
Ուրախ լուրեր տար . . . . :

Կարմիր կայլակք ցայտին վէրքէս
Սակայն մայր իմ նայէ չորս դին,
Զարիւնըռուշտ ոսոխքն տես
Հազարներով փռուած գետին,
Կերաւ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար . . . . :

Մըռընչեցին ինչպէս վիշապ
Եւ մեր վրայ յարձակեցան,
Ո՛վ Հայրենիք, 'ի հուր 'ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան
Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար . . . . :

Ու ծափ զարկին մեր հարց ոսկերք
Զի չէ մեռած Հայոց կըրակ,
Ու ցնծացին այնչափ զոհեր
Զի լուծաւ վրէժ յարեան վըտակ ·

---

«մում էր մի սիրտ ճմլող անց, թէ ինչպէս մի յուսահատ մայր,
«խեղճուկ հայ կին, գիշերային լռութեան մէջ, պատերազմի դաշ-
«տի վերայ փնտռում էր իր միակ որդւոյն դիակը, որ օր մի ա-
«ռաջ մեծ ջարդ տուած էր իր հայրենեաց թշնամեացը· Խորին
«լռութեամբ եւ մորմոքած սրտերով լսում էինք այդ պատմութիւ-
«նը, տպաւորութիւնը շատ մեծ էր . . . : Նոյն գիշերը հիւրերից
«մի քանին մնացին մեր տունը, որոնց թւում էր նաեւ Պէշիք-
«թաշլեանը. միւս օրը, նախաճաշիկի ժամանակ, Պէշիքթաշլեան
«կարդաց մի կտոր թղթի վերայ մատիտով գրած սոյն բանաստեղ-
«ծութիւնը որ գրած էր Տէր Մովսէսի առջի գիշերուան ըրած տըխ-
«րագին պատմութիւնների ազդեցութեան ներքեւ :

ՍՐԲՈՒՀԻ Ա. ՆՐԷՅԵԱՆ



Խնդաց Մասիս, մայր իմ և դուն՝
Ուրախ լուրեր տար . . . . :

Վերջին համբոյր տամ քեզ մայրիկ
Հատուցանես զայն սիրուհւոյս ·
Վերջին անգամ գրկեմ մեր հող
Որ արդ կիջնամ 'ի ծոցն անլոյս,
Խաչ մը տնկէ վըրաս, ու դուն
Ուրախ լուրեր տար . . . . :

---

## 4. ԹԱՂՈՒՄՆ ՔԱՋՈՐԴՒՈՅՆ

### ՊԱՐ ՀԱՅՐԵՆԱԿՑԱՑ

Ոչ փող զարկինք ոչ արձագանք լեռնասոյզ
Սարէ 'ի սար չարաշըշուկ տարին լուր
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտայոյզ
Երբ պատանւոյն բացինք մըռայլ փոսին դուռ :

Գիշերական մունջ ըստուերներ շուրջ կային
Երբ հրացանի կոթով ըզ հող փորեցինք
Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին
Սուգ էր պատեր ըզ դաշտ բըլուր և երկինք,

Պէտք չէր դագաղ, և ոչ ճերմակ պատանքներ
Որով գոցուէր ազատորդի քաջորդին ·
Նա յետ մարտին կարծես հոգնած կու հանգչէր
Ու վերարկուն կարմիր բաւէր իւր անձին :

Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցեց
Մեր քաջ Տէրտէրն, զինուոր Հայոց ս'Աստուծոյ,
Գովեց ըզ մահն և զքաջութիւնն իւր օրհնեց
Թոյլ չի տըւաւ հառաչ մ'ու ճիչ հանելոյ :

Բայց երբ գըլուխն 'ի բարձ դըրինք հողաչէն
Տեսանք ըզգեղ ճակտին ու վէրքըն պայծառ,
Ո՛վ պատանեակ, ըսինք ամէնքս մէկ բերնէն
Վասն հայրենեաց մեռար, դու չմտ ապրեցար:

Գընա՛ զրուցէ հայկազարմից մեծ ոգւոց
Որ կան այստեղ ազատ ու քաջ դեռ Հայեր,
Որոնք 'ի բիւր պատերազմաց թէպէտ խոց
Մէջ ամպրոպաց 'ի ժայռ կանգուն են կեցեր...

Մէյ մ'ալ քամի յանկարծ փըչեց ցրտաշունչ
Լուսնին շողերն եկաւ գոցեց մըթին ամպ
Ու մեր սարերն զերթ ուրուականք անմռունչ
Սև գլուխնին տնկած դիտեն ապշութեամբ:

Յայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք իւր վրան.
Խաչ մը դրինք, ինչպէս իւր մօր պատուէր ետ.
Ո՛չ այլ շըքեղ արձանագիր ոչ տապան,
Զէնքըն մինակ թողուցինք իւր փառքին հետ,

Մ. ՊԷՇԻՔԹԱՇԼԵԱՆ *Մատենագրութիւնք*

---

## 5. ՀԱՅ ՔԱՋՈՒՀԻՆ

Այն ձուր կերթայ գըւարթագէմ
Եւ սուրալով լերանց վըրան
Փափուկ թեթեւ ոտիցն 'ի ճեմ
Ուսից վըրայ հերքըն ծըփան.

Արդեօք չքնաղ եկմէ դարուն
Կամ աւետիս ետ ծիծեռնակ
. . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . .



Եւ նա խնտում և զարդարուած
Ու նայելով աշխուժաբար
Կերթայ ընդ պարս ընկերուհեաց
Քաղել նարկիզ և նունուփար:

Սակայն ոչ ոք կայ. իրեն քով.
Ձայն մը լսուի, բայց ծեծուան չէ.
Թեւիցը տակ չունի կողով
Ուր որ ծաղկի փունջեր շարէ:

Բօթ մի փըչեց ինչպէս մրրիկ,
Ու այն տեղի անտառներուն.
Ցաղթահասակ դողան մայրիք.
Ցցուեց առիւծ բաշ[1] գալարուն[2]:

Այն բարձրաբերձ սարից պահպան
Ազատութիւնն' եւ սըլացաւ,
Հովտաց դաշտաց հիւղից վըրան,
Թեւատարած հովանացաւ.

Արիք 'ի զէն. խուժն ահարկու
Լողաց եղբարց յարեան 'ի ծով,
Արդ 'ի մեր կոյս վազըս կառնու
Արիւնաթաթախ ճիրաններով:

Ու կանգնեցան հսկայաբար
Հազարաւորք աչք բոցահատ
Իրենց ահեղ սարից հաւսար
Բարձրացուցած գոռող ճակատ.

Բայց ձուր կերթայ այն գեղադէմ
Աղջիկ թռուցեալ լերանց վըրան,
Փափուկ թեթեւ ոտիցն 'ի ճեմ
Ուսից վըրան հերքըն ծըփան.

---

(1) Մազ. (2) Ոլորած.

Ի՞նչ է այն որ կուրծքըն սըխմէ
— Բոցանըշոյլ զըրահ մի լայն.
Ի՞նչ գգուանօք նա համբուրէ.
— Ճակատամուղ(1) երկաթն է այն։

Նա այլ գգուանք և այլ համբոյր
Կուսան անբիծ՝ դեռ չ'գիտէր,
Երախայրի սրտին 'ի բոյր
Ցոլաց միայն ազգին իւր Սէր։

Օրհնեալ անմահ դու քաջութիւն
Պըսակ լանջաց Ազատութեան,
Որ զհրեղէն վառես Ջուարթուն
Եւ զսիրտ քնքուշ Հայ աղջըկան։

Դու մէկ օր մ'ալ յանհուն թեւեր
Պիտի թռչիս . . . . . . . ,
. . . . . . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . .

Տես ինչպէս քաջ կոյս Հայկուհին
Խրախոյս կարդայ զոռ բարբառով,
Յառա՛ջ, մօտ կայ ժանտ թշնամին
Զէնք վանեցէք կոտորածով։

Տեսին Հսկայք զայն ահաւոր,
Ծափ ըղձափի մեծ աղաղակ
Որոտացին զվիհըս խոր,
Կարծես բոմբիւն հանեց կայծակ։

Հայկուհին է. տեսէք ահա
Կրակներ թափին իւր աչքերէն
Հայկուհին է որ թռչի գայ
Ինչպէս հրեշտակ ըսպառազէն։

(1) Պատերազմական։



Որպէս շանթից հրավառ նիզակ
Զարնէ կատափ(1) մեր յաղթ լերանց,
Այնպէս զարնենք այն աւազակ
Խուժին գըլուխն արիւնախանձ։

Ինչպէս մղեալ 'ի փոթորկաց
Գլորին ժայռից մեր հատորներ,
Հապա, այնպէս մեր թշնամեաց
Իջնանք թաւալ օրհասաբեր։

Հայկուհին է, կորիճ եղէք,
Հայկուհին տայ խրախոյս յորդոր,
Ժանտից վըրայ հուր տեղացէք
Մինչեւ մոխիր դառնան բոլոր։ —

Ու շանթեցին. հարցէք, ուր է
Այն բազմամբոխ խուժից բանակ,
— Սեւափրփուր շունչն արձըկէ
Հայորերոյն(2) ոտքերուն տակ։

Այդ կոյսն աղուոր ուստի կուգայ
Թռուցեալ զըւարթ լերանց վըրան
—Պատերազմէն նա կու դառնայ,
Հերաց վըրայ դափնիք շողան։

Մ. ՊԷՇԻՔԹԱՇԼԵԱՆ *Մատենագրութիւնք*

---

## Ե. ՏԱՃԱՏ

Որոտընդոստ թէ շառաչեն փոթորիկք
Կամ թէ խաղաղ շողայ լուսին յօդ պայծառ
Յանհուն 'ի ծով աստանդական նաւաստիք
Դարձընեն զաչըս յԱստղըն անմուտ լուսավառ։

(1) Գլուխ, հոս՝ լերան գլուխ, սար։
(2) Հայորեար, հայ մարդիկ, հայ քաջեր։

Այսպէս ընդ նսեմ
Երկնիւք տարադէմ [1]
Ի վիշտս յարածուփք
Հայրենեաց մանկունք
Քեզ դարձնեն զաչքեր
Դիւցազն անվեհեր . . . :

Դու լուսապսակ յերանաւէտն 'ի խորան
Չես ինչ կարօտ մեր մրտենեաց կամ երգոց .
Բայց մենք՝ Տաճատ , անունդ առած մեզ վահան
Կուզենք քալել հետեւելով քու հետոյ .

Դժգոյն են մեր ծաղկունք
Բայց տես մեր արցունք . .
Զաւակք են անտէր
Երկրին յորդ սէր ·
Արիւնդ ես թափեր
Դիւցազն անվեհեր . . . :

Ա՜հ . . . քու Ստուերդ Աւարայրի դաշտերէն
Կ'բարձրանայ և կ'գոչէ մեզ «Որդիք
Սէր 'ի սրտի դիմեցէք . . . ձեզ կ'սպասեն
Աստ հայրենիք՝ և անդր 'ի վեր ձեր նախնիք» . . :

Մեք այժ կ'երդնունք
Ի պերճ քո անուն
Քեզի զուգընթաց
Զոհիլ հայրենեաց . . .
Տո՛ւր մեզ քաջալեր
Դիւցազն անվեհեր . . . .

Թ. ԹԵՐԶԵԱՆ

(1) Օտար .

# 7. ԱՐԱՅ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՆՈՒԱՐԴ

Արեւն էր ծագել , արեւ հայկական ,
Կարմրուկ ցոլքերով նորահաս գարնան ,
Մասիսու զարկեր ճակտին ըսպիտակ
Ու շուրջ կը պատէր վարդաձոյլ պըսակ .

Թըռչնոց արթընցան երգեր քաղցրոլոր ,
Ու լցին լուիկ դաշտերն ու ծործոր ,
Ծաղկունք վերուցին աչեր ցօղալից .
Ու ծաւալեցին բոյրեր խնկալից :

Արամենակայ սօսեաց ծայրերէն՝
Անուշակ քամին անցաւ հեզօրէն .
Երասխայ ջըրերն իջաւ պըսպըղուն
Ու գըլտորտըկեց ալիս ծըփծըփուն : —

Այն նըւիրատունկ ծառոյն ի սաղարթ
Ըզգիլս իւր յառեր պարման [1] մի գըւարթ ,
Մըտիկ դընէր զինչ սըլուըլան սօսիք՝
Եւ զինչ պատասխան տան գետոյն ալիք :

Գլուխն ականակուռ դըրած սաղաւարտ ,
Եւ լանջ կը փայլէր ի զրահ բազմամարտ .
Հըզօր յաջն ունէր տէգ մի զինչ գերան .
Ու մէջքն էր կապել ըզթուր ընդ մահուան :

Հանց [1] աղեղ լարած թուխ լայն յօնքեր ,
Ծակատուն հովտին կարծես ցանկ պատեր ·
Ու գռուղ հոպոպիք [3] ոլրելով սեւ սեւ՝
Կը ծըփան մարմար վըզին ծաղկաձեւ :

(1) Կտրիճ տղայ · (2) Խոպոպիք , մազի հիւսուածք ·
(3) Հանգոյն , նման , այսպէս ·

*Իսկ երբ բոցափայլ աչվին եռանդնոտ*
*Վեր առած հայեր յարփին անաղօտ ,*
*Կարծես դէմ ընդդէմ յերկիր և յերկին*
*Զոյգ մի արեւներ յիրար պըշնուին : —*

*Այն քաջին ուսոց կըռթընած քնքուշ՝*
*Կին մի տեսնըւէր քան շուշանն անուշ ,*
*Ինչպէս ձիւնաթոյր հեզիկ աղաւնի ,*
*Թեւերն ամփոփած բոյնին քով թառի :*

*Արշալոյսն երբ գայ այգուց ցօղազարդ՝*
*Ոչ այնպէս փափկիկ ճակատն ունի վարդ ,*
*Ինչպէս նէրա սուրբ այտերուն վերան՝*
*Բոսոր ու ճերմակ վարդեր կը ցոլան :*

*Կապոյտ աչուըներն՝ են ջինջ աւելի*
*Քան թէ այն գարնան մաքուր դէմք երկնի ,*
*Ո՛չ չըկայ քըրքում մի այնպէս սիրուն՝*
*Որ նորա յաղթէ ոսկի մազերուն .*

*Զէ, նա մահացու կարծես թէ չէր կին ,*
*Այլ երկնաբընակ հրեշտակն էր քաջին ,*
*Որ կընոջ առեալ գողտրիկ կերպարանք,*
*Լոյս տալ աչքերուն, սըրտին՝ ըսփոփանք :*

*— Անուշակ քամին իջաւ մէյմըն այլ*
*Եւ ծածանեցան ծամերն(1) ոսկեփայլ ,*
*Ու երկու կաթիլ այն ծաւի(2) աչքէն*
*Ընկան ինչպէս շիթք ցօղոյ երկընքէն*

*Լըռեցին թըռչունք , և սօսեաց քընքշանք(3)*
*Լռեցին կարկաջք , սոյլ և արձագանք .*
*Կարծես թէ բնութիւն լըսել փափաքէր*
*Այն վեհ տարփածուաց ա՛հ վերջին խօսքեր .*

(1) Մազ , մազերուն զարդը .   (2) Անուշաչուի , կապուտիկ .
(3) Գգուանք :



Բ.

246-2016

*Քաջն Արա ասէր .*

*«Նուվարդ , ո՛հ , տեսեր*
*Ի՞նչպէս ըղձըլուխ շարժեն սօսիներ .*
*Հայոց դիւցազանց են այն ըստուերներ՝*
*Որ ջուրբք Երասխայ կուտան ինձ հրաւէր :*

*«Նուվարդ , ես կ'երթամ , բայց քեզի համար .*
*Հրեշտա՛կ իմ անուշ , մի՛ դու ո՛հ , մի՛ լար . . .*
*Քո սէրդ է անբիծ առաջնորդող գիս ,*
*Ու սէրդ այլ ես հետ կը տանիմ սըրտիս :*

*«Նուվարդ , թէ չ'երթամ մահուան դիմագրաւ .*
*Թէ ես չը վաղեմ թուր ձեռքս ինքնարշաւ ,*
*Զէ , Արայդ չ'ըլլար քեզի արժանի ,*
*Ո՛չ վըսեմ սըրտիդ՝ ո՛չ այս արցունքի . . . :*

*«Նուվարդ , ո՛հ , մի՛ լար . թէ կ'ուզէ երկին*
*Որ Արա մեռնի այս պատերազմին ,*
*Արայի արիւն սէրըդ չնմարեր ,*
*Այլ կարմրուկ կընիք դընէ ի սէր մեր :*

*«Թող, հրեշտակս, երթամ . . . պարտքըս լընում արդ,*
*Քեզ չեմ լըքաներ , քովդ եմ ես , Նուվարդ .*
*Երկընքէն կ'իջնեմ սիրտըդ յոգւոյս թեւ ,*
*Ինչպէս ցօղն անուշ ի վարդին տերեւ :*

*«Ու թէ որ չ'ըլլաս յաշխարհ բարեբաստ՝*
*Ըղձաս բընակցիմք յերկնից առագաստ ,*
*Թեւ թեւի կուտամք ու սրանամք ի վեր՝*
*Զինչ երկու ծաղկանց այգասփիւռ հոգեր . . . »*

*—Անուշակ քամին իջաւ մէյմըն այլ՝*
*Ծըփեցան հարսին հոպոպք ոսկեփայլ ,*

2219 (3)

Կապոյտ աչքերէն արցունք չիտ առ չիտ
Ի ծոց փեսային թափթըփին մարգրիտ։

Լուռ կային թըռչունք սօսեաց յոստ կանաչ,
Լուռ կացել Երասխ, արգիլեր կարկաչ.
Միայն Արայի կըլըւին գըգուանք.
Ու քընքուշ հարսին ըլխոր հեծկըլտանք։

Գ.

Եւ Նուվարդ ասէր.

«Ո՛վ Արա, Արայ,
Թող յետին անգամ ամուսինըդ լայ.
Թըշուառ ամուսին՝ յորոյ քեզ ծոցէն
Երկին և երկիր նախանձով խըլեն...

«Եւ ինչպէս չըլամ՝ որ իմ արշալոյս
Դարձաւ արդ գիշեր ու կը մարի յոյս...
Արա՛, դու կ'երթաս, չ'ուզես որ վերջին
Վերջին արցունքս այլ տանիս ի յերկին։

«Ո՛հ, դու ինձ համար, փեսայդ դիւցազուն,
Կը զոհես թագեր ու կենաց գարուն...
Ես ինչ տամ քեզի փոխարէն, Ա՛րայ,
Որ այսքան սիրոյդ արժանի ըլլայ...» —

« — Սէր միայն, գոչեց Արայն գեղեցիկ,
Սէր միայն, Նուվա՛րդ, ինձ տուր յիշելիք,
Ես գոհ, ո՛վ հրեշտակս, գոհ ես կը մեռնիմ
Թէ գիտնամ մընալդ ինձ հաւատարիմ։

«Թէ գիտնամ՝ որ իմ գերեզման, Նուվա՛րդ,
Պիտի չըմընայ անոք և անվարդ.
Զոր հողն իմ թըրջի սիրոյդ արցունքով,
Սառ քա՛րն իմ ջեռնու սիրո՛յդ համբուրով...» —

Անուշակ քամին իջաւ մէյմըն այլ՝



Ծըփեցան հարսին գանգուրք ոսկեփայլ.
Ծաւի աչքերէն արցունք կաթկաթին,
Ինչպէս այգուն ցօղ ի թերթեր վարդին։

Լուռ կային թըռչունք, և Երասխ լըռեաց.
Միայն թէ սոխակն անտառին սօսեաց՝
Երբեմն արձագանգ կուտայր ըլխրագին
Վերջին հեծութեանց հարսն ու փեսային։

Դ.

Արեւն երկնից անդ բարձրացել ի կամար,
Կըրակ ու բոց յերկրին երես կը տեղար։
Ամենայն ինչ վառեր էր յուր ջերմութիւն,
Ու առտըւանն էր մարել զով լըռութիւն.

Յ'Արարատայ կանաչագեղ դաշտորայս
Երկաթազէն ծածանին զօրք ընդ ըսպայս,
Ինչպէս հասուն ցորենի արտ ոսկէջով(1)
Ցանկարծ ծածկի սեւ մարախին գունդերով.

Քամին իջեր Մասեաց մըռայլ սարերէն,
Կը մըռընչէր սաւառնացեալ դրօշներէն,
Ցորս էր նախշուն(2) Շամիրամայ Աղաւնին(3)
Եւ Ասորի ձայնք աղխաղուր(4) հընչէին։

Ձայն դիւաշունչ բորբառ առջի անգամ էր
Որ Երասխայ լըռիկ հովիտ կը լըսէր,

(1) Ոսկեգոյն ճիւղերով, հատիկներով։

(2) Գոյնզգոյն, սիրուն։

(3) Յոյն պատմագիրք կ'աւանդեն թէ Շամիրամ իւր դրօշակաց վրայ ի նշան իւր անուան աղաւնի մը նկարել տուաւ, զոր ինքնակալք Ասորեստանեայց պահեցին։ Ծ. Հ.

(4) Կոշտ։

Ու այն նախկին էր որ լերինք հայկականք
Ասորեստան գինուց տային արձագանգ ։

Այն սեւագունդ զօրքերու գլուխն էր անցած
Կին մ'արուատիպ՝ թագով իւր հերք պըսակած ․
Բանակն ողջոյն դողայր ի մռունչ իւր ահեղ ,
Աչուըներէն ցոլայր վըրէժ բոցահեղ ։

Ինչպէս մի գետ որ լեռներէն սուրալով
Կատաղութեամբ կ'իջնէ դաշտեր աւրելով ,
Այսպէս և սիրտ նէրա լըցուած սեւ սիրով
Գայր Նինուէէ Արայի վրայ փըրփրելով ։

Գոչէր ․ «Թէ այն անգութ Արա գեղեցիկ
Չ'ուզեց լըսել իմ սիրալիր ձայն հեզիկ ,
Թող արդ լըսէ գինուց իմ ձայն մահաբեր ,
'Ի երկիւղ շարժէ զսիրտ իւր՝ թէ ոչ շարժէ սէր ։

«Քաջեր , ահա երկիրն Հայոց բազմաճոխ ,
Ձեզի աւար առէք , թափէք հին ձեր ոխ ․
Ինձ պահեցէք միայն Արայն գեղեցիկ ․
Արայի սիրտ լոկ զիս կ'ընէ երջանիկ» ։ —

Երբ Շամիրամ Արա անուն կը հընչէր՝
Սիրոյ կըրակ մը լըպիրշ այտքըն վառէր ,
Սիրտը թունդ թունդ կ'ելլէր կ'իջնէր ծուփ ի ծուփ
Ինչպէս ծովուն ջուր հողմավար շուփ ի շուփ

Ահա հասեալ նորա յերկիր , նորա մօտ ,
Ու աւելի այլ բորբոքէր ի կարօտ ․
Չէր գիտեր երբ այն ցանկալին ժամ հասնէր՝
Որ սիրտն ի սիրտ իւր սիրելոյն բաբախէր ․ ․ ․

—Չէ , Շամիրամ ․ խաբէ քեզ յոյս քո և զէն ,
Քո պիղծ շըրթունք՝ նորա շըրթանց համար չէն ․



Սէր նորա սուրբ՝ արծաթափայլ ջինջ առուակ ,
Ի՞նչպէս սըրտիդ լըցվի ի խորշ սեւ յատակ ․

Պիտի տեսնես ըզնորա դէմք գեղեցիկ ,
Բայց դալկահար՝ ինչպէս չիրմացըն ծաղիկ ․
Պիտի տեսնես և զայն աչեր սեւ ու սեւ ։
Բայց երբ մահուան յայն տարածի հողաթեւ ․

Պիտի և սիրտն այն շօշափես , սիրտ զըւարթ ,
Բայց ինչպէս յանկարծ ի սառոյց պատեալ վարդ ․
Տի չըտրոփէ նա քո սըրտին դուժ(1) սիրով ,
Ու սէր նորա պիտի չըտայ սըրտիդ զով ։

Այն մաքրակէզ սիրտ և շըրթունք և աչեր՝
Ուրիշ կընոջ հարըստութիւն և զարդն էր ․
Նէրա գըրկէն զայն խըլեցեր , անգո՜ւթ կին ,
Ա՛ռ և խընդա ․ ․ ․ ի՞նչ է առածդ , ցո՜ւրտ մարմին ․

## Ե․

Իրիկունն էր եկել , արեւ ի մար մըտած ,
Վերջին մըն ալ կը բարեւէր ըզգլուխ Մասեաց ,
Որ տըխրագին կը տարածէր իւր ըստուերներ
Ջերթ դագաղին ծածկոյթ ձորերն ու հովիտներ ։

Արարատայ դաշտ խընկաբոյր՝ որ յառաւօտ՝
Կարմրուկ 'ւ ոսկի ծաղկօք խայտայր կանաչ յարօտ ․
Արդ ողողած արեան գետովք էր ահաւոր ,
Ու ծածկըված գինուք դիօք կոտոր կոտոր ։

Հօն որ թըռչնոց կըլըսվէր նախ հեշտ ճըռուըռնչիւն՝
Վիրաւորաց արդ կը հընչէր ի թառաչիւն(2) ․ ․ ․
Ապա և այն դադարեցան ճիչք , մըրմունջք , ահ ,
Ու ծայրէ ծայր թագաւորեց լըռութեամբ մահ ․

(1) կատաղի , սաստիկ ։ (2) Սաստիկ հառաչանք ։

Այլ որպէս կռինչ[1] տըխուր բուին սեւագուշակ
Որ ընդհատէ գիշերն ի մունջ իւր սառնօրակ ,
Երբէք երբէք հառաչանաց լըսուէր մի ձայն .—
Շամիրամայ սէգ թագուհւոյն ողբումն էր այն :

Ցոսկի գահոյս դըրած մարմինն էր Արայի՝
Ու ծիրանեաւ շուրջ պարփակեալ քաջն արքայի .
Խունկ և հալուէք բուրեն ծըխեն հոն բարդ ի բարդ.
Աստուածաբար պատուել զայն վեհ երիտասարդ :

Ահա դիմացն իւր գեղեցիկն այն դիւցազուն՝
Որոյ սիրովն նէ չըգիտէր հանգիստ և քուն .
Եւ թէպէտ արդ՝ իբր ըզկոտրած անկեալ շուշան ,
Բայց և կոտրածն իսկ այն շուշան՝ էր աննըման :

Գըլխուն պըսակ նետէր գետին հէգ Շամիրամ,
Մազ կը փետէր , կ'անիծէր զօրն այն և ըզժամ
Յոր վառեցաւ ի սէր անբիծն իւր Արայի ,
Սէր՝ որ թըշուառ ըզնէ ըրաւ , որբ և այրի . . .

—Բայց Արայի հոգին զըւարթ յամպ լուսահրատ՝
Երբ իւր մարմնոյն քով լըսեց ողբն այն յուսահատ ,
Եւ ըզվաւաշ[2] տեսաւ գըշխոյն՝ քըստմընեցաւ . . .
Բացաւ թեւերն ու վեր յերկինըս սըլացաւ :

Զ.

Գիշերուան մութն հասաւ խաւար թեւերով.
Ու մառախուղ երկնից երես պատելով,
Արարատայ մահու դաշտին տեսարան
Ծածկեց որ մի յայն Հայ աստղեր թալկանան :

Հով մը փըրթաւ յանկարծ ամպոց խորերէն ,
Իջաւ անցաւ սօսեաց ծըփուն ծայրերէն .

(1) Կռկըռալու ձայն : (2) Հեշտասէր , պիղծ .



Եւ շառաչմունք ահեղալուր հընչեցին ,
Կարծես թէ մունջք ուրուականաց լըսուէին :

Եւ Երասխայ անդուստ ալիք փըրփրելով ,
Սօսեաց կարծես թէ պատասխան առնելով,
Լալահառաչ դընան որ զգոյժ այն օրուան
Տանին բոլոր հառաչեցնեն Հայաստան :

Ո՛չ . — տակաւին այնպէս տըխուր մի գիշեր
Մեր Հայրենեաց վերայ երբէք չէր պատեր .
Դեռ աղետից՝ էր անսովոր Հայաստան
Որ իւր բաժին պիտի լինէր անբաժան .

Խեղճ Հայաստան , այն օրուընէ մինչ ի մեր
Քանի՜ քանի անգամ տեսաւ իւր դաշտեր ,
Ձոր , գետ , լեռներ ծածկած յորդւոց իւր մարմին
Ո՛րչափ լացաւ . . . լայ . . . և տի լա՛յ տակաւին . . .

Է.

Բայց ո՞վ է նա որ՝ հեռուն կ'երեւի ,
Մահու դաշտին մէջ՝ զերդ շուք յերերի .
Արդեօք նա կենաց հրեշտա՛կ լուսաբոց ՝
Որ ըզյարութիւն գայ տալ մեռելոց :

—Արային է նէ այրի ամուսին ,
Դէմքն է շողշողուն հանց գարնան լուսին .
Այլ ո՛հ , լուսնի պէս տըխուր և թօնուտ[1] .
Եւ յարցունք լըցված են աչք իւր կապուտ :

Թէպէտ զիականց նէ ման գայ միջով,
Սակայն աներկիւղ թըւի 'ւ անխըռով.
Սէր՝ իւր կանացի սըրտէն վախ մերժեր,
Ու մեռելոց մէջ է զինքն իջուցեր :

(1) Թաց :

Թողեալ զարքունիս և ըղձունն անոյշ
Գայր յԱրմաւիրայ ոտիւքըն քընքոյշ.
Գայր որ զանձկալին իւր փընտռէ Արա,
Զի՛ գիշերն եկաւ՝ և ո՛չ դառնայր նա,

Ասել էր. «Զինուց լըռեցին ձայներ,
«Զձայն սիրելւոյս ինչո՞ւ չեմ լըսեր.
«Թըռչունք ամենայն դարձեր են ի բոյն,
«Արծիւն իմ ինչո՞ւ ոչ ի գիրկ սիրոյն . . . »,

Ասեր ու թողեր պալատ վըշտակիր,
Մահու դաշտն իջեր սըրտով մահակիր.
Ու ծաւի բըբաց արցունք միշտ սըրբէր
Որ տեսնէ հեռուանց զիւր ցանկալին սէր.

«Արա՛, նէ գոչէր. Արա՛, ո՛հ, ո՞ւր ես . . . »
Եւ խոր արձագանգն որ կըրկնէր «Ո՞ւր ես . . . »
Կարծես տարփելւոյն անուշիկ ձայնն էր,
Որ իրեն դիմաց կըրկնէր ըղձրաւէր:

Ը.

Այն պահուն կ'ելնէր ամպերէ լուսին,
Կարծեց Արայի թէ այն էր հոգին.
«Արա՛, մընչեց, ո՛հ, Արա, իմ քով չե՞ս.
Արա՛, դու յերկին, յերկիր մինակ ես . . .

«Ա՜հ, այս առաջին գիշեր, առաջին
Ցոր հոգւո՛յս հատոր, այրի է քո կին.
Առաջին գիշեր անվերջ ցաւերոյս,
Առաջին գիշեր որ ինձ չըկա՛յ լոյս,

«Ուր դու իմ մօտ չես՝ աղբիւր եմ պասուք(1).
Ուր դու իմ քով չես՝ դաշտ եմ ուր չի՛ք չուք.

(1) Ցամքած, չոր.



Երբ ես միայն եմ՝ ծաղիկ եմ անբոյր,
Դո՛ւ էիր իմ ջուր, ըստուեր, խունկ և բոյր . . .

Արա՛, դու երբ որ սըրացար յեթեր՝
Ո՞չ հետ քո տարիր և մեր թըշուառ սէր.
Արա՛, դու զիմ սիրտ քաղեցիր, Արա՛,
Ե՞րբ կ'առնուս 'ւ ոգիս, ո՛հ Արա՛, Արա . . ., » —

Ու կըրկնեցին՝ բըլուրքն ու դաշտեր,
«Ո՜հ Արա՛, Արա՛ . . . »
Եւ շունչ վերջին հարսին հեծեծէր
«Ո՜հ Արա՛, Արա՛ . . . »

Այն ժամն երկընքի պատռեցան ամպեր,
Ու զոյգ մի փայլել ըսկըսան աստղեր:
Կ'ըսեն թէ մէկն է Արայն թագաւորդ,
Միւս՝ աստղ ոսկեհեր Հայ դըշխոյն Նուվարդ:

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊ. ՆԱՐՊԷՅ *Մտածերք Հայկականք*

---

## Ց. ՆԵՐՍԷՍ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ (1)

*Այրարատ իւր զօրաց Ներսէսի ձեռագրութիւնը կըձէ*

. . . Հա՛, գացի տեսայ մեծ մարդը, Հայաստանի հովիւը, Ներսէս: Իմ մեծ հասակովս ո՛րչափ պզտիկ երեւցայ անոր քով: Ի՞նչպէս նկարագրեմ զինք. կերպարանը զիս դիւթեց, լեզուն զիս

(1) ՆԵՐՍԷՍ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ամենայն Հայոց, ծնաւ 1770 մայիս 1 ին Աշտարակ գիւղաքաղաքին մէջ. իւր հայրն էր նոյն քաղքին ժողովրդապետ Տէր Զ. Կ. Շահազիզեան.
Ներսէս 7 տարեկան հասակին մէջ էջմիածնայ ժառանգաւորաց

դրուեց, քանի մը վայրկենի մէջ գլխս բոլորովին գերեց ։ Թէ որ հրամայէր որ երթամ Արարատ լեռը շալկեմ իր առջեւը բերեմ՝ կուրօրէն պիտի երթայի ։ Մեր Եղիշէ վարդապետը միայն պիտի կրնար անոր պատկերը ճիշտ քաշել եթէ ողջ լինէր ։ Այս սուրբ վկայ, կարգաւոր չէ այն այլ քաջ զօրապետ մը հեռատես քաղաքագէտ մը ։ Ես որ վագրի, օձի առջեւ գտնուած և անոնց աչքին մէջ անվեհեր նայած եմ չկրցայ վայրկեան մը շարունակ Ներսէսի աչքին մէջ նայիլ, որու կայծերը սրտիս մէջ կ'թափանցէին ։ Իրաւի Սասունցիի դէմքն ունի այլ ոչ մեր տկար խելքը, երկու մանր շողուն բիբեր կ'եռան կապոյտ շար-

---

վարժարանը դրուեցաւ, ուր 12 տարի կենալով լաւ դաստիարակութիւն եւ իւր կոչման արժանի ուսումն առնելէն ետքը 20 տարեկան հասակին մէջ սարկաւագ ձեռնադրուեցաւ Գալուստ Արքեպիսկոպոսէն, եւ քանի մը տարի ետքը՝ վարդապետ ։

Տ. Ներսէս վարդապետութեան ժամանակէն ցոյց տալ սկսաւ առաքինազարդ եւ արժանաւոր քահանայի մը ձիրքերը, նա պաշտպան կեցաւ Ազգին եւ Եկեղեցւոյն այնպիսի ժամանակ մը յորում հպատակ ժողովրդի մը կեանքը եւ ինչքը բնաւ արժէք չունէին բռնաւոր տիրապետութեանց առջեւ ։

Երբ 1826 ին Պարսիկք յարձակեցան յանկարծ Ռուսական Հայաստանի վրայ մեծ բազմութեամբ եւ պատրաստութեամբ, եւ հետզհետէ գրաւեցին Շուշի, Գանձակ եւ Շամախի քաղաքները մեծամեծ աւերմունքներ պատճառելով, Տ. Ներսէս որ այն ատեն Եպիսկոպոս եւ Տփխիսու վիճակին առաջնորդ էր, մէկէն Հայ քաջերու գունդ մը կազմեց եւ ինքն ալ անոնց գլուխը անցնելով Պարսից դէմ ելաւ եւ կասեցուց անոնց արշաւանքը ։ Ի սկզբան այս Հայկական բանակին աշխատանքը մեծ էր զի այդ կողմերէն Ռուսաց զօրքերը քաշուած էին խաղաղութեան պատճառաւ, որով Հայք բոլորովին առանձին մնացին այս խուժադուժ ասպատակաց առջեւ ։ Բայց Տ Ներսէսի անվեհեր առաջնորդութիւնը եւ Հայ զօրաց քաջասրտութիւնը բաւական եղան Թշնամեաց դէմ դնելու. Թող որ Հայոց այս ընդհանուր շարժումը մի մեծ պատճառ ունէր, այն է Նիկողայոս կայսեր դաշնագիրը, զորս Տ. Ներսէսի



ժուն լճակներու մէջ, Թաւ ունքն ու արտեւանունքը կ'սքօղեն իր խորհուրդները, փայլուն կունտ ճակտին վրայ դրոշմուած է Հայաստանի ճակատագիրը՝ կապոյտ որոշ գծերով որ յօնիցը մէջ տեղ մերթ կ'ուռին և կարծես թէ գլխուն փոթորիկը կ'յայտնեն, ազնիւ սեւ մօրուսն ու նուրբ պեխը կ'ծածկեն իր հեգնալի ժպիտը ։ Հապա նա սագանի պէս ձի կը հեծնէ և սնգկի պէս կ'սահի ամէն տեղ, ամէն բանի կ'հասնի, ամէն ձայն ու շշուկ կ'լսէ, տկարն ու կալոտը կ'գգուէ, կ'սփոփէ, մեծերուն հետ խըրոխտ ու հրամայող, եկեղեցականին սաստող է։ Ջեռքըն Աւետարան չունի այլ մտրակ. գլուխը վեղար

---

հետ կնքած էր կանխաւ, խոստանալով Պարսից ձեռքէն Հայաստանի գրաւած մասին իշխանութիւն շնորհել իւր հովանաւորութեան տակ առնելով։ Հայրենեաց փրկութեան քաղցր յոյսերը Հայ զօրաց եռանդը ու քաջութիւնը կաւելցնէին ։

Վերջապէս, շատ չանցաւ Ռուսաց բանակն ալ հասաւ Մատաթեան Հայազգի իշխանին հրամանատարութեամբը, եւ Հայոց հետ միացած Պարսիկները ամօթահար փախուցին, եւ Նախիջեւան եւ Երեւան գաւառները գրաւեցին ։

Բայց ապարդիւն եղան Հայոց այսքան զոհողութիւնքը եւ ճգունքը. երբ պատերազմը վերջացաւ, Տ. Ներսէս յիշեցուց կայսեր իւր խոստումը ։ Նա առանց միտ դնելու իրաւանց եւ արդարութեան ձայնին, նոր գրաւած Հայաստանի մասը իր երկրին կցեց, եւ զինքը Տփխիսէն հեռացնելով Պեսարապիոյ առաջնորդ կարգեց ուր երկար տարիներ վարեց այս պաշտօնը գրեթէ աքսորանքի մէջ.

1845 ին երբ Յովհաննէս կաթողիկոսը մեռաւ, ազգին միաբան հաւանութեամբը Ներսէս կաթողիկոս ընտրուեցաւ, 14 տարի Հայ Եկեղեցւոյ գլուխը կենալով բազում նշանաւոր գործեր եւ բարեկարգութիւններ ըրաւ ։ Սորա Հայրապետութիւնը մի երջանիկ դար կը սեպուի Հայուն. 1857, փետրուար 13 ին կնքեց իւր բազմարդիւն կեանքը . . . սուգի մէջ Թողլով ամբողջ ազգը ։

Էջմիածնայ Միաբանութիւնն Երանելի Հայրապետին գերեզմանին վրայ փառաւոր շիրիմ մը կանգնեց այս տապանագրով.

ՊԱՏՏՊԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՆԵՐՍԷՍ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ։

չունի այլ կլոր պղնձէ սաղաւարտ, որու գագաթը միայն փոքրիկ խաչ մը կայ, կռնակը փիլոն չունի այլ սպիտակ ոչխարի բուրդէ վերարկու մը, ոտքերը հողաթափ չունին այլ բարձր կօշիկներ որ մինչեւ ծունկերը կը ծածկեն, կուրծքը ոսկի նշաններ չունի այլ վառ սիրտ մը որ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . իր աթոռն ոսկեփայլ գահ ու բարձ չէ այլ ամեհի սեւ երիվար մը որ տիրոջը պէս կրակ ու վառօդ կ'սիրէ:

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ *Մեռ չենիմ մարդը*(1)

---

## 9. ՄԱՀ

# Ս. ԹԷՈԴՈՐԻ ՍԱՂՀՈՒՆԻՈՅ

Ո՞ւր են հիմա մեր մայիսի ծնած ծաղկունքն, ձեր մնացին մրգաղարդ(1) մարերեայ մրգունքն: — Այսպէս, չ'կայ ծաղիկ հողածին՝ որ չցամքի. չկայ պըտուղ երկրաբոյս՝ որ չթօթափի. ամենայն դալար ու պայծառ, յետ քիչ ժամանակի պիտի ըլլայ մռայլ ու խաւար: Սակայն ծաղիկ այն ծաղիկն է, որ երբ ճըղէն այլ զատուի՝ դարձեալ մընայ անթառամ, և մանաւանդ նոր գեղեցկութեամբ մը յաղթէ կանգուն ու ճօճուն ծաղկանց: Այսպիսի ծաղիկ է հայրաղէն գառ-

(1) Պատմական մի գեղեցիկ վէպ, զոր Պ. Մամուրեան իւր Մ-Հ-ս էջերովը մաս առ մաս ի լոյս կընծայէ. նիւթը քաղած է ժամանակակից մեծ դիպուածէ մը, Պարսից դէմ Ռուսաց՝ Հայոց հետ տարած պատերազմը, որոյ դիւցազներէն մէկը եղած էր Ներսէս Ե. կաթողիկոսը.

(1) Նորաբոյս.



նանման կոտորեալ երիտասարդն Թէոդոր, թաւալեալ իր հովանաւոր ծառին և իր հանգստեան քարէ բարձին տակ՝ օշօշով և մանուշով հիւսուած խոտերու վրայ, Սեղեմնուտի սգաւոր ձորակին մէջ ուր հեղանանման կոտորեալ երիտասարդ Թէոդոր, թաւալեալ մնչիկ հովիկն խոնարհած կու(1) խաղայ անոր արիւնլուայ վարդէ գիսակաց հետ. ինչուան որ երեկոյեան զովութիւնն դադրեցնէ և պաղեցնէ կարմիր կաթիլները, և գիշերուան լուսագընտիկն վերէն ծաթէ արծաթափայլ դողդոջուն ճառագայթները, որք կու մարմըրին, շուք մը կու դառնան՝ Թէոդորի մարմնէն ծագած հրաշափայլ լուսոյն քով: — Այս լոյսն անշուշտ առաջնորդեց այն մարմինը մեծցընող և գգուող և հիմա զինքը սրտաթունդ փնտռող անձի մը, մօր մը: . . . Չտեսնենք, չքննենք մենք այն մայրը Սեղեմնուտի մէջ: — Դու այլ դարձիր մայրիկ, դարձիր Աղուիթա՝ առ Դասխոս, և հրաման տուր. «Ե՛լ, հայրիկ, ել գնա 'ի Սեղեմնուտ, հոն կու գտնես իմ հայրաղէն գառնուկս, իմ մըրկաթափ վարդենիս, իմ նուազած աղիքս. առ ու լուա այն արշալոյս ճակատը. բայց կիսալուայ ըրած՝ բեր ինծի փունջ մը ոսկեթել մազերէն, որ գլխուս վերջին պսակ ընեմ. լեցուր այն շուշանացեալ շրթունքները մայրենի և հայրենի համբոյրներով. ապա մաքուր կտաւներով գոցէ, գոցէ այն արեւակերպ դէմքը, զոր քիչ առենէն պիտի տեսնեմ յերկինս. և դիր ծածկէ 'ի ծոց ամենուս ծնողին, հողուն»: —

Գնաց գետնամած ծերունին հետն առած Թէոդորի հին ընկերները և ուրիշ ծածուկ քրիստոնեա-

(1) Խոնարհաբար կը հարցունենք թէ ինչո՞ւ արդեօք Արժ. Հեղինակը կը մասնկան տեղ ( սահմանական եղանակին որոշիչ ) կու-կը գործածէ միավանկ եւ թէ բազմավանկ բայերու առջեւ.

ներ, հաւատացեալ եղբարք և քորք, պարկեշտ կուսանք, որ բողոմ և մաղով արցունքնին ծածկած, և բոցաշարժ ճրագներ բռնած յուղարկաւոր կ'երթային Թէոդորի: Արդեօք կային անոնց մէջ, կամ կա՞յր մէկ մը՝ որ յուսացեր էր երկրիս վրայ այլ սրտակից ըլլալու սուրբ նահատակին, և յետ անոր մօրը կանչելու զնա՝ իմս Թէոդոր. — պատմութիւնն կը լռէ...

Քահանայական և մարտիրոսական պաշտօն, աղօթք և արտասուք կատարուեցան. այն հովանաւոր ծառին ներքեւ և այն սեղանացեալ քարին քով փորուեցաւ եռանդուն երիտասարդին քնարանն, և ծածկեցաւ մարտիրոսի մարմինն: Անարուեստ պարզունակ քարակոփ խաչ մը վկայ կեցաւ նահատակութեան և հանգստեան սրբոյն Թէոդորի:

Թող գայ հիմայ Ազուիթա աղօթելու երանեալ և աստուածազգեաց որդւոյ մը մնացորդաց վրայ: — Ահաւասիկ երանելի տիկինն, ծառէն աւելի մազերը ցրուած՝ փռուած ճակատ 'ի գետին: Իբրեւ կըրկին մարք սողոմոնեան դատարանին, հողն ու Ազուիթա կու զրկեն ու իմս է կ'ըսեն այս որդեակս: . . . Քիչ մ'այլ սպասէ Ազուիթա, և ահա թագաւորըն խաղաղութեան՝ իր ցանկալի վճիռը կուտայ, և յաւիտեան քուկդ կ'ըլլայ քու Թէոդորդ:

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ *Յուշիկք Հայրենեաց Հայոց*

---

## 10. ՇՈՒՇԱՆՆ ՇԱՒԱՐՇԱՆԱՅ

Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան,

Պայծառ պատկեր կուսանաց
Հայոց պըսակ պարծանաց
Ճակատն 'ի քող խորոտիկ(1),
Ի հով տըւած խոպոպիք,
Տատրակ տոտամբ(2) մանտրուքայլ
Ման գայ ի դաշտ ցօղափայլ.
Մեղըր կաթէ շրթներուն
Փայլկըտան աչքըն սիրուն:
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան:

Հիւսիսային մեր աստղիկ
Հայաստանեայց գեղեցիկ,
Արեւնըման հայելի,
Արքայդըստրիկ նազելի,
Սիրասընունդըն Սանդուխտ,
Որում արեւ ելքն ու մուտ
Փափագէին սրտմաշուկ,
Հմըան է ելեր շնորհաշուք:
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան.

Քանց(3) զարուսեակ պսպըղուն(4)
Ի մէջ մանտրիկ ամպերուն,
Քանց վարդալոյս արեւակ

(1) Գեղեցիկ. (2) Տատրականման ոտքերով:
(3) Աւելի, քան: (4) Փայլփլուն.

Ի խնծորի տերեւակ
Քանց Երասխայ նունուֆար
Գլխիկն 'ի ցօղ շարուշար ,
Քանց զամենն այլ գեղեցիկ
Նազի Սանդուխտըն բամբշիկ(1) :
Կուսանք Հայոց նոր շուշան
Տեսէք 'ի դաշտն Շաւարշան :

Սիպտակ սարերն յայնոր տես
Հալին լինին կարմրերես ,
Ծառք ու ծաղկունք տան պըպլուկ(2) ,
Խօսի ամէն պըլպըլուկ .
Նարկիզ' աչեր բիւր հանէ
Ուր որ Սանդուխտ անցանէ ,
Ցայնոր շրնչէն հաւասար
Ծածկին ծաղկով ձոր ու սար :
Կուսանք Հայոց , նոր շուշան
Տէսէք 'ի դաշտ Շաւարշան :

Բարձրապըսակ ճակատներ'
Հողու հաւասար են եկեր .
Ոսկի գոհար հատ ցանած
Ջորն են լերին հասուցած ,
Եւ մարգըրտէ բարկ աւազ ,
Ուր որ անցնի հեզանազ
Հայոց օրիորդըն Սանդուխտ'
Տոտանց հետկին(3) գան 'ի յուխտ :
Կուսանք Հայոց , նոր շուշան
Տէսէք 'ի դաշտ Շաւարշան :

Թագւորորդի կտրիճներ
Ընդ դարպասնին(4) դուրս ինկեր ,

(1) Բամբիշն , Թագուհի : (2) Բողբոջ :
(3) Հետք ոտից : (4) Պալատ , ապարանք :



Ի յԱլանաց մինչ Պարսիկ ,
Մինչ ի Հռոմ մինչ ի Հնդիկ'
Բերանաբաց կու նային ,
Երնեկ տալով փեսային'
Որ զօրիորդն այն Հայոց
Ցիւրըն տանի տուն և ծոց :
Կուսանք Հայոց , նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան :

Բայց Սանդըխտոյ արժանի
Չըկայ մին տեղ արքունի .
Ցայնոր աչացըն կամար'
Ցած գայ երկիրս ու խոնարհ .
Երկինքն ասէ . իմ գահի'
Սանդուխտ պիտէր Թագուհի .
Ծով' իմ ծըփանցս ծիրան'
Սանդուխտ պիտէր տայր հրաման :
Կուսանք Հայոց , նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան :

Բայց կայ մի մեծ քան զերկիր ,
Լայն' քանց ծովուն ծըփան ծիր ,
Եւ քան զերկին բարձր անհուն ,
Պայծառ քանց լոյս արեւուն ,
Կայ մին ահեղ Թագաւոր ,
Որում չը կայ չափ սինօր(1) .
Այն , և միայն այն պիտի
Փեսայ կուսին Սանդըխտի :
Կուսանք Հայոց , նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան :

Իւր լոյս դարպասն է պատրաստ ,
Կարմիր կանաչ առագաստ .

(1) Բառ ռամկական իբր սահման :

Եւ աստղազարդ կապուտակ
Տատրակ տոտանցն է յատակ.
Ճապուկ(1) ճորտերն(2) են հրեղէն,
Ուր որ նայի՝ կայծ թափեն.
Ինչ որ խօսի՝ երգ է այն,
Խնդում ու սէր ամենայն:
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան:

Ի Սանիրայ(3) սուրբ սարէն՝
Փութայ փայեկըն(4) Թադէն,
Երկնախօսիկ փեսաւէր,
Օրհորդին տայ հրաւէր.
« Տէրն այն երկնուց և երկրի
Զոր պաշտէ քո մեծ քեռի(5)
Սիրեց ըզքեզ, սըրբէ՛կ կոյս.
Ե՛կ հարսնացիր ի Յիսուս »:
Կուսանք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան:

Սանդուխտ ելաւ դարպասէն.
Ապշեց Հայոց տունն ամեն.
Սանատրուկ հայրն որ լըսեց՝
Յոսկի թաղտէն(6) վար վազեց.
« Սանդո՛ւխտ, սիրուն իմ դստրիկ,
Ուրանմա՞ս դու զքո հայրիկ.
Ուրանմա՞ս դու զԱնահիտ,
Պաշտես չաստուածըն Հըրէից:

« Աչացըս լո՜յս ոսկեթել,

(1) դիւրաշարժ, ճարպիկ:
(2) Տղայ, սպասաւոր:
(3) Թադէոս առաքելոյն հայրենիքը:
(4) Յառաջընթաց, առաջնորդ:
(5) Աբգար Թագաւոր:
(6) Բառ ռամկական իբր գահ:



Դեռ աչքս արտասուք չէր կաթել.
Քեզ համար՝ դո՛ւստր աննըման,
Գետեր յաչերս ի վայր գան. . .
Սանդուխտ, ուզէ՛ ինչ կուզես,
Արամազդա՛ւ, քեզ տամ ես.
Թէ Հայաստան է պըղտիկ՝
Զէնքս ու զօրքերս են հերիք:

« Թէ հրամես դուստր իմ աղուոր,
Հայրիկդ ըլլամ քեզ զինուոր.
Առնում աղեղս ու երթամ
Բոլոր աշխարհս քեզ որսամ.
Զխաքանն(1) ուզես թէ զկեսար(2),
Բռնեմ բերեմ քեզ հաւսար.
Թէ ծովուն մէջն ուզենաս՝
Բիւրեղ կանգնեմ քեզ դարպաս:

« Սանդո՛ւխտ, քու հայր քու գերի,
Լուկ ի Հրէէդ կա՛ց հեռի.
Լըսէ ինձ դուստր իմաստուն
Լոյս իմ աչացս արեւուն.
Օտար հաւատք մի՛ պաշտեր
Քու հօր գլխու սև մ'ուզեր.
Սանդո՛ւխտ դստրիկ իմ սիրուն
Ողորմէ հօրդ աչերուն »:

Կոյսըն կեցաւ լուռ յուշիկ,
Ապա հառչեց անուշիկ.
« Հայր, քանց ըզքեզ սիրելի
Զը կայ ոքիկ մ'ինձ յերկրի.
Բայց երբ զԱստուածն իմ ճանչցայ,
Սէր՝ քան զամեն մեծ գըտայ.

(1) Չինաց Թագաւոր:
(2) Հռովմայ կայսր:

Պաշտէ՛ զԱստուած քո քեռուն ,
Հապա չերթամ ես հեռուն :

« Ա՛մ (1) թէ ատես դու զՅիսուս
Որ կեանք բերաւ մեր հոգւոյս .
Թէ զիս չուզես քրիստոնեայ .
Թէ այլ խօսիս զԱնահտայ ,
Սանդուխտ այլ չէ քո դստրիկ ,
Սանատրուկ չէ իմ հայրիկ .
Յիսուս իմ հայր իմ փեսայ .
Այս իմ վերջին խօսք ըլլայ » :

Զայս վերջին խօսքն երբ լըսեց
Սանատրուկ դէմքըն ծածկեց .
Փէթ(2) մի փըրթաւ ի սըրտէն ,
Եւ հեռացաւ Սանդըխտէն ,
Կանչեց նըման առիւծու
Երդուաւ լուսնի ու արեւու .
Զէտ(3) ըշկայծակ սև ամպուն
Բերնէն փըչեց բօթ մահուն :

Դողաց սարսեց Հայաստան .
Սանդուխտ վազեց ի զընդան .
Կարծըր կոճղիկն(4) ըրաւ գահ ,
Զարդերն ամէն փայլեն մահ .
Կուսական քօղըն սեւակ
Սիպտակ ճակտին վայլէր թագ .
Բիւրեղ բազկացն ապարանջան
Պողպատ շըղթայք շըռընջան :

Սուրբ առաքեալն Հայոց լայր ,

(1) Բառ ռամկական իբր բայց : (2) Կտոր :
(3) Զերթ , նման :
(4) Կոճղ , փայտ՝ որով յանցաւորներուն ոտքերը կը սեղմեն :



Կապից կուսին պագիկ տայր . ]
Երկուսն եկած միաբան
Փրկչին յերկինք փառք կուտան .
Զայն Սանդըխտին շարժէր սիրտ .
Հայք թողուին զԱնահիտ .
Քընար քըրմին մընայր մունչ .
Լըսուէր սաղմոս հոգեշունչ .
Կուսանք Հայոց , նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան :

Ահա ելեր կոյսն Հայոց
Փրկչին երթայ հարսն 'ի ծոց .
Զերդ բարկ արև յարշալոյս
Բեհեզազարդ նազուկ կոյս
Կանգնէր պայծառ ի դիմաց
Հայոց հազար բիւր զօրաց .
Գետին թընդայր ի հիմանց ,
Երկինք շարժէր ի նախանձ :
Կուսանք Հայոց , նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան :

Սանատրըկոյ սև հրաման
Հընոցի ծըխոյն գայր նըման ,
Կըծէր աչաց բարկ արտասունք ,
Լային կուսանք և հարսունք .
Ի մօր գըրկին տըղայն լայր ,
Մայրըն լալով յետ դառնայր .
Կըտրիճ տըղայ ծեր հալւոր(1) ,
Լայր ամէն Հայ սըգաւոր :
Կուսանք Հայոց , նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան :

(1) Ալեւոր, ծերունի :

Ամէնք կանչէն, « Թագուհի
Ողորմէ Հայ աշխարհի ·
Քո թագաւոր հօրդ արեւուն,
Քո աններման լուսերուն ·
Ապրիր Սանդուխտ, եկ ապրիր,
Մի բերեր մութ, մի մեռնիր ·
Սանդուխտ, ամենս քեզ պերի
Ողորմէ Հայ աշխարհի » :

Սանդուխտ երկնուց լըսէ լոկ
Եւ լացերուն կայ անհոգ ·
Լալով զինուորքն յառաջ գան,
Զէնքերն 'ի յուս կու դողան ·
Շատ լարեցան աղեղունք,
Շատ թափեցան դիակունք ·
Բայց չը գըտաւ մահ տեղի
Ի գեղեցիկ Սանդըխտի :
Կուսմնք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան :

Նըման ծաղկանց կարկտահար
Երբ նա դիտեց զօրս հազար,
Զիրար զարկած եւ ընկած
Ու ըզ մահ իրմէն սարսափած,
Շարժեց զճակատըն սիրուն
Արտասունք ածեց աչերուն
Եւ հառաչեց առ Յիսուս,
« Տէր իմ, հրաման տուր հոգուս » :

Երիտասարդ մի յանկարծ
Կայծակնաթափ սուր շողաց · · ·
Ուսկից արդեօք էր եկեր,
Դահիճ, թէ տաք սիրոյ տէր ·
Երկինք, թէ հայրն էր ղըրկած · —



Ոչ ոք գիտէ զայս դիպուած ·
Սուրըն շողաց ու զարկաւ · · ·
Շուշան Սանդուխտ' վարդ ընկաւ :

Սուրըն շողաց մէկ մի փայլ
Սանդուխտ ծաթեց երեք այլ ·
Կարմիր կաթեր ի կըրծքէն
Վարդեր բուսան չորք դիէն ·
Աչքըն կոկոն մանուշակ,
Ամ' ինչ նայուածք անուշակ ·
Ափկիցք[1] շուշանք կիսափակ ·
Մէջ շըրթներուն ինչ կըրակ :

Ի ծայր լերին Սանատրուկ
Հրեղէն կառքեր տեսնէք դուք ·
Հոն երկնաւոր թագւորն այն,
Հոն Սանդըխտոյ է փեսայն ·
Զօրիորդն Հայ աշխարհի՝
Նախ քան զամեն վկայուհի
Ընտրեց իւր հարսըն կարմիր
Հանեց թըռուց յերկնուց ծիր ·
Կուսմնք Հայոց, նոր շուշան
Տեսէք 'ի դաշտ Շաւարշան :

Թերթեր ճերմակ ու կարմիր
Ներկեր երկինքն են 'ւ երկիր ·
Ելէք կուսանք, ժողվեցէք,
Վարդն ու շուշան զուգեցէք ·
Դըրէք դալար զայն մարմին
Թագէի հետ 'ի չիրմին :
Սանդուխտ, Հայոց կոյս քընքոյշ,
Հանգչէ 'ի հողս այս անոյշ :

---

(1) Երկու ափ :

*Կուսանք Հայոց քեզ շուշան*
*Բերեն 'ի դաշտ Շաւարշան : —*
*Ո՛հ, թէ քանի՜ երջանիկ*
*Է Հայաստան հայրենիք՝*
*Որ հանց բերաւ բոյս կուսան*
*Ուսկից հազար կոյս բուսան :*
*Երկինք կապուին երկրի հետ,*
*Քեզ ի՜նչ երգէ Նահապետ․*
*Սանդուխտ, անմահ Թագուհի*
*Իմ Հայաստան աշխարհի :*
*Կուսանք Հայոց, նոր շուշան*
*Բերէք 'ի դաշտ Շաւարշան :*

Հ․ ՂԵՒՈՆԴ Վ․ ԱԼԻՇԱՆ *Նուագք*

---

## ԱԱ ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏԻ(1) ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

*Վաթսուն տարի էր որ Հագարացիք մտեր եւ տիրեր էին 'ի Հայաստան․ իրաւ երբեմն բարեբարոյ և արդարախոհ ամիրապետաց և ոստիկանաց և մեր ազգի իշխանաց խոհեմութեամբն՝ հանգիստ և խաղաղութիւն կը գտնէր աշխարհն, բայց շատ անգամ այլ՝ կամ մերայնոց անզգուշութեամբ և կամ հարկահանաց բռնաբարութեամբ՝ նեղութիւն և վտանգ պակաս չէր․ մանաւանդ եօքը՝ երբ Ատրպատական աշխարհէն կուսակալն ապստամբելով ամիրապետէն՝ Հայք ալ սկսան գլուխ քաշել, և օգնութեամբ Յունաց՝ Դրնայ մէջ պաշարելով զԱրաբացիս՝ բիւրաւոր մարդ ջարդեցին, մինչդեռ ընդդէմ Հոնաց կամ Խազրաց գացեր էր իրենց ոստիկանն՝ Մահմէտ Բ. հզօր և աճաւոր․ որ և շուտով Աբդլլա, Ալի Ահմէտ, Օքբա, Գասըմ, և ուրիշ զօրավարօք և կողմնակալօք թափեցաւ 'ի Հայս (յամի 698—702), և շատ վրէժ ու չարիք հասուց Հայոց․ որոց մէջ ցաւով նշանաւորք են Սեւանայ բերդին երեքամեայ պաշարումն 'ի ծովուն Գեղամայ, և բոլոր մէջը գտուողաց կոտորումն․ մէկ մ'ալ Ս․ Գրիգորի մեծ և հարուստ վանաց անիրաւ կողոպտումն և միաբանից կոտորածն․ ըստ ոմանց և ծերունի չնորհազարդ Սահակ կաթուղիկոսին և շատ իշխանաց կապանօք քշուիլն մինչև 'ի Դամասկոս, և մնացելոցն 'ի հայրենիս՝ անտանելի տառապանքն և տարակոյսն : Մանաւանդ երբ ոստիկանն Մահմէտ՝ իր հարուածքն ընելէն ետև դարձաւ յԱսորիս, և իր տեղը թողուց մէկալ կողմնակալները, որ աւելի ցած և անօրէն մարդիկ էին. և հնարք կու մըտածէին բոլոր Հայոց մեծամեծները ջնջելու աշխարհքէն․ որպէս զի համարձակ ծծեն անոր պարարտութիւնը և աղքատաց արտասունքը :*

*Սմբատ Բագրատունի՝ նախարարաց զօրագլուխն, իր ցեղակից իշխանները և ուրիշ ցեղերէ այլ գլխաւորները գաղտուկ ժողվեց 'ի խորհուրդ, թէ ի՞նչ ընեն այսպիսի վտանգաւոր ատեն : — Ուրիշ ճար չը գտան, բայց եթէ իրենք զիրենք ազրեցընել, փախչելով յարեւմուտս, Յունաց կայսեր երկիրը : Գնացին խորհուրդ հարցուցին նաև անուանի սրբակրօն ճգնաւորի մը, որ Վանայ ծովուն Արեւելեան կողմերը կու բնակէր․ նա այլ լալով ողբալով ուրիշ խրատ չկրցաւ տալ, բայց միայն որ զգոյշ կենան, յանդգնութեամբ բանի ձեռք չզարնեն․ և վրանին աղօ-*

---

(1) Վարդանակերտ գաւառին գլխաւոր քաղաքն էր, Երասխ գետին վրայ շինուած ։

թելով արձակեց ։ Դարձան ասոնք իրենց հաւատարիմները ժողուելու՝ որ հեռանան հայրենի սահմաններէն , և զգուշութեամբ երթալով՝ ելան դէպ 'ի Մասիս լեռը և բանակեցան յանուանի աւանն Ակոռի(1) . և ահա լսեցին որ այլազգիք իմացեր են իրենց միտքը , ու Նախճաւանի(2) կողմնակալն 8000 և աւելի հոգւով ետեւնուն ընկած՝ « ոչ մեկնեցան 'ի հետոց նոցա . քանզի . . . կամէին կենդանւոյն կլանել զնոսա » ։ Ասոնք փութացան փրթան լեռնէն վար , անցան Երասխ գետը , և Վարդանակերտ ըսուած աւանի մը մէջ բանակեցան , որ կարծեմ Խորվիրապի մօտերն էր . այլազգիք այլ նորէն ետեւնուն ընկան ։ Հայք մէկ կողմէն բանակնին ամրացընելով և գիշերապահներ դնելով , միւս կողմանէ պատգամ ղրկեցին առ Արաբացիս և իմացուցին որ իրենց մտածութիւնն ուրիշ բան չէր , բայց միայն գլուխնին ապրեցընել փախստեամբ և օտարութեամբ , իրենց տեղն ու ստացուածքը՝ թողլով անոնց ձեռքը . ուրեմն թող տան՝ որ մնաս բարով ըսեն , հեռանան իրենց հայրենիքէն ։ — Եւ ոչ այս ցաւալի հրաժարական ողջոյնը տալու ներեցին բռնաւորքն , այլ յարձակեցան Հայոց վրայ , որք և ոչ 2000 հոգի էին , սակայն աղօթքով և վերջին ջանքով ու քաջութեամբ միաբանեալ՝ դէմ ելան իրենցմէ չորս և հինգ հեղ բազմաթիւ բանակին այլազգեաց ։ Ասոնք կէս մը գիշերուան ցրտէն փառցած , ( վասն զի ձմեռն էր և ձեան վրայ անցուցեր էին գիշերը ) , կէս մը ցուրտ

(1) Մասիս լերան ստորոտը շինուած էր այս աւանը , 1840 ին Մասիսի հրաբուխը բռընկելով ծածկեցաւ անոր մոխրով եւ լաւայով ։

(2) Նախջուան Նահանգին գլխաւոր քաղաքն է Երասխայ ձախ եզերքը Նոյ Նահապետին առաջին բնակութեան տեղը կը կարծուի , եւ հետեւաբար աշխարհիս ամենէն հին քաղաքն ։



հովէն ծեծուած , և այլ աւելի՝ յուսահատեալ քաջաց հարուածներէն , բոլորովին շփոթեցան , քշուեցան , ջարդուեցան . փախչողներն այլ թափեցան Երասխայ վրայ՝ անդին անցնելու . գետն որ սառեր էր՝ անոնց փախստական ոտից դիմանէն պատռտելով ներքեւն առաւ , կլլեց , ծածկեց ։ Եւ այն ահարկու սպառազէն բիւրաչափ բանակէն՝ հազիւ 300 հոգիք կրցան փախչիլ . զորոնք դարձեալ պիտի ջարդէին Հայք , եթէ չապրեցնէր մեր Նախարարաց մէկուն տիկինն՝ Շուշան . որ և քրիստոնէաբար գթով անոնց վէրքերն այլ պատելով , զգեստ և զլաստ տալով դարձուց խաւրեց առ ամիրապետն Արաբացւոց՝ Աբդլմելիք , և ընդունեցաւ անկէց շատ ընծայ և պատիւ 'ի փոխարէն մարդասիրութեանն ։ Յաղթական գունդն Հայոց՝ թշնամեաց աւարներն առին , համարձակ իրենց ճամբան գնացին , մտան յամուր տեղիս մեր Տայոց աշխարհին , որ այն ատեն Յունաց իշխանութեան տակ էր , և կայսրէն ալ պատիւ գտան ։ —

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ *Յուշիկք Հայրենեաց Հայոց*

## 12. ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

. . . . . . Իմաստունը որ ծիրանիներու մէջ ծնաւ , ամեն վայելք ամեն յաջողութիւն ունեցաւ , ամեն փափաքներուն հասաւ , և երբ խոր ծերութիւնը զինքը վայելից անզգայ ըրաւ « ունայնութիւն » ձայնեց , և ամեն մարդ նոյնը կրկնեց իրաւ կամ անիրաւ ։ Իսկ մենք այս գերեզմանին վրայ կե-

ցած չենք կրնար արձագանք ըլլալ այդ ձայնին, երբ կը տեսնենք Պէշիքթաշլեանին կենաց սկիզբն մինչև այս օրս։ Կը տեսնենք զինքը տկար, որբ, չքաւոր, անոք, անօգնական, հազիւ թէ քիչ մը մեծցած խաղալիք անգութ տղայութեան՝ տղայ դեռ ինքն ալ։ Ո՞վ եղաւ ուրեմն իրեն առաջնորդ այս բազմավտանգ անդունդին վրայ. գլուխը միայն. — և իր գլուխը ան գլուխներէն էր, որոնց համար մեծ մարդ մը ըսած է թէ «Աստուած զանոնք մատը ճակատնին դնելով կստեղծէ»։ Եւ իր այս ճակտին վրայ էր Պէշիքթաշլեանին բոլոր գեղեցկութիւնը։

Կը տեսնեմ զինքը դեռ անմօրուս պատանի տղոց չընջիւններէն և աղաղակներէն շրջապատեալ, անզգայ բոլորովին թաղուած գրքերուն մէջ, բարձրացած իր խորհրդածութեանց մէջ, հեռու ներկայէն, վասն զի ներկայն շատ քիչ երջանիկ վայրկեաններ պիտի մատակարարէր իրեն։

Կը տեսնեմ զինքը հազիւ երիտասարդ՝ վարժապետ՝ դասերու կը պտըտի. հեղինակ՝ գիշերները կանթեղին առջև իր Արշակները, Վահանները, Վահէները կարտադրէ. դերասան՝ գլուխ կեցած անհանդարտ պատանեկութեան թատրոն մը կը ծնանի։ Վարժապետութիւնը կեանք հալեցնող արհեստ մ'է, գիտեն անոնք որ փորձը առած են, և անոնք որ վիճակագրութեան տեղեակ են։ Հեղինակութիւնը չէ թէ միայն հանճար և ուղիղ դատողութիւն, այլ ամբարեալ հմտութիւն կը պահանջէ. դերասանութիւնը՝ եռանդ և զգացողութիւն կուզէ։ Բայց առանց վարձու՝ միայն իրենց զուարճութեանց համար դերասանութիւն ընող պատանեաց կառավարութիւնը, ինչ մեծ հոգի, ինչ համբերութիւն, ինչ անխոնջ աշխատութիւն որ կը պահանջէր լողներուն, կը թողում



մտածել, և մանաւանդ նոյն պատանեաց որ թերևս հոս ներկայ ալ ըլլան։

Այս տաժանելի կեանքը անցընողը՝ կը գտնէր վայրկեաններ երգելու համար այն երգերը որ դառնացեալ սրտերու և աղեկէզ ժամերու մխիթարութիւն պիտի ըլլան, ինչպէս ներկային նոյնպէս ապագային համար։ Եւ Պէշիքթաշլեան անունը չքնաղ արձագանք մը պիտի ունենայ մեր թոռներուն համար ալ։ Բայց այս աշխարհքիս ապագային հետ չի համեմատիր իրեն համար էութիւնը որ կ'սկսի։

Այս էութիւնը հոս այս գերեզմանիս առջևն է Պէշիքթաշլեանին՝ և բոլոր անոնց համար որ աշխարհիս վրայ կ'ապրին հեռու նիւթական վայելքներէ, և որոնց հազիւ երջանկութեան փշրանքները կը նետէ բաղդը արհամարհոտ ձեռքով։

Այս կը սովրեցնէ մեզի կրօնքը, փիլիսոփայութիւնը, և արդարութեան հոգին որ ի մեզ կը բնակի։

Պէշիքթաշլեանի լայն և գեղեցիկ ճակատը որ հնաշխարհիկ հանճար մը կը պարունակէր, ուրախ կերպարանք մը չէր ցոյց տար նայողին, սիրտը որ ազնիւ զգացմունքներով և կորովի եռանդեամբ լեցուն էր, տկար մարմնէ մը շրջապատեալ հազիւ թէ իւր մտերմաց ծանօթ էր։ Զգայարանքները որոնց վայելքը աշխարհիս երջանկութիւն կը համարուին, հազիւ թէ օրապահիկը իրեն կը ներէին։ Եւ այս զգայուն էակը որ քառասուն տարիքին չի կրցաւ հասնիլ, իբրև թէ աշխարհիս հանդիսատես ըլլալու համար, կը կենար տխուր բայց ոչ նախանձոտ աչքով կը դիտէր առուգութիւնը, գեղեցկութիւնը, երիտասարդութիւնը, հարստութիւնը, և պատիւները որոնք զլացաւ իրեն բաղդը։

Նախախնամութիւնը բաւական համարեցաւ իր հոգւոյն շնորհած ձիրքերը։

Երբ կը տեսնեմ իր հանրագիտակ սոկրատեան ճակատը, ուր բանը իր արդար կշիռը չէր կորսընցըներ, նախախնամութիւնը իրաւունք ունէր կ'ըսեմ։

Երբ իր կեանքին և գրութիւններուն մէջ կը տեսնեմ սիրտը, այն ազնիւ սիրտը որ ինչ որ գեղեցիկ կայ բնութեան մէջ առ այն կը դիմէ, ինչ որ փափուկ կայ առ այն կը սլանայ, ինչ որ տկար կայ անոր սփոփանք կը փնտռէ, ինչ որ վսեմ կայ առ այն կը բարձրանայ, ինչ որ հանճարի ծնունդ կայ անոր խանձարուրք կը շինէ, ինչ որ հայրենիք կայ առ այն կընկրկի, ինչ որ սիրոյ եռանդ կայ անով կը բորբոքի. դարձեալ կը կրկնեմ շատ ու շատ տուած էր իրեն աստուածային նախախնամութիւնը, և անոր համար կորուստը իրենը չէ, մերինն է։ Ինք այս տխուր կեանքին զրկանքներէն երջանկութեան կը դիմէ, Անոր՝ իր որ հոգին այնչափ զարդարեր էր։ Ազնիւ հոգի՝ որ իրեն կենաց վերջի տխուր օրերուն հազիւ և ցաւով կրցաւ նշմարել և հաւատալ մարդկային սրտին այն տկարութեանցը որ կը նուաստացնեն զմարդ, և որ նոյն սրտին զգուելի վերքերէն քստմնելով քաշեց ձեռքը, իւր վերջին հրաժարականը չի տուած դեռ աշխարհիս։

Յ. ՇԻՇՄԱՆԵԱՆ — *Հրատարակութեանց հաւաքմունք*

---

## 13. ԲԱԳՐԵՒԱՆԴԱՅ[1] ԿՌԻՒՆ

Այս նշանակեալ տարիս՝ (775) վերջին տարի է կենաց և իշխանութեան երկու մեծ ինքնակալաց, որք մէջերնին բաժնած են արեւելքի բաղդը կամ դժբաղդութիւնը։ Մէկն է Կոստանդին կայսրն, անուանի իր պատկերամարտութեամբ և մոլութեամբ, Պուլկարաց և պատկերաց հետ կռուելէն՝ ատեն չունէր արեւելք հոգալու և պաշտպանելու հպատակները, որոց մէջ կը սեպուէին և մասն մի Հայոց։ Իսկ մէկայլն է Էպուճաֆար Ապտ-Ալլահ Էլ-Մանսուր, զոր պատմիչք մեր Ջամփր անուանեն, խալիֆայ Արաբացւոց, որ ամիրապետութեան հին աթոռը փոխադրեց 'ի նորոգեալն Բաղդատ (763), և Կոստանդնի թուլութիւնը տեսնելով իւր բռնութիւնը տարածեց ինչուան 'ի Կիլիկիա, որով Մեծ և Փոքր-Հայք այլ ընկան իր ընչաքաղցութեան և անգթութեանց տակ. որոց համար շատ մեղադրուած է բնիկ և օտար պատմիչներէ. վասն զի համառօտ ըսելով, իր 21 տարուան և 4 ամսուան իշխանութեան ատեն վեց հարիւր հազար մարդ ջարդել սպաննել տուաւ, կըսեն. որոց մէջ անշուշտ քանի մը բիւր այլ ազգակից պէտք է ողբալ։ Այդպիսի ամիրապետ մը ունող ամիրայք՝ անկէ գթասիրտ չէին կրնար ըլլալ։ Իր իշխանու-

---

(1) Բագրեւանդ որ հիմայ Ալաշկերտ կըսուի, Այրարատեան նահանգին գլխաւոր գաւառներէն մին է, որոյ մէջ անուանի էին Վաղարշակերտ եւ Զարեհաւան քաղաքները. այս գաւառին մէջն էր նաեւ Բագաւան կամ Դիցաւան անունով աւանը ուր Արամազդայ վանատրի մեհեանը կառուցուած էր եւ հոս կը կատարուէին ամանորի տօները։ ւ

թեան առեն Հայաստանի ոստիկանաց մէջ (վասն զի այսպէս կ՚անուանուէին յԱրաբացւոց եկեալ կուսակալքն) ամենէն գլխաւորն է Աբդլլա, եղբայր Համանուն նախորդ ամիրապետին, որ ընդհանուր Պարսից և Հայոց կողմանց մեծ կողմնակալ էր. և ուրիշ կամահաճոյ հրամաններէն զատ՝ այս ալ դրաւ իր հպատակացը, որ գլուխնին կանգուն ու կէս բարձր խոյր մը դնեն, և մօրուքնին ածիլեն. այս և ասոր նման պատուէրներով կուգային ի Հայս ոստիկանք և հարկահանք. որք այնչափ կեղեքեցին աշխարհնիս, մինչև շատերն փախչելով գետնի տակ և քարայրներու մէջ պահուըտէին: Ժամանակին հոգեւոր տէրն՝ Տրդատ կաթողիկոս, և ազգային հոգաբարձուն Սահակ Բագրատունի՝ շատ անգամ բողոքեցին Աբդլլայի. իսկ նա ոստիկանները կու փոխէր, բռնութիւնը կու թողուր: Այսպէս յետ վերոյիշեալ Եզիտայ և Պեքիրայ՝ խաւրեց (770) զՀասան-իպն-Քահդապա որ հետը բերաւ Խորասան-պարսիկ անկարգ գունդ մը՝ որոց ըրած չարութիւններէն քանի մը յիշելով ժամանակակից և ականատես պատմիչն (Ղեւոնդ) զզուելով կ՚ըսէ. «Պատմել ոչ կարեմք զաղէտիցն պատմութիւն». մեք այլ այնպէս ընեմք, որ արցունքով չի թօշնին ապրիմ ծաղկըներն: . . . . Բայց ինչ ընէ խեղճ ժողովուրդն, որ ունեցածը բռնահան հարկահանաց տալէն ետև՝ չունեցածն այլ տալու համար կու ծեծուի, կու կախուի, սառուցեալ լճից մէջ կու ձգուի. Ինչ ընէ հին հայութեան մնացած զինուորութիւնն, որ իր եղբարց դառն հեծութիւնը կու լսէ. Ինչ ընեն Խրամի և Նախջուանի եկեղեցեաց մէջ այրուած նախարարներէն մնացեալ ճիռ իշխաններն՝ որ իրենց սեփական պայազատութիւնն այսպէս տակն ու վրայ կու տեսնեն. Ինչ ընեն մանաւանդ մեծասիրտ Մա-



միկոնեանքն՝ Արտաւազդ և Մուշեղ, որդիք Համաեակայ և Հրահատայ, միթէ վիրաւորեալ առիւծուց նման միայն մռնչեն իրենց աչաց առջև անապատացեալ հայրենեաց վրայ: — Ոչ, այսպէս չըրին. այլ յուսահատութեան մռունչ մը մռնչելով գայրագին սրտիւ, իրենց սրտակցաց ու պատուակցաց ձայն տըուին. որք, ըստ ասելոյ պատմչին, «Եդին զոգի 'ի «ձեռին իւրեանց, և ձեռնամուխ եղեն յիրս՝ զոր ոչ «կարէին վճարել, վասն զի նուազունք էին. այլ «սակայն լաւ համարեալ զմահ քաջութեամբ՝ քան «զկեանս վտանգաւոր, ձեռնամուխ եղեն»: Նախ եռանդուն Արտաւազդ, անվախ, բայց և ոչ առանց խորամանկութեան իրեն հին նախնոյն՝ Գայլ-Վահանայ, յանդգնօրէն գնաց 'ի մայրաքաղաքն Հայոց՝ 'ի Դուին, ուր արաբացի ոստիկանին փոխանորդ զօրավար մի նստէր, և գրեթէ անոր աչաց առջև իր սակաւաթիւ գունդը ժողվելով սկսաւ զէնք զրահել պատերազմական պատրաստութեամբ, համբաւելով թէ թշնամեաց դէմ պիտի երթայ: Արաբացի զօրավարք՝ իրենցմէ հաւատարիմ կարծելով զնա, միանգամայն և չուզելով իրենք զիրենք վտանգել, թերևս օգնեցին այլ զինքը զինելու. և իբրև յառաջամարտիկ գունդ բանակի՝ թողուցին իրենցմէ զատուելու: Արտաւազդ մէկ մ'որ խաբուած բանակին բազմութենէն դուրս ելաւ, մէկէն վազեց դէպ 'ի հիւսիս՝ Շիրակ գաւառ, անկէ Վրաց ամուր և ազատ կողմերը երթալու. այն ատեն այս գաւառս դեռ իր Անի բերդը իշխանանիստ չ'էր ըրած, այլ կ'երեւի թէ հիմակուան Ռուսաց իշխանանիստն և ամուր բերդաքաղաքն Կիւմրի՝ էր գլխաւոր աւան մը, ուր անիրաւ հարկահան մը նստէր. Արտաւազդ անոր շատ անիրաւութենէն թերևս ոչ շատ պակաս անիրա-

ութեամբ մը վրէժ պահանջեց․ սպաննեց, և ժողոված սակները յափշտակելով՝ գնաց Վրաց կողմը, միաբանեալ իշխանազանց հետ մէկտեղ։ Արաբացւոց աչքերն բացուեցան․ մէկէն նախնի ոստիկաններէն մէկը զօրապետ գնելով և իրենց ծառայութեան մէջ եղող Հայոց սպարապետ Սմբատն այլ մէկտեղ առած՝ Արտաւազդայ ետևէն ընկան, ինչուան Ախըլցխայի կողմերը յարձըկելով․ բայց հազիւ քանի մը կտոր բան կըցին աւարել, և յետ դարձան․ վասն զի Արտաւազդեանք ինչուան Եգերացւոց երկիրը(1) (Աճարա) գացին, և այն տեղւոյն ու մօտի Վրաց գաւառաց տիրեցին։ Իսկ Իպն-Քանդապա ոստիկանն՝ ուրիշ բան չկրցաւ ընել, բայց եթէ առջի անգութ հնարքը բանեցընել․ այսինքն՝ դարձեալ ամէն դի հարկահաններ ղրկել․ որք պժգալի պիծակներու պէս ելան ժողովրդեան մնացեալ վաստակը ուղեծուծը քամելու․ բայց այս անգամ շատ չյաջողեցան։ Վասն զի եթէ Արտաւազդ հեռու էր, մօտ էր Մուշեղ․ որ նախ իր երկիրներուն մէջ մտածները հալածեց, և բռնութիւն ընողներն այլ բռնաբար սրով դատեց․ և պահ մը իր ընտանիքը Երասխաձորոյ(2) մօտ Արտագերից ամուր բերդը ապահովցընելով, ելաւ անկէ 60 կտրիճ առած հետը, մտաւ այս մեր եղած Բագրեւանդայ գաւառը, ուր Էպու-Մճուր՝ փոխանակ հեզաբար ծաղիկ քաղելու՝ բռնաբար հարկ կու պա-

(1) Հիմայ Ապագիա կը կոչուի, Լազիստանի հիւսիսային մասն է որ հին ատենն այսպէս կըսուէր. գլխաւոր տեղին է Ս[illegible].

(2) Երասխաձոր կամ Արշարունիք Արարատեան աշխարհի գաւառներէն մին, որոյ գլխաւոր քաղաքներն էին Երուանդակերտ եւ Երուանդաշատ, զորս Երուանդ շինեց. այս գաւառին մէջն էր նաեւ Բագարան քաղաքն որ խիստ երեւելի էր իր բագիններովը․



հանջէր․ զնա այլ անոր մարդիկներն այլ կոտրելով՝ փոթորկի պէս յառաջ անցաւ․ իսկ ծխահալած պիծակներն՝ ահով դողով սկսան ծակերու մէջ քաշուիլ․ որով համարձակութիւն առին լըկեալ և նեղեալ փախստականք Հայոց՝ գալու և Մուշեղայ պզտիկ գնդին խառնուելու․ որուն համբաւն և սարսափը չորս դի տարածեցաւ․ բայց զօրաց քիչուորութիւնն այլ իմանալով՝ ոմանք 'ի թշնամեաց սիրտ ըրին մէկէն վրան հասնելու և թերեւս մէկ հարուածով վերցընելու իրենց արգելք և սատակիչ եղողը։ Բայց այնպէս գաղանացեալ Մամիկոն մը բռնել՝ շատ դժար և վտանգաւոր փորձ էր։ Այսպէս փորձեցին նախ 200 Արաբացի պատերազմողք, որք Կարնոյ քաղքէն (Էրզիրում) ելան, աղէկ զինուած և զրահուած, իջան 'ի Բասէն, գալու 'ի Բագրեւանդ․ գիշերը վրայ հասնելով մտան Խարս գիւղը, (թերեւս Մժնկերտոյ մօտ), և անոր այգեստանեայց մէջ փռուեցան, այգեաց պատերը իրենց պատնէշ կարծելով։ Իմացաւ Մուշեղ, և հետը քանի մը կտրիճ առած՝ գիշերանց հասաւ հոն, և որովհետև այդ պատերը հիւսուած չէին՝ այլ միայն քար քարի վրայ դիզած՝ ցանկի մը պէս, անոնց տակ նստող և պառկողներուն վրայ փլուց․ հոն կապուած ձիանն այլ խրտնելով սկսան իրենց տէրերը կոխկռտել․ գիշերուան, ձիերուն, պատին փլչելու չփոթութեան հետ մէկտեղ՝ ներս թափեցան Մուշեղեանք։ Եղածն յայտնի է․ թերեւս ոմանք յայլազգեաց կրցան՝ մերկ կողոպուտ փախչիլ ազատիլ․ բայց շատերն այն քարերուն տակ քնացան, մնացին,

Հազիւ քիչ մ'ատեն կրցաւ Մուշեղ հանգիստ առնուլ իւր ամրոցը, վասն զի այլազգեաց աղաղակն կու գոռար։ Դըւնայ կողմնակալ զօրավարն իր պահապան զօրաց մէջէն չորս հազար կտրիճ ձիաւոր

ընտրեց և յանձնեց Էպու-Նէճիպ զօրապետին, որ երթայ ջարդէ ջնջէ ապստամբները: Նէճիպ իր գունդը անոնց երագընթաց տաճիկ ձիերուն պէս թացընելով հասարակաց դուրան ճամբէն, յԱյրարատայ 'ի Կոգովիտ, անկէ 'ի Բագրեւանդ հանեց, և եկաւ անոր գլխաւոր շինուանին մօտ, որ է Բագաւան (Իւչքիլիսէ): Այս աւանին մօտ, այս Արածանւոյ նախընծայ վտակաց եզերք, այս մօտիկ Նպատ լերան շքին տակ էր, որ անկէ 400 տարի առաջ ուրիշ Մուշեղ մը, Բ-ջ-կ-ր-ւ Մուշեղ, Շապհոյ արքայից արքային ահեղ բանակը ցրուեց. բայց այն ատեն Հայ-Արշակունի թագաւորի մը ամբողջ բանակաց սպարապետ էր, և յունական գունդ մ'այլ մարտակից ունէր, և Մեծ Ներսէս մը բազկատարած աղօթաւոր: Անկէ 200 տարի վերջ' ուրիշ Մուշեղի մը վրայ գալով անցաւ Բագրատունէն Խօսրով Անուշրէւան, և կոտրեցաւ 'ի Մուշեղայ Եփրատ գետոյն վրայ: Իսկ այսօր ասոնց թոռանց թոռն Հրահատեանն Մուշեղ' 4000 Արաբացի սպառազէն ձիաւորաց դէմ ունէր 200 Հայ. քանի դէմ մէկ միայն. սակայն ունեցածն բաւական եղաւ իրեն: Ասոնք յարձըկեցան եկողներուն վրայ, չփոթեցին, ցրուեցին, շատերը գետին փռեցին, աւելի շատերը փախուցին, փախստականաց ետեւէն ընկան, օրով ճամբայ հալածեցին դէպ 'ի հիւսիս, ինչուան Արագած լերան ոտքը. շատերն այլ ճամբուն վրայ փռելով, և անոնց հետ զօրաւարնին այլ. և աւարներով ու ձիոց երամակով յաղթական դարձան: Այլազգեաց մնացորդքն հասան 'ի Դուին, բոլոր քաղաքը 'ի դող, 'ի սուգ, անէծք և նզովք շարժեցին. և այնպէս ահ ընկաւ մէջերնին' որ կարծէին թէ ամեն դռնէ Մուշեղը ներս կու մտնէ. և գրեթէ չվստահանալով քաղաքին ամ-



րութեանը' ներքին ամբոխը քաշուած ամբեցան:

Այս անակնկալ և գրեթէ անհաւատալի յաղթութիւնն ու յաջողութիւնն, և այն ահարկու Արաբացւոց ահաբեկ ըլլալն' կրնայ գուշակուիլ' թէ երկայն ատենէ 'ի վեր ընկճած ժողովրդեան մը ինչ ազդեցին, ինչպէս համբաւուն հռչակուեցաւ, ինչպէս գլուխներ տաքցան' խելապատակէն այլ 'ի վեր, մինչև խոհեմութեան և նախահոգութեան ձայները չլսեցին. և զիրար գրգռելով պատշաճէն վեր բաներ մտածեցին. մանաւանդ չափազանց բորբոքեալ ճգնաւոր մը, աւելի սրտին հարցնելով քան Աստուծոյ, զամենքը կու յորդորէր և քաջալերէր, և իբրև տեսիլք տեսած հաւանեցնէր, թէ արդարև ազգին բաղդն հասած է. մի՛ տարակուսիք կ'ըսէր, ձեր մէջէն մէկն բաւական է հազարի դէմ կենալու, երկուքն' բիւրուց դէմ:

Ցիրաւի շատ դժար էր ռամկաց' (յետ տեսնելու որ 200 կորիճ 400 սպառազէն հեծեալները վանեց) այս դիպուածին մէջ' ուղղութիւնը և ստութիւնը իրարմէ որոշելու: Բայց ոչ միայն ռամիկ մարդիկ և առանձին իշխանք միաբանեցան, այլ ինչուան Սմբատ Բագրատունի սպարապետն այլ հաւանեցաւ թողլու զԱրաբացիս և միաբանելու ընդ համազգեացն: Այս բանս յաղթութեան մը չափ արժեց միաբանելոց. բայց մեծագոյն յաղթութիւն մ'այլ կու փափաքէին. այսինքն հաւանեցընելու զԱշոտ, նախայիշեալ Սահակայ իշխանապետին որդին, որ չափաւոր տարւոք, և տարիքէն աւելի փորձ հռչակեալ խելացի մարդ էր. որչափ այլ հայրենեաց փառքը փափաքէր, այլ աւելի անոր ապահովութիւնը կու պահանջէր. կ'իմանար կ'իմացընէր այն ճգնաւորին չափազանց նախանձաւորութիւնը, և կ'ըսէր իրեն եկող իշխանաց և յորդորչաց. « Ո՛հ հայրենասէրք,

զգոյշ կեցէք․ քաջ էք և եռանդուն, բայց աւելի լաւ է իմաստութեամբ գործել և ձեզմէ առջիններուն փորձը քննել․ կամք և կարողութիւն միշտ չեն կրնար իրարու հաւասարիլ․ մէկն 'ի ձեր ձեռքէ է, մէկայլն ոչ․ շուտ և անակնկալ յաջողութիւնք՝ երբեմն մեծագոյն անյաջողութեանց պատճառ կ'ըլլան։ Քանի մը հարկահան և զօրավար զարկիք, քիչով շատերու դէմ կեցաք, և երթալով կու յուսաք շատնալ․ սակայն ինչուան որչափ կրնանք բազմանալ, ինչուան երբ միագունդ մնալ։ Դեռ Արաբացւոց մեծ զօրավարն 'ի Դուին է, դեռ 'ի Կարին ուրիշ մեծ զօրավար մ'այլ կայ, դեռ շատ բերդեր անոնց ձեռքն են։ Եթէ բերդերն այլ առնուք, եթէ Հայաստանի մէջ եղած զօրքն այլ հալածէք, դեռ դժուարութիւնը քիչ մը կ'ուշացնէք, վտանգը կը մօտեցնէք։ Ի՞նչ պիտի ըլլայ ձեր բովանդակ գունդն Էմիր-էլ-Մումինեայ տէրութեան ծովածաւալ և ահաւոր զօրութեան դէմ։ Ո՞ր ազգ․ ո՞ր տէրութիւն կրցաւ կամ կրնայ անոր դէմ կենալ․ Յունաց տիեզերակալ ինքնակալութիւնն այսչափ անգամ կռուելով չկրցաւ կորուսած երկիրներն 'ի ձեռք ձգել․ ահա կայսրն Կոստանդին՝ որ մինակ առիւծներու դէմ ելլելով սպաննեց, տեսէք ինչպէս սարսափած՝ թող կուտայ որ ամիրապետն կոխէ իւր սահմանները։ Ինքն ծովն ու ցամաքը բաւական ամուր չի գտներ այնպիսի թշնամւոյ մը դէմ, դուք ինչ բանի վրայ դրած էք ձեր ապահովութիւնը։ Արդ եթէ կ'ուզէք ճշմարտապէս հայրենեաց օգուտը, ինչպէս և ես ամենայն սրտիւ, հանդարտօրէն մտածելով կեցէք տեղերնիդ․ և ջանացէք իմաստութեամբ դարման տանիլ եղած և կրած չարեաց։ Ապա թէ ոչ, ինծի կ'երևի, թէ կամ յետ վնասակար փորձոյ՝ պիտի յանձն առնուք կորակոր



նուաճիլ մնալ տեղերնիդ, կամ յուսահատած՝ միայն զձեզ ապրեցընել ջանալով ինքնակամ թողուլ հայրենիք, տուն տեղ և վաստակ, ձեր հարց քրտինքով ժառանգած բարիքը, ձեր նախնեաց հաւատքով կանգնած եկեղեցիները, և ձեր ծնողաց գերեզմաններն այլ՝ ատելեաց ոտից կոխան, և երթալ 'ի ծառայութիւն կայսեր Յունաց, և պանդխտութեամբ կեանքերնիդ մաշեցընել։ Եւ կամ, որ շատ վախնալի է, շուտ կամ ուշ՝ ձեր թշնամեաց ձեռքը ընկնալով չարաչար մահուամբ պիտի ջնջուիք»։

Այս և այսպիսի բանք բաւական չ'եղան այն տաքցած գլուխները զովացընելու․ Թողին զԱշոտ, և ելան իրարու հետ դաշինք դնել, խորհուրդ ընել, հնարք մտածել․ այլ ինչպէս շատ անգամ պատահած է և կու պատահի այսպիսի դիպուածոց մէջ, չկրցան միաբանիլ մէկ գործոյ վրայ․ ոմանք իրենց երկիրը քաշուեցան, ոմանք ամուր բերդերու ապաւինեցան։ Ամենէն տաք գլուխներն որ Մուշեղայ հետ միաբաներ էին՝ զինուոր և ռամիկ, 5000 հոգի գունդ մը եղան, Դուինը թողուցին, գնացին քաղաքին վրայ, զոր քանի մը տարի առաջ Էզիտ ոստիկանն առեր էր 'ի Յունաց և լաւ ամրացուցեր․ թերևս հիմա մէջը բաւական զօրք չկար, չէ Հայոց թուոյն, այլ ոգւոյն դէմ կենալու․ բայց պարիսպներն բաւական զօրաւոր էին․ բոլոր այն տարի (774) ձմեռուան սաստիկ սառամանիքներէն այլ չձանձրանալով Հայք պաշարեցին կեցան քաղքիս քով․ և մեծամեծ մեքենաներ կանգնելով կու ծեծէին պատերը․ և քանի մը ծակ բանալով կրցան քիչ մը քար թափել 'ի ներս և քանի մը մարդ սպաննել․ բայց աւելի սովով կու նեղէին քաղաքը, որ և անձնատուր ըլլալու վրայ էր, երբ յանկարծ մեծ մրրիկ և զօրաւոր հարկ մը հասաւ

Հայոց վրայ: Ասոնց հեռանալը յԱյրարատայ, և ոմանց այլ իրենց բերդերը քաշուիլը տեսնելով Դուինեցի Արաբացիք, սիրտ առին, չորս կողմէն այլ ժողովեցան, և սկսան այրած սրտով ու ծարաւած սրով մօտակայ գաւառաց մէջ պտըտիլ, և շատ արիւնահեղութիւն ընել. բայց ապստամբները նուաճելու համար ստիպուեցան ամօթով եղածը իմացընել ամիրապետին, Սա վրէժխնդրութեան յարմար առիթ գտնելով, անթիւ զօրաց մէջէն ընտրեց Խորասանիկ կտրիճները, 30,000 հոգի, ձիով և զրահով աղէկ մը պատրաստած, և յանձնեց Ըմր Իպն-Իսմայիլ փորձ և հռչակաւոր զօրաւարի մը ձեռք: Ոս և հարաւային հովերէն առաջ անցաւ Ասորեստան, և Աղձնեաց կողմերէն գալով մտաւ 'ի Խլաթ(1) մեծ քաղաքն. ժողովելով հաւատարիմ մարդիկ՝ աղէկ մը քննեց տեղեկացաւ Հայոց պատրաստութիւնը, որչափ հոգի միաբան և ուր ըլլալնին, և ինչ ոյժ ունենալնին. զոր 'ի հարկէ շատ քիչ և ոչինչ գտաւ իր բանակին բազմութեան և կազմութեան համեմատելով: Հոն 'ի Խլաթ էր այն ատեն խոհական իշխանն Աշոտ. և տեսնելով իր հայրենեաց վրայ եկած չարիքն, և իր խրատած իշխանաց անհաւանութիւնը, սիրտն կ'այրէր կու հալէր, առանց կրակը դուրս տալու. մանաւանդ որ պիտի ստիպուէր Արաբացւոց գործակից ըլլալու իրեն ազգայիններուն դէմ: Անհնարին տագնապին մէջ առանց ատեն կորսընցընելու ամենայն ծածկութեամբ իմացուց իշխանակցացը՝ Ըմրի պատրաստութիւնը. և ահա ժամանակն է, կ'ըսէր, ցուցընելու ձեր խօստացած հաստատութիւ-

(1) Վանայ գաւառին մէջ քաղաք մ'է, ատենօք խիստ ծաղկեալ եւ ամուր. բայց հիմայ աւերակ է. բնակչաց ամէնքն ալ գրեթէ քիւրտ են :



նը, կամ իրարու պաշտպանութեամբ մեռնելու: Առջի խրատուն մտիկ չըրին դաշնակիցք, ետքինէն կասկածեցան. կարծեցին որ Աշոտ Արաբացւոց հաւատարիմ մնալովն՝ զիրենք խաբել կ'ուզէ և հեռացնել 'ի Խլաթայ. և մտքերնին դրին Կարնոյ պաշարողաց նման այս մեծ քաղաքս այլ առնուլ յայլազգեաց: Համազասպ Արծրունեաց իշխանն գլուխ կեցաւ, հետն առաւ Վասպուրականի զօրքերէն շատ՝ Ամատունեաց գունդն այլ, Սմբատ սպարապետին Աշոտ եղբօր գունդն այլ, և ելաւ երթալ Վանայ ծովուն հիւսիսային արեւելեան կողմը՝ Արճէշ բերդաւանին վրայ, ուզելով հիմնայատակ ընել, անցած տեղերէն ռամիկ հետեւակ մարդիկ այլ կու ժողովէր կու խառնէր զօրքերուն: Երբ հասան 'ի Բերկրի(1), Խլաթէն Հայ մը եկաւ նորէն իմացընելու թէ Ըմր զօրավարն մօտ է երեք բիւր և աւելի զօրքով: Համազասպ հպարտացեալ՝ զայս այլ նենգութիւն կարծեց, և փոխանակ պարգեւելու՝ պատժեց լրաբերը, և առաջ անցաւ հասնելու յԱրճէշ: Ասոր բնակիչքն այլ իմաց տուեր էին Ըմրայ, որ բազմութեամբ զօրաց ծածուկ ճամբաներով եկեր ապահով տեղ մը դարաներ էր. և հազիւ թէ Հայք սկսան Արճէշի բերդը ծեծել, Արաբացիք դարանէն ելլելով վրանին ընկան, և անզէն անհմուտ հետեւակ գնդին մեծ մասը ջարդեցին, որոց ոմանք այլ փախչելու ատեն ծովը թափեցան. և այսպէս անխոհեմութեան զոհ եղան 1500 անպարտ մարդիկ, անոնց հետ իրենց առաջնորդ չորս ազնուական իշխանք այլ. մնացեալքն փախստեամբ ցրուեցան:

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ *Յուշիկք Հայրենեաց Հայոց*

(1) Վանայ ծովակին մօտ քաղաք մ'է :

## 14. ՄԱՀ ՊԷՇԻՔԹԱՇԼԵԱՆԻ

Անցնում էին տարիք և Պէշիքթաշլեանի առողջութիւնը օրէց օր նուաղում էր. խեղճի տկար կազմուածքը չը կարողացաւ երկար դիմանալ Պօլսոյ թաղէ թաղ երթեւեկութեանց, որ ստիպուած էր անելու իւր ապրուստը հայթայթելու համար։ Շատերին յայտնի էր, որ իւր դասերին աշակերտները մեծ գումար էին կազմում, բայց իրեն երբեմն պատահում էր առանց ստակի մնալ։

1868 թուի սկզբներում Պէշիքթաշլեանի անկողին ընկնելու տխուր լուրը արագութեամբ տարածուեցաւ Պօլսոյ մէջ՝ իւր ծանօթները և բարեկամները շտապեցին այնուհետև հոգ տանիլ նորա մնացած սակաւօրեայ կենաց ապրուստի մասին։ Նոյն տարին Յ. Նորատունկեանը նորան իր հետ մեծ կղզին ամարանոց տարաւ, բայց բժիշկների խորհրդով օդի խոնաւութեան պատճառաւ երկու ամսից Բերա իջեցուցին։ Ամառուայ շոքերը իւր բարեկամաց շատերին ամարանոցներում էր ցրուած. իւր մտերիմ Գրիգոր Օտեան էֆէնտին բացակայ էր Պօլսից։ Մնաց տօքթօր Շիշմանեանը, որի խորհրդով հիւանդին Բերայից Միջագիւղ տեղափոխեցին, որպէս զի աւելի դիւրին լինի իրան բարեկամական և բժշկական պարտաւորութիւնը կատարել և հիւանդին քրիստոնէաբար մխիթարել։

Վահան էֆէնտին և իր մայրը, յանձն առին աշակերտները ժողովել և մի գումար կազմել. հիւանդը խստովանաբար յայտնեց նորանց, թէ ում վերայ որ-



չափ առնելիք ունի, խնդրելով միանգամայն, որ ուզելու ժամանակ ամենաքաղաքավար միջոցներ գործ դրուին, որպէս զի ոչ ոք չվիրաւորուի իրանից և վրան վշտանայ։ «Ես լաւ կը համարիմ զրկուած և չքաւոր մեռնիլ, և իմ բարեկամաց յարգանքը հետս գերեզման տանիլ, քան թէ որ և իցէ ծանօթիս վիրաւորական մի դէպք պատճառած լինիմ» ասում էր նա իւր բարեկամներին։

Վերջապէս Միջագիւղի մէջ վարձեցին երկու փոքր սենեակներ, և այն տեղ տեղափոխեցին հիւանդին։ Խեղճ Մկրտիչը ընդ ամենը մի քոյր ունէր, այն էլ ամուսնացած և մի խորթ մայր. ահա այս մայրը յանձն առաւ հիւանդապահ լինելու։ Օրիորդ Սրբուհի Վահանեանը իւր յարգած դասատուին երախտապարտութիւն յայտնելու համար, իրան սրբազան պարտականութիւն էր համարած, օրը մէկ կամ երկու անգամ գնալ նորա մօտը նստիլ, դեղը իւր ժամանակին տալ, բժիշկներին պատասխանել, հիւանդին սփոփեցընել իւր զուարթ և սուր խօսակցութեամբ կամ նորա սիրած հեղինակների գրուածքներ կարդալով ժամանակ անցկացընել տալ։ Եւ ես 1868 թուին նոյն թաղը բնակուելով, սաէպ ընկերակցում էի օրիորդ Սրբուհւոյն։

Բարձր դիրքի վերայ, գետնայարկ մի սենեակ, որ ըստ հին արեւելեան ճաշակին բազմաթիւ պատուհաններ ունէր, որոնք հեռուանց Վոսփորի նեղուցը կը նայէին, Պէշիքթաշլեանի օթեւանն էր։ Պատուհանների ապակիների քառակուսինները փոքր և բազմաթիւ էին և կարելի եղածին չափ թղթոտած և փարագոյրները թողած, որ քամին ու լոյսը ներս չը թափանցեն։ Այդ արհեստական մթացրած սենեկի մի անկիւնում մի լայն տաճկական մահճա-

կալ էր պատրաստած․ անկողինը շքեղ չէր, բայց մաքուր և սպիտակ սաւանով ծածկուած . . . . մէջը պառկած էր մեր Պէշիքթաշլեանը, շրջապատած փափուկ բարձերով։ Առաջը դրած փոքր սեղանի վերայ շարած էին զանազան տեսակ դեղերի շիշեր, ժամացոյցը բաց առաջը դրած որի վրայ ստէպ ստէպ աչքերը դարձնում էր, և կարծես իւր կենաց մնացած րոպէները համարում․ աջ և ձախ ածած էին իրեն սիրած հեղինակների գործերը, որոնց կարծես աչքով ուտել կուզէր։ Այսպէս էր ահա այս նըշանաւոր անձի դրութիւնը, երբ ես ներս մտայ և իմ ծառայութիւններս նուիրեցի իրան մաշած և նուաղած կենաց թելը երկարացընելու մտօք։ Այս սենեակի պատուհաններից երեւում էր Վոսփորի մի կտորը, որ սարերով պատած լինելուն, նորա վերայ բարձրանում էր Չամլըճայի մշտադալար լեռը և հիանալի տեսարան բացւում մարդուս աչքի առաջ, որով մի քիչ մխիթարվում էր մեր խեղճ բարեկամը։ Սա իւր դրութիւնը լաւ էր հասկանում, ոչինչ տեսարան իրան չէր զուարճացնում, ոչինչ ուրախալի լուր նորա սպիտակած շրթունքներին չէր շարժ տալիս, թէև ինքը աշխատում էր որ բարեկամացը խաբէ։ Նա ունէր միօրինակ փոքր հազը, և ստէպ արիւն թքնելու ստիպուած լինելը իրան նեղ դրութեան մէջ էր դնում բարեկամաց մօտը։ Երբ իրան դեղ էինք առաջարկում, նա միայն բարեկամաց կամքը կատարելու համար էր ընդունում, դառն ժպտալով և գլուխը շարժ տալով նա իւր յուսահատութիւնը արտայայտում էր։

Սաստիկ արգիլուած էր իրեն կարդալ, բայց երբ մինակ էր մնում, փոխանակ մէկ ակնոցի երկուսն էր դնում և ագահութեամբ կարդում էր հոգ-



ւոյ ծարաւը յագեցընելու համար։ Երբ օրիորդ Սըրբուհի Վահանեանը իր անհնազանդութիւնը իրեն կիմացնէր, խեղճը գլուխը առաջ կախած լուռ ու մունջ լսում էր։ Իւր վերջի ժամանակները սաստիկ սիրած էր Գամառ-Քաթիպայի բանաստեղծութիւնները, նոյնպէս Վիկտոր Հիւկօի les Orientales, Լամարդինի Méditationsները, քանի մը իտալացի բանաստեղծներ եւայլն։

Ազգային լուրերը, որոնց համար մինչև վերջի ժամը հետաքրքիր էր, բարեկամները սիրով կը հաղորդէին։

Այսպէս ամառուայ չոք ժամանակները անցան և երբ աշունը եկաւ, առաջին ցրտերը սաստիկ վատ ներգործեցին մեր հալած ու մաշած հիւանդի վերայ։ Իւր տարաբաղդութիւնից Վահանեան ընտանիքն էլ, որ մասնաւոր խնամք ունէր իւր վերայ, Բերայ իջաւ ձմեռուայ համար․ այնուհետև ձմեռը անկարելի էր թողնել հիւանդին վերոյիշեալ տանը, նորա ցուրտ լինելու պատճառաւ, ուստի որոշեցին որ նորան ևս տեղափոխեն ի Բերա։

Միջագիւղ մնալով, ես ստիպուած էի ակամայ կամօք բաժնուելու հիւանդից, որի մօտիկ տխուր վերջը արդէն նկատելի էր ինձ։

Չանցաւ երկու շաբաթ, մի փոթորկալից ձիւնախառն օր, Պէշիքթաշլեանի մահուան լուրը գուժեց . . . . . . ։ Հանճարը մարեց, Հայոց տխուր սրտերին նոր տխրութիւն աւելացնելով։

Մոլեռանդ կաթոլիկ քահանայները սաստիկ ատելով Պէշիքթաշլեանի հայասիրութիւնը, չը կարողանալով որսալ այս ազնիւ սիրտը իւր կենդանութեան ժամանակ, ուզեցին վրէժխնդիր լինել մահուան րոպէներին։ Իրանց դաւանակից Պէշիքթաշ-

լեանին վերջի քրիստոնէական մխիթարութիւնները տալու գլացան, սուրբ Հաղորդութեան և վերջի օծման աշխատում էին չարժանացընել նորան։ Բարեկամների երկար միջնորդութեամբ մի ազատամիտ Հռոմէադաւան քահանայ յիշեալ պարտաւորութիւնները վերջապէս կատարեց ի մխիթարութիւն հիւանդի և իւր բարեկամաց։

Տխուր և հանդարտ՝ բարեկամ երիտասարդներով շրջապատած, Պէշիքթաշլեանի անշունչ մարմինը համեստ կերպով հողը իջեցուցին, և «ընդ աստեղօք ինչ կայ սիրուն, քան զանձկալի եղբայր անուն» գեղեցիկ խօսքերովը իւր գերեզմանը կնքեցին։

Ամեն տարի կատարվում է իւր մահուան տարեդարձը(1) և իւր հանճարը յարգողները նորա անշուք գերեզմանը ծաղիկներով զարդարում են արտասուախառն ողջոյն տալիս հանգած բանաստեղծին, կրկնելով «Եղբայր եմք մենք»։

ՍՐԲՈՒՀԻ Ա. ՆՐԵՑԵԱՆ ՓՈՐՁ. Հանդէս

---

(1) Արդարեւ քանի մը տարիներ յառաջ, ազգասէր երիտասարդաց խումբ մը արժանայիշատակ բանաստեղծին մահուան տարեդարձը վայելչապէս կը տօնէին իր գերեզմանին շուրջը բոլորելով մի տխրազգեաց խուռն բազմութիւն․ բայց չի գիտենք ի՞նչ պատճառներով ընդհատեցաւ եւ մոռացութեան մէջ թաղուեցաւ այսպէս նա որ իւր կենդանութեան ատեն, ԵՂԲԱՅՐ ԵՆՔ ՄԵՆՔ, կը գոչէր։

# 45. ՊԱՏԵՐԱԶՄ ՎԱՐԴԱՆԱՆՑ

—

## Տրամախօսութիւն(1)

### Ա.

Մոռացմր, եղբայր, այն տխուր գիշեր՝
Որ սև թեւերով լուռ կը տարածուէր
Աւարայր դաշտի թաթաւուն յարեան՝
Ցաղթապանծ Հայոց բանակին վրան․
Միայն մէկ քանի աստղերն երկընքին
Նուաղ ու դողդոջ լոյս կը սփռէին․
Եւ Լուսինն աղօտ նըշոյլն իւր արդէն
Հազիւ կ'արձակէր ամպերուն մէջէն․
Օրն 'ի բուն 'ի կռիւ խիզախող քաջաց
Ահագին երամ կայր գետնատարած,
Կէսք 'ի քուն՝ այլ հեշտ երազովք սակայն՝
Կէսք արթուն՝ այգուն մընային ծագման․
Իսկ ո՞վ էր աղէ, այն որ բընաւին
Զը փակեց աչերն իւր արտասուագին,
Այլ լոկ իւղասպառ կանթեղի մ'ի լոյս
Սըրտաթունդ հըսկեց մինչև յԱրշալոյս․
Անդէտ իսկ աւա՜ղ, թէ նա արդարև
Հայրենեաց յետին կը ծագէր զարև․
Կը չափէր անդունդն ինք խոր գիշերուան՝
Ցոր միտք իւր ցոլար կայծակի նըման․

---

(1) Սոյն քերթուածը արտասանուած է երկու աշակերտներէ Իւսկիւտարու ճեմարանին սրահը, Վարդանանց նահատակութեան տարեդարձի հանդիսի մը առթիւ։

Մերթ ընդ մերթ սրտէն բերէր հառաչանք
Այլ ո՛չ թէ կ'ածէր յուշ մահ և կամ կեանք ·
Փրկութիւնն և եթ Հայոց հայրենեաց
Մերթ զայն մտադիւր յորդորէր 'ի լաց ,
Մերթ իբրև առիւծ կը գոչէր ուժգին
Կը դողար դըժոխք , կը ցընծար երկին ·
Մերթ սրտապընդեալ կուզէր նոյնժամայն
Զայն տալ իւրայնոց՝ դէտ կենալ մահուան ·
Կը յիշէ՞ր արդեօք այն վըսեմ Ոգին՝
Սիրողն ու պաշտպան հայրենի թագին ։

Բ.

Այո՛ , և քան զայդ ի՞նչ վեհ յիշատակ՝
Զոր սրտիս անջինջ գըրեմ 'ի տախտակ ·
Եւ զոր մոռանալ չ'է և չ'է օրէն
Հայածին մանկան՝ մինչդեռ այն օրէն
Կըսկըսի սովիլ եթէ ինչ են ճն
Հայրենիք և ազգ , հաւատ ու կրօն ·
Եւ թէ ինչ փառաց կ'ըլլայ արժանի՝
Այն որ սոսկ 'ի սէր նոցին կը մեռնի ·
Այսպէս Մամգունի երջանիկ զարմին
Դեռաբոյս բողբոջն՝ 'ի հող տապանին
Զօրացաւ ընդ հուպ չ'արձըկած դեռ ծիլ ·
Մեռա՛ւ , չը գիտցած թէ ո՞րն է ծընիլ ·
Բայց ի՞նչ է երբէք մահն անոր համար
Որ Ազգի մ'առջև անմոռաց 'ի սպառ ,
Զերթ նորափետուր թըռչնոց տարմ (1) մատաղ
Միշտ յիշատակօք նորոգի վազվաղ ,
Եւ ո՛ր շըրթունըներ չ'են մընչեր արդեօք
Կենացն իւր աղօթը , արեան իւր բողոք ,
Ո՞ր մատեանն անմա՜հ չը՛ դըրօշմեր զայն ,

(1) Խումբ ։



Իւր փառքն ո՞ւր արդեօք չը կանգներ արձան ·
Թէ դարեր անցնին յոգնած ու տըխուր ,
Թէ ժամանակն իսկ թեւերովն իւր սուր
Ծածկէ զամենայն յանշուք 'ի մոռաց ,
Թէ մոխիր ցանէ քայլիցն իւր յընթաց ·
Ո՞ր վայրերն արդեօք , ո՛ր անձաւք լերին
Զ'են արձագանգեր զանուն անմահին ։
Տըղմուտի ափանց արիւնոտ ալիք
Ո՛հ , ո՛րքան արդեօք բըղխեցին լալիք ,
Երբ իւր սիրելեաց գըրկերէն ՎԱՐԴԱՆ
Թաւալգըլոր ինկաւ 'ի լուռ գերեզման ,
Կամ ինչպէս արդեօք նոճիք Արտազու
Ողորմ մըռընչմամբ ձայն տուին մահու ։
Բայց դու , ո՛վ եղբայր , պատմէ՛ թէ որպէս
Դիմեց այն Դիւցազն մարտին յասպարէզ ,
Մինչ զո՛ւր իւր առջև մահն իւր սև ճիրան
Սրբէր բռնութեան յեսանին վըրան ,
Շըղթայից 'ի չարժ և զո՛ւր գերութիւն
Ցոյց կուտար իւր դէմք դեղնած ու տըժգոյն ·
Ի՛նչպէս նա ազատ ճօճելով իւր սուր՝
Դիականց կանգնեց երկնաբերձ բըլուր ·
Որպէս զի ճնշեալ երակացս արիւն
Առնու նոր կորով՝ ոգի և աւիւն ·
Եւ հայրենատենչ ակումբս հայակոյտ՝
Որ 'ի յուշ Քաջին ժողովուած 'ի փոյթ ,
Կը սիրէ լըսել նորա արութեանց ,
Քարոզ արդ կանգնէ վեհին պարծանաց ·
Զի դու առաւել , եղբայր իմ , քան զիս
Հայրենեաց սիրով վառեալ բորբոքիս ։

## ՎԷՊՔ

### Ա.

Դեռ նոր արեւու աղօտ ճառագայթ
Կը ծածկէր Հայոց լերանց 'ի գագաթ,
Խորշոմած ճակտով՝ և գըլխով ճաղատ(1)
Ալեւոր ծերուկ մը դէմքով աղատ՝
Ձեռքերն իւր յերկինս իբր յաղօթս կեցած
Ահագնադըղորդ ձայնիւ մը պոռաց.
« ՂԵՒՈՆԴ խաչաբարձ, ՎԱՐԴԱՆ զինակիր,
« Արիք, կազմեցէք մարդամբոխ ջոլիր.
« Այսօր մեզ երկինք բանան նոր կըրկէս,
« Մահու կամ կենաց վըճիռ կայ 'ի մեզ.
« Իսկ օրհնեալ է այն և միշտ կենդանի
« Հազար ես կուտամ նըմա երանի,
« Թէ իւր Հայրենեաց փըրկութեան համար
« Աչքըն‿պիշ յեթեր, կը մոռնայ աշխարհ:
« Ո՛վ Արարատեան առիւծունք ահեղ՝
« Հօսեցէք աղէ արեան յորդ հեղեղ.
« Որ ըսպառնացող գըլխուն մեր վրայ՝
« Խըրին ու մարին չանթիք Սասանայ.
« Ա՛հ դուք թէ 'ի խաչ լինիք ապաստան
« Խաչին հետ կանգուն մնայ Հայաստան »:
Այս ձայնին 'ի լուր սարսեցաւ Վարդան,
Բայց չ'էր այն սարսուռ արկածից մահուան.
Այլ նըման արծուին՝ որ չուրջ դիտելով
Կը թօթուէ թեւերն իւր ուժգին թափով,
Եւ կը թռչի վաղ հոն՝ ուր պարայած(2)
Իւր սըրատեսիլ աչօքն էր նայած.
Այսպէս իսկ դիւցազն այն քաջակորով

(1) կունտ, անմազ: (2) Պարայածեմ, չորս կողմը պտըտցնել.



Արտօսր 'ի յական, սըրտիկն 'ի գորով,
Սըրացաւ 'ի դուրս, 'ի զուր աստ և անդ
Ջոհ կը փընտըռէր սըրոյն իւր երկաթ.
Հիացած կեցաւ երբ տեսաւ այն ծեր՝
Որ զօրաց ամեն կարդար քաջալեր.
Պահ մը շէնքն 'ի վայր դըրած սըրտագին
Փարեցաւ նըմա, հառաչեց ուժգին.
« Ես 'ի մահ կերթամ, իմըս ԵՂԻՇԷ,
« Եւ դու անմոռաց, դու զիս միշտ յիշէ . . . »
Այլ հեղձամըղձուկ եղաւ իւր բարբառ
Բիւր յիշատակներ զարթեան 'ի դալար:

### Բ.

Ո՛վ Հայոց մեծաց՝ քաջաց դու որդի,
Ո՞ր դափնի վայել քու վըսեմ ճակտի
Կը պատրաստէին երկինք այն ժամուն՝
Յոր ցըրուէր աչքէդ խաւարը մահուն,
Եւ ինչպէս արդեօք յիւր ծոց Աւարայր
Ըզքեզ ծածկելու համար կը խայտար,
Դարերէ հետէ որպէս զի նա քեւ
Յիշատակաց մէջ փայլի ակներեւ,
Զի փառաց Երկիրն այն եղաւ գըտակ՝
Որ արի արանց ծընած գումարտակ՝
Կաթին հետ արտօսր, որդւոց իւր 'ի պար,
Գինւոյն հետ արիւն խառնելով կուտար.
Ո՛վ իմ հայրենի Աշխարհ այսպէս դու
Խանձարուր եղար անթիւ քաջերու,
Թէ չ'ունիս նըշան պարծանացդ այդքան
Քու աւերակներդ քեզ լուռ են բերան,
Եւ քան զամենայն քու տարաշխարհիկ
Որդւոցդ իսկ ահա երամ դասալիք
Մինչև ցըյետին շունչ ըզքեզ բաբէ

Քընարաց 'ի քնարս տըխուր կ'եղերգէ ·
Եւ քու պաշտելի դիւցազինդ հըզօր
Յիշատակն ահա կը տօնէ այսօր ·
Ներէ , եղբայր իմ , թէ խօսիցըդ թել
Հատի , և մու դու զամենն ինձ պատմել :

Ա.

Պահ մը լուռ կեցաւ ծըխացողն 'ի բոց
Հոգին մըրըրիկ մ'ունէր ալեկոծ ,
Կայծակներ կարծես կիյնային ճակտէն՝
Երբ իւր առընթեր կանգնած Եղիշէն
Նոր արև նըմա ցոյց տար մատնանիշ
Աչերն սեւեռած ընդ երկինս 'ի պիշ ·
Եւ անդուստ Վարդան կը կըրկնէր դարձեալ ,
« Ես կերթամ 'ի մահ զինուցս այս 'ի փայլ ·
« Եւ ազատութեան թև առած յաւէժ
« Կերթամ ուր որ զիս կը կանչէ վըրէժ . . .
« Հարուած թօթափել վիշապաց 'ի գլուխ
« Եւ անոնց արեան գետահետ 'ի յուղխ
« Ըզմայլած դիտել իմ հէք Հայրենեաց
« Գէթ ճակատագիր երկնից պատրաստած » :
Հընչեցին փողերն յանշուշտ պատերազմ ,
Կանգնեցաւ յոտին , կազմեցաւ 'ի ռազմ
Ո'չ նըւազ ըստուար Հայոց գօռ բանակ ,
Տեսնելով ամեն ուրեք յաղթանակ ·
Մինչդեռ մարտորոտ Վարդան ժուռ կուգար
Միւս ումն իբր ԱՐԷՍ 'ի շոյտ գարշապար ,
Եւ մինչդեռ այսպէս կը խօսէր , այնքան
Վառեցաւ սըրտից կորովն արութեան .
« Ժամանակն ահա եկած է հասած ,
« Ամեն կեղտ անուն բառնալու 'ի բաց ·
« Ցայնժամ մեք թէպէտ թախծեալ յարտասուք



« Սըրտաթափ արդեօք կայինք տըրտմասուգ ·
« Սակայն լուրջ այսօր , զուարթ եղէք դուք
« Ահա առաջնորդ Ձեռք մը ձեզ ծածուկ՝
« Որ հըսկէ յերկնից · չ'է մարդ զօրավար ·
« Այլ մարտիրոսաց պետն այն բարերար :
« Թերահաւատից երկիւղն է նըշան ,
« Մերժենք այդ խորհուրդն՝ որ չար է փախճան » :
Ըսաւ շարժեցաւ , կընթանան քաջեր
Կապարճ 'ի շալակ՝ և գըրկած խաչեր :
Եւ ահա Պարսկին կը մօտէր խուժան
Զոր գետոյն Կուրայ ալիք հողմաձայն
Բերեն անդր 'ի դաշտ մարտին ընդարձակ
Եւ անթիւ զինուց շառաչմանց համակ
Արձագանգ տըւին Լոփնասի դարեր ,
Ոտից 'ի դոփիւն երկիր կը սարսէր :
Բայց Մահը ընդ հուպ զարհուրած արդէն
Մեկնած էր տըխուր՝ Հայոց բանակէն ,
Երբ ձայն իբերայ տալով անվեհեր՝
Յարձակին ընդդէմ՝ մերկացած սուսեր ·
Այլ իւր նետերէն պատրաստէր քանին ,
Ծեշտ ուղղել նոցա կըրծոց տախտակին :
Հոն երկու գընդերն բաղխելով միմեանց՝
Կը տեղան տարափ նետից՝ կայծականց :
Գոռայր ԳԸՆՈՒՆԻ , առիւծն ԱՐՇԱՒԻՐ ,
Խիզախէր ԽՈՐԷՆ թողլով արհաւիր ,
Կը վարգէր (1) ՎԱՀԱՆ թեթեւ և արագ ·
Թօթափէր ԹԱԹՈՒԼ հարուած երկնառաք ·
ՆԵՐՇԱՊՈՒՀ անդուստ ներշընչէր հըրատ (2) ,
Հառաչէր ՀՄԱՅԵԱԿ , տըրոփէր (3) ՏԱՃԱՏ ,
Շըշէր ՇԸՄԱՒՈՆ , արշաւէր ԱՐՍԷՆ ,

---

(1) վազել , յարձակիլ . (2) կրակ , բոց . (3) Շշընկոց հանել :

ՆԵՐՍԷՀ իսկ յարին կը ներկէր զամէն,
Ու՛ այսպէս ՚ի փախուստ դարձան Թըշնամիք,
Ամպի մը հանգոյն զոր վարէ մըրրիկ,
Եւ կէսք գիտապաստ (1) ինկան շընչասպառ,
Վէրքեր ՚ի Թիկանց ընդունած հազար:
Սակայն յեղակարծ մըԹընցաւ երկին
Հեծեծեց ողորմ, վա՜հ արեւ Քաջին
Բարձրէն վարգաբեր ասուպի նըման
Ինկա՜ւ, մարեցա՜ւ, ո՛չ եւս էր Վարդան:
Կարծես բախտն իւր դէմքը շըրջեց փոփոխ
Լըռեց իսկ անդէն հայակոյտն ամբոխ,
Եւ արտօսրալիր ողբոց ՚ի կայլակ
Ցօղեցին ընդ հուպ Դիւցազին դիակ,
Որ իւր ճակատուն պարզուԹեամբըն դեռ
Հայրենեացն յետին հրաժեշտ կ'արձակէր·
Եւ ընդդէմ մահուն անդ դիմադրաւող
Հանգչէին իսկ քաջք Հայրենին ՚ի հող:
Կ'ասեն այն օր հոն լացաւ Եղիշէ,
Ուխտեց որ զանոնք յաւիտեան յիշէ . . . :
Ինձ եւս որ հայ եմ կը մնայ այժմիկ
Յիշել զայն ու գէԹ արտասուել լըռիկ:

Բ

Այլ ընդհակառակն հըրճուիմ ես, եղբայր,
Որ յօժարակամ հայրենեաց համար
Ցանկալի մահուամբ Թէպէտ կը մեռնի,
Այլ դարեր կ'անցնին ու դեռ կենդանի,
Եւ յիշատակին արձագանգն վըսեմ
Ամէն սըրտերու խորէն կը լըսեմ:
Բայց շատագունի՛մ . . . ածելով ՚ի յուշ

(1) Դիակի պէս ընկած:



Թէ վա՜հ մեր Ներկայն դըժնիկ է և փուշ,
Մինչդեռ Հայրենիք յԱնցեալն իւր Նախկին
Դափնի կը կըրէր յաղԹական ճակտին:
Սակայն ո՛ր օտար Երկընքին ներքեւ
Մեզ ազատուԹեան կը ծագէ արեւ.
Է՛հ, մեր հայրենի երկիրն է այն՝ որ
Փառաց և Թագի կուտայ մեզ շընորհ,
Վասըն զի երբ մեզ խոպան դաշտերն իւր
Սարերն ու սաւերն ըլլան խանձարուր·
Այն ատեն Թերեւս կը ծընին ընդ հուպ
Անվեհեր որդիք շող յարեան ՚ի ծուփ·
Այն ատեն երկիրն Վեհին Վարդանայ
Նախնի իւր փառաց կը կանգնի վըկայ,
Թէ ճակատագիր մ'ունինք ո՛ Հայեր·
Ա՛յս իսկ է ահա, այս իսկ են կեանք ձեր:

Մ. ԴՈՒՐԵԱՆ (1)    Ընտիր գործեր

(1) Բարեյիշատակ Պետրոս Դուրեանի՝ երիտասարդ բանաստեղծին կրտսեր եղբայրն է, այժմ դասատու Հայերէն լեզուի, որոյ մէջ ունեցած հմտուԹիւնը եւ բանաստեղծական կիրԹ ճաշակը յուսալից ապագայ մի կը խոստանան: Սա մոտերս վարդապետուԹեան կարգն ստանալու կը պատրաստուի. եԹէ մեր մէջ ա՛յնչափ քիչ չըլլար այսպիսեաց Թիւը . . . . .:

# 17. ՔԱՋ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ՄԱՀԸ

—

### 1

*Նախերգանք*

*Ո՜վ լուսին, լուսին, էլ քանի էգպէս*
*Դալկացած, տըժգոյն, տըխուր երեւիս.*
*Այդ Թըխպոտ ամպերն քեզ զարհուրեցին,*
*Բոցոտ կայծակներն քեզ այլայլեցին:*
*Երկնից կամարի դեզը դու ես լոկ*
*Աստեղց մէջ չըկայ քեզ նըման ոչ ոք.*
*Մի՞թէ նախանձից Թափել ես գոյնըդ,*
*Զէ, ուրիշ գաղտնիք ունիս սրտումըդ:*
*Ասա ինձ, լուսին, ասա սրտաբաց,*
*Ինչու է, ինչու դէմքըդ այլայլած.*
*Երբ մենք սեւ օրուան ունինք կարեկից,*
*Ասում են, կէսն է պակսում մեր ցաւից.*
*Թշուառին Թշուառն է միշտ մխիԹար,*
*Ո՞ր տեղ կը գտնես դու քանց իս Թշուառ.*
*Քեզ պէս մըտատանջ, քեզ պէս անտերունչ.*
*Անցընում եմ օրերս, վայ գլխուս տալով,*
*Մարդկանց մէջ ուրախ, միայնակ լալով.*
*Լալիս եմ, լալիս, արցունքս յորդոր*
*Ցօղում, վազում են աչքիցս ամեն օր.*
*Զեն, չեն պակասում հառաչանք ինձնից,*
*Եւ այս սեւ օրուան չունիմ կարեկից.*
*Ամեն շնչաւոր ունի մի ընկեր,*
*Միմիայն ինձնից պիտի պակսի սէր.*



*ԵԹէ դու էլ ես Թշուառ ինձ նման,*
*Իմ քաղցր խօսքը կ'լինի քեզ դարման.*
*Սրտիդ խորհուրդը բաց ինձ անկասկած,*
*Ինչու է, ինչու դէմքըդ այլայլած:*

### 2

*Լուսինը դողդոջ ամպեր ճեղքելով,*
*Ինձ պատասխանեց լալագին ձայնով.*
*« Լսէ, Մուսային պարկեշտ որդեգիր*
*(Թէ գլխուս անցքին ես հետաքրքիր),*
*Շատ դար դէս ու դէն ունայն շրջելով,*
*Քեզ միայն գտայ զգայուն հոգւով.*
*Բայց մինչեւ այսօր չի գըտայ ոչ ոք.*
*Որ իմ տխրուԹեան տանէր քիչ մը հոգ.*
*Ոչ ոք չը խլեց դարտը (1) իմ սրտից,*
*Շատ դար ինձ ոչ ոք չեղաւ կարեկից.*
*Շատ դար եմ պահել մայրագուԹ խնամով*
*Օտարի գաղտնին սրտիս մէջ. բայց ո՜վ*
*Մի օր բարձրացուց աչքերը երկին*
*Ու կարեկցաբար հարցուց « ո՜վ լուսին,*
*Ինչու ես տըխուր, գունաԹափ դիմօք,*
*Ի՞նչ ցաւ է սրտումդ, ի՞նչ ցաւ, ի՞նչ մորմոք»:*
*Գո՜հ եմ, գոհ քեզնից, պարկեշտ բանաստեղծ,*
*Ինձ սփոփեցին քու խօսքերն անկեղծ.*
*Ինձ՝ որ համաշխարհ կարծում է անբան,*
*Միայն քեզ համար կը բացուի՝ մ բերան,*
*Քու անոյշ խօսքին և ես փոխարէն*
*Կ'պատմեմ ինչ որ անցաւ իմ գլխէն.*
*Դու այն կ'պատմես բանիւ ներդաշնակ,*
*Ցետնորդք կը հիւսեն քեզ դափնեայ պսակ.*

---

(1) Բառ ռամկական, իբր ցաւ, վիշտ.

Թո՛ղ քեզ խուժանը ատէ, անարգէ,
Նաև այդ անուան քու շուք ու փառք է.
Ի՞նչ սէր ես խնդրում մարդկութեան ցեղից,
Ե՞րբ վարդ է քաղուել տատասկոտ տեղից,
Սէրը նըմանից պէտք է պահանջել.
. . . . . . . . . . . . . . . . . . .

**3**

## Լուսնի պատմութիւնը

Ի հին են ծնել մեր հարքն առաջին,
Որք յետ Ադամայ զԱստուած օրհնեցին:
ՆԱՀԱՊԵՏ

Դէհ, լսէ, Մի օր կապուտակ կամարն
Ողջ ծածկել էին աստղեր անհամար,
Ես էլ հարսի պէս նոցա մէջ փռուած,
Հանդարտ գնում էի դէմքըս քող առած:
Անցայ լողալով ծովը Պոնտոսի,
Անցայ քերելով կատարք Կովկասի.
Տեսայ երեսս Գեղամայ ջրումը,
Զովացայ փոքր ինչ ձկնոտ Վանումը(1),
Խոյս տալով անցայ շատ սարեր, դաշտեր,
Ուր խոր լռութիւն, հանգիստ պատել էր.
Անխոնջ մըշակը հողի վրայ պառկած,
Զովութիւն խնդրում էր մարմնուն յոգնած,
Եզն ու գըրաստը նոյնպէս վաստակած,
Խաղաղ դաշտի մէջ էին տարածած.
Հայո՜ց աշխարհիկ, բերկրութեան տեղիք,
Հայո՜ց բնութիւն, ա՜խ, Հայ մանկըտիք,
Գեղօրէք, աւանք, դաշտք ու արտորայք,

(1) Այսինքն՝ Վանայ ծովակին մէջ, որոյ ձուկը առատ է:



Քաղաքք մարդաշատք, շէնք ու վանորայք,
Ո՞ւր էք, ո՞ւր հիմի, ինչո՞ւ շուտ կորաք,
Ո՞վ ձեզ կործանեց, ո՞ր ձեռքը վայրագ.
Այն գեղեր երնեկ էր Հայոց երկրին,
Աստղերն էլ երկնից նորան փառք տուին.
Ու ես անցնելով նորա վըրայից,
Չէի կշտանում վրան նայելից:

**4**

Ուղիղ չորս շաբաթ այն օրից անցան,
Կատարեցի ես դարձեալ մի շրջան,
Շտապով անցայ քաղաքներ, գիւղեր,
Լեռներ, ծովակներ ու շատ շատ տեղեր,
Կարօտով մըտայ Հայաստան աշխարհ,
Դարձեալ գիշեր էր, մըռայլ ու խաւար
Տիրել էր Հայոց առատ դաշտերը,
Բայց, ա՜խ, ո՞ւր էին հունձ ու արտերը,
Ո՞ւր էր այն Հայոց անխոնջ գեղջուկը,
Ո՞ւր է հաստավիզ նորա գոմշուկը,
Ո՞ւր էին խեղճի արօրն ու սամիք
Կամ ո՞ւր մշակի պարտէզն ու այգիք.
Սև ծուխ էր պատել Հայոց երկնքին,
Գեղեր, քաղաքներ տուած կըրակին,
Անողորմ էրվում, տոչորվում էին,
Բոցեղէն լեզուքն հասնում ամբերին,
Դժոխք էր տեսիլն խեղճ Հայոց երկրին. . .
Բայց քեզ ո՞վ նիւթեց այդքան մեծ չարիք,
Երկնացօղ պարտէզ, Հայոց աշխարհիկ,
Նախանձ էր տիրել այդ մարդի սրտում,
Թէ օձ էր բնակել նորա չար հոգում.
Այո՛, նախանձ էր, նախանձ դարևոր,
Որ մարդուս սիրտը այրելով բոլոր,

Իսկ և իսկ սաստիկ, ահեղ ճայթմունքով
Դուրս ցայտում, վազում է մեծ հոսանքով.
Ինչպէս այն սարերն դրսից հանդարտիկ,
Որոց վրայ հալվում չէ փափուկ ձընիկ,
Յանկարծ կայծակներ ծընում են ծոցից,
Քաղաքներ ամբողջ այրվում են բոցից.
Այդպէս նախանձի սերմունք սըպըրդած
Յազկերտ արքայի սրտի մէջ, յանկարծ
Հարիւր հարիւրով պտուղներ ծնուցին,
Պտուղք—արժանի գեհենի հընձին։

5

Տեսայ Աւարայր սարսափած ահից,
Անթիւ զօրք նորա տիրել էր Պարսից
Հայոց գնդիկն էլ համարձակ ու քաջ
Բըմծիծաղ դէմքով կանգնած էր առաջ։
Ծագեց արևը. կատարք շողշողուն
Երևան եկան Հայոց սարերուն,
Անօսր ամպերը կարմիր, ծիրանի
Գոյնով ներկած՝ զարդ էին երկնի.
Աւետիս կարդաց նորեկ արևուն.
Քաղցր տաղերով արտուտն արտերուն.
Տըղմուտը հեռուանց անոյշ խոխոջով
Բերում էր ափերն փռուած վարդերով.
Հանդէս էր բնութեան. միմիայն մարդը
Այն օր չէր կազմում բնութեան զարդը.
Ուրիշ մըտածմունք էր նորա հոգում,
Չար ոխ, չար նախանձ ու ատելութիւն.
Ճակատ ճակատի կանգնած անվեհեր,
Հայոց քաջորայք, Պարսից կորիճներ,
Պատրաստ են չափել ուժերը բազկին
Սրեամբ կըշտացնել ծայրը նիզակին.



Սանձակոծ ձեանք, անճոռնի փըղեր
Հողն էին փորում ոտով անհամբեր . . .
Յանկարծ բանակից դուրս եկաւ ՎԱՐԴԱՆ
Ու ահեղ զօրքին տուեց նա նշան։

6

Յառաջ մատիք ինձ լըսել,
Շառաւիղք քաջին Հայկայ.
Ես կամիմ ձեզ արդ պատմել
Զազգասէր գործ ՎԱՐԴԱՆԱՅ։
Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՎԱՐԴԱՆ—զօրավար իր ազգէն ընտրած,
Արեան դաշտի մէջ ՔԱՋ հանդիսացած.
Սըրտացաւ Հայոց դառն վիճակին
Ոտք հանեց նոցա ընդդէմ գոռ Պարսկին.
Չը կարած տանել նորա վեհ հոգին
Կրօնի հալածմունք սիրելի ազգին,
Թըրով ու խաչով տուեց մեծ երդում—
Յաղթել կամ փառքով ընկնել գոռ դաշտում.
Եւ զօրքը նոյնը երդմամբ կրկնեցին,
Մարմինքն ու հոգիքն ազգին զոհեցին։
Վերին ներշնչմամբ Վարդան քաջ գիտէր
Որ օրհասական այն օր վերջինն էր,
Բայց նա ըստրկի կեանք վարել չընտրեց,
Ծննդով ազնիւ, ազնիւ մահ խնդրեց.
Չէր նա կուրացած նշոյլքով բաղդին,
Բայց չէր էլ զզուել օրերով կեանքին.
Նա քաջ էր մարմնով, հոգւով էլ վեհանձ,
Կիրքերը նորա բնաւ չէին անսանձ.
Առտնին կեանքում ծընող բազմագութ,
Բանակի մէջը զօրավար հըմուտ.

Պարիսպ ամրակուռ հայրենեաց համար ,
Ամէն մի հայի յոյսն ու մխիթար .
Բայց իր թշնամեաց . . . ահեղ հալածիչ ,
Դէմ ու դէմ կռուող , բայց ո՛չ նենգ պատրիչ ,
Քանի որ ոսոխն թուր ունէր ձեռին ,
Վարդան էր նորա ահեղ թշնամին .
Բայց երբ դնէր նա զէնքն իւր գետնին ,
Վարդանն էր նորա պաշտպան առաջին .

. . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . .

Յ

Թնդաց սրտերը արի Հայերուն ,
Սանձերը թողած նժոյգ ձիերուն ,
Աջ ձեռքին թրեր , ձախերին վահան ,
Քա՛ջ քա՛ջ վազ տուին Պարսից յանդիման .
Գրոհն էր ահեղ սրտոտ Հայերուն ,
Գետերի նման թափեցին արիւն .
Մահը անփախուստ էր նոցա աչքին ,
Խիտ թանգ ծախեցին մահերը Պարսկին ,
Երկար չը տեւեց այն անգամ կռիւը ,
Շուտ շուտ քիչացաւ Հայերու թիւը ,
Մնացորդք քաջաց նախանձ բերելով ,
Ընկան կոտրած Պարսից թրերով .
Մնաց լոկ Վարդան իր բուռ քաջաց հետ ,
Նորա առաջ գունդք Պարսից անհեթեթ .
Չը սարսեց նորա վեհանձն հոգին ,
Տենելով անշուշտ վըտանգ առաջին ,
Սրբեց պեխերը , նայեց աջ ու ձախ ,
Բուռ քաջերուն ասաց դէմ ծիծաղ .



« Տըղերք , ահա մեզ մի կարճ ճանապարհ ,
« Որով այս երկրից կերթանք նոր աշխարհ ,
« Ուր մեր քաջ նախնիք կան մեզ անհամբեր
« Փառաց պըսակով շատ ու շատ դարեր .
« Տանք վերջին բարեւն աշխարհին Հայոց ,
« Որ սընուց գըթով մեր տըղայ տիոց
« Առանց հայրենեաց մեզ մութ է աշխարհ ,
« Հայաստանն էր միակ մըխիթար .
« Կորաւ Հայաստանն , էլ ինչ յոյս մընաց ,
« Մեր կեանքն ինչ է , թէ ոչ սուգ ու լաց .
« Այժ , տանն ունիք ծընողք , ընտանիք ,
« Թո՛ղ կորչին , երբ որ կորաւ հայրենիք .
« Գոնէ մեր յետնորդք կ'ասեն մեզ համար ,
« Արցունք թափելով աչքից անդադար ,
« Երանի էր ձեզ , ո՛վ որդիք փառաց ,
« Որ դուք չըտեսաք կորուստն հայրենեաց .
« Ձեր կեանքն էր ազնիւ , ազնիւ մահ առիք ,
« Ձեզմով կը պանծայ յաւէտ հայրենիք ,
« Ձեր կեանքն կ'լինի յետնոց օրինակ ,
« Ինչպէս մեռնիլը ձեզնից սովրեցանք ,
« Ինչ որ ունէիք՝ Ազգին արիք զոհ ,
« Ազգն յաւիտեան կը մընայ ձեզ գոհ .
« Քընից յառնելիս , կամ քուն մըտնելիս
« Միշտ ձեզ կը յիշենք մենք աղօթելիս .
« Մեր անմեղ մանկանց տըխուր օրօրով
« Ձեր գըլխու անցքը կը պատմենք երգով .
« Ձեր անկման տեղը կրօնասէր մարդիկ
« Կը դարձնեն անշուշտ աղօթից տեղիք ,
« Ձեր մարմինն ամեն մի Հայու համար
« Կը դառնան մասունք սրբոց փրկարար .
« Հանգէք , դիւցազունք , հանգէք յաւիտեան ,
« Ձեզ միշտ կը յիշէ ձեր մայր-Հայաստան » :

Ասաց ու լըռեց ։ Երկու աչերից
Ցօղացին արցունք ինչպէս ցօղ երկնից
Ուժգին ախ քաշեց անվեհեր սրտէն ,
Բայց այդ ախը չ'էր թշնամու ահէն ։

## Ը

Բայց ինչո՛ւ լացեց այդ արի մարդը ,
Որին անծանօթ էր ահն ու դարդը ․
Գուցէ թէ յիշեց նա այդ րոպէին
Տանը անպաշտպան թողած ընտանին ․
Որ շուտով կ'ընկնին ձեռքը թշնամուն ,
Այդ ազատ կեանքէն կ'երթան գերութիւն ։
Ձեռակապ , քաղցած ու հազար չարիք
Անմեղ տանելով խեղճ Հայոց կնանիք ,
Պարսից սիրոյն պիտի հարճք լինին ,
Կամ կոյր հետեւողք Զրադաշտի կրօնին ․
Կ'անցնին սև օրեր , կ'անցնին և տարիք ,
Այդ զեղծ կեանքումը կը մոռնան չարիք ,
Իրանց հալածչաց , կը մոռնան Հային ,
Որք նոցա սիրոյն այդքան ցաւ տարին ․
Այն թռչնուն նման , որ և վանդակում ,
Անտառէն զրկած՝ գրտաւ խնդութիւն ․
Անոյշ երգերով , հօրերէն սովրած ,
Ունկը փաղաքշեց իր չար թշնամեաց ․ ․ ․
Գուցէ նա լացեց Հայի վիճակին ,
Անկումը գահին , կորուստը թագին ,
Որ հազար ու բիւր կրելով ցաւեր ,
Անկործան պահեց նոցա շատ դարեր ․
Ինչո՞ւ ․ ․ ․ որ մի օր յիմարի կամքից
Անդարձ զրկուի հօրական(1) փառքից ․

(1) Հայրական ։



Ա՜խ , դառն էր նորա հսկայի սրտին
Տեսնել յաղթանակ Պարսից ոխերիմ ։

## Թ

Կարծիք կայ որ հոգին ունի մի գաղտնի զօրութիւն իւր ապագայ վիճակը նախագդալու ։

Սեւ սեւ պատկերներ՝ սեւ քօղի նըման
Վըրդոված մըտքին եկան յանդիման ․
Տեսաւ Հայաստան ոտնակոխ արած ,
Քաղաքք մարդաշատ խոպան աւերած ․
Երբեմն բնակիչք տէր շատ ազգերի ,
Այժմ կրօնամոլ Պարսկին են գերի ․
Փակած են դըռներն նոցա ժամերուն ,
Անդ էլ չի հնչում սրբոց ալէլուն ,
Եւ նուիրական նոցա սուրբ տեղիք
Էլ չեն այցելում կրօնասէր մարդիկ ․
Այրուձին Հայոց , այն քաջ այրուձին —
Ո՛չ Հային պաշտպան կ'լինի , այլ Պարսկին ․
Եւ գանձք լեռներուն , բերք առատ երկրին
Ողջ պիտի լափէ անհաշտ թշնամին ։
Հայը անճարակ՝ կը մոռնայ Ազգը ,
Կրօնն , եւ լեզուն , եւ հօրանց (1) փառքը ,
Հայկ , Արամ , Տիգրան և այլ դիւցազունք
Կ'երեւին նոցա պատիր շաղփաղփունք ,
Եւ կամ՝ լըսելով մեծ գործք Ներսիսին՝
Գուցէ զաւակունք նոցա կասկածին ․
Հըրաչեայ , Զարմայր և Վահագն արին
Երբէք չեն անցնել նոցա մըտքերին ։

(1) Իբր հարանց , նախնեաց ։

## 10

Նա լուռ էր․ բայց այդ լըռութեան խորին
Նըման էր անհուն ու անդորր ծովին,
Որ մեղմ ծըփալով, նաւաստեաց սրտում,
Յաջողած ճամբու յոյսեր է ծընում․
Բայց վա՜յ է խեղճիկ անփորձ նաւորդաց,
Թէ հասու չ՚եղան նորա պատրանաց,
Կը վերցնէ ալիք մինչև ամպերը,
Խաղալիկ կ՚լինին նորան նաւերը,
Կուլ կ՚երթան անյագ, փրփրած ծովին,
Ո՞վ դէմ կը կենայ կատաղած հովին . . .
« Քաջե՛ր, ասաց նա, ինչո՞ւ էք տըխուր,
« Յոգնա՞ծ են ձեռներդ, թըրերըդ չեն սուր,
« Նո՞ր է մեզ համար նիզակ խաղացնել,
« Հայոց թշնամու կեանքը կարճացնել․
« Սարսեցո՞ւք Պարսկի անթիւ զօրքերից, —
« Մի Հայը քաջ է նոցա հարիւրից,
« Յիշեցէք Հայկին, որ բուռն (1) քաջերով
« Դէմ կեցաւ Բէլին, հոգին անխռով
« Ջարդեց, կործանեց․ մընացորդք ցրրիւ
« Եղան Հայերից, ինչպէս չոր խըռիւ․
« Մահի՞ց վախեցաք․ ամօթ է Հային
« Իւր ազատ կեանքը փոխել ստրկին․
« Մա՜հ, մա՜հ, եկ շուտով, սեւցո՛ւր իմ կեանքը,
« Ինչպէս սեւացաւ Հայերու փառքը․
« Դէ՛հ, վերջին անգամ հօրանց տաղերով
« Կռուինք ու մեռնինք Պարսից թըրերով »։

(1) Բուռն, սաստիկ, զօրաւոր։

## ՁԻՆՈՒՈՐՆԵՐԸ ԵՐԳՈՒՄ ԵՆ

Ձինուոր էի Հայոց ազգին մըտերիմ,
Երբ Հայաստան քարքանդ արեց թըշնամին․
Պինդ պինդ ցաւեց սիրտը արի Հայերուն,
Այն օր նոքա թափել տուին գետ արիւն․
Շատ շատ քաջեր ընկած աստից ու անտից,
Ես էլ ընկայ թշնամիի սուր նետից․
Իմ մարմինը դաշտի միջին է ընկած,
Քրիստոնէի սուրբ օրէնքով չ՚է թաղած․
Դուն մի՜ մնար աչքդ արցունք օրն ՚ի բուն,
Սիրականիդ, իմ սիրական, մըտի՛ր քուն,
Առտուն կուգայ չարագուշակ գուժկանը,
Սուգ, ողբ, կըսկիծ նա կը նիւթէ իմ տանը,
Երբ-որ լըսես վաղաժամիկ իմ մահը,
Ա՛ռ երկու թի ու երկաթէ սուր բահը,
Ա՛ռ քու հետը մի ըսպիտակ մեծ պատան,
Փորէ խորին ինձի համար գերեզման․
Գերեզմանիս վըրայ բըսնի վարդենին,
Վարդը բացուի, աչքը գըրաւէ ամենին,
Սոխակին էլ թո՛ղ գըրաւէ նա հոգին,
Քաղցր տաղի թո՛ղ ներշնչէ սոխակին,
Թո՛ղ սոխակը անցքըս պատմէ ամենուն,
Թո՛ղ լըսողը ողորմիս տայ իմ հոգուն։

## ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի է՞լ լըռենք, եղբարք, հիմի է՞լ,
Երբ մեր թըշնամին իւր սուրն է դըրել,
Իւր օրհասական սուրը մեր կըրծին,
Ականջ չի դընում մեր լաց ու կոծին,
Ասացէք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լըռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը — պաշտպան մեր անձին,
Մշակի ձեռքիցն էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կռեց,
Վա՜յ մեզ, շղթայով կապուած գերի ենք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջնջեց աշխարհքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեզանից թագ և՛ խօսք և՛ զէնք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասունք առատ,
Աղէխարշ բողոք վարուց ապիրատ.
Մեր գլուխը լալու Եփրատ ուր պտռենք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած (1) իւր հոգին,
Արդարութեան ձայնն հանած իւր սրտից
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից,
Պանդուխտ, հալածեա՛լ, եղբարք, ո՞ւր դիմենք.
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին,
Անգութ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիրբ, նզովեալ ձեռքը կարկառեց,
Ազգութեանս վերջին կապը պատառեց.

(1) Լեցուցած։



Հայի կորուստը մօտ է, ինչ անենք,
Հիմի էլ լռենք։
Հիմի էլ լռենք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլազգեստ դառին մեզ գլուխ դրաւ,
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք,
Հիմի էլ լռենք։

Հիմի էլ լռենք, մարդիկ ինչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Չեն ասել, որ Հայք արժանի էին
Այդ ստըրկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Հիմի էլ լռենք։

Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ որոց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք
Ու այնպէս լռենք։

## 11

Մօտ էր արեւը իր մօրը մըտին,
Խիտ խիտ նետում էր ճաճանչն իր յետին,
Տեսնողը կասէր՝ այս անգամ արեւն
Տալիս էր երկրին իր վերջին բարև.
Վերջինն էր, այո, բայց ոչ ամենուն,
Վերջինն էր այն խեղճ, կըտրիճ Հայերուն.
Նորա շողի հետ նոցա վեհ հոգին
Պիտի սըլանար դէպ պայծառ երկին։

Դարձեալ գրոհ տուին(1) Հայք ուժգին ուժգին,
Թնդացին չորքերն թշնամեաց զօրքին,
Ապշած մնացին Պարսիկք տեղերը,
Թովիչ կարծեցին Հայոց խեղճերը։
Մեծ էր կոտորածն Հայոց քաջերուն,
Ցոյց տուին Պարսից ոյժը ձեռերուն,
Աւարայր դարձաւ արեան ճապաղիք,
Դաշտը դէշերով լըցուցին Պարսիկք։
Մարտ, փիղ, ձի, կառք, զէնք մէկմէկով էին,
Ո՞վ կը խիզախէր դէմ կենալ Հային։
Ինչպէս լեռ ալիք ծովին՝ անարգել
Ուզում են քարէ եզերք խորտակել,
Վազում են առաջ ահեղ գոռալով,
Դըժոխքի վայել երգ յօրինելով,
Ժեռուտ (2) ափերին գալիս են հասնում,
Խըփում են, 'ի զո՜ւր, ու յետ են վազում.
Այդպէս և Պարսից ճիգըն էր ունայն,
Երբ նոցա առաջ պինդ կանգնած էր Հայն.
Բայց չկար արգելք խիզախ, քաջ Հային,
Ո՛չ Թուր, և ո՛չ նետ, ո՛չ չորք փըղերին,
Նա որդեկորոյս առիւծի նըման
Արգելք չ'էր տեսնում աչաց յանդիման.
Բըրաձև փըղեր գլորում էր գետնին,
Մըժեղ էր թըռում նորան այրուձին,
Այն քաջ այրուձին, որից որ Հելլէն
Խակամուտ եղաւ միմիայն ահէն։.

**12**

Օրն էր տարաժամ, մարդիկք դադարած,
Փողը հընչեցին՝ մարտին կատարած.

---

(1) Խառնիխուռն բազմութեամբ յարձակիլ։
(2) Ժայռոտ.



Մութը տարածուեց, աստեղք ցոլացին,
Երկնից ցօղն իջաւ արնալից գետնին.
Մթնասէր Թռչունք ձայներով խըռպոտ
Գուշակում էին մարդկանց սուգ ու բօթ.
Յետ դարձան Պարսիկք իրանց բանակը,
Նորից նոր սըրել սուրն ու դանակը.
Որ այգուց կանուխ, լոյսը չի ծագած
Վըրայ յարձակուին Հայոց՝ կատաղած։
Բայց այլ տեսարան էր Հայոց միջին,
Վրդոված, տըխուր էր նոցա հոգին,
Ոչինչ չէր լսվում, թէ ոչ սուգ ու լաց,
Մեծ կորուստ արին, կորուստն էր անդարձ —
Վարդան չի դարձաւ դէպ իր քաջերուն.
Ո՞վ գիտէ ո՛ւր էր նա այն իրիկուն,
Գերի՞ է տարել նորա թըշնամին,
Թէ՞ մահ է ստացել նա դաշտի միջին —
Ոչ ոք չը գիտէ։ Տըխուր ու տրտում
Ամեն տեղ նորան են Հայք պըտրտում.
Հոգւոց հանելով, վա՜յ գլխուն տալով,
Աչքերից աղի արտասունք թափելով։
Աւարայր դաշտը տակն ու վըրայ արին,
Աւա՜ղ, յետ չ'եկաւ դիւցազն արին,
Պինդ պինդ ձայն տուին «Ո՞ւր ես, մե՛ր Վարդան».
Արձագանգն երկնից Վարդա՜ն ու Վարդա՜ն։
Որբերի աչքին քունը չի մօտում,
Քունը ի՞նչ սփոփանք, թէ դարտ կայ սրտում.
Թէ՞ լինի գիշերն մեզ բիչ մըխիթար,
Առաւօտն, աւա՜ղ, կու լինի վատթար։
Արթուն մնացին, չի մըտան բանակ,
Մինչև որ խօսից երեք հետ խօսնակ։

## 13

Ցանկարծ լըսեցին ձիան տրոփ հեռուանց ,
« Այս ո՛վ է , տըղե՛րք , տեսեն Հայք միմեանց .
Գիշերուայ ժամին ուղեց թշնամին ,
Վրէժխնդիր ցերեկուայ լինել անցքին » :
Բայց չէ , վա՜յ նոցա , վատթար տեսարան
Ապշած աչքերուն եկաւ յանդիման .
Չէր արթուն Հայոց անկոչ այցելուն
Սարսած թշնամին տարաժամ պահուն .
Վարդանն էր , որին յուսահատ , տրտում
Որբացած Հայերն էին պըտըտում ,
Վարդանն էր . . . բայց ինչ վիճակի հասած ,
Արիւնաթաթաւ , սըրտին նետ ցըցուած ,
Աչքերը մըթնած , երեսը տժգոյն ,
Վէրքիցը ծործոր կաթում էր արիւն .
Երկու մանկլաւիկ բըռնած էր ձեռնից
Կիսամահ քաջին իջուցին ձիից ,
Բայց այն սուրբ աչերն , դէմքը հրաշալի
Չէին կըրում յետք մահուան երկիւղի .
Նորա թուլացած բազկից այն ժամին
Չար մահ կըստանար նորա թշնամին ,
Թէ որ խիզախէր գալ նորա առաջ , —
Այսպէս մօտ մահուան նա միշտ մընաց քաջ :
« Տըղե՛րք , ասաց նա ձայնով դողդոջուն ,
« Ուզեցի ձեզ տալ իմ յետին ողջոյն ,
« Ձեզ հետ գըկախառն , ձեզ համբոյր տալիս ,
« Հանգիստ աւանդել այս շունչը վերջին :
« Ժամ է , ժամ թողնել աւեր Հայաստան ,
« Ուր քար չի մնաց պինդ քարի վըրան ,
« Մենք էլ հետեւողք նախնեաց աւանդին ,
« Ստրուկ չենք լինել երբէք օտարին .
« Լաւ է մեր կեանքը կարճանայ սըրով ,



« Քանց հալուի , մաշուի թշնամու լըծով ,
« ( Իմ հինգ տարեկան հասակէս 'ի վեր
« Այսպէս տալիս էր ծնողն իմ պատուէր )
« Ցաւում է սիրտս , ոչ նետի խոցից ,
« Ցաւում է որ շուտ գնում եմ ձեզնից
« Որ չեմ կարենում ձեզ հետ միասին
« Արեան դաշտի մէջ փչել իմ հոգին .
« Վա՜յ թէ դուք մինակ վհատիք մահից ,
« Դողաք , սարսափիք վերահաս մահից ,
« Թուրն ու ասպարը մի կողմը գըրէք ,
« Պարսկին կամաւոր ձեզ գերել թողնէք .
« Ա՛խ , քա՜ջ իմացէք , ես , թէ և թաղած ,
« Պիտի վեր կենամ հողից կատաղած ,
« Նորից նոր առնում ձեռքըս թուր ու տէգ
« Ու ձեզ անողորմ խողխողեմ մէկ մէկ .
« Անէծք եմ թողնում ես այն վատ Հային ,
« Որ ո՛չ ոխ , այլ սէր ցոյց տայ դու Պարսկին .
« Այդ անհաշտ ոխը հիմկուց ցեղէ ցեղ
« Պիտի տարածեն Հայքն ամեն տեղ .
« Թո՛ղ կորչին ազգեր երկրի երեսից ,
« Հայը միշտ անհաշտ պիտ' մնայ Պարսից .
« Ստուերս երբէք չի մնալ անդորր ,
« Այս թշուառ դաշտում կը շրջի մոլոր ,
« Մինչև այն ժամը , ժամ օրհասական ,
« Երբ Պարսիկ կամ Հայն կը լինի կործան
« Արեան դաշտի մէջ՝ մորթելով իրար ,
« Լոկ այն ժամանակ կ'առնում ես դադար :
« Դէհ , մնա՜ք բարև : Տէ՛ր , ա՛ռ իմ հոգին ,
« Կամ ազատ կեանք կամ մահ աղնիւ տուր Հային » :
Լըռեց , ու իսկոյն նետը մահաբեր
Հանեց աներկիւղ կողից կարեվէր .

## 14

Առ ժամ մի որբիկ տարաբաղդ Հայերն
Ապշած, զարհուրած մընացին տեղերն,
Զիմացան՝ տեսիլք է այս, թէ անուրջ.
Մեռած Դիւցազին խուռն կանգնած շուրջ՝
Ո՛չ լալիս էին, ո՛չ սգալ կարում,
Իրանց աչքերին չէին հաւատում.
Ի՛նչպէս հաւատան իրանց աչքերին,
Երէկ չէ՞ր, որ պինդ կար հսկայ կաղնին,
Որ քանի դարեր հարուածը հողմին
Զեփիւռ էր կարծում փըչած մեղմագին.
Այսօր միջաբեկ ու թաւալգըլոր
Կար նոցա առաջ աչքերով մոլոր.
Տեսնում են քաջին գետնին տարածած,
Զըլոտ ձեռքերը ցամքած. խորձամած,
Կէսխուփ աչքերը չունին առաջուան
Ո՛չ բոցը, փայլը՝ ջուխտ աստեղց նըման.
Դէմքը գունաթափ, գիծքը անմեկին,
Ո՛չ ոխի նշան, ո՛չ սիրոյ — ունին։
Տեսած կա՞ս մէկ օր, երբ բոցոտ շանթը
Երկնից ցած իջնէ մինչ խաղաղ դաշտը,
Ահեղ որոտմամբ, փայլ արձակելով
Արթուն հովուին զարնէ, տայ գետնով.
Անմեղ գառնուկներն որբիկ մընացած,
Ապաստան չունին, անտէր են թողած.
Ահից վազում են թուլիկ սրտերով,
Հովուին սուգ կարդում տխուր ձէներով.
Ո՞վ է նոցա տէրն, ո՞վ խընամողը,
( Որբերի սփոփիչն է լոկ սև հողը )
Մա՜հ, մա՜հ, խնդրեցին Հայերն միաբան,
Քաջից յետ չի կար էլ յոյս փրկութեան։



## 15

Խուռն կան Հայերը մի փոսի առաջ,
Սրտից անդադար հանում են թառանչ,
Դառն արտասունք նոցա աչքերին
Հասում են առատ ամայի գետնին.
Դասք քահանայից դաշտումը չի կան,
Որ սուրբ աղօթքով հողին հողը տան,
Կընտրուկ ու զըմուռս նախնեաց աւանդով,
Այդ անշուք թաղման չի խընկում աչով.
Լալական կանայք կուրծք են ծեծելով,
Ողբի չեն շարժում դառն հեծելով,
Լուռին Հայերը, աչքերը պղտոր,
Դէմքերը անշարժ, մըտքերը մոլոր,
Հաղիւ հազ նոցա շըրթունքը դեղնած
Շարժելով տալիս են նըշան կենաց.
Արդեօք աղօ՜թք է, որ նոքա կարդում,
Թէ արեան վրէժ տալիս են երդում
Իրենց Դիւցազնի դիակի առաջ,
Որին խոստացան մեռնիլ քաջ ու քաջ.
Կարգէ կարգ, լըռիկ, մինը յետ միւսին
Վերջին համբոյրը տուին Դիւցազին.
Եւ երբ որ փայլեց առաջին շողը,
Քաջին մարմինը կըլլեց սև հողը։

## 16

Կորաւ Դիւցազը, կորաւ Հայաստան,
Զի Հայոց միակ յոյսն էր Քաջ Վարդան.
Թշուառ հայ ազգին նորա վէհ սիրով
Էլ այնուհետև չը սիրեց ոչով.
Դարք ետև ետև գընացին, անցան.
Ցիշատակ քաջին իւրքը մոռացան,

Հեշտութեան կենաց և գանձի մոլար
Ազնիւ նըպատակն մոռացան իսպառ.
Իրանց սըբազան տեղիք պարծանաց
Թողին, մատնեցին խուժադուժ ազգաց,
Եւ հողը՝ գընած գնով սուրբ արեան
Հարանց՝ արին չար թշնամիք կոխան.
Մոռացան վըրէժն այն նուիրական,
Որ աւանդել էլ նոցա Քաջ Վարդան
Եւ ատելութեան փոխանակ՝ Պարսկին
Ցոյց տուին միշտ սէր և յարգանք խորին.
Ծըռեցին վիզերն Պարսից լըծի տակ,
Դիւրութեամբ դարձան հըլու հըպատակ,
Ա՜խ, արդարացաւ տեսիլն Վարդանին,
Որ նախատեսաւ անկումն ազգին։
Հայը հետամուտ չ'էր ազնիւ մահուան,
Որ յետնոց թողնէր պանծալի անուն,
Վասակաց թիւը շատցաւ դարէ դար,
Զուտ ազնիւ հոգիք չերևցան իսպառ.
Գործի եղեւան դարձան օտարաց,
Ոչ ոք դարմանիչ չ'էր ազգին չարեաց . . .
Թող լսեմ, լսեմ, ազնիւ պատանի,
Այս թըշուառ անցքէն միտքըս սասանի,
Քանի կը յիշեմ՝ սիրտըս խոցոտի,
Ու ճըմլած հոգիս վրիժու բոցոտի։
Մոլեկրօն Պարսը՝ կայ մինչև այսօր,
Ունի թագ ու գահ շըքեղ, փառաւոր,
Ունի նա լեզու ու անուն փառաց,
Քաղաքք բարեշէն, տէր է շատ ազգաց,
Իսկ Հա՛յը . . . վա՜յ նորա գառը օրերուն,
Ի՞նչ ունի, բայց թէ լոկ ևեթ անուն,
Որը և յաճախ ինքը ամօթից
Ջղուած մերժում է իրա վրայից։



## 17

## ՎԵՐՋԱԲԱՆ

Լըռեց։ Ամպերը եկան ծածկեցին
Երկինք, ու Լուսինն աչքէս խըլեցին.
Մընացի մինակ, հոգիս վըրդոված,
Ձեռներըս ծոցիս, գլուխս քարշ արած,
Եւ այնուհետև ամեն իրիկուն
Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն։
Նորա տըխրամած դէմքը նայելիս՝
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս.
Ա՜խ, ցոլա՛, փայլէ՛, տխրադէմ լուսին,
Գուցէ քու փայլից փայլ տաս և Հային,
Պատմէ՛ շատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ինչպէս կորաւ Հայ ազգի գահը,
Կամ ինչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը — աշխարհն Հայաստան։

ԴԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

---

## 18. ՊԼՊՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ո՞նց գաս իմ լուսնակ հեզիկ ու հանդարտ
Համասփիւռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,
Եւ ի Նահապետս՝ որ մըտօք մոլար
Գիշերաժամիկ ժուռ գամ յԱւարայր,
Ուր քաջ ու աններման իմ հարք հայկազունք
Ընկան զէտ հըսկայ, կանգնեցան զուարթունք(1)
Միթէ գա՛ս սըփռել ոսկերաց սըրոց
Զիւնափայլ անպէտ ոսկեթել ծածկոց,

---

(1) Հրեշտակ։

Թէ ճերմակ ճակտիտ՝ Թէպէտ և պայծառ՝
Քաջացս արենէն կապես կարմիր վառ.
Թէ լըռիկ մընջիկ ափշես տակաւին
Թէ ինչպէս ինկաւ Վարդանն ահագին,
Մահու սև ըստուերն ի սիրտ Թըշնամեաց,
Զհոգին ձըգելով յերկին առ Աստուած ։
Դու այլ ով Տըղմուտ տրտում ու արիւնոտ ։
Որ լալով ոլրիս ի մէջ շամբերուտ,
Եւ հովիկդ՝ որ գաս ի Մակուայ քարէն
կամ ի ծեր Մասեաց սըրբազան սարէն,
Դու այլ ինձ նըման դողդոջ և երեր
Թոյլ Թևօք անցնիս սարեր ու ձորեր,
Անտառէ անտառ տերեւէ տերև
Կոծկոծելով գաս ի դաշտիս վերև,
Զայս մաշած շընչիս վերջին հառաչանք
Ձըգել ի Հայոց սըրտից արձագանք ։
Ո՜հ դու բարեկամ այրած սըրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ պըլպուլիկդ երգէ ի սարէդ,
Զանմահ քաջքն Հայոց՝ երգէ հոգւոյս հետ.
Թադէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սըրտիկս՝ որ ի Խաչն էր կիպ (1) Թունդ առաւ.
Ի Խաչին Թևէն Թըռայ ու հասայ
Գըտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ.
Պըլպո՜ւլ, քեզ համար մեր հարքն ասացին
Թէ չէ նա՝ պըլպուլ մեր Աւարայրին,
Եղիշեայ հոգեակն է քաղցրագրուցիկ
Որ զՎարդան ի վարդըն տեսնու կարմիր.
Զըմեռն յանապատ կու գնայ կայ ի լաց,
Գարունն յԱրտազ գայ ի Թուփ վարդենեաց,

(1) փակած, կպած ։



Երգել ու կանչել յԵղիշէին ձայն՝
Թէ պատասխանիկ մ'արդեօք տայ Վարդան ։
Թէ կխսահոգի պըլպուլիս նըման
Ձէնիկս հասնի ձեզ, որդի՛ք Թորգոմեան,
Որդի՛ք, որոնց հարք քաջք ու առաքինիք
Լըցուցին զդաշտեր գըրքեր ու զերկինք,
Թէ ի ծով սրտիդ կաթիլ մ'արունիկ
Կաթէ Հայ աղբիւրըն կամ Պահլաւիկ,
Թէ զփառքն հայրենեաց ձեզ այլ դըրէք փառս,
Հետ Նահապետիս ելէք ի յԱրտազ ։

Ա.

Կէս գիշերն առել էր գիշերավայր
Լուսնակն յամպի տակ բացխըփիկ խաղայր,
Մինչ հովըն շըրջկոտ կախ Թեւօքն յանտառ
Օդոց ու ծառոց հանդիստ կու կարդայր.
ԶԱւարայրի մութն ու կանաչ ծոցիկ
Ծայրէ ծայր ճեղքէր Տըղմուտն հանդարտիկ,
Մետաքսանըման անձայն խատուտիկ
Թաւլեցընելով հազար բիւր ալիք ։
Ի յաստից ու անտից կան երկու բանակք
Իբրեւ անկըռիւ ընկած մեռունակ.
Ցերկուցըն միջոց բարձրացած լուսնակ
Կու Թըւի վահան զօրաց պահպանակ.
Ոչ մէկ հընչի ձայն, ոչ մէկ շարժի զէն.
Կարծես յաղԹըւեր ամենքն ի քընէն,
Հազիւ հազ ձիանքըն Թօթուին դափին (1).
Դողան պահապանքն ի կաշիվրանէն ։
Մէկ գունդն է Պարսից հազար ու հազար
Որոնց վըրայ ամպ տարածի խաւար.

(1) Ոտքով գետնին զարնել ։

Մէկ գունդն ալ Հայոց է՝ Թըւով ցանցառ,
Լուսնի լուսով զէնքըն փայլին վառ վառ.
Ծոցերն ուռուցիկ, թեւերըն քաջոյժ
Զինչ հանգչած բազէք՝ կան թեւօք աշխոյժ.
Զինչ ծով ահագին որ ալեօքըն խուժ
Յանկըսկած ծեծէ չափունքըն վատուժ :
Բայց յայնչափ քաջաց քան զամենքըն քաջ
Մէկիկ մի արթուն կայ զընդին յառաջ.
Թեւի տակն առած նիզակ ծայրախաչ,
Ձեռքն ի ճակտին, ոչ ձախ հայի ոչ աջ.
Ընդ խորանաձեւ լուսնին ճառագայթ
Ձեռանդուն բանակըն դիտէ հանդարտ.
Զինչ մայր գարագի (1) որ գիշերն ընդհատ
Դիտէ զքուն տղային կարմրիկ ու զըւարթ.
Ըզվարթուն հազար դազրած քաջերուն
Սանձըն ձեռք առած՝ վաղուան աւըրտուն,
Յաղթութեան անիւըն սահեցնելուն
Հընարք մըտածէ ու զՀայոց անուն :
Ի բոլոր ազգէն առաջնորդ ընտրած,
Յաջորդ քաջամարտ ըսպարապետաց,
Պատասխանատու ազգին Հայկազանց,
Անոր բազդըն յինքըն տեսնու կախուած.
Յեսուն յաղթանակք շահած քըրտընքով
Անցնին ի մըտացըն մէկզմէկով,
Դէմ ինքեան կանգնին իւր փառքըն կարգով.
Սիրտն՝ առնու և տայ մեծամեծ թընդով:
Երկայն նիզակոյն յանկարծ վաղէ դուրս,
Զինչ կըակէ վիշապն ի յերկնից մըսուրս (2).
Ման գայ ու փըչէ զընդին Հայոց հուր,
Վարդանն այն վառած ի սէր և ի սուր :

(1) Գորովագութ. (2) Ծիր Յարդգողին.



Նայի ընդ երկիր, նայի ընդ երկին,
Զափէ չափչըփէ զբանակքն երկոքին.
Քաշէ զմէկն ի վեր ի ծոց Գրիգորին,
Թափէ զմէկն յանդունդ սանդարամետին.
Ի մեծ բարկութիւն կամ ի տարակոյս
Զաչկունքըն շըրջէ ի յայս և յայն կոյս.
Կանչէ ի խորոց, թէ ով իմ հոգւոյս
Տացէ պատասխան յետին հարցուածոյս . . . :
Բայց ինչ, բայց ինչ այդ տեսիլ յանկասկած
Քաջին Վարդանայ ելնէ ընդ առաջ.
Ի փոքրիկ բըլրակ գետոյն եզերաց
Հուր բոց վերանայ ի ծոց եթերաց :
Կայծք անձրեւանման չորս դին հաւասար
– Բոցեր յաջ ու ձախ, մէջըն լոյս պայծառ,
Եւ ի մէջ լուսոյն ճերմակ վեհափառ
Մէկ մի երեւի տեսօք յոյժ անճառ.
Յուներըն (1) քաշեր սուր կամար կապեր
Հնոցի պէս կըակտան զոյգ ահեղ աչեր,
Ամպի պէս լայնած երկայն բազկըներ,
Կարծես թէ հրեշտակ բազդին է իջեր.
Իջեր ի բանակն և ահեղ կըշռօք
Կըշռէ զՊարսն ու Հայ, գըրէ աստեղօք.
Դառնայ ի Պարսիկն հայի արհաւրօք,
Դառնայ ի Հայն՝ սէր կաթէ արտասուօք :
Ի բլուրն ի վեր քաջըն թըռչի Վարդան,
Անվախ անկասկած ձայնէ սիրական.
« Նոր Մովսէս, Ներսէս, քաջ մեր Մատաթեան,
Ասա զինչ երկինք գըրեն բազդ վաղուան » :
Յայնժամ բոցափայլն երեց Վանանդայ
Զայն հրեղէն ձըգէ ի ճակատ նորայ,

(1) Յօնք, ընքուի :

Կընքէ, ու զերկինք առջեւըն բանայ,
Ըզբանակն Հայոց՝ Ղեւոնդ հոն ցոյց տայ ։
Տեսաւ, հիացաւ Վարդանն ու կանչեց.
« Հայր, իսկի տեսիլըդ մեզ չըսըտեց,
Վաղուը տի կըռուինք քաջութեամբըս մեծ,
Երիկունն հանգչիմք ի դարպասն աստեղց » ։
Ասաց և առաւ զօրհնութիւն ծերոյն.
Թօթվեց գաջն հրաթափ, փըրթաւ ի բըլրոյն.
Ճօճ տայր(1) նիզակին, փութայր գայր իսկոյն,
Փողէր ու կանգնէր ըզգունդ քաջերուն ։

Բ

Դեռ չէ արեգակն ըզգլուխըն հանել,
Երկու բանակներն ըզդաշտն են բռնել.
Զէտ ջուխտակ(2) բերդեր դէմառդէմ կանգնել
Ցիրար ուզեն գալ՝ փշրիլ ու փշրել ։
Նախանձափրփուր դըժոխոց սատան,
ԸզՇապուհ ի ծոցն առած ու զՍասան,
Հոն թափել ուզէ օձու պէս դաժան
Սեւ ատելութիւն երկհարիւր տարուան ։
Զերկհարիւր տարուան վրէժ ահեղ ու մեծ
Հայաստանն եկել է խնդրել անկէց.
Խօսրով ու Տրդատ, Արտաշէսն այլ գէջ,
Հայրենի պարտուց պահանջեն ըզվերջ ։
Ի մէկ մի վայրկեան ամենքն են պատրաստ,
Փող կարծեն ըզձայն միմեանց անհանգարտ.. ։
Ահա թռան գացին շարնուեցան հըպարտ,
Զինչ երկու վիշապք մեծ իրարապատ.
Մէկ շարժումն ահեղ, մէկ ահեղ հոսան
ԶԱրտազն է բռներ թնդմամբ կայծական.

(1) Երերցնել ։ (2) Զոյգ մը ։



Ոչ լուկ պատերազմըն թըշնամութեան
Այլ զտարերքն ամեն կարծես ուրել գան.
Տրոփէ ոտընւորն ու դաշտըն թընտայ,
Հեծելըն գետին մոռցել՝ յօդ գընայ.
Օդն առանց հովու զէնքերով ծըփայ,
Հովիտն հառաչէ, երկինքըն գոռայ.
Հրդեհ է բռներ ճարակի երթայ,
Դիւցազունքն այրէ հողու հաւսար տայ,
Բոցեղէն ալիք զօրացըն ճօճայ.
Դէմ այն բռնութեանն ով կու դիմանայ ։
Զինչ յաշխարհաւեր կրակէ լափլիզող,
Ցանկարծ կայծ մ'ի վեր ցատքէ յահ ու դող,
Կամ ի դաշտաձեւ բոցէն գայ խանձող
Ցանկարծ երեւցող ու յանկարծ ծածկող.
Հանց խառըն խըմբէն քաջ մի հեծելուոր
Բարձր երիվարի վըրայ կանգնաւոր՝
Վեր վեր վազելով զինուք ճօճաւոր
Նետուի թըշնամեաց մէջ քանց գունտ հրաւոր.
Պըղինձ գըլխանոյն ու զրեհ (1) երկաթի,
Արեւուն շողէն կու փայլփայլըտի,
Ճերմակ փետուրներն ի սաղաւարտի՝
Կարծես թըռցընեն ըզքաջ գայն մանկտի.
Նայիս սարսափած սըրտիւ ալէկոծ,
Թէ ով այն յանդուգն է քաջաց Հայոց,
Արդեօք Արշաւիրն յաղթող սուր Թաչնոց,
Թէ հըսկայաձեւ Խորէնըն մարտկոց.
ԶԱրտակ ու զՎահան պահ մի կու տեսնես
Իբր անխոնջ դարբինք վազեն հնոցն ի ներս.
Մեծամեծ ճայթմունք, տապըլմունք լըսես,
Ըզզէն ու զինուոր փըռուած կու գըտնես ։

(1) Զրահ ։

Երթալով երթան ձայնքըն զօրանան ,
Շեշտակի չաչիւնք լըսուին աղեղան ,
Ահեղ կոփկոփիւնք (1) վահան ընդ վահան ,
Նետք նիզակք թափին անձրեւի նըման .
Բիրաձեւ փըղաց ոտքերուն գարգափ (2)
Աշտարակաշարդ բըրգօք բերդակապ՝
Դաշտաց ու լերանց արկանեն սարսափ .
Երկիր ի հիմանց տայ դղորդ ու կափկափ (3) ։
Այլ քաջաձի Հայն անվախ համարձակ
Անճոռնի մարմնոցն ելնէ հակառակ .
Կորդուացին կշռէ ձողաչափ նիզակ ,
Լեռան պէս փըլչի փիղն ու Պարսն յիր տակ ։
Արձագանգք ամեն ձայն վերացընեն ,
Բանակներն ի հետ կրկնեն ու սարսեն ,
Շըփոթ և աղմուկ նոր տիրէ անդէն .
Պատառոտին գունդք յիրար անցնելէն ։
Պարսից բանակէն հազարք են փըռուած ,
Ի Հայոց բանակէն հարիւր է ընկած .
Ձիակոխ ծաղկունքն յարիւն թաթաւած
Գըրգուեն ըշկատղած եռանդըն զօրաց ։
Ի Տըղմուտ գետոյն եզերքըն պըղտոր
Ուր արդէն արիւն հեղեղ կապէ նոր ,
Եռան ու զեռան գունդեր մօտաւոր ,
Մէկն անցնի , մէկն այլ չը թողու անցուոր ։
Բայց քաջ Գարեգին չընտրէ ջուր ցամաք ,
Վարազդատանման ցատքէ զինչ փայլակ,
Ջառջի շարկածին գլուխն՝ իբրև գընտակ
Զըգէ իւր զօրաց՝ որ գան համարձակ .
Զէտ մըրրկոտ ամպեր՝ Հայք՝ առնուն ձիան ,

(1) կոփկոփել , զարնել ։ (3) կճրտելու ձայն ։
(2) Ոտքերը գետին զարնելու ձայն ։



Լողալով կըռուին ի գետոյն բերան ,
Ծըփան ու փըսան , ջալիքն առնուն տան ,
Ջըրով արիւնով հասնին յանդիման .
Ելնեն զինչ քաղցած բահրիկ ծովային
Անխըտիր դիմեն ում և պատահին ,
Շատ զօրք զօրավարք փըռեն ի գետին .
Հեծեալ հետեւակ հետ իրար պառկին .
Մըրմըռան Պարսիկք զինչ ալիք վարած ,
Յետ դառնան ի ձախ թեւ Հայոց քաջաց ,
Ընկնին բարկութեամբ տան ւ առնուն հարուած ,
Վեր ու վայր թըռչին հօգիք հազարաց ։
Հոն յառաջադէմն ու քաջ Գարեգին
Հայ զօրավարաց առնու պսակ նախկին .
Հազար խոցերով ի զրեհըս սըրտին ,
Դեռ չուզեր անխոց թողուլ թըշնամին .
Զէնքերըն կոտրած , մարմին կիսամեռ
Դեռ յուղարկաւոր հետն ընէ չատեր .
Ընկած դիականց մէջ խնդրէ սուսեր ,
Կարծես յետ մահուն ալ կըռուիլ ուզեր ։
Ա՜հ Գարեգին , մութն իջաւ յաչուիդ խաժ (1) .
Նա դեռ ձեռք շարժէ՝ զսուրն ածել ի քարշ ,
Շունչն ի կէս վըզին կանչէ աղէխարշ ,
« Ե՛ղբարք , մի թողուք զիս Պարսիցըն գարշ » ։
Յայն ձայնէն վաղեն ջուխտակ կայծակունք
Հաւսար Գարեգնի հարազատք սիրունք .
Զէտ ի բարձըր բոյն արծուիք սուրակունք
Պաշտպանել իջնեն զիւրեանց նոր ձագունք .
Աստի ու անտի կան զինչ երկու հրեշտակ ,
Դէմադէմ վառին այտքըն կարմրորակ ,
Ռոստոմ Թուխաշուին և ագուազիսակ ,

(1) կապուտակ ։

Վռամիկ վարդաշերն ու մորթով ճերմակ ·
Մինչդեռ Գարեգին սողոյ անբարբառ
Ընդ հողւոյն կըռուի մոռնալով աշխարհ,
Եղբարքըն թափեն հոն գինուորս հազար,
Երդնուն մեռնիլ քան թէ թողուլ զիրար :
Ո՜հ սըրտապատառ վըսեմ տեսարան ·
Հազիւ սուրբ երդմունքն ելին ընդ բերան՝
Ջուխտ մի նետ՝ յերկնից կարծեմ յանկարծ
գան , —
Զի չէր Պարսիկն այնքան պատւոյ արժան · —
Գան նետերն ու զոյգ զարնեն կըտրըճնուն ,
Որ երկու ձեռօք կըռուէին ի բուն ·
Չունէին վահան · ինչ պէտք քաջերուն՝
Որ միմեանց վերայ կուրծք դըրին սիրուն :
Եղբա՛յր · · · կանչեցին ճակատ ի ճակատ
Ընկան պատեցին զերրորդն հարազատ · —
Հետ բացին երեքն այլ զաչերն հանդարտ ,
Երեքն այլ ի հետ փակեցին զըւարթ ·
Թեւ ի թեւ ու վիզ վըզի պըլլըւած
Երեք կոկոն մէկ մանկաղով հընձած ,
Զկարմրիկ արիւնիկըն վարդ տարածած
Անհոտ կու քնանան ի մէջ բանակաց ·
Երբ հողմն հիւսիսի շընչէ ցուրտ բերան՝
Ու կոծկոծեալ հետ ընկնին վարդ շուշան ,
Ո՞ր ծաղիկ չուզէ փըռուիլ ի մարգն այն՝
Ուր իշխանք ծաղկանց գետնատարած կան :
Ա՜հ · յայնժամ հատան քաղցր արեւքն Հայոց ,
Քաղեցան կրակէ շընչեր ջերմածոց · · ·
Վասըն քո ընկան , աշխարհ իմ Հայոց ,
Կըտրիճք աննըմանք վեհք հիւսիսայնոց :
Ոչ մէկն ի թիկանց էառ ըզհարուած ,
Ամէնքն ըզՊարսիկն ունին իւրեանց բարձ ·



Վարդագոյն արիւնք սրտերնէն բղխած
Ուժոյ և սիրոյ վըկայք անմոռաց · · · :
Այլ ո՞ւր է Վարդան՝ ախոյեանն անյաղթ — :
Զինչ առիւծ ահեղ այծուց դիմամարտ՝
Ի թանձր անտառէ վազած անհանդարտ՝
Հազարով դընէ զորսերըն տապաստ :
Հանց հետ Արշաւրայ ու քաջ Հըմայեակ
Ի ձախ թեւ Պարսից նետուած համարձակ ,
Յարձըկէր կոտրէր ցըրուէր հասարակ ,
Կարկտահար թափէր ըզմեծ զայն բանակ ·
Այլ երբ տեսաւ զիւրն ըզձախ թեւաբեկ ,
Մըռընչեց զինչ ծով , յունէր կանգնեց տէգ ,
Փայլակնանըման հըրեց ձին հրաշէկ ·
Քաջքն ի հետ ընկան զինչ յորձանուտ գետք ·
Սեւ զրեհօք հեծած ի սեւն երիվար
Գայր զինչ սաստկորոտ ամպ մըրըրկավար ·
Սուսերն ահագին զինչ կայծակ շողայր ·
Քան զայն ահեղ՝ մահն իսկ ոչ երեւայր ·
Զինչ հրդեհ բըռնած յանտառի ծայրէն
Զիդադրի՝ մինչ փայտ չըլափէ զամէն ,
Վառուեցաւ ըզհետ զընդին համօրէն ·
Հարուածներն համրեց Աստուած ի վերէն :
Անհուն հետեւակք զինչ չոր եղեգունք
Գետնակոխ արար ի ձիուն ոտկունք ·
Զիանք ու փըղանք զինչ մայրիք բարձունք
Մէկմէկէ առաջ թափին երագունք ·
Յաջ ու ձախ զարնէր փըռէր ու անցնէր ,
Զանտառ զօրքերուն յանապատ փոխէր ·
Զինչ Պարսիկն յահէն զինչ ընել խորհէր ,
Նայ Վարդանայ սուրըն մահ հրամայէր :
Ի փախ դարձան քաջք մընացեալ Պարսից ·
Առ մեծ զօրավարն հաս ձայն բօթալից ·

Գալրեցաւ Մուշկան զինչ օձ թիւնալից ,
Խածատէր զմատներն երդմամբ անիծից .
Փողէր դարձրնէր ըզփախուստ զօրաց ,
Կանչէր Արտաշրայ ի վերայ փըղաց .
« Փութա՛ , գաղաններն առ եկ ի հոս դարձ ,
Զի Վարդան մարէ զարև մեր Արեաց » :
Սարսեց համօրէն բանակ պարսկական
Փըղօք հեծելօք գընդօքըն Մատեան ,
Թէպէտ և կոտրած՝ զեռ անթիւ խուժան՝
Միաբան դիմեն դէպ յարին Վարդան .
Երեք քայլ ի յետ , մէկ յառաջ գային .
Մէկ տային ու տասն հարուած առնուին .
Շուրջ բոլորեցան հեռուստ պատեցին . . . .
Մօտեցա՛ւ վայրկեան ահաւոր բաղդին :
Երեք պարիսպք դէմ քաջին կանգնել են ,
Հետևակք , հեծեալք և փիղք լեռնեղէն .
Մէկն ի մօտանց գայ , մէկայլն հեռուէն
Շողալով անցնին հըրուին ու հըրեն .
Ցետևանց կառղած գաղանքն ահագին
Զանձոռնի քըթերն քընթըռնեցնէին(1) ,
Բոմբիւնք ու գոռմունք որոտմանց տային ,
Ըզբերդերն յուսոցըն տատանէին .
Դէմ քաջին կարծես քաղաքք և ամրոց
Զինուած են ելեր մահ բերեր ի ծոց .
Խորին Ասիոյ ձայնք ժողովըրդոց
Միաբան վըրնջեն ընդ դիւցազն Հայոց :
Իսկ արին Վարդան՝ աչեց քաջերուն ,
Կանգնեցաւ ի մէջ գընդիցըն երկոցուն ,
Ահեղ մի գոռաց , սարեր ձայն ետուն ,
Շատ կապարճակիրք կանչեց մօտ ձիուն .

(1) Քիթն ու բերանը շարժել , դէմքը խորշոմեցնել .



Զինչ գերանդաղէն(1) անիւ շըրջամահ
Ման գայր ու ղարնէր աստ անդ պահ ընդ պահ,
Զինչ գունտ արեւուն յօդուն ճանապարհ
Զօրս բոլոր սըփռէր ու տարածէր ահ ,
Կամ զինչ լեռ հրաբուխ ի սև ծոցէն խոր
Ըզսարսափ բնութեան հանէ 'նդ սև որկոր .
Բոցեղէն գետեր վազցընէ յորդոր(2) ,
Քարինք կարկըտայ լընու զդաշտ ու զձոր .
Թէ ամպ թէ երկինք ճաթին 'ի վերէն՝
Ինք ամենեւին չդադրի վարէն ,
Մինչ որ բոլոր կրակն հանէ յանդընդէն
Անթիւ մահերով հանգչի յիւր սըրտէն .
Այսպէս աննըման Հայոց դիւցազանց
Կ'առնուր ըզյետին վրէժ իր հին հարանց .
Եւ վըկայեցին հոգիք Հայկազանց՝
Թէ քաջութենէ նա չարւար ինչ զանց : —
Արդ մինչ չորս բոլորըն մարդով ընկած
Տեղջ չեղջ ցորենոյ պէս տեսաւ հընձած
Հընձանահարի պէս զինքն այլ թաթխած
Մինչ ի ծունկ ձիոյն՝ յարիւն կըտրըճաց .
Հայեցաւ յերկինք , տեսաւ զարեգակն
Որ զափչած դեղնած օրաշուրջ գընդակն
Սահէր Սանատրուկ լերինն ի կըռնակ
Կամկար թեւօք գայր ժամըն խաւարակ .
Թարթել մի աչաց(3) կեցաւ անշըփոթ ,
Անկարծելի աչք մ'անուշ տըւաւ յօդ .
Երկայն մի շընչեց հոգի երկնահօտ ,
Աստուծոյ տեսոյն սիրտն էառ կարօտ .

(1) Պատերազմական կառք , մանգաղներով զինուած .
(2) Առատ .
(3) Աչք բանալ գոցելու մը չափ .

«Արշաւի՛ր կանչեց, ահա ժամն եհաս.
Դու Հայոց ու իմ տանս առաջնորդ ըլլաս.
Պատմես Վահանայ զայս իմ յետին զաս,
Թէ զնախնիքն ու զսուրբ հարքըդ չը մոռնաս»։
Մինչ զայս քաջն ասէր, ընկան յոտքըն անդէն
Արին այն Արտակ Պալունեաց ազգէն,
Եւ հըսկայակերպ կորովին Խորէն,
Վարդան ձայնելով թըռան ի յանտէնն։
Ջըգեց քաջերուն վրայ քաջըն Վարդան
Ըզմակուկաձեւ զիրեն մեծ վահանն,
Ըզսուր, սաղաւարտ ու զհամբոյր մահուան
Տըւաւ առ եղբայրն իւր Համազասպեան։
Եւ իբրեւ արծուին ի սարից քարանց
Սլացաւ ի գընդէ քաջացն Հայկազանց,
Մէկիկ նիզակաւ ընդ Պարսից գունդն անց.—
Նետ էր որ թըռաւ՝ թէ հուր փայլականց . . .
Հոն, ի մէջ երկուց գընդից զարհուրած,
Ի վերայ զօրաց և զօրավարաց՝
Խաչածայր նիզակն ի յերկին ուղղած՝
Վարդանն Հայոց կայ հանդըստատարած . . .։
Սոսկացան սըրացան Պարսիկք հապըշտապ(1),
Աչք քաջին ըփռեց նոցա սեւ սարսափ,
Գիշերըն խոնաւ իջաւ զինչ տարափ . .
Լո՜ւռ կացէք . . . Վարդանն էր հոս ի մըրափ։

Գ.

Ո՞վ ես դու՝ որ գաս չէշտ(2) ի Շաւարշան,
Թեւօք թըռչնօրէն, ոտիւք փայլական.
Գաս մօտիս մըտնուս ի դաշտըս մահուան,
Ցաջ ու ձախ դառնաս կաս իբրեւ արձան։—

(1) Շուտով, մէկէն ի մէկ։ (2) Ուղղակի, շիտակ։



Երկրորդ պահ էր այն ահեղ գիշերոյն,
Լոկ բարակ մըրմունջ զինչ ծովեզերոյն
Լըսուէր կիսամահ զօրաց խոցերոյն
Ցաւոց և մահուան ներդաշնակութիւն։
Յանկարծ քօղ բացաւ լուսնակն յերկընքէն,
Եւ սըրտապատառ ըզգունդս համօրէն
Տեսաւ զինչ պատկեր սեւանըկարէն,
Հառաչեց ի հոն հասած Եղիշէն։
Եղիշէն՝ մեղու չըրթունք, սըրտի սէր,
Որ ընդ Վարդանայ՝ հոգւով էր կապուէր.
Մինչ հասակակից առ Սահակ նստէր
Եւ զոյգ որդեպէս ի սըրբոյն գըգուէր.
Զարմանա՜ց ձագունք, որ ի մի վանդակ
Միաթեւ մեծցած ի սնունդ հոգունակ(1),
Երբ ժիր մանկութեանըն բացաւ ղըռնակ,
Մէկն արծիւ թըռաւ, մէկայլն աղաւնեակ.
Դաշտ, պատերազմ, սուր, զրեհ, ձի, կրակ ու բոց՝
Էին սիրելիք Վարդանայ թեւոց.
Անձայն անապատք, խաղաղ հովանոց՝
Աղու Եղիշեայ մասն էր ընդ գըրոց.
Հաւիկն հեզ՝ երբեմն յարծւոյն թեւ սլանայր
Եւ ընդ դիւցազնին այն դիւցազնանայր.
Երբեմն այլ արծուին՝ ըզթեւն ուրանայր,
Ձագանոյն մընչնիկ լըսէր՝ հեզանայր.
Ծըղահիւս նաւակ ի քաղցր ի հովիկ՝
Մէկն առեր զեզերքն՝ երթայր հանդարտիկ,
Մէկայլն ահեղ նաւ կողով պողվատիկ
Ծաղրելով խաղայր յանդունդ և յալիք.
Այլ նաւահանգիստ մէկ էր երկոցուն,

(1) Շնորհալից. առաքինի։

Փառաց Հայկազանց սրտերըն սիրուն ·
Մէկըն յաղթանակ կանգնել զիւր անուն ,
Մէկայլն յաղթողաց տալ անմահութիւն ։
Այսպէս երկոքին սոքա սիրելիք
Եղբարք անմեկին՝ զինչ աւաղ ւ ալիք ·
Մեկըն մըռընչէր , մէկըն կայր լըռիկ ,
Այլ սիրով տային յիրար համբուրիկ ·
Երբ ըզքաջութեան բացած առագաստ
Վարդան յաղթութեամբ նաւէր ի ճակատ ,
Հայոց ւ Ալանաց վրայ հասնէր ըզգաստ ,
Կանգնէր յաղթանակ քան զտարիքըն շատ ·
Նաւակն Եղիշեայ ի Բիւզանդ յԱթէնս
Եւ յԱղեքսանդրեայ ուղղէր հեզաթեւս ,
Բանաւոր ծաղկանց մէջ ման գայր թեթեւս ,
Ի միտք առնոյր միշտ իմաստից պէս պէս ։
Երբ դարձաւ յուսմանցն ու տեսաւ զՎարդան ,
Զիւր թողած կորիւնն հիմ՚ յառիւծ նըման ,
Ընծայեց ըզմեղըն ի քաջին բերան ,
Դրան երեց եղաւ տանըն Մամգունեան ·
Անբաժ ի քաջէն շըրջէր Եղիշէ ,
Ի դաշտս այլ երթայր՝ ուր զէնք հրաւիրէ
Ի վրանին կարդայր ըզՏէր ի յերկնէ՝
Որ ըզսիրելին յաղթող դարձընէ ։
Բայց զառջի գիշերն որ գիտաց Վարդան
Թէ վաղիւն հասնի ժամ փառաց մահուան ,
Վախեց դալարել զսիրտըն սիրական ,
Խաբեց ու ղըրկեց ի գեղ Շաւարշան ։ —
Հանց երկրորդ գիշերն որ ըզդաշտն առաւ ,
Հոգին Եղիշեայ սըրտէն դուրս թըռաւ ·
Երբ ի բանակէն դարձւորներ տեսաւ՝
Վազեց ի գեղէն ու ի դաշտըն մըտաւ ·
Մըտաւ յարիւնոտ սահմանս Արտազայ ,



Վարդա՛ն կանչեց · · · ձայն չըկայր Վարդանայ ·
Մահըն պատեցաւ ի սըրտին վըրայ ,
Եւ սուրբ վարդապետըն լայր զինչ տըղայ ։
Լայր ու յառաջէր գայր խարխափելով ,
Զինչ կոյր շօշափէր ոտօք ու ձեռքով ,
Մինչև դեղընցած լուսին գըթալով
Ծագեց գիշերուան պաղ արտասունքով ։
Ժամ մը Եղիշէ ժուռ եկաւ լըռիկ ,
Տեսարանք տեսաւ ողորմ ու լալիք
Պաղեցաւ արտասունքն ու արիւնն ի սրտիկ ·
Պատեց հոգին սև պատկեր սըգով սատիկ ·
Շատ երերագին անցուդարձ արար ·
Իբր ի կարկըտէ տեսաւ դիրուտար(1)
Ըզմեծ բանակայըն մանրած պատառ ,
Յորոց վերայ լայր լուսին դալկահար ·
Զինչ որթատերեւ ու կանաչ զընտակ
Գունագոյն ծաղկունք ու հասկ նորհասակ ,
Եւ ծառք հինարմատք և նոր բարունակք
Ի յիրար անցած և ընկած խառնակ ·
Այսպէս ի տըխուր դաշտին այն Արտազ
Խառնափընդորեալ կային առ իրեարս
Դրօշք ընդ դրօշակիր , զօրք ընդ զօրավարս ,
Ձի ընդ հետեւակ , կորիճք ընդ տըկարս ·
Այն խոխտ մըսեղէն բըլուրն անկառի
Ընկել էր անշարժ զինչ կոճղ անտառի ·
Այն հրաշունչ մըրըկոտ վըրնջոտ ձին արի
Կարթակոտոր կայր ի տեառնէն հեռի ·
Այն քաջ մանկըտիք կայտառ ու գըւարթ
Որ դեռ առւըտուն փայլէին զինչ վարդ՝
Մայրամած դիմօք(2) , ա՛հ , անկեր են արդ ·

(1) Ցիրուցան : (2) Գետնատարած :

Անզուսպ սիրտ և աչքն այն ինչպէս հանդարտ:
Այն ջաջուռ բաղուկք, այն լանջք գրահաղէն,
Այն ճօճան(1) ճակատք յամուր պըղընձէն
Որ՛ գային զարնել ղըանակն համօրէն՝
Հանց փըռուեր՝ որ ոչ զատուին ի գետնէն:
Եւ այն յորդորակ սպառնալից բերան
Որ փողով ու անփող բիւրոց տայր հրաման.
Կենաց եւ մահու կարծէր զինքն իշխան՝
Զիւր իսկ չըպատմէ զորպէսըն մահուան.
Եւ այն հին զէնքեր արիւնով մըխած՝
Որ խոստանային դառնալ ի տուն հարց
Նորանոր արիւն լիզելով փայլած,
Ահա կամ փշրեր կամ գերի ընկած.
Եւ այն մոխրաշունչ Պարս կորըճուորայք
Որ քանց մութն ըզլոյս ատէին ըզՀայք,
Ընդ ոտիւք նոցին անկեալ անըզգայք
Պաղած ու դեղին բան բանտի ծառայք.
Եւ այն, ո՜հ, եւ այն Հայոց նահատակք,
Ո՜վ սուրբ հայրենիք, սո՛ւրբ եկեղեցեակք,
Եւ այնք ընդ գարնան ծաղկանց գեղունակ
Եւ այնք հօն նըրնջէն քուն անմահունակ:
Ճերմակ ու կարմիր զինչ վարդ ու շուշան,
Ո՜հ, քանի՛ ազուոր են ի Շաւարշան՝
Գըլուխք ի խաչին եւ ոտք յատրուշան՝(2)
Մանկըտիքն Հայոց՝ որ ի քուն մահուան.
Քաջ քաջ կռուեցան, սուրբ սուրբ մեռանին,
Աչերն ընդ երկինք ու ի տուն հայրենին,
Յիշեն ըզծընողք ըզքաղցր ամուսին,
Մարի լոյս աչացն յարտասունք սիրային.
Փոխան սիրելեաց ցուրտ հով գիշերոյն

(1) Երերուն, դիւրաթեք:
(2) Կրակատուն Պարսից:



Աղապատելով(1) փարի(2) այտերոյն.
Պատառոտի աչք դողդող աստղերոյն,
Ցօղիկ կաթնաբուխ թափի յամպերոյն:
Մատղաշ հողիք դեռ զչըրթունքն համբուրեն
Ուսկից այնպէս շուտ ի դուրս ելանեն.
Պահ մի զվարագեղ ճակատըն դիտեն
Եւ ըզմանկութիւնն յերկինք փոխադրեն: —
Այլ դու եկ դարձիր, եղնիկ Եղիշէ,
Թէ զհոգիդ սիրես՝ քաղցր արեւդ յիշէ.
Ահա նոսր աղիք սըրտիդ խըշխըշէ.
Մինթէ մահն ըզքեզ այլ մեզնից քըշէ.
Մի աչեր մի այն թոռամած դէմքերուն,
Մի դըպչիր մի այն ցուրտ մարմիններուն.
Ահա զգլուխդ առեր թաթաւ ամպերուն,
Զոտկունքդ է թացեր արիւն քաջերուն:
Այլ Եղիշէ, քաղցըր սիրտ Եղիշէն
Իսկի չիդադրի թափառիլ անդէն
Մէկ մէկ որոնէ զքաջք Հայոց զընդէն,
Համարէ զվըկայք զոր երկինք գըրեն:
Բանակն այն անշարժ՝ շարժի յիւր սըրտին,
Շըրթունքըն լռիկք մըտքին մէջ խօսին.
Քաջերն այն ընկած՝ հոգւոյն մէջ կանգնին,
Մահ կենդանանայ, մեռնի կենդանին.
Ի սիրտըն փափուկ մաղձ քանց մեղր անոյշ
Թաղանթէ թաղանթ ծաւալի քընքոյշ՝
Զերկայնուկ թարթիչ աչացըն մեղոյշ(1)
Զորս բոլոր ածէ կամացուկ և ուշ.
Ըզթեւն ընդ ուսով զարկած զինչ հաւիկ՝
Կարծես ականջ տայ լըռիկ եւ մընջիկ

(1) Գուրգուրալ:
(3) Անուշիկ:
(2) փաթթուիլ, սիրով յարիլ:

Զի՜նչ ձայն կիսամեռքն արձըկեն սըրտիկք
 Նեղ հառաչանօք եւ շընչով ցըրտիկ ·
Խաղաղութեան կարծես զինքըն հրեշտակ ,
 Կամ թէ կուսական փողար ողբերգակ ,
 Կամ պատգամաւոր սիրելեաց գաղտնեակ
 Տանիլ զետքի ուխտն առ սիրտ ըսպասեակ ։
Եւ ահա տեսնու կուտակ մի մարմին ,
 Ահեղ զինչ կորիւնք , փայլունք քան լուսին ,
 Զիրար թեւոտած քանց որթ զուռենին .
 Թուխ Ռոստոմ, վարդ Վռամն ու թանկ Գարեգին.
Աչկունքըն Եղիշեայ վառին ի յայն տես ,
 Կրակէ արտասուք թափէ ջըրի պէս .
 « Պարծեցէ՛ք , կանչէ , ծերունի՛դ Ներսէս ,
 Ահա քաջորդիքդ ընկած քաջաց պէս » ։
Բայց ի՜նչ է այդ կապն ի գօտի քաջաց
 Ընդ մէջ Ռոստոմայ և Վռամկան կապած .
 Բա՛րէ քաջերուն , բա՛րէ սիրելեաց ,
 Ո՛վ սուրբ յիշատակն՝ մընաս անմոռաց .
Միաբան ընկերք ի հայրենի տան
 Մէկտեղ կեալ մեռնիլ իրարու երդուան .
 Առին զկապն հիւսած սիրուհեաց ընծայն՝
 Զիրար կապեցին մընալ անբաժան .
Այնու կապով մօտ եկան Գարեգնին ,
 Անմահ սիրոյն զինքն այլ հաղորդ ըրին ։ . . .
 Ո՛վ այդքան սիրով հիւսուած կապ անգին ,
 Ըզքեզ՝ ասեղաց մէջ կախեմ յերկին ։ —
Հեռի տասըն քայլ ի քաջացս անզոյգ
 Վարդատիպ Վռամկան նըման կայ մանուկ .
 Երկաթ ահագին ի կողն իւր փափուկ՝
 Զաջ ուսոյն ի մէջ ծաղկանց կայ պառկուկ .
Հանց պայծառ ճերմակ երեսքըն շողան
 Որ յերկնից ընկած կարծես նոր շուշան .



 Անմազ ծընօտք , խաժ աչկունք փալփըլան .
 Զմահն ի քուն փոխեր է Գնունին Վահան .
Մօտ ի նա ձեռօքըն կիպ խաչազէն(1)
 Կայ երիտասարդ զօրավար մ'անդէն ,
 Ճակատն երկնադէտ ծըծէ զցօղ յամպէն ,
 Ի կեանս և ի մահ ցանկալին Արշէն .
Իսկ մեծահասակ ո՜վ են դիւցազունք՝
 Որ իբր անտառի եղեւինք բարձունք
 Ընկեր ու ծածկեր են հազար ծաղկունք ,
 Զիրենք այլ ծածկեն նետք սուրք գեղարդունք .
Քըստմնի դողդողայ վառուի Եղիշէ ,
 Զահագին վահան Վարդանայ դիտէ ,
 ԶԱրտակ և Խորէն ներքև տեսանէ
 Ահաւոր դիմօք՝ զինչ առիւծ քընէ ։
Հոն սաղաւարտեալ Պարս զօրավարաց
 Տեսնէ գըլուխներ ընդ ոտիւք քաջաց ,
 Հայոց նիզակներ որ զոյգ են շամփրած
 Երկու նահատակ գնդին թըշնամեաց .
Հոն մեծ բազմութիւն զինչ փայտ ի յանտառ
 Կամ աշնանաթափ տերև հողմավար
 Ընկած ու խռկած մօտ ու վերուվար .
 Պաշարի մարմնովք ու հայի շիւար(2) ։
Ցանկարծ բըլրաձև դիականց դարէն
 Փայլակ մի շողայ քան զայն որ յերկնէն ,
 Երկայն լոյս ցոլայ ի զէն խաչազէն ,
 Մէկ թընդմամբ սըրտի հոն գայ Եղիշէն . . .
Երից սեւագրահ Պարս զօրավարաց
 Վերայ տարածուած հանգչէր ոմըն քաջ ,
 Ըզձախն էր ածել ի սըրտին դիմաց ,
 Ցաջն ունէր նիզակ մահուամբ ձանձրացած .

(1) Ձեռքերը խաչաձեւ կապած . (2) Շուարած ։

Զրեհքըն պըղընձի ծակել են հազար ,
Ի ծակուցն ի դուրս շող ծաթէ պայծառ .
Ծոցին ու ձեռաց մէջուկն արիւն վառ
Գընտաձեւ դիզուեր վարդի հաւասար .
Ըզսեւագանգուր մազն ի բաց շըրջէ
Ի յանսաղաւարտ քաջին ճակատէ . . .
Խելաթափ լինի , թընդայ Եղիշէ .
Ըզմեծն իւր Վարդան ի հոն ճանաչէ .
Լեզու քաջին լուռ , խօսի ինքն ամեն ,
Այտքըն թըռալիր և յօնք կըռընճկէն .
Մահուան իսկ կարծես հրաման յիւր մահէն
Տայ իշխանաբար՝ և ամենք սարսեն .
Ի շըրթանցըն մէջ կայ ծայր նիզակին
Քառածայր թեւօք ոսկեզարդ խաչին ,
Զոր պապն իւր Սահակ ի ժամըն յետին
Յիշատակ երետ(1) քաջապանծ թոռին .
Ընդ երես քաջին մահախառն անմահ՝
Զամբողջ գիշերոյն զերրորդն այն պահ
Հայի Եղիշէն ի զարմանս և յահ ,
Խորին լըռութեամբ հագիւ հնչէ ահ .
Կըշռէ զգլուխ քաջին ձեռօքն երերուն
Որ զինքն ետ կըշիռ իւր ազգին սիրուն .
Համբուրէ զճակատն՝ ուր բաղդն Հայկազուն՝
Զանդարձն էր դըրեր ապագայ դարուն .
Ընդ լայնադիր լանջըն հայի ուռած
Քաջ քաջ և վէհ վէհ սըրտից բոյն սիրած ,
Իբրև պըղընձի ամրոց մի կանգնած՝
Պաշտպանել զորդիք Թորգոմայ ցըրուած .
Ընդ գեղեցիկ ձեռքն հայի՝ ում հնազանդ
Կայր ամեն հրաման և շատերուն բաղդ .

(1) Ետ, տուաւ :



Ուստից յաղթանակ և փառք մեծազարդ
Երեսուն տարի ելնէր անընդհատ :
Ո՛հ , չէր նա՛յնպէս վեհ երեւցած տեսօք՝
Երբ յիսուն անգամ դառնալով փառօք
Պըսակս յաղթութեանց բերէր սըփռէր լոկ
Հայրենի շիրմանց ու մատրանց վրայօք ,
Կամ երբ արծուօրէն ընդ Կովկաս անցած՝
Թագւորներ բըռներ բարբարոս ազգաց
Իջեցնէր քըշէր տանէր տայր Արեաց ,
Ինքն իբեւ յորսէ գալով եղջերուաց .
Ինչպէս հոն վերայ քաջացըն յեցուկ՝
Յետին յաղթանակ Հայոց անանցուկ
Զինքըն կանգնելով Պարսիկն ընդ ոտիւք՝
Ինք զինքըն դիտէր հոգւոյն նայեցիւք :
« Ո՛հ , ես ի ճակտիդ վրայ երդնում՝ Վարդա՛ն ,
Կանչեց Եղիշէ , որ ձեռքն աստուածեան
Հոն մեծ փոխարէն է գրեր քո մահուան .
Թէ բիւր դարք անցնին՝ դու մընաս Վարդա՛ն» :
Ասաց Եղիշէ . հետ արուսեկին
Փախաւ ծածկեցաւ սիրաձայն հոգին: . . .
Պըլպուլն ի թըփէն սովրեցաւ Վարդան ,
Կանչէ զըռուն գիշերըն Վարդա՛ն Վարդա՛ն. . . .

Կանչէ պըլպուլիկ , կանչէ հոգեձայն ,
Որ յերկնուց ի վայր հայի և Վարդան ,
Յիշէ զՀայաստան տուն իւր սիրական .
Հայաստան յիշէ զիւր կարմիր Վարդան :

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ — Նուագք

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՀԱՅԸՆՏԻՐՔ

## ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ–ՔՆԱՐԵՐԳԱԿԱՆՔ

---

### Ա. ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

Հայո՛ց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ո՛վ դու ի վաղուց մոռցուած հայրենիք,
Ո՛վ դու իմ սրտիս անմոռաց տեղիք.
Ահա գարունիկդ հասել է հասել,
Աւագ Մասեաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել.
Այն սեւ սեւ ամպերն են դարձել ի փախ,
Այն ճերմակ ճերմակ սարերն են անվախ.
Ջրնիկն ի ծոցին բացեր է ճանպարհ,
Քաղցրիկ կըրկըջով գլորէ գետս հազար.
Ցայն բարձըր ժայռից որ երկնուց են մօտ
Կենաց օրհնութեան ծագէ առաւօտ։
Ահա քո բլուրներն՝ Հայո՛ց աշխարհիկ,
Այն քո բիւր բլուրներ ու բիւր վըտակիկք,
Հազար քո ձորերդ ու հազար քո դաշտ՝
Տարան յուրտ ձըմեռդ ու ձիւներըդ շատ.
Լերինք և հովիտք ընդարձակ ու լայն
Նախշուն զարդարին նոր հարսին նըման.



Կապուտակ սարերդ գունըզգուն պըսակ
Կապեն ի գըլուխ զինչ նոր Թագւորակ.
Ի ծայրից սարից որ երկնուց են մօտ՝
Փըռուի մինչ ի խորն հօրոտն ու մորոտ (1).
Գետեզերք ամեն բացել են շուշան
Պայծառ դընդըղնով (2) ցընցըղկեն (3) զընան.
Սարեզերքն ամեն զվարդն երեւցուցին,
Ա՛հ կարմրուկ վարդեր, զաւակք Եդեմին։
Պըլպուլն ի հեռուանց Թողեց ճըգնարան
Ծովեր ցամքըներ Թեւեց անդուման (4),
Կանչեց ի յօդուն երեք հետ բարեւ
Ոսկունքըն դըրաւ ի սարին վերեւ,
Սարին վերեւէն ի վարդին տերեւ,
Հայո՛ց աշխարհիկ, քեզ երետ բարեւ.
Սարեկն ի սարին եկաց ու մընաց,
Անմեղ նախընծով եղաւ երգասաց.
Արագիլն յերդիսն (5) աւլեց իր բունիկ,
Կանգնեցաւ կըղաց՝ «Հայո՛ց աշխարհիկ».
Արտուտիկըն Թռաւ, Թռաւ Թռաւ վարուվեր
Մանրիկ ճըլըլըլով ասաց շատ բաներ.
Տատրակիկն իջաւ իջաւ ցած ու ցած
Կըրծկունքն ի գետին ըզկռւկռւ ճըւաց.
Հովիւն ու հօտաղ (6), գառինք, եզն ու կով
Գոհացան զԱստուած՝ մարգեր շուրջ գալով։
Հանց քեզ տէրն է տուել գարուն գեղեցիկ
Որ դրախտի նմանիս Հայո՛ց աշխարհիկ.
Դրախտիկն որ անցել դառնայ քեզ գարնամբ
Զինչ պայծառ արեւն որ ծածկէր ի յամբ։
Բայց Նահապետիս ինչ սեւ ծերուկ

---

(1) Տեսակ մը ծաղիկ։
(2) Ալիք։
(3) Սահիլ, վազել։
(4 Ցանկարծ։
(5) Տանիք։
(6) Թերեւս՝ հոտ։

Որ եմ քան զամէն ծաղիկ վաղանցուկ ․
Իմ գարունս անցել ու հասել աշուն ,
Ցամքած տերեւուկս ըսպասեմ հովուն՝
Թէ երբ ի լերանց ծոցուն փըչէ խոր
Զըգէ անկըսկիծ գիս մահուան ի ձոր ։
Նահապետիս կեանքն եղաւ բաւական
Խընդութեամբ կեցաւ ի յիւրն Հայաստան ․
Ժամ է որ երթայ ի յայն հայրենիք
Ուր խսկի չըգտուին եղբարք սիրելիք ․
Խընդութեամբ կ'երթամ քեզնից՝ Հայաստան ,
Քեզնից առած հողս՝ ի քեզ տամ թաղման ․
Ի քո ծոցէդ վեր կանգնեցաւ Ադամ
Ես ի քո ծոցէդ ա'ելնեմ անթառամ ։
Ա՜յ մանկտիք եկէք շուրջ Նահապետիս
Ականջ դիք շայիր (1) հօրդ յետքի ձայնիս ․
Պըպուղն ու սարեկն երգերն են նորել ,
Ինձ՝ հետ տատրակին հողու հաւսարել ․
Մանկտիք , գիս Հայոց հողն ու ջուր սնուցել ,
Ես այն հողն ու ջուր սըրտով եմ սիրել ․
Հայրենեաց հարուստ է հող , ջուրն անուշ ,
Քանց օտար վարդ՝ բաղցր է հայրենեաց փուշ
Հայաստանի օդն է քաղցր ու բարակ
Հովերն են անուշ , պայծառ են վըտակք ․
Ջուրն ու պըտուղն համ տան անմահութեան ;
Խոտն ոսկեղօծէ գդաններուն բերան ․
Ցօսկեթել ամպոց յայգուն զովագին
Թորթոր իջանէ(2) ցօղիկ մանրագին ,
Կարմիր ճաճանչով արեւուն շաղուած
Գայ ի խաւըրծիլ(3) մանանայ կենաց ։

(1) Բռ. ռմկ՝ խըր բերթող ․ (2) կաթկըթել ․
(3) խաւարծիլ , վայրի բոյս մը որոյ ցօղունը կ'ուտեն , լիմօ-



Ո՜հ լերունք ծաղկած , ո՜հ ջուրք ծիծաղկոտ ,
Զանուշիկ հովերդ ի յիս ածէք մօտ ․
Հողմունք անուշիկք՝ եկէք մօտ ի յիս ,
Շունչ ու երգս առէք տարէք ի Մասիս ․
Տարէք վերջի շունչս ի տուն տապանին
Ու լըսեցուցէք զաւկաց Թորգոմին ։
Ձեզ կ'ասեմ մանկունք սիրունք նազելիք ,
Որոց է բնական Հայոց աշխարհիկ ․
Մ'ուրանայք զերկիրդ ու զազգըդ սիրուն ,
Ծառն՝ արմատով ծառ , տունն հիմամբն է տուն ։
Մեր տէրն ի յերկնուց ծայրէն երբ իջաւ
Երկրիս հիման քարն յԱրարատ դըրաւ ․
Այն մեր Մասիսու երկնաձեւ սարէն
Աչեց ըզբոլոր՝ վերացաւ նորէն ․
Հոն չափեց սահման իւր Նախաստեղծին
Ջեփրատն ու զԵրասխ բաժակ դըրաւ դըրախտին ․
Կենաց փայտին ծառն ի հոն ծաղկեցաւ ,
Զար գիտութենէ բարին մեզ տըրուաւ ․
Ի Հայոց հողէն կազմեցաւ Ադամ
Զօդն Հայոց Եւայն ծըծեց քաղցրահամ ․
Աչքերըն պայծառ երեսքն աննըման
Հրեշտակաց առջեւն հոն հանդիսացան ․
Ծաղկունքս այս ծընած են ի յայն ծաղկոց
Որք Եւայի պսակ եղան ու նըստոց ․
Այս մեր սարերուս ծերուկ արձագանգք
Աստուծոյ ձայնին տըւին պատասխանք ․
Աստից երգք սիրոյ ու ապաշխարութեան
Երկինքն ի վեր նախ յերկրէս վերացան ․
Արեամբն Աբելի Քրիստոս հօս գենաւ

նաթայի տեսակ ճամ մ'ունի . այս բոյսին վրայ է որ մանանան կ'իջնէ աւելի ։

Կրկին և կրկին մեզ յոյս խոստացաւ.
Ադամ ծերունին այս սարիս ներքեւ
Զաւակացն ասաց զիր յետին բարեւ.
Այն ձորիկն ի վայր լալով գնաց Եւա
Գլուխն ի քար դըրաւ կարօտ Եդեմայ.
Ի հոն են նընջել մարդիկն առաջին
Որ հետ հրեշտակաց զԱստուած օրհնեցին...։
Երբ գոռաց երկինքն ու գետին սարսեց
Ամպերն ի ծով, ծովն ի յամպեր վազեց,
Այն սարին ծարէն Նոյ մտաւ ի տապան
Ջըրագունտ երկրիս շուրջն եկաւ մանուման (1).
Իջաւ բազմեցաւ ի բարձրըն Մասիս
Զաղու աղաւնին ղըրկեց աւետիս.
Երկիրս էր դարտակ (2) անապատ ահեղ,
Լուկ ի Հայաստան կայր մարդկութեան տեղ.
Մեք եմք հարազատ ծեր Նոյի ծընունդք
Որ ժառանգեցինք զհօվիտս ու լերունք։
Նախընծեցաւ Բել բըռնաւոր արքայն
Զհասակն անճոռնի կանգնեց բարձր ու լայն.
Շատ զօրքեր շարան բերաւ անհամար,
Թուխ արեւ բըռնեց մեր երկնուց պայծառ.
Լըսեց Հայկն արի, ձէնեց քաջերուն,
Սարն ի վար վազեց զինչ կայծակ յամպուն.
Զաղեղըն լարեց կամըրջի նըման
Որոտաց Թըռուց ըղնետըն գերան.
Զերկաթն ու պըղինձ կըրծից հըսկային
Սըրտովն ու Թոքով հանեց կըռնըկին.
Փլաւ Բէլն ի բըլրէն ի խոր Գերեզման,
Զէտ ծուխ սեւ զօրքերն եղան ցիրուցան։

(1) Պտոյտ, շրջան ընել.
(2) Դատարկ.



Շատ կըտրըճուորայք հանեց Հայաստան,
Շատ Բէլեր փըլուցին քաջքն Հայկի նըման.
Հուոմն, Ասորին, Մար, Սըկիւթ, Պարսիկ,
Հայոց Թըրերուն եղան պատառիկ.
Այս սարեր, ձորեր ու դաշտերս ամեն
Կարմիր են քըտնել, կարմիր խըմել են.
Ի հոն են խաղցել Տիգրան ու Տրդատ
Վարդանն ու Վահան, Աշոտ ու Սըմբատ։
Հոն կրակէ Թռուցել նետ Հայոց մանկտին,
Թըզի պէս Թափել գունդ գունդ Թըշնամին.
Այս բըլուրներուս ծայր դրօշըկներ բացուել,
Առիւծն ու արծիւ հետ Խաչին վառել.
Զէնք ծարւած գացել, դարձել են արբած,
Ծըմռոտած ճակատք պարզել են պսակած.
Ընկել են ընկել հոն Հայոց այլ քաջք
Մէկ ձեռքըն նիզակ ու մէկալըն Խաչ.
Թըռել ի դաշտէն ելեր են յերկին
Բազմել հետ Գրիգոր, Տրդատ, Վարդանին։
Աբգար Թագաւոր մեր քաջ իմաստուն
Թըղթով է խօսեր հետ Աստուածորդւոյն,
Երնէկ և ընծայ առել Քրիստոսէն,
Դեսպան ընդունել զառաքեալ Թադէն.
Զառաջին պատկերն այն սուրբ դաստառակ (1)
Փրկչին կողաբաց Գեղարդըն միակ,
Այլ շատ նըշխարքներ, մասունք զանազան
Ի ծոցն է պահել աշխարհս Հայաստան,
Շատ առաքեալներ ունի իւր քարող
Շատ սուրբ հայրապետ անբաւ մարտիրոս.
Բիւրաւոր ունի մատրունք ու տաճար
Անապատ ու վանք հազար ու հազար։

(1) Թաշկինակ:

ՅԱստուծոյ առեր ըղձեղուն ու գգիր ,
Թարգմանիչ յամէն ազգէ գիրք ընտիր
Ճարպիկ տղայք ղրկել ի Ստըմպօլ , յԱթէնք ,
Հայն հոռոմ լեզուով յաղթել է գՀելլէնք ·
Շատ գըրքունք գըրեր մեր հարքն ու մագղաթ
Չէր ցորեն դիզել քանց բարձր Արարատ ։
Բայց ափսո՛ս հիմա որ չար Թըշնամիք
Իսկի չեն խնայել Հայո՛ց աշխարհիկ ,
Եկեղեցիք , վանք , գըրատուն դարպաս
Զարկել են Թըրով հըրով դաս ու դաս ·
Զազգն ընչօք տեղօք քանդել ու գերել
Դէմ չորս հովերուն տըւել ու ցըրուել ։
Աւա՜ղ քեզ աւա՜ղ Հայոց աշխարհիկ
Տուն երկնանըման , փըլած տաղաւարիկ ։ . . .
Այլ ինչ ափսոսամ ըզքեզ Հայաստան՝
Երբ ձեռքն Աստուծոյ տեսնում յանդիման ·
Ինքն է հրամայած քակել , ինք շինէ ,
Զինչ ըզհետ ձըմռան ըզգարուն հանէ ·
Զաշխարհ մեր սիրեաց Աստուած ի սկըզբան ,
Թէ անէծք երեւ՝ սիրոյ էր և այն ։
Ի Թուխ ամպերէն ելնէ փոթորիկ ,
Հողու հաւսարին ծառերն ու մայրիք ·
Տերեւքն և ոլկոյզքըն մարգարտաշար
Ի յոտից ներքեւ երթան ի խաւար ·
Ամպն և փոթորիկ շուտով վերանայ
Նոր արեւ , գարուն , ծառն ու այգին գայ ։
Արմատք հին՝ նոր ճիւղ , հին ճիւղք՝ նոր ծաղիկ
Ընծայեն բնութեան , Հայոց աշխարհիկ ·
Դուք այլ կործանած սիւնք , դուք այլ կանգնիք ,
Կապին կամարքդ , ո՛հ , սուրբ եկեղեցիք ·
Քակեալ վանորէք՝ շինիք հոգւոց տուն
Դառնան ձեր սաղմոսք , ձեր քաղցր ալէլուն ։



Այդ քո աւերակք , Հայո՛ց աշխարհիկ ,
Նըշան մեծութեանդ են , թոռոմած ծաղիկ ·
Թոռոմած ես՝ բայց վարդ , ցամքած՝ բայց հալուէ ·
Ով ըզքեզ օտար ծաղկան հետ փոխէ՝
Նա կոյր է յիմար · զհոտն անմահութեան
Ընդ սուտ գոյն փոխէ տըխմարն ու տըղայն ·
Ցիմար է յիմար որ զպարծանքն հարանց
Երթայ վաճառէ ընդ օտար ազանց ·
Աշխըրհիս օրէնք՝ որ ծնողք չըփոխուին ,
Հայրենափոխք չեն , ուրացողք լինին ·
Ծառն՝ արմատով ծառ , ծառոյն է արմատ ·
Դալար մանկտիք , ձեր տակն է Արարատ ·
Պինդ կացէք , Աստուած ցօղէ ի վերէն ,
Ծըլիք ու ծաղկիք քանց վարդ ի Թըփէն ·
Զըլնի որ նախանձ չըլնի հակառակ ,
Թէ չէ՝ նման խոտու լինի խայտառակ ,
Այլք ծըլին ծաղկին , Թէպէտ քըչիկ մ՚ուշ ·
Զարկածըն մընայ միշտ դըժնիկ միշտ փուշ ·
Որք խելօք սիրով կան զինչ աղբըրիկք
Տեսնեն քո գարունդ , Հայո՛ց աշխարհիկ ։
Ալ ես Նահապետ ցամքած ծերունիս՝
Երթամ մեր հին հարցըն տամ աւետիս ,
Ասեմ , Թէ գարուն երեկ տան Հայոց ,
Դուք Նահապետիս տացէք՝ Հոգւո՛ց ։
Ծեր Նահապետիդ՝ տուր կակուղ հողիկ
Որ զքեզ պինդ սիրեց , Հայո՛ց աշխարհիկ ։

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ — *Նուագք*

## 2. ԳԱՐՈՒՆ

Ո՜հ ինչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փըչես հովիկ,
Ծաղկանց վըրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ,
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց
Գընա՛ անցի՛ր սըրտէս 'ի բաց։

Ո՜հ ինչ աղու և սրտագին
Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
Սիրոյ ժամերն 'ի յանտառին
Ըզմայլեցան 'ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ Հայրենեաց
Գընա՛ երգէ սըրտէս 'ի բաց։

Ո՜հ ինչ մըրմունջ հանես վըտակ
Ականակիտ և հանդարտիկ,
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես վըտակ իմ հայրենեաց
Գընա՛ հոսէ սըրտէս 'ի բաց։

Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց
Աւերակաց չրջին վերայ,
Թէպէտ պըղտոր վըտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են Հայրենեաց
Նոքա չերթա՛ն սըրտէս 'ի բաց։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ. *Մատենագրութիւնք*

---

## 3. ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆ

Գարունն է եկել նախշուն թեւերով,
Նախշուն թեւերը պէս պէս ձեւերով,
Գոյն գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով։

Երկինք ու երկիր քեզ տօնեն, գարուն,
Զի ես քան զամեն եղանակ սիրուն,
Նա անձրեւ ցօղէ առատ ի վերէն,
Դա օրհնել տայ քեզ եկւոր հաւերուն։

Ոսկի արեւը փայլէ քեզ վերէն,
Կենսաբեր հովը փըչէ ի լերէն.
Ա՜խ, ազնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ինչ բաղդ բերիր ինձ Տէրէն։

Գլխաքարշ երթամ ի պարտէզ այգուն,
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն ի բուն.
Չիկայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրտիս,
Ես վաղ եմ մոռցել զինչ անդորր է քուն։

Մեռած պատանքած գետնին կեանք տուար,
Տերեւթափ ծառին ստուերախիտ արար.
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,
Ի՞նձ մինակ խղճիս էսպէս մոռացար։

Աւա՜ղ գնա, գարուն, դէպ ի հիւսիսն ի խոր,
Գնա՛, կանանչցուր դու անդ սար ու ձոր.
Որոց անհամբեր քեզ կան՝ տա՛ր բարեւ.
Քո՛ւրախ գալստեամբ նոցա զուարճացո՛ւր։

Կուգաս գալ տարի, դու ինձ կը գտնես
Ո՛չ ի մեր այգին և ո՛չ ի պարտէզ,

Այլ անզարթ քընով հողի տակ պառկած ,
Գերեզմանաքար մի վրաս կը տեսնես ։

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ *Քնար Հայկական*

---

## Գ. ԶԵՓԻՒՌ

### Ա.

*Զեփիւռ , գարնան ո՛վ դու աղջիկ գեղապար ,
Դու բընութեան փափկասուն հարս օդավար ,
Թո՛ղ մի վայրիկ զանհունութիւն և կեցիր .
Վար առ մանուկ թեւերդ անխոնջ , ունկն դիր ։*

*Յաճախ հագիւ զառաջին վարդ համբուրած՝
Հողմածածան 'ղայն քեզ տապան ես գըտած .
Հագիւ չոյած մատղաշ առուս կենսաւէտ՝
Օ՛հ , չընչասպա՛ռ կորար յալիս վէտ ի վէտ ։*

*Օճառածին զերդ պըղպըջակ ծիրանի ,
Զերդ արծաթի ծուխ կընդըրկան սըրբենի ,
Զերդ կաթնածիր շաղեր ցըրուած ի Դաքրիւռ ,
Կեանքդ անտև է , լաւ 'ղայն վարէ , խօլ զեփիւռ ։*

*Ինչո՞ւ վատնես ոսկի ժամերդ խաղալով
Քեզ պէս մանուկ , թեթև , անմիտ թիթռանց քով .
Ի՞նչ չահ թէ դու ծաղկէ ծաղիկ վաչս առեալ
Հասնիս , բըռնես նոցա քըղանց փայլի փայլ ։*

*Ի՞նչ չահ , ո՛վ չար , թէ վարատես(1) ըղհաս մեր
Եւ վարդերի փետես կարմիր ըղթերթեր ,*

(1) Ցրուել , բաժնել ։



*Կամ թէ պաչպաչ խաղաս ի գոգ չուշանաց ։
Զեփիւռ , ուսիր գեղանալ ծիր քո կենաց ։*

### Բ.

*Լուսափետուր Այգ նոր թառած ի ծայր բլեր՝
Գըննա կապտել 'ղվարդ , չահօքրամ խընկաբեր ,
Եւ մանուշակ , ոսկեծաղիկ , նարդ , յասմիկ ,
Լից յայդ բուրմունըս 'ղեթերեայ քո ծոցիկ ։*

*Յետոյ գիտ դու հոնաւ (1) թեւօքդ իմ Երէս ,
Ականջն ի վար դու ճըլուըլա « Սիրէ 'զքեզ , »
Եւ ջերմ համբոյրս , 'զոր աւանդեմ դողդոջուն ,
Օ՛հ , թըրթռացո՛ւ ընդ իւր չուրթեր մեղրասուն ...։*

*Լուսինն ահա մելամաղձոտ նոճեաց ծայր
Գլորէ թեթեւ լուսոյ ալիս ոսկեսայր .
Զեփիւռ , ոգել գնա չիրմաց վրայ 'ղերդ մահուն .
Քեզ քնար նոճին լինի , ձայնկից՝ լալկան բուն ։*

*Պէշիկթաշլեայ գնա գիտ տապանն , ո՛վ Զեփիւռ ,
Դեգերէ հոն , գրկէ բազկօքդ համասփիւռ .
Հոն մեծութիւն հանգչի . մի վեհ տաղ հընչես ,
Որոյ յանկերդ լինի . « Յաւէտ անմահ ես ։ »*

*Ժիր կանդի (2) պէս պարզէ խիղախ քո թեւեր ,
Հայաստան թռիր , և յաւերսն այն վաղուեր
Շընչէ , Զեփիւռ . կայտուեն ոսկերք դիւցազանց ,
Յառնեն , վերջ տան Այրարատի հեծութեանց ։*

*Եւ գնա մեռիր , մանո՛ւկ Զեփիւռ , սուրբ յեդեմ
Ուստի առ սէր Եւայ եկար դու երբեմն .*

(1) Խոնաւ ։ (2) Արծիւ արու ։

Հրեշտակազուարճ առուք լինին քեզ տապան
Եւ դըրախտին վըճիտ այեր քեզ պատան :

Մ. ՁԵՐԱԶ — *Գրական փորձեր*

---

## Ե. Գ Ի Շ Ե Ր

Սիրուն պատկեր, պարզ գիշեր էր,
Եւ օդեղէն ովկիանում
Փայլում էին անթիւ աստղեր,
Եւ ուրախ էր սիրտըս զարկում :

Ամբրոսական ծաղիկներ վառ
Անուշութիւն էին բուրում,
Եւ երկնքի ցօղ կենարար
Բնութիւնն էր զովացնում.

Ես անխռով երգում էի,
Իմ երգըս սուրբ և մաքուր էր.
« Ազատութիւն » էի երգում,
Հայրենիքի « Պարծանք » ու « Սէր » :

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ — *Զանազան բանաստեղծութիւնք*

---

## Զ. Լ Ո Ւ Ս Ի Ն

Լուսին, դու աստղ խորհրդալոյս,
Նիմփայդ երկնից ամօթլեած,
Մելամաղձիկ ճակատըդ կոյս
Ամպեայ շղարշիւ սքօղած :



Սիրող սրտերց՝ ժամուց լըռիկ,
Ոսկի մազերդ ցիր և ցան,
Երկնից դաշտաց մէջ երբ մենիկ
Մոլորաքայլ կուգաս ման :

Եւ քո աչաց մի հեզիկ բոց
Կ'իյնայ յանկարծ ի խաւար
Ուր զիմ յուշոց և երազոց
Դիտեմ տըխուր զհեռանկար :

Առ քեզ ի վեր զարտասուագին
Հանեմ զաչկունս իմ խոհուն,
Եւ արտմանոյշ յերես քոյին
Պիշ՝ հարցանեմ, ով ես դուն :

Արդեօք իրա՛ւ Անահիտն ես,
Համեստութեան դիցուհի,
Որ դողանալ լոյսէն կ'ուզես
Զքնաղ հրապոյրքդ տարփելի :

Եթերց դշխոյ մ'ես դու այրի,
Որ՝ ի գիշեր սեւասքող՝
Յերկնից ի ծագ ինչ ամայի
Խնդրես շիրիմ մի ի դող :

Կամ արեւու դուստրն ես բամբիշ
Հրագէս աստղի մ'սիրահար,
Եւ մյնր ի խոյզ նազիս շրջիս
Սրտատրոփ ի թափառ :

Կամ մի ոգի ես դու գըթած
Յայդ կերպարան լուսանիւթ,
Որ յայց կ'ելնես լքեալ շիրմաց
Եւ հիւղեկին ցած ու մութ :

Մի ցօղ կաթել ի սեաւ անդր հող
Զոր մահացուցաց աչք մոռնան ,
Եւ սպրդել մի քաղցրիկ շող
Հիքին յանժպիտն օթեւան :

Թէ խանդից ջահ ելոյց ըզքեզ
Աստուծոյ մատն անդ յեթեր ,
Զի քերթողին ըզհուր վառես ,
Հանես զոգին իւր ի վեր :

Կամ թէ կացոյց քեզ մըտերիմ
Սիրող ոգեաց մենասէր ,
Զի քեզ յաւանդ տան ըզսրտին
Իւրեանց երգմունս և զիղձեր :

Թէ յեզր երկնից մի մշտավառ
Յուսոյ փարոս , զի մըթոյն
Ի դաշտս յորժամ ծըփայ աշխարհ ,
Զըկորուսէ զդէմս ուղւոյն :

Կամ մանաւանդ արդեօք էին
Մի տարփատենչ խոհն ես բոց ,
Որ աստղէ յաստղ իւրոյ ձեռին
Գընաս զգուել ծնունդքն հոծ :

Թէ մի աչքն ես անհուն սիրոյն
Որ զանհունիւ կը գրգայ ,
Հսկես անքուն , 'ւ ի քո ծոցոյն
Յոյս՝ լոյս յերկիր յայս տեղայ :

Ո՛հ , ո՛ և ոք , զի՛նչ և իցես ,
Լուսնա՛կ , աստղի՛կ սիրադէմ ,
Դու Արարչին մի մեծ գործն ես ,
Խորհրդաւո՛ր և վըսեմ :



Խցկիս խորէն , սրտիս խորէն
Կ'օրհնեմ ըզքեզ , ո՛վ լուսնակ .
Առ քեզ ի վեր ձօն կը հանեմ
Հոգւոյս արցունքն՝ հառաչանք :

Թէ դու չէիր , քանի՛ տըխուր
Լինէր աշխարհ , մո՛ւր գիշեր
Զիւր հրապոյրս , զիւր խորհուրդս մուր
Պուրակն , երա՛զ տանէր Սէր :

Խոհից լապտեր՝ մի՛տք թափառկոտ ,
Անյուսութիւն՝ զիւր բեւեռ ,
Ցօղ սփոփիչ՝ աչքն արցունքոտ ,
Մանուկն Աստուած մո՛ւր գտնէր :

Եւ զուրկ շողէդ թէ մնայր շիրիմ ,
Մեռելոց ո՛ր արեւակ .
Զի տիւ ցուրտ է ոգեաց նոցին ,
Քեզ կը սիրեն , ո՛վ լուսնակ :

Յանհունութեան ի դաշտս անբաւ՝
Խորին խորհուրդ մ'Արարչին
Ըզքեզ երկրի ընկեր տուաւ .
Փայլէ՛ , լըցո՛ զբաշխ քոյին :

Ռ. Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ *Առաջին տետրակ*

---

## Գ. ԼՃԱԿ

Ինչու՛ ապշած են լըճակ ,
Ու չեն խայտար քու ալեակք ,
Միթէ հայլւոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՛ մը նայեցաւ :

Եւ կամ միթէ կըղմայլին
Ալեակդ երկնի կապոյտին ,
Եւ այն ամպոց լուսափթիթ՝
Որք նըմանին փրփուրիդ :

Մելամաղձոտ լըճակ իմ ,
Քեզ հետ ըլլանք մըտերիմ ,
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ՝ լռել՝ ու խոկալ :

Որքան ունիս դու ալի՝
Ճակատս այնքան խոկ ունի ,
Որքան ունիս դու փրփուր՝
Սիրտս այնքան խոց ունի բիւր :

Այլ եթէ գոգդ այլ թափին ,
Բոյլքն աստեղաց երկնքին ,
Նըմանիլ չ'ես կրնար դուն
Հոգւոյս՝ որ բոց է անհուն .

Հոդ աստղերը չ'են մեռնիր ,
Ծաղիկներն հոդ չ'են թոռմիր ,
Ամպերը չ'են թըջեր հոդ ,
Երբ խաղաղ էք դու և օդ :

Լըճակ , դու ես թագուհիս ,
Զի թ' հովէ մ'ալ խորշոմիս ,
Դարձեալ խորքիդ մէջ խըռով
Զ'իս կը պահես դողդղալով:

Շատերը գիս մերժեցին ,
« Քընար մ'ունի սուսկ — ըսին .
Մին՝ « դողդոջ է , դոյն չ'ունի —
Միւսն ալ ըսաւ — կը մեռնի : »



Ոչ ոք ըսաւ — հէք տըղայ ,
Արդեօք ինչու կը մըխայ ,
Թերեւս ըլլայ գեղանի
Թէ ՝որ սիրեմ , չը մեռնի : »

Ոչ ոք ըսաւ — սա տըղին
Պատռենք սիրտը տրտմագին ,
Նայինք ինչեր գրուած կան . . . »
— Հոն հրդեհ կայ , ոչ մատեան :

Հոն կայ մոխիր . . . յիշատակ . . .
Ալեակքդ յուզէն թող , լճակ ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ
Յուսահատ մը նայեցաւ . . . :

Պ. ԴՈՒՐԵԱՆ (1) *Ցաղք*

---

## Ց. ՄՇԵՑԻ ՀԱՅԸ

. . . Մամիկոնեանք դեռ Մշոյ աշխարհին տէր չեղած , այս աշխարհի ղաւակը սրտի քաջութեան և ազատասիրութեան մէջ նշանաւոր էր . ես կ'ըսեմ՝ Մամիկոնեանք եկան այս աշխարհին մէջ և այս աշ-

---

(1) Պետրոս Դուրեան (1851-1872) երիտասարդ բանաստեղծ եւ դերասան , Իւսկիւտարու Ճեմարանի յաջողակ աշակերտներէն մին . տղայ հասակէն բանաստեղծութեան հետեւէ ըլլալով շատ մը քերթուածներ ունի որոց մեծ մասը իր կենաց վերջին օրերը գրած է . ունի նաեւ քանի մը ողբերգութիւններ որոնք հայրենասիրական ոգւով ու բաւական հմտութեամբ հիւսուած են .

Վաղամեռիկ հեղինակը իր մէկ քանի անզուգական տաղերովը կրնայ Հ— Մէւէ— ըսուիլ .

խարհի բնակիչներով քաջութեան անունը միշտ ժառանգեցին, քան թէ զայն իրենց հետ բերին ու ասոնց տուին։ Կրօնասիրութիւնն ալ սեպհական ծիրք մ'էր այս տեղի Հայոց, թէ կռապաշտութեան մէջ և թէ ճշմարիտ Աստուածպաշտութեան մէջ, և զայս կապացուցանէ թէ քուրմերու պատերազմը Տրդատայ և Լուսաւորչի դէմ, և թէ Վարդանայ, Վահանայ, Մուշեղի, Գայլ-Վահանին և անոր կորեանց նահատակութիւնները՝ Պարսից մոգակրօնութեան դէմ։

Մշոյ Հայերը պէտք էր քաջ լինէին նայելով իրենց հայրենեաց դիրքին։ Այն ամեհի բարձրաբերձ լեռները՝ մեծութիւն մը կազդէին անոնց սրտին. անտառներով մացառներով զարդարուած սարերու գագաթները և ծոցերը, նոյնպէս և չամբերը, որոց մէջ լեցուն գազաններ են, զիրենք կ'ստիպէին զէնքի վարժուիլ թէ որսալու համար և թէ պաշտպանուելու համար։ Այս ընդարձակ դաշտը, և այն մեծատարած երկինքը վեհութիւն և վսեմութիւն կ'ազդէին անոնց հոգւոյն, և այն պատուական կլիմայն արդէն զօրաւոր և յաղթանդամ կը կազմէր անոնց իրանները։

Ջուրերը բոլոր գետեր են, որ չորս կողմի լեռներէն սուր ընթացքով և գոռուն գոչուն ձայնով կը վազեն կը թափին Եփրատին ծոցը. և թէպէտ Մեղրագետն ու Եփրատ անձայն կ'ընթանան, բայց այնպէս արագ, և այնպէս աշարկու և լայնածաւալ պըտոյտներով ու հոսանքներով կ'անցնին, որ կարծես ահեղ թագաւոր մի է Եփրատ և անոր սպարապետն է Մեղրագետը. որք ջրային զօրաց մեծ բանակ մը առած գաւառները տիրելով կը վարեն կը դիմեն 'ի կռիւ ուրիշ տէրապետաց հետ։ Այսպիսի երկիր մը՝



որքան իր բնակչաց նպաստաւորիչ է, այնքան ալ իր մերձաւորաց և ծանօթից նախանձը կը գրգռէ. և այս պատճառաւ գրեթէ շարունակ կռուի մէջ ծընած ու մեծցած ըլլալով, մահուանէ չվախցող մարդիկ էին Մշեցիք . . . . . . . ։

Մշոյ աշխարհ լի է եղեր բանաստեղծներով, երգասացներով, բազմաթիւ աշուղներու տեղ է եղեր այս երկիրը, և այս բնական հետևութիւն է այն քաջաց և քաջագործութեանց, որոց դիւցազնագործութիւնները կը դիւցաբանէին, և անոնց թանկագին մահը պէսպէս երգերով կ'եղերերգէին։

Մշոյ այն գեղեցիկ հորիզոնը աչք ձգողին սիրտը ինքնին կը թրթռայ, արիւնը կ'եռայ և հոգին կը բարձրանայ։

Բայց այսօր այս նշանները ազգային չեն. Մշոյ քաջերը Քրդերն են, և բոլոր երգեր ու խաղերն ալ Քրդերէն լեզուաւ են։ Մեր ըրած դիտողութիւնն ընդհանրապէս է. 'ի հարկէ մասնաւորները պակաս չեն, ու կը տեսնուին Մշոյ ազգայնոց մէջ։

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ *Գրոց ու բրոց*

---

## 9. ՍԱՍՆՑՈՑ(1) ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Այս կողմերու Հայերը մեռելի վրայ սաստիկ ողբ և կոտորում կ'ընեն. եթէ անդրանիկ զաւակ է մեռ-

(1) Սասուն՝ Մուշի հարաւային կողմը գաւառ մ'է, սաստիկ լեռնոտ բայց պտղաբեր. բնակչաց մեծ մասը Քիւրդ են, Հայեր ալ կան որ իրենց մայրենի լեզուն ու կրօնն կորսնցուցած Քրդերէն կը խօսին, անոնց սովորութիւն եւ բարքը առած են. ինչպէս կերևի վերոյգրեալ նկարագրութենէն։

նողը, յուղարկաւորութեան ժամուն ձի մը կը զարդարեն, մեռնողին հագուստը ձիու վրան կը դնեն, անոր սուր, վահան, հրացանն ձիուն վրայ կը կախեն. մեռնողին կամ ծնողաց Հայ, Քիւրդ և Եզիտի բարեկամներ կը ժողվին կուգան. երբ գեղին կը մօտին՝ սեւ ապայով, մաշլաղով մը գլուխները կըսքօղեն, և մեծ ձայնով կը բոռան «Վայլըմըն Բրայօ, Վայլըմըն Բրայօ» (1) ստէպ կրկնելով այս վայերգը:

Յուղարկաւորութեան հանդէսը կ'սկսի ամբողջ գիւղացւոց բազմութեամբ, և դագաղի առջեւէն իբր քսան կանայք անուշ ձայնեղ, սեւեր փաթթած գըլխըները, Քրդերէն լեզուաւ ողբեր կը կարդան. քըսանէն աւելի ալ արք սեւ ապաները քաշած գլխըները սգաւոր՝ ողբասաց կանանց ետեւէն կ'երթան. մէջ ընդ մէջ կ'ընդհատի կանանց ողբոց ձայնը, և սգաւոր մարդիկ միաձայն կ'աղաղակեն «Վայլըմըն Բըրայօ, Վայլըմըն Բրայօ»:

Թաղումէն մինչեւ եօթն օր այս հանդէսով կ'երթան գերեզման կուգան: Ով որ զննջեցեալ շատ կը սիրէ, շատ կը բոռայ: Եւ եթէ բարեկամները թաղման օրը զատ զատ գան, իւրաքանչիւրն զատ զատ կը դիմաւորեն զարդարուած ձիով, գոյժ և ողբ 'ի բերան:

Յ. Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Տարօնոյ արծուիէ..
ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

(1) Թրքերէն կը նշանակէ՝ Վա՜յ ինծի եղբա՜յր, վա՜յ ինծի եղբա՜յր:

## 10. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏԸ

Ա՜ռ ինչ արդեօք դժգունիլ է լուսնակ. գող ի գող կը սահի արագ երկնից երեսէն և ամպոց ետեւ սքօղիլ կուզէ. — զի, բա՜բէ, մի պատերազմի դաշտ կայ արիւնոտ, և ինչպէս չաղախէ իւր շողերն այդ արեան մէջ զոր մարդկային վայրագութիւնն թափեց: Գիշեր է. լռած են ռմբաց պայթիւնն, գնդակաց շչիւնն, սուրերու խօչիւնն (1) և չեփորներու (2) շըռինդն. մութն, իբրեւ մի պատան սեաւ, կը պատէ արեանց դաշտն. ծայրակտուր և այլանդակեալ դիակք մի զմիով պառկած են, ահեղ և քստմնելի. իւրեանց աչերէն դեռ վրէժ կը փայլատակէ: Մերթ ընդ մերթ օրհասականներու հռնդիւնք և վիրաւորներու հեծմունք գիշերոյն լռութիւնն ահաւոր կերպիւ կը վըրդովեն — զի կան դեռ կենդանիներ որ կը թողուին դիականց մէջ իբրու մեռած —. ահա գիշակեր թըռչնոց մի պար կիջնէ անյագ, և անպատկառ կը յարձակի այդ մարմնոց վերայ. մին աչք մի կը փորէ, միւսն լեարդ մի կը կրծէ, մի ուրիշն արիւն կը խըմէ, և վիրաւորն կ'զգայ անգղին կտուցն որ կը ճեղքէ իւր կուրծքն: Աւա՜ղ, ինչ կատաղութիւն և որպիսի աղէտք. անհո՜ւն նախճիր. և այդ մեռելոց իւրաքանչիւրն, որ մի թիւ է անտարբերին համար, իւր ետեւէն կը թողու մի ծեր մայր անխնամ կամ մի հարս ու զաւակներ աննեցուկ: Եւ յետոյ, պատերազմն պայթումն է ամեն վայրագ կրքերու. մարդ մի գազան է, մի տարր կործանիչ, և այլ մի միակ զգացումն ունի — քանդել, սպաննել. — և ահա

(1) Սուրերու ձայն, խշըրտոց: (2) Փող:

ռումբն մի բոցածաւալ հրդեհ կը լուցանէ մի քաղաքի մէջ որ նստեր էր լռիկ ու անդորր. և խաղաղ գիւղերու վրայ, իբրու ամպք մարախից յանդս ցորենոյ, կը խուժեն հրոսակք արիւնարբուք. ջահ և սուսեր՝ կատաղած՝ 'ի միասին կը գործեն. ծով մ'է բոցոյ, ծով մ'է արեան. բոցն արեան մէջ կը մարի: Ժամ մի յետոյ կ'անցնի հեղեղն աւերիչ, և ողգատխուր լռութիւն և ամայութիւն կան միայն այն տեղեաց մէջ ընդ որ անցաւոր փախստականաց և առեւանգեալ կանանց և աղջկանց արցունքոտ աչերն 'ի զուր իւրեանց ետեւ հայրենի գիւղն կը խնդրեն. — մի գերեզման են անհուն:

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ *Թշուառութիւն եւ գութ*(1) ՃԱՌ

---

## ԶԶ. ՄՇԵՑԻ ՀԱՅՈՑ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Ո՞ւր է քո սեղան, Մշեցի հայ, ինչու խնջոյք չես կազմեր: Ահա վերջին քայլափոխը փոխեց հին տարին, իր վերջի վայրկենին հետ անցաւ սուզեցաւ ինքն ալ: Արարածները բոլոր կը ցնծան յուսով նոր տարին շնորհաւորելով. բայց դու կը հառաչես . . . կը հառաչես սրտիդ խորերէն, և թէպէտ սեղան մը և թէպէտ խնջոյք մը ունիս կազմած կորեկի փըշրանքներով և դըւդըլի(2) պատառներով, թթու և կըծու գալամը (1) և իր ջուրը քոյդ սեղանի զարդն ու օշարակն է, ուտելիք մը որ կը ցամքեցնէ մարդոց արիւնը, խմելիք մը որ կ'տրորէ (2) մարդոց լերդը և զայն արտասուացդ կաթիլներով կը խառնես: Ա՛հ, զաւակդ ալ նոյն քու թափած արցունքէն կը ճաշակէ, և տխուր երեսիդ յարելով իր գեղեցիկ, անմեղ ու պայծառ աչուըները, ինքն ալ կը թառմի, և առանց բան մը գիտնալու ինքն ալ կը տխրի, և կ'սկսի ձայն արձակել ու մրմռգելով լալ . . . . :

Լաց և արտասուք փոխանակ երգոց և զուարճութեանց կը մատուցանէ Մշեցի հայն նոր տարւոյն տօնին, հոն մանկամարդ մայր մը իւր մէկ զաւկին նայելով կը հեծեծէ, հոս այրին իր որբը գրկած միասին կ'ողբան ու կ'մղկտան. այն տեղ նոր հարսը մէկ ձեռքը իր կուրծքին վրայ, միւսը աչերուն վրայ դըրած միայնակ նստեր ցուրտ և դատարկ տան անկիւնը կ'դողդողայ և իր փեսայի պանդխտութիւնը կ'յիշէ ու կ'ողբայ, և անոր փեսայն այն ղօյէլ չէվըն կորիճ Մշեցին՝ այս վայրկենիս դեռ նոր բեռը իր ուսերէն վար առած, ճակտին քրտինքը կը սրբէ, և կ'երթայ քանի մը իրեն պէս պանդուխտներու հետ կը բազմի կամ Թիֆլիզու Ջէփանխանէ. կամ Պօլսոյ Ջյխանաները դապակած ձուկը իր առջեւ և գինւոյ բաժակը բռնած ձեռքը կ'ճաշակէ, տեսնողը գիտէ թէ ուրախութիւն է այս, բայց ո՛չ. տարը սիրտը արեան ծովի մէջ կ'ծփայ, Մշեցին եթէ կ'ճա-

---

(1) Այս ճառն որոյ մէկ մասն է սոյն գեղեցիկ նկարագիրը խօսած է բազմահմուտ հեղինակը Հայ-Գրական ընկերութեան մի լսարանի մէջ, խուռն բազմութեան մ'առջեւ:

(2) Կորեկի տեսակ, որով հաց կը շինեն, թէեւ անհամ եւ սեւագոյն:

(1) Կաղամբ, իսկ կծու գալամ գաւառական լեզուաւ կը նշանակէ տեսակ մը թթուաշ:

(2) Փտտեցնել:

չակէ գինի , կ'ճաշակէ նա զայն իբրեւ Թմրեցուցիչ դեղ իւր զգայարանաց , իբրեւ մոռացուցիչ իւր մը-տաց և յիշողութեանց , որոց մէջ կտորիկ մը մըխի-Թարական չ'կայ . այլ ամենեւին ցաւալի , ամենեւին հարաչար և մահու արժանի . . . . :

Մահու արժանի իր տեսած օրերը , իր կրած վիշ-տերը , ինքն և իրենները : Ամէն տարի ալ նոր տա-րի եկաւ , բայց միշտ նորն քան զհինն դառն եղաւ : ետեւը դառնայ գուբ է , առջեւը նայի գերեզման . . . . Ասոր համար չի կարող յոյս առնել , չի կարող մը-խիԹարուիլ , անցելոյն պատճառաւ ինքն ներկայ չ'ունի , և ներկայ չ'ունենալով ապագայ բնաւ չու-նի . . . . Ի՜նչ կեանք է այս :

Ի՞նչ կեանք է այս : Երանի մրջիւնին և արօս (1) Թռչունին : Նա իր կուտը կուշտ կ'ուտէ , սա իր սի-րական ամուսինը իր հետը կ'պահէ , Երանի սարե-կին , որ իր ձագերը իր ածածէն (ձուէն) կը ծնի , և փետրիկներով զանոնք կ'ծուարէ(2) դարմանէ , իր բը-նութիւնն ու լեզուն անոնց կ'ուսուցանէ . և ազատ կ'Թռուցանէ: Մշեցի հայն քան զասոնք շատ Թշուառ է իրաւունք ունի որ միշտ ձեռները իր ծունկին վրայ կապէ , աչերը արտասուաց ծով անէ , և իր կեանքն , իր ամուսինը և իր տղեկները ողբայ աւաղէ . . . . :

Աւաղէ Թող . իրաւունք ունի , վասն զի իր խըղ-ճիԹը ծածկող գերաններն ալ տոկոս գրուած են , իր զաւկին ժառանգութիւն ինչ պիտի Թող տայ , պա՛րտք ,

(1) Թռչնոյ տեսակմը կռնկան մեծութեամբ , որ շատ կը գտնուի Մշոյ դաշտերը . զարմանալի են այս Թռչունին իւր էգին վրայ ու նեցած սէրը ու խնամքը .

(2) փաԹԹել , պատսպարել .



աշխատութիւն , բա՛նտ , տուգանք , արտասուք մին-չեւ մահուան օրը , քրտինք հեղեղի պէս , որ շարու-նակ ճակտէն պիտի Թափէ , և անոր մէկ կաԹիլն անգամ իրեն բաժինը չ'է : Ծեծ ոսկորները փշրելու չափ , ստրկութիւն՝ քան զգերութիւն գէշ վիճակ : Ո՛հ , այն դաշտի մէջ գլգլացող աղբիւրը՝ որմէն ինքն ջուր կ'խմէ , այն արտիկը՝ որոյ մէջ քրտնաԹա-Թախ և արեւակէզ ինքն վար կ'վարէ և հունձ կը հնձէ , այն եզնիկը՝ որ իր ձեռքով փայփայեր , սնու-ցեր, և իր կենաց ու քրտանց հաւատարիմ ընկերն է եղեր , ասոնցմէ և ոչ մէկն ալ իրեն չի մնար : Թէ կուզես լսել Մշեցւոց սովորական երգը . ահաւասիկ ,

«Մենք կնիկ մեզ համար չ'ենք բերեր . . .
«Մենք աղջիկ ու տղայ Հայոց համար չենք ծներ . . .
«Մենք տուն մեզ համար չ'ենք շիներ . . . .
«Մենք հաց մեզ համար չ'ենք ցաներ քաղեր . . . .
«Մենք մեզի համար չենք ապրեր . . . . »

Մենք մեզի համար չենք ապրեր : Այս է Մշեցի Հայոց մեղեդին(1) ամէն տօնին և նոր տարւոյն սե-ղանին . մոխիր է իրենց կերակուր , և լեղի ըմպե-լին . . . . . . . . . . . . :

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ *Ընտիր գործեր*

(1) Մեղեդի , անոյշ երգ :

## 12. ԻՄ ՍՈԽԱԿԻՆ

Սոխակ՝ ինչու՞ դադրեցար քու անոյշ երգն երգելից,
Որ քամում էր արտասունք շատ իմ էրված աչերից.
Միտո՞ք է երբ ծագում էր արշալոյսը գարնային,
Թանի՜ դու միտըս բերիր իմ առարկան ցանկալին...
Այն յիշատակն անոյշ էր ինչպէս երազ վաղանցիկ,
Որ գէթ վայրկեան թշուառին դարձնում էր նա երջանիկ.
Համակ աշխարհ մոռացած, ունկս քո ձենին յառած,
Մրտքով թռչում էի ես իմ հայրենին կարօտած...
Գիտեմ, դու էլ ես կարօտ մշտադարուն այն դրախտին,
Որից հեռու մեզ չիկայ քաղցըր ժըպիտ մեր բաղդին.
Ո՞վ կուտայ ինձ թեւ թռչնի, որ խոյանամ սըլանամ,
Օդն ու ամպերը ճեղքեն ու տանին ինձ Հայաստան.
Թէ նորա օդը շնչեմ, այն կենսատու սուրբ օդից —
Գիտեմ, փրկուելու եմ անբուժելի իմ ցաւից...
Գարունն անցաւ, ա՛խ սոխակ, խօսուն լեզուիդ կապ դըրաւ,
Ու խեղճ վարդի թերթիկի հետ չարականդ էլ տարաւ:
Կբանամ դուռը վանդակիդ, ազատութիւն քեզ կուտամ,
Բայց աղաչում եմ քեզի, թռի՛ր դէպ ի Հայաստան.
Վարդ ես ուզում՝ այն տեղ է, անամպ երկինք, մեղմ հովեր,
Ճաճանչափայլ արեգակ, կարկաչասահ առուներ:
Ես էլ քեզի պէս կարօտ եմ բնութեան պայծառ օրերին,



Մէգ, մառախուղ, հեղձուկ օդն հալեց, մաշեց իմ հոգին.
Փըչեց հողմը Հիւսիսին, փոշին երկինք բարձրացուց,
Կոտի (1) վրայից ագռաւը խուպոտ (2) ղաղան (3) հընչեցուց.
Ահա Հիւսիսի սոխակն, ահա Հիւսիսի այեր...
Ի՞նչ էք կորցրել (4) Հիւսիսումն, ա՛յ խելացնոր խեղճ Հայեր.
Ա՜խ, ես տուել եմ նորա կեանք ու վայելքը պատիր,
Տուէք օդը իմ երկրին, դալար դաշտն ու վարդ կարմիր:

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ *Բանաստեղծութիւնք*

---

## 13. ՍՈՎ

Սով է, ուրուական կմախաձեւ, որ կը պտըտի սա քաղաքին մէջ, ձեռք ձեռքի տուած մահուան հետ: Սով. բառ ահաւո՛ր. արդեօք կ՚զգա՞յ բովանդակ արհաւիրքն որ կայ այս անուան մէջ՝ նա որ չէ կրած երբէք քաղցի տանջանքն: Անունդն հատած է քաղաքէն. մի պատառ հացի կարօտն կը քաշեն ամենքն. հարուստն այլ թշուառ է աղքատին չափ և իւր ոսկիներուն մէջ կը մեռնի սովալլուկ: Հալած մաշած ստուերներ են մարդիկ քան էակք կենդանիք, խոռոչացեալ աչերով և մեռելատիպ երեսով: Քաղցն անագորոյն աղիքներն կը գալարէ ու կը բըղ-

(1) Կտուր՝ կը նշանակէ տանիք. (2) Անախորժ, անշնորհք:
(3) Բառ ռմկ. ագռաւի ձայն: (4) Իրր կորսնցուցած:

կըտէ. ով զարհուրելի տանջանք. — ահ, օգնութիւն, հա՛ց —. այլ 'ի զուր, և ահա ոսոսկալի ջղաձըգութեանց մէջ կը փչէ հոգին մի առոյգ երիտասարդ: Նօթի մանկանց ամբոխ մի կը պտըտի փողոցներն ողբագին. և 'ի մէն մի քայլ կիյնայ մին 'ի նոցանէ: Հողն ամլել, մօրն անսպառ ծոցն այլ է չորցել, և օրրանին մէջ կը թոռմի մանկիկն իբրեւ մի բոյս ուր կը զլանայ հողն իւր հիւթ, երկինք՝ իւր ցօղ: Եւ, աւա՜ղ, մայրն կը տեսնէ զայս և իւր սէրն — մայրենի սէրն, այն անհուն և ամենակարող զգացումն — ապիկար է օգնել իւր զաւկին. կը ծռէ գլուխն նորա ճակտին վերայ և այլ չառնու վեր: Օ՞ր կը ծագի, գիշեր կուգայ. ով կը նշմարէ. խաւարամած աչեր իւրեանց ու բերանաբաց գերեզմանին մէջ տեղ արձանացած կը տեսնեն միայն Քաղցն « դժգոյն և անգութ », որպէս կը կոչէ Վոլթէր: Ցաւագին հըռաժեշտներ կը լսեն առ լոյս, առ կեանս, և յետոյ մի գերեզմանական լռութեան մէջ կ'սպառին ճիչ և հեծ:

Ռ. Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ *Թշուառութիւն եւ գութ* ՃԱՌ

---

## 44. ՆԿԱՐԻՉ

Ակնապիշ, անձայն, խորհուրդ ճակատիդ,
Պատանի՝ ուր ես մըտքով մոլորած,
Ներկ ու վրձիններ ցիր ցան առաջիդ
Վշեայ կտաւը քու հանդէպ փըռած:

Շռւռ տար (1) աչերըդ, նայէ դէս ու դէն,
Տես քեզ ծաղրում է անմիտ ամբոխը.
Զարթիր, սիրելի, այդ անուշ քընէն,
Գոնէ մի անգամ հանէ քու ոխը:

Բայց դու ներում ես նոցա վեհ հոգւով,
Թող ես աշխարհի ունայն շըշուկին...
Ցանկարծ աչերըդ փայլեց սուրբ շնորհքով,
Հըսկայի սիրտդ թընդաց խիստ ուժգին.

Առիր վրձինդ, թաց արիր ներկով,
Շունչ տըւիր անշունչ կոպիտ կըտաւին,
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով.
Քեզ անկարելին անյայտ է բնաւին.

Սէր, ատելութիւն, հանճար, բարկութիւն,
Տըւիր պատկերին մատիդ շարժուածով.
Ինչ որ չի յայտնեց ճարտարի լեզուն,
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածով:

Ապշեց ամբոխը, վազեց, յառաջեց
Քու կենդանագիր պատկերի դիմաց,
Ծնկաչոք զմուռս ու հալուէ խնկեց,
Գոչեց մեծաձայն « Դա է իմ Աստուած »:

Բայց ախ, քու անքուն ժամերու ճիգը
Քանի մի արծաթ հացիւ գին դըրին.
Ստեղծօղըդ դարձար քու խեղճ խըճիթը,
Ակեր շարեցին շուրջ քու պատկերին:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ *Բանաստեղծութիւնք*

---

(1) Ռմկ. իբր պտըտցընել:

## ՂԵ. Ե Ղ Ի Ց Է (1)

(Հեղինակութիւնը)

Ոսկեծըղի, գեղեցկատիպ.
Ով իմ գըրքուկ հոգեչունչ
Ազգիս փառքը, անբաղդ որը
Դու քարոզող անմըռունչ,
Ո՛վ պիտի տար այն անըսպառ
Սէրն ու գութը դէպ Հայքն,
Թէ որ մարդիկ քեզ, ով գըրքուկ,
Երբեմն չկարդային,
Քեզ կարդալով՝ կը մոռանամ
Ես թերութիւնք մեր ազգին
Գէթ Հայ եղբարքս գութ ու սիրով
Միշտ կը լըցվի իմ հոգին,
Մըտքիս մէջը ես միշտ կ'ասիմ
«Սերունդք Վարդանի քաջին
Անհընար է անփառունակ
Ըստրուկ մընան կամ կորչին»
Կամ տեսնելով հէգ հայ տէրտէր՝
Սուրբ Ղեւոնդին կը յիշեմ,
Ու յուսահատ տըրտում մըտքեր
Ինձմէն հեռու կը քըշեմ:
Եղիշէին Հայք կարդալով
Նոր յոյսերով կը լըցուին,
Հայի գալոց բարիքն նոցա
Հոգւոյ առջեւ կը բացուին.
Հա՛յ պատանի շա՛տ շա՛տ կարդա՛

(1) Սոյն քերթուածը ինչպէս նաեւ Ն-ւ տ-ւէ՝ քաղուած է Բոստոնի տպեալ այս տարուան օրացոյցէն:



Այս գըրքուկըս ոսկետառ,
Որ համոզվիս թէ մեր Հայը՝
Կորչելու ազգ չ'է խապառ:

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

---

## ՂԶ. ՎԱՆԱՅ ՄԷՋ ԱՌԱՒՕՏ ՄԸ

Վանայ այգեստանք, որ տեղական բարբառով կ'ըսուին Էգէստը, բնութեան և բնակչաց ձեռքով վայելչագեղ զարդարած երանաւէտ վայրեր են. ուր իւրաքանչիւր տունը իրեն կից ունի ծառաստան, այգեստան, բուրաստան. և իր դրան առջեւի փողոցին երկու եզերքը՝ առուներ ջրալից, որոց ափերը կարգաւ տնկուած են սաղարթախիտ մանրատերեւ ուռիներ, տեղ տեղ եւս բարդին, կաղամախ, հացենին, թեղին: Փողոցներու մէջտեղը՝ հասարակաց ընդարձակ ուղին, և ճղաղարդ ծառոց թեւերն ու տերեւները այս և այն կողմէն իրարու գրկուած խռնուած, սքանչելի հովանոց կը կազմեն անցորդաց. որոց մէջէն արեւու ճառագայթները մանր մանր հողմածըփիկ աստղերու նման կը ծագի գետնին վրայ, անցնողին կամ նստողին գլխուն ու երեսաց վրայ ծածանելով, ինչպէս խաղաղ գիշերուան մը մէջ Լուսնոյ հով ճաճանչները կը փայլեցնէ զեփիւռը ծովուն ափանց մօտ եղած նօսր ջրերուն ծոցին: Նոյն ծառերը՝ որոնց կանանչ ու դալար վարսեր կ'օծանին օդին ցօղով և արեւուն ջերմով, իրենց արմատները ի վնասս ջուրց կ'ուռճանան. ջուրք խոխոջելով, գըլգըլալով (1) կ'անցնին, լցելով այն ծա-

(1) Բառ գաւառական կարկաջել.

ռոց տուները, ոռոգելով իւրաքանչիւրին սահման-եալ այգին, պարտէզն ու բուրաստանը, մատակա-րարելով առ հասարակ տանց ի լուացումն, ի ըմ-պելիս և առ ամենայն պէտս:

Այն տեղի առաւօտը՝ ոչ արեւածագումն է, և ոչ քաղաքակրթեալ տեղերու պէս՝ արեւածագումէն քանի մը ժամ ետքը. այլ՝ երբ Լուսոյ աստղը իւր գլուխը կը բարձրացընէ Վարագայ Գալիլիայէն, վայ-րկեան մի եւս, և ահա կը հորիզոնանայ Շուշանից գագաթան Ջիաթոնուկին վրայ, ու Կարմրուորայ վա-նից գմբէթի խաչն առաջին անգամ բարի լոյս կու-տայ կ'առնու, և մթնանշմար կը փէլկտայ. այս վայրկենին Այգեստանեայց եկեղեցեաց ժամահար-ները տանիքն ելած՝ երեսները երիցս կը խաչակըն-քեն. «Գողու ժամ» կը զարնեն — գողերը կ'անհե-տանան —. դեւերը կը հալածուին, և գազանները որջերը կը քաշուին: Ժամհարը ժամին դուռը բա-նալով՝ երեք բերան «Օրհնեալ ես Աստուած» կ'ը-սէ, ու կ'սկսին ձեռաց կոչնակները ԴԸԳԸԼ ԴԸԳԸԼ հնչեցնելով թաղէ թաղ շուրջ գալ, ամէն Հայ Քրիս-տոնէի դրան ճկեկը (1) զարնել և «Ողորմի Աստ-ուած» կանչել. երբ իրենց շրջանը լմնցնելով ետ կը դառնան, իրենց ետեւը ձգելով կը բերեն խուռն-երամ մանկտիները, անոնք որ հայր կամ մեծ եղ-բայր չունին տան մէջը. իսկ որք ունին, կը ստի-պեն կը յարուցանեն ծնողք կամ եղբարք, ձեռքերէն բռնելով կ'երթան դէպ եկեղեցին «Զարթիք» կարդալու:

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ — *Մանանայ*

---

(1) Բառ գ. Ջ-ԻՀ-Ի.

## 17. ԼՈՒՍՆԿԱՅՆ ԳՆՐԵԶՄԱՆԱՑ ՀԱՅՈՑ

Ա՛յ իմ լուսնակ գեղեցիկ, աստուածավառ դու լապտեր
Զո՞ր առաջնորդ գիշերոյ դըրաւ յերկինս ինքըն Տէր.
Կոյր մըթութեան աչք անփակ, սըրտիս այլ դու աչք կուտաս
Երբ շողշողուն շըղթայով կախուած շարժիս յիմ վըրաս.
Քո թելն՝ երկնից արծաթէն հիւսուած, պատըույգդ ալ ոսկի,
Ադամանդէ կայծակներ սփռես զաստղերըդ չորս դի.
Եղի մեղրի նըման կաթ մի յամանէդ յիս թափած
Կու խաղաղէ կըրքերս զինչ ալիք լըճիս համ-դարտած:
Ո՛հ, ի՜նց պայծառ էիր դուն կենացդ երկրորդ գիշերին
Երբ նոր քաշուած Աստուծոյ ճախարակէն ընդ երկին.
Ո՛հ, ի՜նց փայլուն էր քո լոյսն՝ երբ առաջին այն անգամ
Գիշերագուարճ պըլպուլիկըն ձըգեց ձայն երկ-նահամ.
Շունչըն պայծառ քեզ նըման հովտէ հովիտ կու խաղայր.
Հեզիկ հովով թունդ ելած մաքուր առուակըն հեւայր.
Չըկայր ականջ հողեղէն որ ձայն լըսէր ու փառք տայր

Միայն հրեշտակք լըսէին և շարժէին ըզքեզ վայր ·
Եւ դուն լըռիկ չափեցիր զանամպ երկնից կէս բոլոր ,
Ծով 'ու ցամաքի վարագոյր բացիր , ներքեւ մըտար խոր ,
Երբ արեգակըն կուգայր հրեղէն ոտքն յօդս ի վար
Զարչալուսոյ ցօղ սփռէր և զառաւօտն հըրամաղ:
Կացի՛ր արեւ , յետ կացի՛ր , մ'ելներ յերկինքըդ կապոյտ ,
Թող լուսնեկիդ ի ման գալ դեռ ի մէջ թուխ ամպերոյտ .
Կա՛ց կա՛ց լուսնակ դու յառաջ , լեռնէ ի լեռ սարէ սար
Մէջ ձորերուս խորերուս անցի՛ր յուշիկ հաւասար ·
Հետ քեզ ունիմ ես գանգատ , քեզ Նահապետն ունի բան ,
Սիրտըն յերկուս է ճըղքած , և ցաւերն , ո՜հ , զանազան ·
Պայծառ լուսնակ մի՛ փախչիր թէ տրտմութեան լըսես ձայն ,
Ցաւած սըրտի մխիթարանք ես դու կանգնել յերկինքն այն .
Ման գաս յերկիրն Եդեմայ , բայց ոչ ի հինն այն գիշեր
Երբ երջանիկ էր դեռ մարդ , լոկ սէր ու կեանք կու յիշէր ·
Ձերմակ ճաճանչդ յայնժամ տաք էր ջըրերուն ու ծաղկանց ,
Ուր որ կաթէր քու շաղիկ՝ կենդանութիւն էր անանց . . .
Դարձի՛ր նայէ հի՛մ 'ի վայր, նայէ ի փէշ սարերուս,



Նայէ ի տափ (1) տաճարիս , և ի հողրանք (2) գեղերուս . . .
Ա՛հ , գերեզմանքն են Հայոց , որ ոչ եւս են յաշխարհի ,
Մաշած նըշխարք մեր հարանց՝ թաղուած ի խոր խաւարի :
Այն Հայկազունքն անուանի և մարդկութեան անդրանիկք
Որ զԱդամայ տունն իրենց վարձեցին տուն երջանիկ ,
Այն մեծամեծ հըսկաներն՝ որ հըսկայից յաղթեցին ,
Լեռնանըման կըտրիճներն ի Զօրն-Հայոց թափեցին ,
Հեթանոսաց կուռքերուն յաղթող որդիքն այն Հայկայ՝
Ընկան տնոնք այլ ի քուն ներքեւ ժայռիցըն Հարքայ :
Հայկն որ ամեն Հայու սիրտ պիտի կանգնէ դարուց դար ,
Հայկն այլ ի քուն է աճեղ , և ո՜վ գիտէ զիւր դադար ·
Ո՞ր արդեօք սար կամ բըլուր ծածկեց զհըսկայն այն բարի՝
Որ փառք որդւոցըն տըւաւ ու ազատութիւն աշխարհի :
Ո՞ր լեռն արդեօք է քո բարձ՝ բարձրագըլուխ քաջդ Արամ,
Որ ի Մարաց մինչ Մաժակ վազեցիր տէր յաղթանդամ .

---

(1) Ճիտակցած , աւերակ ·
(2) Հողու հաւսար եղած , փլած , կործանած ·

Եւ դու Արայդ-Գեղեցիկ, յոր դաշտ արդեօք, յոր հովիտ
Կարմիր գանգրովքդ պըլլած ծածկես ըզխոց ճակատիդ.
Եւ որ զահեղն Աժդահակ շամփրած ի ծայր նիզակին
Ի մութ քարայրս բըշեցիր զվիշապազունս սեւագին,
Դու ոսկեծամ (1) և խարտեաշ Տիգրան, դու յոր կաս քարայր.
Եւ դու ծընունդ ծիրանի երկրի ու երկնի հրեղէն այր,
Վեհատեսիլ դու Վահագն, որ ընդ աստուածըս նըստար,
Ծածկեց ըզքեզ ապառաժ, թէ հալեցար քան ըզսառ:
Երկհազարեան տանուտէրք Հայոց հողուս Հայկազունք՝
Արդեօք ի խորըս նորին դեռ կեցէ՞ր էք իբր հիմունք,
Եւ ոնց որ ողջ ըլլալով զողջ բըռնաւորքըն զարկիք,
Այդպէս զմեռեալ բըռնաւորսն հողուն ներքեւ այլ դատիք,
Որ պըղծեցին զսուրբ երկիր մեր հարց Հայոց սեփական,
Կարծեցին ձեր քով նընջել, և ի դըժոխս արթընցան:
Դուք այլ պանդուխտ հարսազատք, Արշակունիք տընաչէն,

(1) Ոսկեգոյն մազերով:



Որ զՀայկազանց հին անունն հըռչակեցիք յազգըս ամեն,
Ի կամախայ կամարէն խըլուած յանգուղթ գերողաց
Եւ ի կըտրիճ տիրասէր մանկանց նորէն ազատած,
Գըլուխ զլխի խառն ի քուն Աւագ Մասեաց մօտ վըհին,
Արդեօք խորհուրդ ընելով դեռ կու յիշէք ըզվըրէժն հին:
Դու այլ ով մեծդ հըսկայից և թագւորաց, սուրբ Տըրդատ,
Որ զցանկալիս քո թողած՝ զՆըրէզ, Գառնի ու Արտաշատ,
Զահեղ գըլուխդ վերուցիր և յետ մահուդ ահաւոր
Մինչ ի հանգիստըն Հոգեաց վանաց առիր քուն մ'այլ նոր,
Զեփրատ թողած՝ զորով վաղ տըւիր երագ ի մի քայլ
Քարածորան Տիգրիսի լըսես խոխոջ այլ եւ այլ,
Արդեօք հերիք քեզ տեղդ այդ, թէ դարձեալ չարժ տաս քարանց
Եւ ի Սեպուհ կամ Մասիս վազես՝ ըզմահըն այլ սանձած:
Եւ դուք կարմիր Վարդանայ վարդանըման դուք ընկերք,
Որ յԱրտազու դաշտերէն մինչ ի Համշէնն էք քըներ,
Արդեօք ձեր սուրբ արեան զին՝ աշխարհիդ բաղդն յիշելով՝

Շարժէք դեռ զքաջ բազկընիդ հոգիներուդ կըրակով։
Բագրատունիք չինարարք, յերազգաւորս և Բագրան
Կու փընտըռէք զդաստակերտ ձեր ու զյետին քընարան.
Եւ յաշտարակըս քաղքիդ, յաղնիւն Անի աչք ձըգած
Գըլուխ շարժէք, և երկիրըս սասանի սարսափած.
Տաճար, դարպաս, վանք, խորան՝ ափուին յերկիր աւերակ
Շէնք և անշէնք գերեզման լինին Հայոց բովանդակ...
Խաւար վըրայ խաւարի հագած կանգնի սեւ գիշեր.
Նահապետիս սիրտն այլ սեւ. Աստուած, զմեզս հարց մի յիշեր։...

Արդ իմ լուսնակ, փութա յամպերէդ
Ե՛լ փարատէ զմութ Նահապետիս.
Սփռէ յերկիր դեղձան վարսերէդ,
Հետ քարերուս կապէ զսիւն սըրտիս։
Հանդարտ ու լուռ է շուրջըս բոլոր,
Երկիրս 'ի քուն երկինք կիսարթուն.
Լուսնակ, վառէ զկանթեղըդ պըլլոր
Ի գերեզմանս իմ հարց Հայկազուն,
Ճերմակ թեւօք զըրկով երերուն
Երկընցու զջահդ յամպերուդ մէջէն
Սարից գըլխէն, յետանց ծառերուն,
ՅԱրարատայ երկճիղ գագաթէն։
Սարն 'ի սարին դիզած տասըն տակ,



Ջիւնակոյտ սառն ի վըրայն հինգ բարդ,
Ու մյլ ի վըրայն քո լոյս ըսպիտակ,
Ու մյլ 'ի վըրայդ իմ արտասունք հրազարդ։
Արդեօք հալէն արդեօք տի մաշէն
Զթանձըր պատանք գերեզմաններուս.
Արդեօք ի խորշն հասնին բարեզէն՝
Լըւալ զանըլաց ոսկերք հայրերուս։...
Ա՛հ, ո՛հ... լըսէք ոգիք Հայկազանց
Նահապետիս լըսէք հառաչանք...
Լըսեմ լըսեմ ես ըղձայն հարանց,
Ահա շարժին բացուին գերեզմանք։
Բարեւ. հանգիստ ձեզ՝ հին Հայկազունք,
Որ մշակեցիք զագարակ Նոյայ,
Եւ թէ ելան ձեր դէմ դիւցազունք
Ընկան հընձոց պէս յարտիդ վերայ։
ՅԱզգից ծոցէն կանգնած մըրմռալով
Թագապըրսակ ահեղ ճակատներ,
Վարդանք Վահանք ըզվրէժդ առնըլով
Հարին զՍասան, հանդչեցէք զքուն ձեր։
Ա՛հ հայրապետք սուրբք, փառք աշխարհիս,
Որ ննջեցիք ի մատրանց ներքեւ,
Նայեցէք մէկ մ'այլ վերայ երկրիս,
Որ յաչըընուդ ծագէ նոր արեւ։
Եւ դուք կըտրիճ սիրուն զօրականք
Կրակաթափ թուրք, մահացան բազուկք,
Քաղցր հայրենեաց պարիսպք և պահանգք,
Ձեր քիրտն ու արիւն անմահ անմոռցուկք։
Դարձիք ամենքդ առէք հանգիստ քուն,
Նահապետ լայ զձեզ, յիշէն որդիք.
Ահա վըկայ լուսնակըս փայլուն,
Դարձիք մըտէք 'ի քուն հանդարտի՛կ։
Իսկ դուք կայտառ ու կարմիր տըղայք,

Գրաւք Գրիգորի , զինուորք Յիսուսի ,
Եկեղեցւոյս Հայոց զարդ վըկայք ,
Ո՛վ կըրակէ սիրտք՝ յաղթողք հիւսիսի ·
Մոլորահաւատ ազգեր սեւակրօն
Հըրով թըրով եկան յիմ աշխարհ ,
Կ'ասեն , վերցուի պատրագ ու պաշտօն ,
Լուսաւորչի լոյսն ըլլայ խաւար . . .
Ա՜յ անիծեալ օձք , սիրտք գազանի ,
Չորնան լեզուդ ու անգութ բազկընիդ ·
Թէ բըռնացայք հողուս հայրենի՝
Հոգիս չ'ինկնար ի չար ձեր ժանիդ ·
Հայոց հաւատս է Փրկչին հաւատ ։
Յառաքելոց բերած նախընծայ ,
Լուսաւորիչըն տընկեց հաստատ
Ու մեր արիւնքս ոռոգեն ըզնայ .
Պըրսիկք , 'ի զուր ատրուշանք վառին ,
Ի զուր Հազար այրէ զքաղքընիս .
Սուր Սըկիւթին և թուր Թաթարին
Ի զուր շողան . ատ է հոգիս ։
Էսպէս կանչեն կարմիր կայտառ Հայք ,
Դէմ սուրերու կանգնին համարձակ ,
Խաղան խնդան ընկնին նոր վըկայք ,
Կանգնին փառօք , թըռչին լուսաթագ ·
Կարմրածոցիկ հետ հատից նըռանց ,
Հետ հողմնահար խայծեալ խընծորին ,
Նըման սարիցն արեան աղբըրանց՝
Թափին նըշխարք կարմիր կըտորին ·
Հողն հայրենի ծըծէ զսուրբ արիւն ,
Ծոցըն բանայ , առնու զիւր որդեակք ,
Յանմարդաձայն յանծանօթ անկիւն
Կարմիր քընով նընջեն նահատակք ։
Սըրտի հատոր հա՛ գան սիրելիք ,



Հարցունք անեն ձորոց ու լերանց ,
Ո՞ւր մեր տըղայքն , ա՜հ , ու՞ր ծածկեցիք ·
Սարեր , ձորեր , տըւէք մեզ նըշանց . . .
Սարերըն լուռ , ձորերըն տըխուր ,
Հո՜ս հեւալով թեւերուն տայ դող ,
Կարկըջելով ընդ ժայռս անցնի ջուր ,
Տրտմեալ տերեւք կաթեն անուշ ցօղ ։
Ո՜վ մայր , ո՜վ հայր , ո՜վ եղբարք և քորք ,
Աչք տուք յերկին , անդ ձեր սիրելին ·
Եւ ամեն քայլ որ կոխէ զայդ հողք՝
Զածկէ զնըշխար Հայ նահատակին ։
Սըփռէ լուսնակ սըփռէ սուրբ լուսեր
Կարմիր կայտառ Հայոց մանկըտւոյն ·
Հողս այս տաճար է , դու այլ լապտեր ,
Նահապետն այլ , ի սուգ է սիրոյն ։ . . .
Եւ դուք ամեն Հայ սիրտք վըշտահար
Որ նախ քան զմահ մեռայք ցաւերով ,
Զոր հալածանք կամ սուրն անդադար
Եւ կամ դիպուածք բերին չար ժամով ,
Որ հանց երազ անցէք յաշխարհէս ·
Պահ մի սիրով լըցուած սուրբ ամանք ,
Յանկարծ ընկայք կոտրած կուժի պէս ,
Շուտով խլեցին ըզձեզ գերեզմանք .
Գըլուխք կանգունք զէտ բարձր սարի ,
Մազերդ ի մահ ճաճանչեց նըման ,
Բազկունք ամուր և կուրծքեր արի ,
Ծոցեր ծաղկած ցօղալից շուշան ,
Պայծառ աչկունք ջուխտակ արեգունք
Որ կաթէիք գութ , սէր ու խնդում .
Քանի շուտով անցան ձեր ճրագունք ,
Եւ դադրեցաւ սրտիդ վերվերում ։
Ներքեւ ճակտիս , ներքեւ այս քարիս

Ցամքած սրտեր տերեւի նըման ,
Ձեր սիրելեաց շունչն յորդոց յորդիս
Ահա հասեր՝ հընչէ յիմ բերան .
Ո՜վ հարք , եղբարք , որդիք Հայ հողուս՝
Անլացք անսուգք և անյիշատակք ,
Ձեր սիրելեացն եմ ես արտասուս ,
Հին հառաչանք , հայրենի կըրակ .
Սեւ աւերակք դուք , դուք Սեւ հողեր ,
Թըրուլ թափած տըհաս հունձք և տունկք ,
Ի գաղանաց ոտնակոխ ճըղեր ,
Ո՜հ , ծաղկեցէք դուք այլ յիմ արտասունք :
Կարմիր կոկոն գլուխներ , վեր կացէք ,
Լուսակամթ աչք , մէկիկ մի բացիք ,
Մեղրոտ շրթունք , մէկ մի ձէնեցէք ,
Ըսէք թէ՛ հաշտ եմք , ու ի քուն դարձիք .
Քամեցէք հարք ըղձակոծ քըրտինս ,
Զխարտեաշ մազերդ թօթվեցէք տըղայք ,
Տըւէք այդոց մարք գյետին ըստինս ,
Հալալ արէք , և բարեաւ երթայք :
Մուրատատուր մեր սուրբքն վըկայ ,
Հալալ արի ես ալ ձեր հողուն ,
Դարձիք ի քուն . լուսնակս այլ վըկայ
Որ անմոռաց էք ի Հայ սիրուն ...

Այլ դու լուսնակ ահա կու նուաղիս ,
Քաշես ճաճանչդ ի ծոցըդ ճերմակ
Զէտ արծըթի ափսէ կու թաւլիս
Մէջ ամպերուն թուխ ու կապուտակ .
Կաց , մէկ վայրկեան մ'ալ կաց իմ սիրոյս .
Մէկ քար մ'այլ կայ յԱնծանօթ հովտին ,
Գընա հոն կաթէ գվերջին քո լոյս ...
Այն գերեզմանն է Նահապետին :

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ — *Նուագք*

---

## 43. ՆՈՐ ՏԱՐԻ

Երնէկ թէ այս նոր տարին
Վերջ տար Հայի ցաւերուն ,
Զարը կորչէր (1) ու բարին
Բուն դընէր մեր սրտերուն :

Երնէկ թէ այս նոր տարին
Ազատ շնչէր Հայաստան
Եւ չուրջ Մասիս մեր սարին
Փայլէին արտ անդաստան :

Երնէկ թէ այս նոր տարին
. . . . . . . . . . . .
Եւ կխաբանդ մեր Կարին
. . . . . . . . . . . .

Երնէկ թէ այս նոր տարին
Հայ սըրտի մէջ ոյժ հոսէր ,
Ապաւինած իւր . . . . .
Հայը Քիւրդէն չը սարսէր :

Երնէկ թէ այս նոր տարին
Հայ ազգ 'ի մի գումարվէր
Ի գլուխ Կարնոյ մեծ ամրին
. . . . . . . . . . . .

Հայեր , երբէք չերկմտիք ,
Կը կատարուի այդ ամէն ,
Եթէ խպառ մենք հանենք
Փոքրոգութիւնը մեր սըրտէն :

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

---

(1) կորսուէր , հալածուէր ,

## 19. ՎԱՆԵՑԻ ԿՏՐԻՃ

*Հագիւ լըրացաւ քըսան մէկ տարիս ,*
*Աղուամազ բըսաւ երես ու ծնօտիս ,*
*Թշերէս կարմիր վարդեր կը կաթի ,*
*Ջիղերըս ամուր՝ ասես երկաթի ։*
*Տուէք ինձ սուրեր՝ սարեր կործանեմ ,*
*Ծառը արմատով գետինէն հանեմ ,*
*Սուր ակռաներովս երկաթ կը ծամեմ ,*
*Մէջքըս այդքան ոյժ՝ ասէք , ինչ անեմ։*
*Առաջըս դրէք մարդ հարիւր ու հազար ,*
*Ջարդեմ տըրորեմ ջերդ բողկ ու գազար .*
*Ինչ այլք չաբթու մէջ՝ այն ես օր կ'անեմ . . .*
*Մէջքըս այդքան ոյժ՝ ասէք , ինչ անեմ։*
*Իմ պէս բիւրերով լի է Հայաստան*
*— Նորա սուրը հողին ըլլիմ ես զուրբան —*
*Մարմինը ոյժեղ 'ւ առոյգ է Հային ,*
*Այլ , ափսոս . . . . է նորա հոգին ։*
*Թէ մի օր զարթի նորա վեհ հոգին ,*
*Նա պարզ կը ցուցնէ . . . ազգին —*
*Ով էր երկուսէն սորուկ և կամ տէր . . .*
*Ա՛խ , երբ պիտ՝ թնդաք , խեղճ Հայի սրտեր ։*

ՔԱՄԱՌ—ԳԱԹԻՊԱ *Փորձ* (1) *ԱՄՍԱԳԻՐ ՀԱՆԴԷՍ*

---

(1) Սոյն հանդէս կը հրատարակուի Տփխիսի մէջ Պ. Աբգար Տ. Յովհաննէսեանի խմբագրութեամբ. ամեն Հայի ընթերցման արժանի, ազգային գեղեցիկ տեսութեամբը. լեզուի խնդիրներովը, գրադատումներովը եւ օտարազգի զանազան գրոց թարգմանութեամբը սուղ ժամանակի մէջ Հայ-Գրականութեան մեծ ծառայութիւններ մատոյց. միանգամայն այս հանդէս մի նոր ապացոյց կընայ համարուիլ Ռուսահայոց մտաւորական զարգացման ։

## 20. ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՊԱՆԴՈՒԽՏԸ

*Հայ ազգը օր ըստ օրէ թողնում է իւր երկիրները և կեդրոնանում է քաղաքներում։ Աղքատութիւնը ստիպում է նորան թողուլ իւր տունը , իւր ընտանիքը , իւր ամուսինը , իւր զաւակները և գնալ Պօլիս կամ այլ քաղաք , աղքատութենից ազատվելու համար ։ Բայց այդ տեղերում եւս , նորան , հանդէպ է դուրս գալիս էապէս , նոյն աղքատութիւնը , դուցէ մի փոքր քաղաքային ամոք կերպարանքով։ Գիւղում , Գեղում ստանում էր նա , օրական հինգ ղուրուշ , իսկ քաղաքում ստանում է ութն կամ տասն . բայց ինչ օգուտ այն երեք կամ հինգ ղուրուշ յաւելուածից , մինչ չէ մնում նորա ձեռքում ։ Քաղաքի մէջ , համեմատութեամբ չինական կեանքին եթէ ոչ աւելի գէթ հարիւրին քառասուն առաւել է ծախքը ։ Եթէ մարդը հինգ ստանալով աղքատ էր գեղում , աղքատ կը լինի Պօլսի մէջ կամ այլ քաղաքներում , ութն կամ տասն ստանալով ։*

*Բաց ի սորանից , ընտանեկան կեանքից զըրկվիլը , դժոխային աշխատութիւնը՝ որով պիտի շահի նա այն մի քանի յաւելեալ ղուրուշները , անտուն , վարատական և անմաքուր կեանքը որ պիտի անցուցանէ նա զանազան իջեւաններում ։ Երեկոյեան պիտի գայ վաստակեալ , ուժաթափ , շատ անգամ և վիրաւորուած անդամներով , իսկ լուսաբացին , նոյն եգիպտական ծառայութիւնը որ սպառում է նորան ։ Չկայ այն ընտանեկան մխիթարութիւնը , ամուսնու և զաւակների մտերմական , գորովիկ և անմեղ հայեացքը , որ առանց ձայնի , առանց խօսելու , կարող են ամոքել ճակատագրի դառնութիւնը,*

և այս բոլորը անխորհուրդ, առանց հիմնական հաշուի և չկամելուց, արմատական կերպով դարման տանել իւր աղքատութեան։ Եւ այսպէս, իբրեւ գրաստ, իբրեւ մեքենայ ծառայելով արտասուելի օտարութեան մէջ, տասն–քսան տարի, կամ, մեռանում է այն տեղ, թողնելով իւր ընտանիքը ծայրացեալ թշուառութեան մէջ կամ վերադառնում է դէպ ի իւր երկիրը։ Վերադառնում է.... բայց ոչ այնպէս առոյգ և զուարթ ինչպէս դուրս էր եկել այն տեղից, այլ, հասակն առած, ուժաթափ և թօշնած։ Վերադառնում է իւր տունը, երբ կորուսել էր աշխատելու ընդունակութիւնը և յարմարութիւնը։ Ուրեմն, վերադառնում է նա միմիայն իւր ներկայութեամբ, իւր աղքատ և կարօտ ընտանեաց թիւը յաւելցնելու համար։

Եւ ահա նորա տասն և ութը կամ քսան տարեկան որդին, որ աճել և զօրացել էր իբրեւ մի ծաղիկ իւր սեպհական հողի վերայ, առնում է ձեռքը իւր հօր պանդխտական գաւազանը և գնում է.....

— Ո՞ւր բարով։

« Պօլիս, Տրապիզոն, եւայլն եւայլն։

— Ինչի՞ համար։

« Աշխատելու և ընտանեաց օգնելու։

— Աշխատելու և ընտանեաց օգնելու — կրկնում է խօսակիցը անհնարին տխրութեամբ։

Անցնում է սորա վերայով մի քանի տարի, յանկարծ, այս նորեկը լուր է առնում, որ իւր ծերունի հայրը վախճանել է, մայրը հիւանդ է։ Մի փոքր ժամանակից և մայրը մեռնում է։

Պանդխտակիցքը գալիս են նորան մխիթարելու։ Մի երկու բաժակ գինի.... մի քահանայ, մի



« հօգւոց » և պանդուխտի սիրտը պաղում է այն աշխարհից ուր ծնել էր նա.... ինչ բանի համար վերադառնայ։ Նա գտնալու չէ իւր տունը, իւր ծնողքը, նորան աչքին պիտի հանդիպին երկու գերեզման և մի ամայի բնակարան, եթէ և այն չէ անցել օտարի ձեռք։ Նա որոշում է մնալ պանդխտութեան մէջ, և այս որոշումով յօժարում է մինչեւ տակը խմել թշուառութեան բաժակը։ Այո, մնում է նա, բայց տունը մարեցաւ։ Մի գերդաստան ընկաւ հասարակաց խումբից։

Արդեօք որքան գերդաստանք ընկնում են այսպէս։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ *Երկրագործութիւն*

---

## 21. ՔԱՂԱՔՆԵՐԴԻ ՔԱՐԱՅՐԸ

Այս փոսը քանի կը յառաջանայինք կը նեղնար և լեռնամէջ շաւիղ մը կը դառնար, որ կէս մը բնութեան գործ էր, կէս մը մարդկային ճարտարութեան։ Տեղ տեղ կամարաձեւ էր և կ'երեւէր թէ ուրագն տաշեր էր ժայռեր, տեղ տեղ խոռոչաւոր էին պատերն և դար 'ի վեր, ու կարծես թէ ներքին ջրվէժներ բացեր էին այն փապարներն որ ոչ միայն խէժեր ու խեցիներ կը պարունակէին այլ և ժժմակներ (1)։ Խոնաւութիւնն ու թանձր օդը կը ճնշէին մեր սիրտն և ջահերուն բոցը կը նսեմացնէին։ Հինգ վայրկենի չափ քալելէն ետեւ՝ հասանք վայր մը որ տեսակ մը անջուր լճակ էր, որու ձեղունէն կոշտ, սուր ու տձեւ ապառաժներ կախուեր էին և կար-

(1) Ծովու ճճի։

ծես թէ մեր գլխուն վրայ պիտի ընկնէին ։ Սոյն լճակին բոլորտիքը խորշեր կային, որոց մէջ ռազմամթերք, պաշար, հրազէն և զանազան պատերազմական գործիքներ զետեղուած էին ։ Այս էր անշուշտ Բաղաբերդի համբարանոցն ու զինարանն, այս էր անշուշտ երբեմն հրաբխային քարայր մը, որ այժմ արուեստական վառօդարան դարձեր էր, և որ, ո՛ գիտէ, Հայաստանի փոթորկալի ժամանակներն ինչ անբաւ գանձեր պահեր էր, ինչ անգին կեանքեր պատսպարեր էր ։ Կարծէի տեսնել Նախարարներու խոշոր գանկեր, զինուորներու կմախքներ, Նահատակներու ոսկորտիքը ։ Անտարակոյս այս քարայրն իր եղերական պատմութիւնն ունէր, ինչպէս Հայաստանի մէն մի քաղաք ու բերդ, մէն մի շէն ու քար իրենն ունի ։ Վասն զի չկայ սար մը, չկայ ձոր մը, չկայ աւան մը, որ վայրենի հրոսակներ թափանցած և հոն անմեղ արիւններ թափած չ'ըլնին ։ Ինչպէս բացօդեայ վայրեր, աւերակներ, կիսաւեր տաճարներ ու շիրիմներ վրէժ կը կոչեն գգայուն հայու սրտին, նոյնպէս գետնափոր վայրեր, անդնդային բնակարաններ, հին դարերու տխուր արձագանքը կ'կրկնեն ։ Երբ Արարատայ հուրը մարեցաւ, երբ Հայաստան աշխարհի լեռներն ու սարերն, ժայռաշէն ամրոցներն ու երկնաբերձ վանքերն անբնակելի ու ամայի մնացին, օդէն, խորշակէն, սուրէն ու հուրէն, երբ սպառազէն Նախարար ու գոռոզ ազնուական՝ որ երբեմն իրենց անառիկ ու բարձր ամրոցներէն արհամարհոտ ակնարկ մը կը ձգէին վարի աշխարհի վերայ, չգտան հանգչելու վայր մը Հայաստանի բարձունքն, վար գետնին խորն իջան ու լեռներու կողերն ու անձաւները մտան անխտիր Հայ շինականին, ծերին, հարսին ու ման-



կըտուոյն հետ, և ժամանակ մ'եւս իրենց կեանքն ու ինչքը պահպանելու ջանացին, աշխարհի արեւէն զուրկ, Աւետարանի լուսով միայն վառ՝ և իրենց յոյսն երկնային պաշտպանութեան վրայ դրած ։ Անխընայ կոտորեցան եղկելիներն և Բաղաբերդի այն քարայրին մէջ կարծէի տեսնել անոնց արտասուալի ստուերներն, որ թերեւս կ'զարմանային թէ ինչպէս դարերէ ետք կ'արթննայինք և կ'երթայինք ողջունել իրենց դամբանները ․ ․ ․ ։

Մ․ ՄԱՄՈՒՐԵԱՆ *Սեւ լերան մարդը*

---

## 22. ՄՇՈՅ ԴԱՇՏԸ

Մշոյ դաշտի մէկ կողմը Սասնոյ քաջաբեր լեռներն են, Տօրոսի շղթան ։ Միւս կողմը Բղնունեաց ծովը ծիծաղախիտ կը ծածանի, և Ծովասար ճակատը՝ Մշոյ վերեւն է ։ Միւս կողմերը՝ Բիւրակնեան լերինք և անոնց գօտիները, անմահացուցիչ ջրերով և ծաղիկներով զարդարուած ։ Ասոնց բնակիչները ինչպէս կայտառ, ինչպէս զուարթադէմ մարդիկ են ։

Մէկ կողմը Եփրատէս խշալով (1) խոխոջալով Գըրգուռէն վար կը հոսէ․ իր խոր և սառնորակ ծոցին մէջ կը կայտռին անթիւ ձկունք և կը խաղան վտակաց մէջ․ բադն ու սագը կը ծփծփան իր ալեաց վրայ․ իր գետափունքները լի են խոշոր և մանրիկ թռչուններով ։ Արագիլ ամէն գեղի տուներուն երդիքը, և բարձր շէնքերու պարիսպներուն և ծառերուն գլուխը իր բոյնը դրած է, և հազարաւոր ճընճ-

(1) Խոխոջել, ջրի վազելը՝ ձայն հանելով ։

ղուկները անոնց բոյներուն բոլորը ապաւինած ։ Դաշտի խոտերուն հետ բուսած և ձորերու մէջ ծաղկած վարդենեաց թուփերուն մէջ սոխակներ կը ճըլուըլան. գարնան, ամրան և աշնան առաւօտները՝ այնպէս սքանչելի տեսարան և լսարան կը կազմեն այս թռչնոց երամը, որ կ'ըսես բնութեան տաճարին մէջ Արարչին փառաբանիչ կարգուած են ասոնք հրեշտակաց տեղ ։ Արեւելեան կողմէն Գրգուռ լեռը կոթողաձև տընկուած կ'երեւի, որոյ ստորոտը տարածուած է մէկ կողմը Մշոյ դաշտը, միւս կողմը Վանայ ծովը ։ Առաւօտեան արեգակը երբ նոր կը ծագի, իւր ճառագայթները զարնելով ծովուն ալեաց և դաշտի գոլորշեաց վրայ, կանանչ կարմիր պսակ մը մանեկաձև կը ձգէ այս Գրգուռայ գլորակ և լերկ գլխին ։ Կը զմայլի անոր նայողը ։ Գրգուռայ թիկանց 'ի վեր կը բարձրանայ Նէմրութ կամ Ներրովթ լեռը․ որոյ գլուխը նման է բոլորակ սեղանի մը․ մէջ տեղը հրաբուղխի մարմրուքը, և անոր չուրջ պսակաձև շարուած աղբիւրներ բարեհամ, և ծաղկունք անուշահոտ ։ Կարծես այս աղբիւրներ իբրև զովացուցիչ բաժակ դրուած են այս բնութեան սքանչելի սեղանին չուրջը, որոց ջրերը ժողվելով մէկտեղ աւազան մը կը կազմեն Ներրովթայ գլխու սկաւառակին մէջ, և անկից իջնալով, ինչպէս կ'աւանդեն տեղացիք, Մեղրագետ կը բղխէ իւր ոտքի տակէն ։ Այս Ներրովթ լեռը իւր ճակատէն կախուած ունի Բելայ դիակը, «'ի տեսիլ կանանց և որդւոց» և 'ի նշան յաղթանակի մեր Հայկին, առաջին Հայուն, առաջին յաղթողին ազատութեան թշնամւոյն ։ Այս տեղն է բուն ամենայն հաւանականութեան գերեզման Բելայ, որոյ վերայ երկար խօսելու ժամանակ չէ այժմ ։ Մշոյ դաշտի միւս կողմի լեռներու վրայ բարձրացած են



գմբէթայարկ վանքերը․ Սուրբ Առաքելոց վանք, Սուրբ Յովհաննու վանք և Սուրբ Կարապետին, որոյ ամպամած և արեւով ոսկեզօծուած կաթուղիկէից խաչերը ամեն կողմէն հովանի կը սփռեն դաշտի գեղերուն վրայ նայելով, և ամենուն սիրտերը իրենց կը քաշեն ։ ․ ․ ․

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ *Գրոց ու բրոց*

---

## 23. ՎԻՍՊԱՏ

*Վիսպատ ենք․*

*Վայրն է գեղեցիկ ու հանդարտիկ․ — Հոս ջուրը ծիծաղ մ'ունի, օդը ծիծաղ մ'ունի, երկինք ծիծաղ մ'ունի, որ անմեղ աղջկան ծիծաղին կը պատասխանեն ։ Անտառն իր գօս տերեւոց խօշիւնն (1) ունի, իր մամռապատ ծառերն ու ծառի կոճերը, իր քարանձաւը, իր սահանքը, իր բացավայրը և իր հովուաց հովիտը ։ Կը մխի անտառին մէջ, կը խորասուզի, և նա ի խորոց անհուն մթութեան կերկերաձայն (2) թռչնոց վայիւններովը և ահագնագոչ ծառերուն սօսափիւնովը կը պատասխանէ սրտիդ անհուն աղաղակներուն ։ Քիչ մ'անդին կը տեսնես որ ահագին ապառաժ մը երկնից դէմ կը ցցուի ու կարծես չանթը կ'արհամարհէ․ իր լոռւտ կողերուն վայրի կանաչին վրայէն կաթիլ կաթիլ ջուր մը կը մղի վճիտ, փայլփլուն, զովագին, և այն կաթիլը հեղեղ կ'ըլլայ, որ զմայլիս կը խորտակէ ու անհուն հովիտ մը կը փորէ իր ճամբուն վրայ, հո՛ս ջրվէժ, հո՛ն*

(1) Խշրտոց։ (2) Ձայնը մարած։

ջրի առուակ, հոս՝ կ'դըդչէ (1), հոն՝ կը կարկաչէ, հոն՝ ամպերուն հետ թխագոյն կ'որոտայ, հոս՝ դալարագեղ ծաղկասփիւռ խոտերուն եզերքը՝ մանուածապատ ման կուգայ, հոն՝ կը փրփրայ, հոս՝ կը փայլփլայ, և արեւուն նախածագ փայլիւններուն առջեւ կը կարմրի՝ իբրեւ կոյս մը իր սիրականին առաջին տեսութեանը։

Հոն է ներդաշնակութիւնը, կարգը այս անկարգութեան մէջ է, և գի մարդուն ձեռքը ոչ ժպիրհ այլ համեստօրէն խառնուած է բնութեան գործոցը, անոր կամացն ու քմացը հնազանդելով. և գի բնութիւնն է որ կը տիրապետէ։

Մշուշ չ'ունի երկինքը՝ որ այն մշուշը պատէ նաեւ զմիրտը. կապոյտ կը տեսնես ցերեկը, աստղունք կը տեսնես գիշերը. ամպերն ալ, երբ ամպեր պատեն, զովագին են և թափանցիկ արեւին լուսովը, լոյսը քօղարկելով այնչափ՝ որչափ բարակ շղարշ մը՝ ձգուած նազելի կուսին վառ ի վառ այտերուն վրայ և մաքրափայլ խանդավառ կուրծքին, զոր և բարակ հովիկ մը վեր կը վերցնէ երբեմն . . . . »

Գ. ՕՏԵԱՆ (2) *Գրական փորձեր.* ՁԵՐԱԶ

---

(1) Դղնչեմ, խոխոջել։

(2) Կը ցաւինք որ նշանաւոր գրագիտին երկասիրութիւններէն ուրիշ ոչինչ չկրցինք գտնել։ Իրաւամբ կըսէ Պ. Ձերազ թէ «Հայ-Գրականութեան այս անկեալ վիճակին մէջ, լաւ է որ մերթ ընդ մերթ գան ի տես այսպիսի ընտիր գրութիւններ, իբր մոլորած ճաճանչներ մի բարձրագոյն գրականութեան»։

## ՁՃ. ՀՐԴԵՀ

Կէս գիշերոյն մէջ երկինք մի անսովոր պայծառութեամբ կը փայլի արենագոյն. յուսահատութեան ձայներ կը լսուին. — հրդեհ կայ. — բոցք՝ դժոխային բազմագլուխ ճիւաղի մի իժախառն մազերուն նման՝ կոլորին վեր կը բարձրանան և կը լիզուն եթերային կամարն։ Մի հրեղէն գետ ողողեր է թաղն ողջոյն, կը վազէ մոլեգին իբր վիշապ դալարուն. իւր առջեւէն կ'ընթանան արհաւիրք. իւր ժանիք, իբրեւ թոյն, աղէտ կը ժայթքէ իւր շուրջն։ Անյաղթելի է տարրն անողոք, այր ու կին, մանուկ ու ծեր, ահաբեկ խուռնընթաց կը փախչին իւր առջեւէն նորա համայնածախ կատաղութեան յանձնելով իւրեանց յարկն ընտանի. 'ի մէն մի ակնթարթ տուն մի կը կործանի ահաւոր շառաչմամբ, երջանկութիւն մի կը թռչի, ընտանիք մի կը փլի։ Աղեխարշ գոչիւններ կը խառնին բոցերու մռնչիւնին հետ և մի քստմնելի համանուագ կը կազմեն. և այս գոչիւններուն մէջ ձայներ կան որ 'ի զուր «օգնութիւն» կ'աղաղակեն. — ա՜հ, թշուառներ են որ բոցերու հետ կը կռուին, և սակայն տարրն կոյր և անսիրտ կը լափէ զայնս և կ'անցնի։ Մի քանի ժամ յետոյ հրդեհն կը հանգչի որպէս մի աշխարհակալ որ կը դադրի յոգնած այն աւերներէն ու մահերէն որովք իւր քայլերն նշանակեց։ Աւերակաց դէզք և ծխաշունչ մոխրակոյտք միայն կը մնան անտի որ մի գիւղ էր զուարթ. թշուառներու խումբեր, սգափետուր բուերու նման, կը տեսնուին ասդ անդ. սառած քարացած են իւրեանց տանց մոխիրներուն առջեւ. կը հարցնեն իւրովի թէ էր հրոյն այդ ցասումն եղեռնագործ և թէ ինչու,

մինչ պահ մի յառաջ ընտանեկան յարկին տակ կը քնանային խաղաղ, անգէտք և երջանիկք, հիմայ իւրեանց գլխուն կը պակսէր մի տեղ հանգստեան.— ո՜հ, գէթ, երբ ընտանեաց հայրն կը նայի իւր բունազիրկ ձագերուն վրայ որ, տխո՜ւր, կը ճուան իւր չորսդին, ամբողջ գտնէր զնոսա. բայց, յաճախ, այդ մոխրակոյտք գերեզմաններ են նաև. . . :

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ *Թշուառութիւն եւ գութ*

---

## 25. ԱՐԱՔՍԻ ԱՓԱՆՑ ՎՐԱՅ

Զննելով այսպէս երբեմն փարթամ, հարուստ, բազմամարդ և բաղդագուրկ գիւղաքաղաքի (Ջուղայ) տեղը, ես կանգնեցի Արաքսի ափումը և նայեցի մի կողմից ժայռապատ ձորակի ընդհանուր վայրենի տեսքին, միւս կողմից սիգաճեմ գետի ալիքների վերայ՝ շրթունքներիցս ակամայ թռան հանճարաւոր հեղինակի աննման ոտանաւորի տողերը:

Մայր Արաքսի ափերով,
Քայլամոլոր գնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը որոնում եմ:

Կարո՞ղ է պատահիլ արդեօք, որ մի որ և է Հայ անհատ տեսնելով Արաքսը, իսկոյն չմտաբերէ այդ ազդու բանաստեղծութիւնը, եթէ կարդացել է դորան գոնէ մի անգամ:

Մի րոպէում շարուեցին յիշողութեանս մէջ պատմական ամբողջ շրջաններ, սկսած Ջուղայի փարթամ դրութիւնից, անցած նորա թշուառ աքսորանքին դէպ ի Սպահան ու վերջացնելով ներկայ քարակոյտ աւերակների տխուր կերպարանքով: Ես երեւակայեցի Ջուղայեցւոց միահամուռ ընդունելութեան հանդէսը Պարսից առաջին Շահ-Աբասի գալըստեանի, 1604 թուականին: Եւ ահա իշխանները, ծերերը և երիտասարդները զարդարուած ոսկեհուռ զէնքերով և սիրատեսիլ հանդերձներով, ընթանում են խրոխտ թագաւորի առաջ: Նորաբողբոջ՝ դեռահաս մանուկները՝ ոսկէ բաժակներով անուշահամ և ազնիւ գինի են մատուցանում: Վառած մոմերով, խնկով և կնդրուկով քահանայք և մարմնաւոր երգիչները առաջը գնալով յարմարաձայն նուագում են: Եւ ահա գետափից մինչև խօջայ Խաչիկի ապարանները, ճանապարհի վրայ սփռած է կարմիր գործուած, որի վերայ թագաւորը ընթանում է դէպ ի Խաչիկի պալատը: Խօջայ Խաչիկը ահա իւր որդւոց ձեռքով ոսկու կոյտը ոսկէ սկուտեղի վերայ պարգեւ է մատուցանում թագակիր հիւրին: Նորան հետեւում են Ջուղայու և միւս մեծամեծները: Շահ-Աբասը երեք օր հիւր մնաց Ջուղայեցւոց մօտ, որոնք պատուեցին նորան համադամ կերակուրներով և ծաղկահամ գինիով:

Թշուառ Ջուղայեցիք: Դուք պատուեցիք, թագաւորավայել կերպով ընդունեցիք, չը խնայեցիք ձեր սիրտը, կարողութիւնը ու համակրութիւնը ձեր բարձրաստիճան հիւրի համար, որ մտածում էր լոկ ձեր կորստեան վերայ: Ձեր բարձր հիւրը, ձեր հիւրասիրութեան փոխարէն, մի տարից յետոյ այրեց ու քանդեց ձեր հայրենիքը, տեղը և տունը: Գլխատեց շատերին ձեզանից, շատերին էլ ջրահեղձ անելով Արաքսի յորձանքում, մնացածներին գերեց դէպ ի Սպահան: Ձեր պատուած հիւրի լիրբ զօրականներն և գինուորներն անպատուեցին ձեր կոյս աղջկանց

և ձեր փափկասուն հարսերին ։ Ձեր մատաղահաս մանուկները զոհեցին նոքա իւրեանց սրին ։ « Ընդունում եմ Դանայեցւոց պարգևը, բայց վախենում եմ նորանից » ։ Սոյն այս Լատինական խօսքերի յարմար էր ձեզ կրկնել. « Ընդունում ենք մեր Թագակիր հիւրին, բայց վախենում ենք նորանից » ։

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ Ճանապարհորդական նկատողութիւնք(1)

---

## 23. ՃԵՄՔ Ի Գ***

Զով են այերք , երկինք են զով ,
Ե՛կ , մէկտեղ շրջինք ,
Դալար ափունք , և հեզ է ծով ,
Ճարակին խաշինք ։
Լսես մօտերն , լսես գլխոյ
Վճիտ առուակին .
Հրաւիրէ զմեզ որ յամայւոյ
Ժուռ գանք առանձինն ։
Դիտէ հեռին , ո՛ մտերմիկ ,
Տե՛ս , ինչպէս ծովը
Անծայրածիր , գգուէ մեղմիկ

(1) Պ. Քաջբերունի սոյն վերնագրով բաւական ատենէ ի վեր մաս առ մաս կը հրատարակէ Փորձ հանդիսին մէջ Հայաստան ըրած իւր ուղեւորութիւնը որ լի է պատմական, աշխարհագրական, հնագիտական եւ այլ բազում ճշգրիտ եւ խորազննին տեղեկութեամբք ։

Մենք կը խնդրենք որ մեծարգոյ Հեղինակը այս ուսումնական ուղեւորութեան պատմութիւնը աւարտելէն յետոյ առանձինն եւս հրատարակէր որ մի պատմական ճոխ յիշատակարան կ'աւելցընէ մեր աղքատ մատենադարաններուն մէջ ։



Լոյս հորիզոնը .
Նման թևոյ մեր հանճարին
Անզօր երկրաքարշ ,
Որ առաւիր զրկել ճգնին
Զանծանօթն աշխարհ ։
Ամպերուն մէջ տեսնե՛ս թռչիլ
Ցինն բարձրաթռիչ ,
Որոյ հազիւ կարենք լսել
Զնուաղ սըուիչ .
Ո՛րպէս նման է հէք մարդոյն ,
Որ ընդ մէգ կենաց
Դեգերելով, հուսկ երերուն
Հեծէ զիւր հառաչ ։
Կանգ առ սակաւ , ոտիցըդ տակ ,
Ծաղիկ մի կայ հոն ,
Գարուն մանուկ և գեղունակ
Նետեց զայն ի ձօն .
Մի՛ թէ ճմլես զայն տարաժամ ։
Թողե՛նք զայն սիրով .
Մեր կեանք , թէև ծով դառնահամ ,
Ունին ժմիտ , զորով ։

*
* *

Զով են այերք , երկինք են զով .
Մոռանա՛նք զաշխարհ .
Բարձրացո՛ւր աչքդ . դիտե՛նք ուշով
Երկինքն ամպածրար ։
Ո՛չ արեգ կայ , ո՛չ ալ լուսին
Նոցա մէջ այժմիկ .
Կարեմք անվախ զննել լոյն
Կապոյտ այդ երկինք ,

Աստ, գիտես ո բարձրացոյց
Զայդ վսեմ կամար.
Ո՞ր ձեռն անհուն մեծակառոյց
Գծեց զայդ կոպար (1),
Որմէ ի բաց չկայ ելնել
Ո՛չ արեգական,
Եւ ո՛չ լուսնին արհամարհել
Զիւր ծիր բացական (2):
Եւ այն գնդերըն ահագին
Ո՞ ցանեց, ո՞ ոք,
Իբրեւ սերմունս զորս մշակին
Սրսկէ ձեռն անհոգ:
Ո՛ տար ինձ, ահ, անհուն թեւեր
Որ զիս տանէին
Ընդ ոլորտըս երկնից, յեթեր,
Ի խնդիր էին:
Տեսնէի թէ ուր կ'յանգի
Տիեզերաց դիր,
Կամ լուսաւորքըն այդ երկնի
Երբէք չե՛ն սպառիր:
Բայց ո՞ւր երթամ, միայն խորհուրդ
Այդ անվերջութեան
Ճմլէ զմիտս իմ որ, անյագուրդ (3)
Վար անկնին կործան:

* * *

Զով են այերք, երկինք են զով.
Թողունք մեք զանհունն,
Որում հասնել իւր նայուածքով
Ներուած չէ մարդոյն:

(1) Սահման, (2) Հեռաւոր, (3) Անյագ.



Ի՞նչ փոյթ է մեզ որ ի նանիր
Վաստակինք յաւէրժ՝
Կորզել գաղտնիք մի մթածիր,
Որ ծայրն է անվերջ:
Թող որ մտքով մեք ընկղմինք
Ցորս զմեզ պատեն չուրջ,
Ծով, ծառ, ծաղիկ, բոյր, արեւ, սիւք,
Ե՛րկոյն, աշալուրջ:
Թող հեզ մրմունջ այդ ծփանաց
Զոր լսենք հազիւ
Որբէ զհոգի մեր վշտագգեաց
Ի նուագս ազնիւ:
Այդ մանր ալեաց ճաղփիւնին (1) մէջ
Ողբ մի գիտեմ ես,
Զոր ծովուն գիրկըն յել և էջ
Հեծէ մերոյն պէս:
Անհո՛ւն կարօտ, զոր մէն մի մարդ
Ի կուրծս իւր զգայ,
Զոր հողմ, ալիք, անտառ, հող, վարդ
Զգան անձկայրեայ
. . . . . . . . . . . . . . .
Կարի զուարճ են այս վայրեր:
Թող որ, լուռ և մունջ,
Դիտենք անոյշ բնութեան ըղձէր,
Զհամբոյր և զփունջ:
Կ'անցնին, կ'անցնին այս օրերն ալ,
Պարզ են արդ երկինք.
Վաղիւ, գիտեմ, մութ, սուգ, և լալ
Լինին մեր բաժինք:

Յ. ՍԷԹԵԱՆ — *Անտիպ գործեր*

(1) Ալեաց ձայն.

# 27. ՀԱՌԱՉԱՆՔ ՏԱՐԱԳՐԵԼՈՅ Ի ՍԻՊԻՐ

Ո՛վ հայրենիք իմ զեփիւռ ,
Անոյշ հրեշտակ , ողջո՛յն քեզ .
Ո՛հ , շնչէ մէյ մը շնչէ՝
Գերւոյն 'ի սիրտ աղէկէզ :

Այս բերդի մէջ ի՛նչ անձկաւ
Կոչէի զգարձ Մայիսի . . .
Եկաւ Մայիսն , այլ ի՛նչ շահ
Շղթայակապ պանդըխտի :

Ողջ ողջ թաղուած եմ այստեղ . . .
Ահեղ պատանքս են ձիւներ .
Եւ սիրելւոյ մը ձայնիկ
Աւա՜ղ զիս չ'արթնցներ :

Ո՛րչափ ցաւեր քաշեցի ,
Ո՛չափ ցաւեր դեռ մընան ,
Մինչև հասնի օրն այն ա՜հ
Որ շղթայներս ալ իյնան :

Ծագի՜ ծագի՜ թող օրն այն
Գոնէ համբոյրք մայրենի
Արցունքներով բըժըշկին
Ջանգուլթ հարուածս օտարի :

Չէ՜ . . . հեռացիր Յո՛յս՝ բանտին
Երկաթաձոյլ վանդակէն ,
Գիշերադէմ ուրուականք
Մահուան 'ի փոս զիս մըղեն . . . :

Մ'ըսէք մի՛ մօրս սիրայնոյ
Որ խաչին ոտքն է գրկած



Ու արտասուելով կը խնդրէ
Իւր որդեկին վերադարձ :

Մ'ըսէք քնքուշ աղջըկան
Որ ինձ մընայ սիրտ յերեր ,
Թէ «Սիպերիոյ անապատք
Քու սիրականդ են լափեր :»

Այլ ըսէք քաջ պատանեաց
Թէ իմ հոգին հարազատ՝
Նոցա սպասէ վրէժխնդիր
Մասեաց 'ի սարն անդ Ազատ :

Թ. ԹԵՐԶԵԱՆ *Մասնոկ*

# 28. ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պըտրում եմ:

Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պըղտոր ջրով եզերքին ,
Դարիւ դարիւ (1) խըփելով
Փախչում էին լալագին :

Արա՛քս՝ ինչո՞ւ ձըկանց հետ
Պար չես բռնում մանկական
Դու դեռ ծովը չի հասած
Սըգաւոր ես ինձ նման :

(1) Ինչուան վեր լեցուած :

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քո սեւ հըպարտ աչերից ,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից ։

Մի պըղտորիլ յատակըդ
Հանդարտ հոսէ խայտալով
Մանկութիւնը քու կարճ է ,
Շուտ կը հասնիս դէպ ի ծով։

Վարդի թըփեր թող բըսնին
Քու հիւրընկալ ափի մօտ ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչեւ առաւօտ ։

Մըշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջըրին
Ճկուն (1) ոստըն ու տերեւ
Թող թաց անեն տապ օրին ։

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ ,
Գառն ու ուլը քու վըճիտ
Ջուրը մտնեն միշտ արձակ ։

Մէջքը ուռցուց Արաքսը
Փրփուր հանեց իր տակից
Ամպի նըման գոռալով
Էսպէս խօսեց յատակից ։

— « Խիզա՛խ (2) , անմիտ Պատանի
Նիրհըս ինչո՞ւ դարւոր

(1) Դիւրաթեք ։ (2) Համարձակ , յանդուգն ։



Վրդովում ես , նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր ։

« Սիրելիի մահից յետ
Ե՞րբ ես տեսել , որ այրին ,
Ոտքից գըլուխ պըճնուի
Իր զարդերով թանկագին ։

« Որի՞ համար զարդարուիմ
Որի՞ աչքը հրապուրեմ ,
Շատերն՝ ինձ են ատելի ,
Շատերին՝ ես օտար եմ ։

« Կար ժամանակ , որ ես էլ
Շըքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պըչրանքով ,
Փախչում էի ափերէս ։

« Յատակս պարզ ու վըճիտ ,
Կոհակները՝ ոլորուն ,
Լուսաբերը (1) մինչեւ այգ
Ջըրին միջին էր լողում ։

« Ի՞նչըս մընաց էն օրից ,
Ո՞ր ջըրամօտ գեղերըս ,
Ո՞րը իմ չէն քաղաքից ,
Ո՞ր բերկրալի տեղերըս ։

« Տուրքը ջըրի ամեն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ
Մայրախընամ ինձ սընունդ
Պարգեւում է լիառատ ։

(1) Արուսեակ , առտուան աստղ ։

« Բայց ես այն սուրբ ջրերով
Սուրբ Ակոբի աղբիւրին
Պիտի ցողեմ արտորայքն
Իմ ատելի օտարին :

« Կամ՝ կենսատու իմ ջրով
Ափերիս մօտ կըկըղած
Իւր նամազը կատարէ
. . . . կամ Պարսիկը . . . . :

« Մինչ իմ որդիք — ծով վիշտէ —
Ծարաւ, նօթի, անտէրունչ
Օտար աշխարհ՝ յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ . . . :

« Հեռու հեռու քըշեցին
Բընիկ ազգը իմ Հայկեան,
Նոցա տեղը ինձ տուին
Ազգ անկըրօն, մոլեկան :

« Դոցա համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը,
Եւ կամ, դոցա հրապուրեմ
Ծըպուռտ, պըղծած աչերը :

« Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մընան պանդուխտ՝
Ինձ միշտ սըգաւոր կը տեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ » — . . . :

Էլ չի խօսեց Արաքսը,
Ցորձանք տուեց ահագին



Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին :

Ռ. Տ—Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ — *Քնար Հայկական*

---

## 29. ՀԻՒԾԵԱԼ ԱՂՋԻԿՆ

Նըւաղ կապոյտ էր իւր աչուին,
Նըման երկնից՝ յերեկորին .
Դէմքըն նիհար և ըսպիտակ
Շըրթանց նուրբ լարըն կարմըրորակ
Եւ տրտմութիւն մը անսահման
Կը տարածուէր նոցա վըրան :
Քովէն անխօս մէկ պատանի
Հայէր 'ի նա ձեռն 'ի ծնօտի . . .
Երբեմն իրենց աչք վշտահար
Պատահէին անձկաւ յիրար :
Խարտիշագեղ վարսքն ոլորուն
Հողմածփէին դիմաց 'ի ձիւն,
Ինչպէս 'ի վէմ գերեզմանի
Նոճիներու թոյլ հովանի :
Ջորս դին ժպտով անմեղունակ
Գարնանակից նորա կուսանք՝
Իրենց յուսոց ու երազներուն,
Ծաղկանց, ծովին պչրանքներուն
Եւ վաղուան վրայ խօսակցէին
Շուրթն 'ի շուրթն, — Այլ նա լոկ լըռին
Նայէր նոցա և պատանւոյն,
Եւ վառէին այտք բոցագոյն .
Բայց մէկէն մութ մեռելատիպ

Պատանքի նման ծածկէր զբեր ․
Նորակոկոն զերդ վարդենի
Որ յանդրանիկ շող արփենի
Ժպտի կարմիր՝ թէ զիւր բաժակ
Ծածուկ կրծեն որդունք անյագ ,
Հազիւ հովմիկ մը որ շնչէ
Բոլոր թերթերն աստ անդ ցրուէ ․
Այսպէս զայգիկն այն կրծէր որդ
Անյագ անդուլ և անողոք ․ ․ ․ ։
Իրեն աչքին դէմ օր օրի
Կ'ընդլայնէր վիհ գերեզմանի ,
Ոսկի մթութիւնն արտաշնչեալ
Ըզտիեզերս ծածկէր 'ի մայլ ․
Եւ իբրև մէգ Ապրիլի մէջ
Բլրոց 'ի ծայրս անդ յելևէջ՝
Հողմոյն 'ի շունչ նուրբ և անդայտ
Ցրուի յերկին անդ կապուտակ ,
Այսպէս նորա ալ երազներ
Փարատէին յանհուն ըստուեր ։
Թէ մանկութիւն՝ թէ բաղդ կամ կեանք
Գթալով 'ի դեղն իւր և հասակ
Քիչ մը չորս զին սփռէին լոյս՝
Իսկոյն ի հեշտ այն բերկրութիւնս
Կ'արձանանար Մահուն ըստուեր ,
Զոր տերևոց զրասազք (1) 'ի հեր ․
Եւ կը դողար կոյսն աչազեղ ․ ․ ․ ։
Այլ ո՜վ ցաւոցն իւր ունի դեղ ․ ․ ․ ։
Դատապարտուած է նա մահուան ․ ․ ․
Անդարձ անջինջ մէկ հրաման
Ճակտին վըրայ դրոշմած է ․ — զո՜ւր

(1) Ծաղկէ զարդ , փունջ ։



Ջանայ քերել զայն մատամբքն իւր ։
Վըտիտ թեւին վրայ՝ կոթընէր
Նա կ'երազէր ու կ'երազէր ․ ․ ․
Ի՛ ընդոստուցեալ յանկարծ սրտիւ
Պատանւոյն ձեռք սղմէր , ու աչիւ
Հայէր ի հող ․ ․ ․ անզուսպ արցունք
Թանայր նորա զարտեւանունք ․ ․ ․ ։
Մարմնիկն անդուլ նիհարացած
Կարծես բարակ քող մ'էր դարձած ,
Որուն մէջ՝ լո՜յս բոլորովին՝
Կը տեսնուէր մաքուր հոգին ,
Թեւերն 'ի թռիչ փորձել՝ հանդոյն
Նորափետուր ձագին 'ի բոյն ․ ․ ․ ։

Եւ մեռա՜ւ նա ․ ընդ իւր ուխտին
Զինք անտառաց մէջ թաղեցին
Խիտ թըփերու տակ ։ — Իր վըրայ
Զուգեց ո՛ր քար մը ծանրանայ ․ ․ ․
Այլ մէկ քանի ըելակք՝ վարդեր՝
Զինծաղիկ՝ խաղ հողմոցն երեր ,
Եւ ըսպիտակ փունջք յասմըկան
Հոտող բուրվառք օդածածան ․
Անուշահոտ գրկերնուն մէջ
Կ'օրօրէին զհոգեակն այն չէջ ․ ․ ․ ։
Երբ զինք մոռցան ամէնքն , ամէ՜նք ,
( Զի այս են ո՜հ կենաց օրէնք ․
Մեռեալք մըղեն զմեռեալս 'ի հող
Եւ զյիշատակըս՝ նոր զովող ․ ․ ․ )
Երբոր ամէնքը զինքը մոռցան ,
Գնացի յայցելս յիւր գերեզման ,
Եւ տերեւներն անջատելով ․ ․ ․ ։
Նայեցայ յայն հող ի գորով ․ ․ ․

Ցընորատանջ մոքիս առջև
Թռչըտէին թոյլ ու թեթև
Նորա յոյսերն ոչնչացեալ,
Եւ մանկութիւնն ու ցաւք մըռայլ,
Եւ կենաց տենչն, երբ նա անձկոտ
Ի գըլորելն անդնդոց մօտ՝
Մութ խորերէն զարհուրելով...։
Այլ մ՚օգնական խնդրէր ցաւով...։
Աչքս արտասուօք էին լցուած,
Եւ կ՚ըսէի սըրտէս. «Աստուա՛ծ՝
Ինչո՞ւ կու տաս մեզ այսչափ ցաւ,
Ինչո՞ւ մրրիկս արձակես ընաւ
Ծաղկին վըրայ, և քո կայծակ
Տերևոց մէջ զարնէ զտատրակ...»։
Եւ ամպամած էր շուրջ երկին
Շըշնչէր հողմ ծառաստանին։
Այն կուսական հողին վըրայ
Վայրի վարդ մը ծըլած տեսայ
Որ կը ժպտէր, թերևս բաժին
Էր նա մարմնոյ ննջող կուսին, —
Մինչդեռ հոգեակըն նետահար
Թևապարէր յերկնից կամար։
Թռչնիկ մ՚անցաւ ծառոց մէջէն
Երգելով. շուտ մ՚անհետ աչքէն...։
Եւ հեռացայ ես մըտախոհ,
Կ՚ըսէի. — «Ո՞վ գիտէ, ՚ի հող
Զէ՞ աւելի նա երջանիկ՝
Քան թէ կենաց յանվերջ մրրիկ...»։

Թ. ԹԷՐԶԵԱՆ *Բազմավէպ*

# 30. ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երաժշտութի՜ւն. աստուածայի՜ն արուեստ. երկնատուր շնորհ առ մարդն. նուագն. ա՜հ. ի՜նչ գեղեցիկ է. ներդաշնակութիւնն՝ ի՜նչ խորհուրդ. սիրտն խորին բաբախումներ ունի մէն մի ձայնի համար որ կը հնչէ մեղմ կամ ուժգին, տխուր կամ զուարթագին, և ի՜նչ է այդ անծանօթ հմայութիւնն՝ որով մի լոկ ձայն կը բաւէ ցունցտալ (1) հոգւոյն, և, տարտամ ու անորոշ, զարթուցանել սակայն ՚ի նմա հոյլք խորհրդոց և զգացմանց. երգել կամ լսել երգն մի անոյշ ձայնի կամ մի գործւոյ՝ որոյ վերայ կը խաղան մատունք ճարտարք. ի՜նչ հեշտութիւն հոգեկան, ըզգալ հոգւոյդ օրրիլն դաշնակութեան կոհակացն յելեւէջ, երազել ՚ի լուր մի քաղցրանուագ ձայնի որ կը թուի քեզ յերկնից անտի գալ, անծանօթ իտէական գաւառներու և լուսաժպիտ երկիրներու պարզիլն տեսնել մոգեալ երևակայութեանդ առջև, և մոռնալ թէ մի մահացու ես՝ նիւթէն շղթայեալ մի ոգի, և ճախրել ազատաթև միջոցին մէջ, բարձրանալ զանհունն ընդգրկել, խանդաղատիլ, յուսալ, սփոփիլ, արտասուել, և յետոյ երբ դուրս կ՚ելնես այն դիւթեալ սըրահէն զոր իտէականացոյց Երաժշտութիւն՝ ետ դառնալ ճամբէդ որպէս զի երթաս ողորմութիւն տաս մի աղքատի, որ մութին մէջ նստել է ճամբուն եզրն, ատեղաց ճառագայթում մի կողողէ հոգիդ և բուրմունք վարդից կ՚օծեն սիրտդ, ահա որ ինչ կ՚ընէ երաժշտութիւն. չար մարդիկ երգ չունին. այո, ո՜վ Շիլլեր, զի ինչպէս կարէ չար լինել այն որ երգն կը

(1) Շարժիլ։

սիրէ, երգն, տարտամ անհունին պէս, առնչութիւն ունի անհունին հետ, և յանհունն բարձրանալ յԱստուած թելել է, և Աստուծոյ գաղափարը անհաշտելի է չարին հետ. երգել՝ գթալ է, և չարք սիրտ չունին: Երաժշտութիւն, մանաւանդ մեծ երաժշտութիւնն որպէս գրեց Հայէնտէլ իւր Մեսիան, Բեռլիոզ իւր Ստապաթ Մաթէրն, Հայտն իւր Արարչութիւնն, Մոցարդ իւր Տոնժուանն, Պէթհովէն իւր Սօնաթներն, Վէպէր իւր Ֆրայշիւցն, Ռոսինի իւր Կիյեօմ Թէլը, Պէլլինի իւր Նորմայն, Վէրտի իւր Թրովաթորն, Մէնտըլսոն իւր Ամառային գիշերուան երազն, Կունօ իւր Ֆաուստն, այդ երաժշտութիւն, կըսեմ, մի աշխարհ է աննիւթ՝ իտէական՝ անձառ գեղեցկութեամբ լի, որոյ անդիմադրելի է հրապոյր, և ամեն ոգի՝ զոր կը յափշտակէ իւր ձգողութեան սահմանին մէջ, կը սրբի և կը մերկանայ իւր կեղեւներէն:

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ *Գեղեցիկն եւ գեղարուեստը Ժ.Ա.Մ.*[1]

---

## 3Գ. Ի ՎԱՂԱՄԵՌԻԿ ՕՐԻՈՐԴՆ

Հրեշտակներու լուսածիծաղ ճակատէն
Դեռ նոր քաղուած վարդ մ՚էր թերթիւք լուսեղէն,
Նոր կ՚ժպտէր դեռ ո՜հ ... ինչու կ՚թոռմի
Ի չիրմի ... :

Ա՜հ դեռ շատ պաղ է գերեզմանն իւր ծոցին
Թնքուշ ցնորօք իւր միտքն ու սիրտ կ՚օրօրին ...

Իր կարմրաթել շրթունքն հայցեն համբոյրներ
Սիրոյն ա՛լ Մէր ... :

Թող, թող զեփիւռք իւր մազերուն հետ խաղան,
Փունջ փունջ ծաղկունք պսակեն ճակատ կուսական,
Իրեն համար բոլոր տիեզերքն են բերկրանք,
Լոյս են կեանք :

Ո՜հ քի՞չ մ՚ալ դէթ՝ ով նախանձոտ Սերովբէք,
Ձեր երկրաբնակ քրոջ հասակին խնայեցէք ...
Բայց դուք կ՚իջնաք զքօնելով լոյս յամպեր ...
Ո՜հ Ամպեր ... :

Եւ զայն հոգեակ՝ որ մօրն հայի դեռ անձկով
Ի վեր տանիք երկնային երգս երգելով ...
Եւ մինչէ բերանն անգոյն ա՛յլ դեռ տաք.
« Բարեւու մայրք » ... :

Թէ երկրաւոր աղջիկ մ՚էր նա՝ ո՜հ ինչու
Ձգեց այսչափ շուտ զիւր մարմին մահացու,
Թէ երկնային ոգեակ մ՚էր՝ ինչու ընաւ
Հոս եկաւ ... :

Ինչպէս մատաղ ծաղկանց բուրումն անուշակ.
Ինչպէս օդոց մէջ թռչնիկի մը նուագ,
Ինչպէս զեփիւռ 'ի թաւ ու մութ անտառի
Կը մարի :

Իբր արեւուն վերջին ճաճանչ, պաղպաջուն.
Որ խաղալով փշրի փրփուրս ծովուն,
Վարդի մը նման որ կ՚ծաղկի առօրեայ՝
Անցաւ նա ... :

Հագիւ բոյնէն ելած տատրակ նորաթեւ,
Ժպտեցաւ մէյ մ՚ու սլացաւ յօդ թեթեւ,

---

(1) Այս ճառը խօսած է մեծարգոյ Պ. Պէրպէրեան Օրթագիւղի Ընթերցասիրաց ընկերութեան Լսարանին մէջ.

Ոսկէ քընար որ մէջ մ'հնչեց, ու 'ի հող սեաւ
Փշրեցաւ:

Հրեշտակ յերկիր մոլորած որ քիչ մը վայրկեան
Սփռեց իւր լոյսն ու իւր ծիծաղն աղուական
Բայց շուտ յիշեց զերկինս . . . համբոյր մը տըւաւ
Ու քնացաւ:

Մոռցիր ով Քնար, իրեն ճակատն ըսպիտակ
Ուր թուխ մազերն կը ծփային իբրև պսակ.
Մոռցիր նայուածքն ուր իւր հոգին կարեւէր
Կը փայլէր . . . :

Հիմայ 'ուանձին այդ քարին տակ մութ և պաղ
Ննջէ անձայն հասակացեղ կոյսն՝ աւա՜ղ . . .
Իրեն վըրայ միայն նոճիք հողմակոծ
Հանեն կոծ . . . :

Ահա՛ աչքէն կ'խաւարի մեր աշխարհ
Բարեա՜ւ գնացէք յոյք մանկութեան գեղապար
Ես կ'մեռնիմ . . . մի լար մի մայր սիրական
Յիմ դամբան:

Ձիս հրեշտակներ լուսաճաճանչ թևոց մէջ
Նուագելով տանին 'ի գունդս երկնատենչ,
Ցանէ ճակտիս վարդ՝ մանիշակ ու անթառամ,
Հա՛րսն երթամ . . . :

Ձիս մի մոռնար՝ մայր իմ և քոյր ծաղկադեղ
Երեք հոգիքս են փունջ մ'անքակ լուսազեղ . . .
Իմ հոգիս Ձեզ առաջնորդէ յո՛ր վերջին
Ի յերկին . . . :

Ո՛հ թէ Աստուած ներէր ինծի մէկ վայրկեան
Իջնալ յերկիր իբրև երազ սիրական



Որ փարատել գայի զորտիդ տրտմութիւն
Քաղցր 'ի քուն . . .

Յա՛նկարծ թռչնիկ մը դառնայի լուսաթեւ
Որ երգելով իջնայի քովդ թեթև
Եւ ըսէի, « Մայր իջաւ սիրտըս քեզ մօտ
Առ կարօտ . . . »:

Թէ որ անժամ չիրմիս չորս դին թռչնիկներ
Գան առաւօտուն երգել անոյշ նուագներ,
Մ'ըսեր ով մայր թէ կ'նուագեն բերկրաձայն
Ձիս կուլան . . . :

Դադրէ հողմիկ . . . ծառոց մէջ մի մրմնջեր . . .
Դադրեցէք դուք ալ սիրանուագ թռչնիկներ . . .
Մի խոխոջէք վըճիտ ալեակք վըտակի,
Կոյսն հանգչի . . . :

Արծաթեայ սայլ լուսնին կապոյտ 'ի կամար
Մեղմ նըշոյլներ տեղայ չիրմին 'ի պաղ քար . . .
Հոն նստելով մայրն իւր աղջիկն ողբէ
Ու արտասուէ:

Թ. ԹԵՐԶԵԱՆ Մամուլ

---

## 32. ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ուր, ինձ ասա,
Թռչում ես այսպէս արագ:

Անդ հեռու ալեւոր
Հայր ունիմ սըգաւոր,

Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր ։

Երբ տեսնես դու նորա ,
Ինձնից շատ բարև արա ,
Ասա , թող նըստի լայ
Իւր անբաղդ որդուն վըրայ ։

Դու պատմէ , թէ ինչպէս ,
Աստ անտէր ու խեղճ եմ ես ,
Միշտ լալով , ողբալով
Կեանքս մաշուել , եղել կէս ։

Ա՜խ , թըռիր , ծիծեռնակ ,
Ծընած տեղըս Աշտարակ ,
Անդ չինիր քո բունը
Հայրենի կըտուրի [1] տակ ։

Ինձ համար ցերեկը
Մութ է շըրջում արեգը ,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս ։

Ասիր , որ չի բացուած
Թառամեցայ միացած ,
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զըկած ։

Դէհ , սիրուն ծիծեռնակ ,
Հեռացիր , թռիր արագ ,

(1) կըտուր , տանիք ։



Դէպ 'ի Հայոց երկիրը ·
Ծնած տեղս Աշտարակ [1] ։

Պ. ԴՈԴՈԽԵԱՆՑ *Քնար Հայկական*

---

## 33. Ի ՄԱՀ
## ՎԱՂԱՄԵՌԻԿ ՕՐԻՈՐԴ ՊԷԱՏՐԻՍԻ [2]

Վա՜հ , Պէատրիս , սև հողոյն մէջ քեզ ալ դըրին
Քեզ ալ կլնեց անյագ անդունդ գերեզմանին ·
Քո կոյս ճակտուն մահ իւր պըսակն ածեց տժգոյն
Եւ չիրմական մըթին օդեաց հառս գացիր դուն ։

Որբ մընացեր էիր մօրմէդ , ա՜հ , խեղճ աղջիկ ,
Սև հագեր էր փորդ հասակըդ և քո սրտիկ ·
Ձուայիր թափուր վանդակիդ շուրջ , ձագո՛ւկ անմայր
Մերկ անապատ աշխարհ դարձեր էր քեզ համար ։

Աչքըդ ետին էր մընացեր մօրկանդ անոյշ ,
Սուգի , մութի մէջ փաթթուեր քո արշալոյս ·

---

(1) Սոյն երգի վերջի երկու տունը հեղինակը փոխել է այսպէս.

Շուտով սառ հողի տակ
Կը պառկիմ այստեղ մէննակ ,
Թողնելով հօրս սրտում
Միշտ ցաւալի յիշատակ ։
Դե՜հ , սիրուն ծիծեռնակ ,
Հեռացի՛ր , գնա արագ ,
Դէպ 'Հայոց աշխարհը ,
Ծնած տեղս Աշտարակ ·

(2) Ազգապեան վարժարանի նախկին աշակերտուհեաց մին որ նշանաւոր եղած է երաժշտութեան մանաւանդ դաշնակի մէջ ունեցած ամենաբարձր կարողութեամբը ·

Ծաղիկ անցող, մորըդ հողոյն վրայ թոռմեցար,
Եւ դագաղին վերև զերդ մոմ մի հալեցար։

Բայց ո՛ր այն մէկ չքնաղ ձիրքերդ լամբ անըմման,
Աղուորութի՛ւնդ, քնքոյշ հասա՛կդ վաղաթառամ,
Ազատամիտ հոգի՛դ հեզիկ, մատնե՛րդ ճարտար
Զոր ներշընչէր երկնազդեցիկ քո սուրբ հանճար։

Տասնհինգ գարնանց վարդք պճնէին ճակատըն լոյս
Հասա՛կ ոսկի, ուր այնքան քաղցր էակ մ'է կոյս
Որ հրեշտակաց խուկ կը գործէ զաշխարհ անոյշ,
Երբոր երկնից աստեղց, անմե՛ղ, ժպտի մեղոյշ։

Թիթեռնիկ մ'էր. աշխարհի մէջ զիւր թեւք շղարշեայ
Անբիծ ծաղկանց լոկ հանգուցեր էր 'ի վերայ.
Թռչնիկ մի էր, թռչիլ, երգել միայն գիտէր,
Քերթուած զոր էն բոյրով լուսով էր շարադրեր։

Ո՛հ, էն երբ զայն ստեղծեր էր, երկնից դաշտաց
Շուշաններէն նորա հասակն էր յօրինած,
Ցաստեղց՝ զիւր բիբս, հոգւոյն մէջ երդ մ'եթերային
Դրած էր, և նուրբ մատքն էին լարք զուարթնոց
տաւղին։

Դաշնա՛կ, գործի՛ աստուածային, հոգի՛ անհուն,
Դաշնակութեան ծո՛վ անսահման և թրթռուն,
Լեզո՛ւ կըրից, եթերատենչ հա՛մբր ըղձից,
Հո՛ւր զոր անշուշտ մի Պրոմեթեւս բերաւ յերկնից։

Դաշնա՛կ, ա՛յս էր Պէադրիսի հոգւոյն գործի.
Դիւթիչ մատներն երբ, ձայներու աստուածուհի,
Մըրըրկէին անդ մերթ, և մերթ մեղմ ճօճէին,
Ի՛նչ խանդավառ նուագներ անտի սըլանային։

Հազար հոգիք իւր մատներէն մնային 'ի կախ,
Մատին 'ի ծայր մեր կըրից հետ նա առնոյր խաղ,



Լուռ ու անշունչ, կայր հըմայեալ սըրահն ողջոյն,
Անձայն արտասուք իւր ծափքն էին գեղեցկագոյն։

Եւ Պէթոֆէն, Մոցարտ, Հայտըն, Վէպէր, Շոբէն
Այս նոր հոգւոյն նուագացն ի լուր յիւրեանց շիրմէն
Կը զարթնուին, և, հիացեալ, փարանէին
Թէ այն վսեմ դաշնակքն ինքեա՛նք հիւսեր էին։

Դեռ չեմք մոռցած զայն երեկոյթս ոյց դիւթական
Գիշերներու տայիր հրապոյր, Ճարտա՛ր կուսան.
Երկնից կեանքէն կորզուած ոսկի ժամեր տայիր
Մեզ, և զմայլմանց մէջ մոռնայինք զայս մութ երկիր։

Շրթնէ ի շուրթ սաւառնեցաւ անունդ գողտրիկ,
Քեզ բնաւք Տանդէ, քեզ սիրեցին ամեն հոգիք.
Անմեղութեանդ պսակին Փառք զիւրն հիւսեց զափնին,
Աղքատ աղջկան նախանձեցա՛ւ իշխանուհին։

Ի՛նչ դափնիներ, ո՛հ, ապագայն քեզ կը պահէր,
Փառացդ արծուին յո՛ր բարձրութիւն պիտի թեւէր.
Թէ այդ այդպէս ճաճանչաւէտ, քանի՛ շըքեղ
Պիտի լինէր քո միջօրէն, զի՛ լուսագեղ։

Վերջալուսոյդ շողն է եղեր այգուն քո հուր,
Նախազգացմամբ ժպտիս եղեր ա՛յնքան տըխուր.
Ա՛յնքան շընորհ, ա՛յնքան ձիրքեր, ա՛հ, երկնատուր
Դիւրաթառամ որպէս վարդին ցնդեցա՛ն բոյր։

Եւ արդ շիրմին մէջ կը պառկի հասակդ աղուոր,
Ցրտին ողեաց ձեռներ խաղան վարսիցդ յոլոր,
Որդե՛ր կրծեն այն քո մոգիչ մատունքդ ոսկի
Զոր համբուրե՛լ փափաքէին շուրթք այնքանի։

«Ահա եկայ, կ'ըսես մօրկանդ, քեզ գրկելու,
Քովըդ մնալէ այլ եւս ոչինչ զիս կ'արգելու».

Եւ կմախ բազկօք գիրկս ածէ քեզ մայրիկդ սիրուն ,
Ժպտի դառըն , և փոս աչերն արտօսր հեղուն :

Արտօսր և մեք հեղումք քո ցուրտ շիրմին վերայ ,
Քեզ երկինքէն լան աստեղաց աչք շափիւղեայ ,
Քեզ լան սոխակք , քեզ լայ գորուն , 'ւ անմըխիթար
Մնային հրեշտակք , թէ նոցա գիրկն հոգիդ չերթայ :

Հայո՛ց կոյսեր , երբոր ճերմակ տեսնէք շուշան ,
Կամ վարսագեղ ուռի մ' ի կախ ջինջ յաւազան ,
Երբ ի տերեւս ճլուլայ զեփիւռ , յափունս արծաթ
Մնչէ ալեակ , կամ ի դաշնակ յածի գիրգ թաթ :

Երբ յերազի մի կոյս ոգի յայց ձեզ ելնէ ,
Կամ թէ անտես մուսայ ձեզ յունկն երգեր հծծէ ,
Կամ ի լանջ ձեր յորժամ թօշնին վարդեր ոժգոյն ,
Ո՜հ , յիշեցէք ըղՊէտագրիս մահուանն ի քուն :

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ *Առաջին տերևք*

---

## 34. ԱՌ ՄՈՒՍԱՅ

Անմահ հրեշտակ որ մանկական
Որօրոցիս քով հսկելով
Վարդէ պսակ հիւսել գլխոյս
Մօրս տայիր համբոյրներով ,
Քեզ՝ երկնաւոր սիրոյն թարգման՝
Քեզ իմ ընկեր միայնութեան
Առ քեզ՝ Մուսայդ իմ սլանան
Բոլոր իմ տենչքն և իմ գորով :
Ի՜նչ փոյթ ոսկին ինձ մեծատան
Ի՜նչ փոյթ շռինդըն խնջոյից ,
Զաստեղաց բոյլս՝ անսպառ գանձ՝



Զծաղկունս բոլոր տուիր դու ինձ :
Եւ մինչ աշխարհս ինձ գըլանայ
Փուշոյ անկիւն մ'իսկ , ո՜վ Մուսայ ,
Ձեռքդ ապարէզ ինձ կը բանայ
Զոսկիաձոյլ դըրունս երկնից :
Ձերդ ծիածան անդնդոց վերայ
Գահաւանդից բազմեալ յեղեր՝
Ոտիցդ 'ի ստոր վըհից մէջէն
Կը մռնչեն սեւ անտառներ .
Գլխուդ վերեւ հովանաւոր
Հողմակոծին մայրք դարեւոր ,
Հեղեղին ջուրք բարձանց 'ի ստոր .
Զայնքդ այդ՝ մուսայ՝ քո են երգեր :
Բնութիւն համայն՝ այդ մեծ քընար
Ոյր աստղազարդ գըլուխն յերկին՝
Եւ որք յանդունդս անէութեան
Ցաւիտենից երգէ վեհին ,
Երբոր սլանան իբրև նըւագ
Քո արտասուք կամ հառաչանք ,
Սիրով կու տայ քեզ արձագանգ՝
Ո՜վ դու Մուսայդ իմ Երկնային :
Եւ երբ տրտում ժայռից 'ի գլուխ
Բազմեալ դիտեմ զծով ամպարոյր ,
Եւ զառագաստն՝ ըսպիտակ թեւ՝
Որ տարագէմ գնայ յափունս իւր ,
Երբոր հոգւոյս վիշտք անհամար
Լուծուին յարտօսր անմըխիթար ,
Երբոր զիս որք կարծեմ 'ի սպառ ,
Հրեշտա՛կ ժպտիս դու լուսափիւռ :
Մինչդեռ կանուխ առաւօտուն
Նուաղ աչքով կոյսըն զարթնու ,
Մազերն արձակ՝ ձեռն 'ի ծնօտի

Անցնին մօքէն երազք աղու ,
  Երբ Արշալոյսն յեզերց երկնի
  Ծաղկանց վըրայ կը խոնարհի
  Եւ զարտասուս սրբէ վարդի՝
  Մէկ համբոյրով մը սիրարկու :
Կամ երբ արփւոյն թափուին հոսանք
  Ի խռան լերանց՝ հսկայ ալիք ,
  Ուր յանձանօթ թերեւս հիւղի
  Ո՛հ անըսփոփ կաթին լալիք ,
  Թշուառութիւն՝ ահեղ գիշեր՝
  Երբ մեր վըրայ սփռէ թեւեր ,
  Ո՞վ կը մեղմէ , և մեր փշերն
  Ո՞վ կը տանի մինչև երկինք :
Մանուկ , ըսաւ ինձ բնութիւն ,
  Նշդեհ ինկած յանդուլթ երկրի ,
  Ոմանց դահոյս և ոսկի պսակ
  Ոմանց խրճիթս և ցաւ տուի .
  Վարդին՝ բուրմունս , կուսից՝ ժպիտ
  Արշալուսոյն՝ թագ մարգարիտ ,
  Եւ դալլայլիկս առուին վըճիտ .
  Քընար մ'ահա կու տամ քեզի :
Եւ այս հովտէս կ'երթամ միայնակ
  Կոխեալ ընդ փուշ և ընդ քարինս
  Ընդ ցաւալի քըքիջ մարդկան
  Կը ծիծաղի լոկ իմ հոգիս .
  Եւ երբ խնդրեմ թէ ինչո՞ւ ես
  Ձեմ չատտանար այս աշխարհէս ,
  Դու մատնանիշ կը ցուցընես՝
  Ո՛վ իմ հոգւոյս ընկեր՝ զերկինս :
Երդ 'ի բերան անցնիմ ուրեմն
  Ընդ այս կենաց ահեղ կամուրջ ,
  Որ որրոցէն չիրմին տանի՝



  Ձընայելով եզերքէն յունջ՝
  Եւ նետահար թռչնոյ նըման
  Որ թեւաբաց ջուրց 'ի հոսան
  Նըւագելով կ'երթայ մահուան ,
  Ես ալ անցնիմ սիրամըմունջ :
Երգէ հոգեակ դու , չես տեսներ
  Ինչպէս կ'երգէ վըտակն յընթաց ,
  Թէ ընդ ծմակըս ծաղկածին
  Թէ 'նդ ապալեր (1) վախըս (2) քարանց .
  Կեանքս այս ժըպիտ մ'է և արցունք .
  Անուրջ ահեղ վըհի ափունք .
  Երգովք հաշտին ցաւերն ու սուգ ,
  Երգն արձագանգ մ'է հրեշտակաց :
Թէ և աշխարհ քու նըւագացդ
  Ըլլայ 'նտարբեր ու անխելահաս ,
  Մենիկ երգէ ծաղկի նման
  Որ կ'փթթի անդր յանապատս .
  Հագիւ զօմանս իր թերթերէն
  Հողմունք 'ի չէնս անդըր վարեն . —
  Եւ դոյզն ինչ ամք քեզ ինչ փոյթ են
  Քեզ որ ունիս զյաւիտեանս :
Ի կապուտակ անհունութեան
  Նաւարկելով զարուց յալիս՝
  Աստղըն գընայ 'ի սափորոյն
  Հոսելով ուղխըս լուսալիս .
  Ի՞նչ փոյթ աստեղ թէ իր նըշոյլ
  Մերթ պատահի յաշխարհաց բոյլ
  Մեռեալ գնդից մերթ տայ համբոյր՝
  Մերթ յոշնչին կորնչի վիհս . . . :
Եւ այս ամբոխն՝ ո՛վ իմ Մուսայ՝

---

(1) Լերկ . (2) Գահավէժ :

Եւ այս լալօնք և այս քրքիջ՝
Ալիք մըն է որ կը դիմէ
Գերեզմանաց ՚ի կափարիչ ·
Ի բուրաստան մ՚ուր համասպրամ
Քրքում, յասմիկ, վարդ խուռներամ
Մեկտեղ փթթին, ու ահա անժամ
Շնչէ մահու խորշակն այրիչ ։
Ո՛հ, թէ այսպէս երգն ով Մուսայ՝
Քաղցրիկ բարբառ մ՚է զըւարթնոց,
Եւ նըւագներն ծաղկունք սրտիս,
Պէտք է սփռեմ քարից հողմոց ·
Մի այլ փայլակն ՚ի բախն մնար
Ճակատելոց վաշտուց ՚ի պար . . .
Մի . . . պատմուճանդ այդ լուսավառ
Գուցէ արեամբ պղծի որբոց ։
Մի ուր գինւոյն ուխք հրահոսան
Խաբեպատիր սփռեն ծաղկունս,
Մի ուր Հըզօրք նենգ խորհրդովք
Գիշերախումբ նօթձեն (1) տոռունս (2)
Մի ուր ոսկւոյ գետք դժոխարձակ
Սողոսկելով սրտերու տակ .
Ապիրատին տան յաղթանակ՝
Մի հուպ երթար ով իմ զուարթունս ։
Այլ միամօր ըստինքներէն
Ժպտելով քուն մնող մանկան
Սփռէ անուրջս ոսկեղինիկ,
Ցոյց հրեշտակաց ըղպատմուճան ·
Ո՛հ այնչափ կարճ է մանկութիւն,
Այնչափ դիւրանց երջանկութիւն . . .

(1) կազմել, նիւթել ։
(2) Տոռն, չուան . ճոպ՝ լիր դաւ, նենգութիւն ։



Բոլոր լոյսեր տեսնայ . . . ու դուն
Փրցուր այտէն վարդ մը միայն ։
Իբրև ամպոյ սիւն առաջնորդ՝
Դու մարդկութեան յառաջընթաց
Լոյսեր սփռէ յըստուերս երկրի,
Սրտապնդէ զյոյս տըկարաց
Եւ երգէ զօրն ազատութեան
Ցորում շըղթայք պիտի լինան
Եւ գըրկըւին ազինք համայն՝
Եղբարք օձտեալք ՚ի թշնամեաց ։
Ցըցուր զերկինըս պատանւոյն
Հայրենավրէժ անկեալ ՚ի մարտ ·
Քու կայծակներդ իջնեն միայն
Բռնաւորին յըմբոստ ճակատ ·
Եւ սիրելեաց որ բաժնուին,
Եւ մօր՝ որդւոյն փարեալ շիրմին՝
Ու ամէն հոգեաց որ տառապին
Շնորհէ սփոփանըս խանդակաթ ։
Եւ երբ մահու բացուին դըրունք
Մուտ ով Մուսայդ իմ լուսապսակ,
Ցցուր վեհին իբր անգին փունջ
Սրբած ցօղոց քոց ըղկայլակ ·
Եւ ըսէ « հզօր դու՝ յայս երկիր
Ուր միայնակ զիս ձգեցիր,
Դու լոկ քընար մ՚ինձ տըւիր,
Ես թշուառաց տուի սփոփանք . . . » ։

Թ. ԹԵՐԶԵԱՆ *Բազմավէպ*

## 35. ԻՄ ԵՐԳԸ

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից ,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից .
Թառամում եմ ես այս օտար երկրումը .
Մենակ բռած ծաղկի նըման դաշտումը :
Կամաց կամաց տարիները անցնում են ,
Մեզ նորոգած գարուն , ամառ դարձնում են .
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր ,
Ինձ երեկը կըրկնըվում է մինչև այսօր .
Ասպարիզիս նեղ է ճամբան ու փըշոտ ,
Խեղճութիւնըս համարում եմ ինձ ամօթ ,
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի ,
« Դա , ասում են , իր կեանքումը դարդ չունի » :
Ես դարդ ունիմ , դարդըս մեծ է ու պէս պէս ,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես :
Երբ ես մըտայ անհիւրընկալ այս աշխարհ ,
Քանի րոպէ բաղդը ժըպտաց ինձ պայծառ .
« Հա , ասացի , դարձել է իմ անիւը ,
Լըրացել է իմ վատ բաղդի չար թիւը » :
Յանկարծ՝ փըչեց անտուժելի հիւսիսին ,
Թառամեցուց վարդ , մանուշակ մայիսին .
Այսպէս չորցուց իմ նազելի հասակը ,
Իմ անողորմ , անագորոյն վիճակը :
Ա՜խ , մօտեցիր օրհասական օր մահուան ,
Բեր քու հետը սեւ հող ու նեղ գերեզման ,
Թող սառ լինի իմ նոր տանը յատակը ,
Տանը քարէ վըրաս ծածկած վերմակը :
Բայց մի՛՝ երբ որ կանցնի ամիս ու տարի ,
Կը մամռոտի գերեզմանը այն քարի .
Հետքը անգամ չի մնալու իմ խաչին ,
Իմ անունը , իմ յիշատակ — կը կորչին .
Բայց կ'ուզէի թողնել այստեղ մի արձան ,
Որ դարէ դար մընար ամուր անկործան . . .
Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ ,
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ .
Միթէ այնքան անգութ կ'լինի Լետա գետ ,
Որ անունըս անգամ կ'անէ նա անհետ :

Ռ. Տ—Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ — *Քնար Հայկական*

---

## 36. ԻՄ ԿԵԱՆՔԸ

Օր պիտի գայ՝ որ այս կենաց
Բեռն ուսերէս թօթափելով
Պիտի ննջեմ հետ սիրելեաց
Որոց հալիմ ես կարօտով :
Ա՜հ , գերեզմանս այն տեղ ըլլար
Ուր Վոսփորի դարեւանդներ
Ծաղկապըսակ և միշտ դալար
Թանան յալիս գիրենց պատկեր :
Եւ այն ծաւի ծաւի ալեակք
Գային փշրել շիրմիս վըրայ
Ու հոն նոճեաց մէջէն կաթէր
Ձերմակ մահկին լոյս արծաթեայ :
Եւ թէ սպիտակ պատանքներով
Նստէր հոգիս յեզր անդ շիրմին
Լըսէր հեռուանց դանդաղ թիով
Ծովաշըջիկ ղերգ ձկնորսին :
Աւա՜ղ աչքերս յուսախնդիր
Ջուր ծանօթներս պիտի հայցեն ,
Մահուան հողմովըն ցան և ցիր

Ո՛վ գիտէ յո՛ր ափունս ննջեն ։
Նոր մարդկութիւն մը՝ նորայոյս՝
Նոր նոր արցունք կամ ժըպիտներ .
Անկարեկիրք իմ ցաւերուս
Շիրմիս նայուածք մ'իսկ չեն նետեր ։
Այլ անփոփոխ ըզքե՛զ միայն
Պիտի գտնեմ՝ ո՛վ մեծ բնութիւն ,
Եւ յայն անդունդ մոռացութեան
Պիտի ժպտիս ինձ միայն դուն ։

Թ. ԹԵՐԶԵԱՆ — *Անտիպ գործեր*

---

## 37. ԻՄ ՄԱՀԸ

Եթէ տըժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ . . .
Շոգիանան ցաւքս ու հոգիս ,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ ։

Եթէ սընարըս՝ իմ տիպար
Մոմ մը վըտիտ ու մահադէմ
Ո՛հ , նըշուլէ ցուրտ ճառագայթք ,
Գիտցէք , որ դեռ կենդանի եմ ։

Եթէ ճակտովս արտօսրաղօծ
Զ'իս պատանի մէջ ցուրտ ղերթ վէմ
Փաթթեն , դընեն սեւ դագաղը ,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ ։

Եթէ հընչէ տըխուր կոչնակ՝
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ ,
Դագաղս առնէ իր յամըր քայլ ,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ ։



Եթէ մարդիկն այն մահերգակ՝
Որք սեւ ունին և խոժոռ դէմ
Համասըփռեն խունկ ու աղօթք ,
Գիտցէք որ դեռ կենդանի եմ ։

Եթ՝ յարդարեն իմ հողակոյտ
Եւ հեծեծմամբ ու սըգաշէն
Իմ սիրելիքը բաժնըւին ,
Գիտցէք որ մի՛շտ կենդանի եմ ։

Իսկ անհըշան եթէ մընայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ ,
Եւ յիշատակն ալ թառամի ,
Ա՛հ , այն ատեն ես կը մեռնիմ . . . ։

Պ. ԴՈՒՐԵԱՆ — *Տաղք*

---

## 38. ՎՇՏԱՀԱՐ ԱՄՈՒՍԻՆՆ ԱՌ ՎԱՂԱՄԵՌԻԿ ՆԱԶԵԼԻ

Եկո՛ւր . այս պայծառ լուսնին տակ
Ի՛նչ անուշ է երազել .
Մի՛ տրտմիր . դեռ շատ մատաղ ես .
Մեռնիլ չէ այդ , այլ ննջել ։
Եկո՛ւր . նստինք ծովափին մօտ .
Ձեռքդ թող ձեռացս մէջ .
Բէմպէ՝ ըսէ անուրջներդ ինձ՝
Ամփոփէ վարսքդ յել և էջ ։
Ըսէ՛ Բէմպէ՛ ծովեզեր քով ,
Կը տենչա՞ս ապարանքներ ,
Որու սեանց օդաթռիչ շարքը ,
Կրկնեն կապոյտ ալիքներ ։

Կը բաղձա՛մ՝ անմեղ աղջիկ դու,
Նորաթեւ իմ ծոցս եկած՝
Լուսարձակ սրահներու մէջ,
Ականջել տրտում նուագաց։
Կամ ի՛ նիւս հրաշունչ նաւու մը,
Ալեհերձ արշաւելով
Այգեւէտ տեսնել կըղզեակէս՝
Ցանծանօթ ուրեք 'ի ծով։
Կամ կուզե՞ս առջի օրուան պէս
Դիմադէմ հետըս նստած,
Ես ըսեմ թէ կը պաշտեմ քեզ՝
Եւ դու ժպտիս ամօթխած։
Կամ ննջես՝ ճերմակ ճակտիտ վրայ
Ոլորուն վարսքդ ցանուած,
Ու ձեռն 'ի ծնօտ բովդ հսկեմ ես,
Հեշտ ցնորօք յափշտակուած։
Այլ վա՜հ, այդ կիսատ ժըպիտը
Որ այտիդ վրայ կը պլպլայ,
Երկնաթռիչ հոգւոյդ մէկ հետքը
Մէկ ցոլմունքն ինձ կերեւայ։
Այլ դու դեռ այնչափ մատաղ ես,
Այնչափ դալար եւ սիրուն,
Որ չէ մահու՝ այլ քնոյ մէջ
Ընկղմեալ թուիս համբուն։
Եւ աղէխարշ կըսպասեմ ես
Ոտնաձայնդ սանդուխն 'ի վեր,
Եւ արծաթիկ քնքուշ ծիծաղդ որ
Հրեշտակաց արձագանգն էր։
Կը դիմեմ անձկաւ սենեակըդ՝
Սրտաբեկ դէտակն ընդ դուռն
Ո՜հ Աստուած իմ . . . հոս էր բոյնըդ
Բայց դու ո՞ւր ես, ո՞ւր՝ թռչուն։



Գլխիկոր օրօրոցին վրայ
Դեռ մանկիկդ չը պագիր
Որ հետն երկինք տանելու զքեզ
Կարծես իջաւ լոկ յերկիր։
Եւ խպա՛ռ մինակ թողեր զիս.
Գիրկս անշունչ մարմինըդ կայ,
Եւ երկնից դալուկ կապոյտը
Այտերուդ վրայ կը ցոլայ։
Սէրդ այն ծիածան կամուրջն էր,
Որ երկրէս յանհո՛ւն սլացած
Անրջոց աշխարհներուն մէջ
Կառաջնորդէր իմ մըտաց։
Այլ փշրեցաւ, ու ստուերաց մէջ
Կը դանդաչեմ՝ թշուա՛ռ կոյր,
Արիւնոտեցաւ քայլերս ալ
Ընդ ժայռ եւ փուշ թաքթաքուր (1).
Կոթնելով ապառաժի մը
Յոգնած՝ ու անյոյս կը խորհիմ՝
Թէ ինչո՞ւ երբ դու գնացեր ես՝
Քաղցր հոգի՝ ես դեռ կապրիմ։
Ի՞նչ, կենաց յանդնդախոր վիհ
Հազիւ բոյնդ ոլորեցիր՝
Լո՛յս ճակատ հրեշտակ՝ մըրիկ մը
Քայքայեց զայն ցան եւ ցիր։
Ի՞նչ. Հիւրի՜ երբ վարդերով լի
Պատմուճան քո օդային.
Թռչտէիր զուարթ՝ կայծակ մը
Իջաւ կապոյտ քո ճակտին։
Ի՞նչ. Բէմպէ կարօտցած սիրտըս
Երբ կոչէ զքեզ, մըթասքօղ

(1) Պահուըտած.

Երբ ըղձեղ խնդրեն աչքերըս
 Դարձընեմ պէտք է 'ի հող ։
Եւ ամայի սրահներուն մէջ
 Որ քեզմէ զուրկ մըթընցան
 Երբ յեղյեղեմ քաղցր անունըդ ,
 Շիրմէն տի գայ պատասխան ։
Դեռ երէկ գալկահար դէմքըդ
 Բազկացըս մէջ հանգուցած՝
 Մայր կուսան՝ կը ժպտէիր ինձ՝
 Հոգիդ յուսով առլցուած ։
Եւ կ'ըսէիր ինձ . « Գարուն նոր
 Երբ վարդեր ցանէ չորս դին ,
 Դու զաւակս ու ես՝ մէկ բոյն մը
 Առանձնանանք միասին ։
Նստինք հետդ ու հեշտ ցնորից մէջ
 Մեր հոգին թող ընկղմի ,
 Ու երկնախօս թոթովանօքը
 Թող մանկիկս ինծի ժպտի . . . ։
Թէ գոնէ անշունչ մարմինըդ
 Գրկերուս մէջ թողուին ,
 Խաբէի թերեւս ինքզինքըս
 Թէ դու իմս ես տակաւին ։
Բայց զքեզ՝ ով անպատում ցաւ՝
 Կը տանին ինձմէ Բէմպէս .
 Ա՜հ կըզգամ թէ սեւ հողին տակ
 Մենիկ մինիկ կը ննջես . . . ։
Եւ շիրմէդ անօսր ամպի պէս
 Դուրս կը խուժեն յիշատակք ,
 Իրենց վարդաներկ այտերն
 Ըսքօղած 'ի մութ դիմակ ։
Եւ գլխուս վերեւ պտոյտքին շուրջ
 Իբրեւ ծիծռունք տարմատարմ ,



 Ու զմայլած կարծեմ հոգւոյդ հետ
 Դեռ ապրիլ մի քանի ժամ ։
Թէ անջինջ է այս վըճիռը
 Թէ անդարձ գնացեր ինէ ,
 Թէ հոգիդ հրեշտակներու հետ
 Ու մարմինկդ 'ի սեւ հողն է ։
Թէ ողջամբ երթ . . . որ աստղիկն ալ
 Քնքուշ տեսքդ արդ կը փայլէ ,
 Տրտմակոծ նոճիներուն տակ
 Քունդ անուշ ըլլայ՝ Բէմպէ ։
Թէ շիրմին պաղ ըստուերաց մէջ
 Զըր չիջանիր հոգւոյն ջահ ,
 Թէ նորէն կը հիւսուին տեղ մը
 Կապք սիրոյ զոր փշրեաց մահ ։
Ո՜հ Բէմպէ՝ դու իմս ես հոն ալ ,
 Քուկդ եմ ես՝ սրտիս հատոր .
 Այս աշխարհս անգութ երազ մ'էր ։
 Թող ծագի սեւ լուսաւոր ։
Իսկ թէ անյատակ վըհի մը
 Քարէ մուտքն է գերեզման ,
 Քու անունդ յեղյեղելով միշտ
 Պիտի մտնեմ ընդ դուռն այն ։
Առկայծեալ մըտքիս հուսկ շողը՝
 Այդ վըհից մէջ կայլակած՝
 Լուսաւորէ վերջին հեղ մ'ալ
 Ինձ քո պատկերդ անմոռաց ։

Թ. ԹԵՐԶԵԱՆ

## 39. Ի ԴԱՌՆԱՂԷՏ ՄԱՀ
## ՎՍԵՄԱՇՈՒՔ ՅԱԿՈԲ ՊԷՅԻ ՊԱԼԵԱՆ

Ո՛վ որ սրտիս նստեալ անմռունչ յաւերակս
Ձեռն 'ի ծնօտի՝ խորհիս , Մուսա՛յդ բոցաթեւ ,
Զարթի՛ր , վերօ աչուիդ յերկինս , տես ո՜հ զո՜վ
Ցափշտակած տանին հրեշտակք անդր յարեւ . . . :
Եւ չե՛ս լըսեր : Ահա շանթից թեւերով
Ցափանց Սէնայ մինչ 'ի Վոսփոր բօթ հնչեաց . . .
Եւ սրտակէզ աղօթքներու 'ի մրմունջ
Թնդացին ցայգն 'ի բուն գմբէթք տաճարաց :
Զարթի՛ր , կախէ քընարդ 'ի յուս , երթ՝ մատի՛ր
Աղերսաւոր՝ Աստուածուհիդ նոճեօք նսեմ
Պըսակազարդ՝ յԱնմահին գահ : — Եթէ զուր
Ցրուին աղօթք քո՝ փշրէ՛ քնարդ այլ 'ի վէմ. . . :
Ոհ տա՛յր ոք տա՛յր ինձ ըզքանդիւն Որփեւսի
Տարտարոսաց Շահապետին ողոքիչ՝
Ի՛ իջեալ 'ի վիհս ընէի զբաղդ զինաթափ
Զմայլելի հեղլով նըւագս յանկուցիչ .
Պիտի 'սէի . « Ցաւէրժ հրամանք՝ զթութիւն . . .
Փշրէ՛ յամպրոցս ըզհրաշէկ թեւս կայծակին
Կամ՝ թէ անդարձ է քո վըճիռ՝ գոնէ այնք
Հո՛ս արտասուացըս մէջ սլանան ու մարին :
« Տես . այն մատաղ սիրտն ըզգայուն՝ զերդ տատ-
րակ
Որ իր բոյնին մէջ նետահար՝ կը թուչի
Կերթայ կիյնայ յեմակ (1) ուրեք անծանօթ ,
Օտար աստեղց պաղ լուսոյն տակ կը հիւծի :

(1) Եմակ , ձոր .



« Յեցած մի ոտքն 'ի սեամ մահու՝ վայրապար
Հուսկ նըւաղ ձայնն հայցէ ծանօթ արձագանգ .
Նա գլխիկոր 'ի ստուերս շիրմին՝ ուրուատիպ
Տեսնէ խռնիլ ըզյիշատակս խուռներամ :
« Շնո՛րհ . իրմով մխիթարուած Հայրենիք
Եւ խումբք մտերմաց՝ ընդ յոյս և ահ դողդողան .
Եւ գեղարուեստք լան , թեւաքօղ . և հանճար՝
Քոյինաբուխ նըշոյլ՝ մարի , գերեզման . . . » :
Այլ մի՛ Մուսայ , դադրեցուր երգդ անխոհեմ .
Ինչո՞ւ խնդրես առաքինւոյն կեանս երկայն .
Եւ ինչ ունէր նա սպասելու այս երկրէս .
Շիրիմն է մեծ մարդկան միակ պատուանդան :
Քանզի մահուան վիմակառոյց 'ի տաճար
Տիրէ լռութիւնն այն մեծ զոր չեն վրդովեր
Վիշապաձեւ նախանձուն սոյլք , և փշրին
Անարձագանգ կենաց ալիք փրփրահեր :
Եւ ո՛վ գիտէ . յանչափ նըշոյլըս վըճիտ
Զոր ծաւալէր նա իւր չորս դին՝ ինչպիսի՛
Փորուած կային անդունդք յոր թափ անցանել
Կարող չեղեն երբէք և աչք իսկ մտերմի :
Թո՛ղ , թո՛ղ ուրեմն՝ հոգիդ մեծին Յակոբայ՝
Ըզբանդ մարմնոյ յոյր երկաթեայ նեղ սահմանս
Բաբախէիր հրեղէն թեւերդ յաջ և ձախ ,
Եւ վերասլաց հետոյդ յառած լո՛յս աշխարհս :
Թէ երբ մըտար ի դրունս մահու՝ քո տժգոյն
Այտիդ վրայ անշուշտ ժըպիտ մը ցոլաց ,
Երկին ողջոյնք , նախ առ աշխարհ զոր թողուիր
Եւ ապ՝ առջիդ ծագող նոր նոր տիեզերաց :
Հատիկ հատիկ քօղերն աչքէս կիյնային
Եւ եւս քան զեւս առջիդ անամպ կը շողար
Ճշմարտութին՝ աստուածուհի լուսաւոր ,

Որ հետամուտ այնչափ յաշխարհս այս եղար :
Եւ իր բալխտակ լուսոյն կայլակք՝ ցօղելով
Ծակոտիդ վըրայ՝ կը սլանային բնութեան
Ի ներքսագոյն անդունդ՝ ո՛ ամեն բան յատակ
Կը տեսնէիր յանպատմելի քո զմայլման :
Որչափ ի վեր կը ճախրէիր յաստեղց բոյլս
Եւ նորալոյս գունդք առջեւէդ գլորէին ,
Ծանօթ ողջոյնս իւրաքանչիւրց կուտայիր ,
Չի հայրենիք քո չէր երկիր այլ երկին :
Եւ հոն ուր լոյսն ամենէն ջինջ ու քնքուշ
Ծաւալելով զերկնից բըլերս պըսակէ ·
Հոն ձեռն ի ծնօտ՝ յեցեալ ի վէմ մի կարծր
Հասակագեղ կոյս՝ կըսպասէր քեզ Բէմպէ :
Բոլորովին հոգի էիք՝ բոլոր ժպիտ
Եւ խնդութիւնն իսկ հոն չունէր արտասուս
Եւ զայն զոր կին կըսէիր աստ յաշխարհ
Հրեշտակ ճանչցար ու պաշտեցիր 'ի բարձունս :
Եւ կըսէիր · « Բէմպէ , առանց իմ յերկինս
Ի՞նչ կընէիր · — Եւ նա « աստեղց մէջէն միշտ
Կայի դէտակն յերկիր՝ մանրիկ անլոյս գունտ՝
Ուր ձըգեցի մարմինկս ի հող · քեզ՝ ի վիշտ . . . :
« Եւ մերթ լուսնին ի շող՝ ի բոյր մերթ ծաղկանց
Կը ժպտէի սրտում հոգւոյդ · անիրան
Անուրջ դարձած մերթ կուգայի գիշերանց
Զորս դիտ թռչտիլ ծաղկունս սփռել գեղազան . . . :
« Մերթ յանցելոյն կը տանէի զքեզ ի ծոց
Ի վարդաթև յիշատակաց հայրենիս ,
Մերթ կէս մ'ի վեր թեթև մատամբք պարզէի
Զօթեւան քաղցր յուսոյ՝ զտունն իմ՝ զերկինս . . . » :
Ոգի՜ չքնաղ ու ազնիւ՝ սիրող գեղեցկին ·
Որ ընդարձակ մըտացըդ մէջ իբր ի նըկար
Կը կրկնէիր երկնից լոյսերն՝ որոց մեք



Անկնառոյց ըզմայլէաք սրտահար :
Զընաշխարհիկ սիրտ և հանճար բոցաթըռիչ ,
Որ հոյաշէն ապարանից կիճերով
Անուանդ անմահ բարձրացուցիր տաճարներ ,
Որ պիտի մնան միշտ դարերու յաղթելով :
Ո՜հ ազգն ի քեզ ինչպիսի՜ տղայ մը կորոյս ·
Ի՜նչ հարազատ քո եղբայրներ վեհազուն
Ի՜նչ սիրտ՝ ազգասէր , ի՜նչ Մեկենաս գիտութիւնք
Եւ ի՜նչպիսի կորոյս պարծանք մարդկութիւն . . . :
Ի՜նչ մանաւանդ , ո՜հ ի՜նչ ոգի նորահրաշ
Կորուսին այն սակաւախումբ մըտերիմք
Որ արժանի եղան տեսնել մերկ ու'անքօղ
Քու լոյսերով առատաբուխ մեծ հոգիդ :
Ո՜վ բաղդ դժնեայ , որ իմ աչացս ալ առջև
Բացաւ զերկինքն այն յորդ լոյս հոսանաց՝
Իբր ի լեթեան ջուրց խմելով մերձ ընդ մերձ
Կը մոռնայի կեանքն , ու քո հետ երկնասլաց :
Օդապարեալ կը թեւէի յանհունն անդ
Հանդիսատես գոլ տիեզերաց պտոյտքին ,
Կամ ջահ ի բուին մըխել յանդունդ գիտութեանց
Կամ ականջել Մուսայց անուշ գեղգեղին :
Ինձ եղկելույս . . . չըներեց բաղդն աննըւէր ,
Բաղդն աննըւէր չըներեց մէյ մ'ալ տեսնալ ·
Մըտերիմ դէմքդ , և ո՛չ զողջոյն հըրաժեշտի
Անդարձ ու'անդութ բաժանմանէն առաջ տալ :
Ոչ ազնիւ գլուխդ բարեպարիշտ ձիրքերով
Հանգուցանել յաներադ սնարըս չիրմին ,
Ոչ ուղեկցիլ քեզ անյարիր ննջելոյդ
Ցօթեւան անդր անաառաւօտ գիշերին :
Ո՜հ , ուր ալ իս հիմայ՝ թէ հընար է լըսել
Հոն մըտերմի մը գձայն՝ դարձուր հեզագին
Նայուածք ի ստոր և տես կսկիծս աղէկէզ . . .

*Տես իմ Մուսաս ալ՝ որ երգք յունկըն քոյին ։*
*Երբեմն այնչափ հեշտ հնչեցին , գլխիկոր*
*Ի՛ արտասուագին գերեզմանիդ մօտ կուգայ*
*Ջօնել գլետին երգս այս զոր ո՛հ մյն միայն*
*Գիտի չլսէ որուն համար երգեց նա ։*

Թ. ԹԵՐԶԵԱՆ — *Մասիս օրագիր*

# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

## ՀԱՏԸՆՏԻՐՔ

## ԲԱՐՈՅԱԿԱՆՔ–ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՔ

### Ա. ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

*Ի բիւր ձայնից բնութեան չքեղ*
*Թէ երգք թռչին սիրողաբար ,*
*Մատունք կուսին ամենագեղ*
*Թէ որ զարնեն փափուկ քընար .*
*Չունին ձայն մի այնքան սիրուն*
*Քան զանձկալի եղբայր անուն ։*
*Տո՛ւր ինձ քու ձեռքդ , եղբա՛յր եմք մեք*
*Որ մրրկաւ էինք զատուած*
*Բաղդին ամեն ոխ չարանենգ*
*Ի մի համբոյր ցրուին 'ի բաց .*
*Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն*
*Քան զանձկալի եղբայր անուն ։*
*Երբ ալեւոր մայրն Հայաստան*
*Տեսնէ զորդիս իւր քովէ քով ,*
*Սրտին խորունկ վէրքերն դաժան*
*Քաղցր արտասուաց բուժին ցօղով .*
*Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն*
*Քան զանձկալի եղբայր անուն ։*
*Մէկտեղ լացինք մենք 'ի հընում . . .*
*Եկէք դարձեալ յար անբաժան*
*Խառնենք զարտօսր և ըղխնդում*
*Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան ,*

Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն :
Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըղձունձ բարեաց յերկինս հանենք
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն :

---

## 2. ՄԻՈՒԹԻՒՆ

Ձեռք ձեռքի տանք, եղբայրներ,
Կազմենք մարմին մի. Հայեր,
Չ'ըլլանք ազգին ուխտադրուժ
Ուր Միութիւն՝ հոն է Ուժ :

Վասակեանց ճիգ 'ւ օրինակ՝
Ըզմեր ցրուեց խիտ բանակ
Իրարու դէմ առած զէնք՝
Զօրացուցինք զօտար մենք :

Հայութեան մի դրօշուն դէմ՝
Պարզած դրօշներ սեւադէմ,
Կըրօնքն առին պատրըւակ,
Բաժնել ըղհայր և զաւակ :

Ի՞նչ, Քրիստոսի խաչ վըսեմ
Թըշնամութեան կարծէք բեմ,
Ո՞չ յերկնաւորն այն սեղան
Զենաւ վեհ զոհ միութեան,

Ով որ զեղբայր յեղբօրէ
Յանուն երկնից կը բաժնէ,



Ոչ, չէ երկնից պաշտօնեայ
Այլ դիւաշունչն է Յուդայ :

Աստուածուսոյց մեր կրօնին
Սէր է պատգամն առաջին,
Ով սէր չըզգար 'ի սրտի,
Նա խաչին դրօշմը չ'ունի :

Ազգութեան հիմն ու արմատ՝
Է քրիստոսեան սուրբ Հաւատ,
Զազգն ու իւր ճետ (1) չը սիրող՝
Չէ խաչելոյն հետեւող :

Ի՞նչ կըյիշէք ըզՎասակ.
Չունինք Քաջաց վեհ բանակ.
Որ յազգի սէր՝ անձերնին՝
Յազգի Սեղան զոհեցին :

Միութեամբ լոկ Հայաստան
Կըրեց թագեր չորս անգամ,
Ո՛վ զիւր ճակատ մերկացոյց
Թէ ոչ հեռ (2), կիրք դիւուսոյց :

Ուր Միութիւն է և սէր՝
Յաղթող է ազգն անվեհեր
Անմիութեամբ ազգք ահեղ
Անցան, կորեան զերդ հեղեղ :

Տեսէք ազգեր փոքրաթիւ
Ինչպէս մեծցան սերտ սըրտիւ,
Ովյիւր դրօշակ գըրեց « ՍԷՐ »
Յաղթեց զօրող ոսոխներ :

---

(1) Ազգ, ցեղ. (2) Կռիւ :

Անմիութեան մեզ հողմեր
Ցաշխարհ բոլոր են ցրուեր,
Թէ միանանք, ո՜վ Հայեր,
Կըրնանք գործել հրաշքներ։

Ինչո՜ւ ազգ մեծ՝ Հայութիւն՝
Որոյ տարիք՝ դարք յիսուն ·
Ընկճի տըկար միշտ ըստրուկ
Անզէն 'ի սիրտն ու բազուկ։

Միթէ հինգ դարք գերութեան
Չեղա՞ն 'ի խրատ բաւական
Թէ՝ մեզ միայն միութիւն
Է յոյս, խարիսխ, փըրկութիւն։

Հայութեան վեհ անուան տակ
Խըմբւինք ամէն կարգ, հասակ,
Մոռնանք կիրք, զոխ անհամբոյր,
Եղբայր եղբօր տանք համբոյր։

Սիրենք զիրեար, ո՜հ, շա՛տ են,
Որ զազգութիւն մեր կ'ատեն ·
Շատ են ո՜հ շատ թըշնամիք
Որ զՀայն կ'ուզեն տալ 'ի շիք։

Բայց թէ տանք լանջ մենք 'ի լանջ
Եւ յառաջենք աննահանջ,
Ո՞վ, ազէ, ո՛վ է կարող
Կարծել Հայոց գոլ յաղթող . . .։

Մեր ամենէն մեծ ոսոխ՝
Է իւր եղբօր դէմ վատն ոխ
Բոլոր սըրտից կիրք և ոյժ
Թափենք յօտարս հուր յաշխոյժ։



Նըւիրական մեզ լինի
Ով Հայ անուամբ մըկըրտի,
Հայուն ուխտենք տալ մեր սիրտ
Գութ, օգնութիւն, արցունք, քիրտ։

Օ՛հ, ձեռք ձեռքի, եղբայրներ,
Կազմենք բանակ մի, Հայեր ·
Չ'ըլլանք ազգին ուխտադրուժ
Ուր Միութիւն՝ հոն է Ուժ։

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊ. ՆԱՐ–ՊԷՅ

---

## 3. ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջը,
Հայ կըներ է մեզ Պատմութեան էջը ·
Հայ անուամբ ըզմեզ կողջունեն Երկինք · —
Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք։
Հայ ապրինք · — մեր հայրն է այն Դիւցազուն
Որ զազատութիւն սովրեցոյց մարդուն,
Ու մեզ վեհ Անուն մը տըւաւ բաժինք · —
Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք։
Մեր աշխարհն է սուրբ։ — Մեր հողուն վըրան,
Աստուած է քալեր, հանելով զԱդամ ·
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ Ինք · —
Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք։
Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին օրրան ·
Երկիր փրկութեան է մերս Հայաստան,
Կըրօնից նախկին սեղան է Մասիք · —
Ե՛ղբարք, Հա՛յ ապրինք։
Հայուն պերճ անուն՝ ոչ միայն յերկիր՝

Այլ և յեթերց մէջ շողայ լուսալիր ․
Բայց Հայկին աստեղք անմահ են յերկինք ․ —
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք ։
Հա՛յ ապրինք ․ — ո՞ր ազգ կայ Հայուն նըման ,
Որ ունենայ հին պարծանքներ ա՛յսքան ,
Ո՞ր ազգ Հայուն պէս շըքեղ հայրենիք ․ —
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք ։
Ըսէք , ո՞ր ազգին չորս առաքեալներ
Երկնից Թագաւորն է դեսպան ղրկեր ,
Ո՞ր Թագաւորին հետ թղթակցեր ենք ․ —
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք ։
Ո՞վ կրնայ համրել սրբոց մեր զանուանք ,
Մեր պատմութիւնն է նահատակա՛ց ցանկ ․
Մեր եկեղեցին յերկրի է երկի՛նք ․ —
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք ։
Քրիստոսի ունինք անդրանիկ օրհնենք ,
Հաւատոց եղանք միշտ ախոյեան մենք ․
Հայը զարմացոյց զերկիր և զերկինք ․ —
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք ։
Մեր Ազգ հետևող է ճիշդ Յիսուսի ,
Որ Խաչն ա՛յսչափ դար առած է յուսի ․
Ո՛չ , չէ՛ խոնարհեր չ՚ըլլար դասալիք ․ —
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք ։
Այո՛ , Խաչին կեանք՝ կեանք է վըշտալից ,
Այո՛ , Հայուն կեանք՝ կեա՛նք է ցաւալից ․
Բայց Խաչն՝ յաղթութեան ունի վեհ կընիք ․ —
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք ։
Ո՛չ , ճակատագիր մեր չէ՛ միշտ տըխուր՝
Ըղթչուառութեան ուտել հացն ու ջուր ․
Նոր երջանկութեան ապագա՛յ մ՚ունինք ․ ․ ․ —
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք ։
Հա՛յ ապրինք , որ մեր որդիք ալ , եղբարք ,



Կարենան պարծիլ որ զմեզ ունին հարք ․
Զ՚ըլլա՛նք Հայ անուան չ՚ըլլա՛նք նախատինք ․ —
Ե՛ղբարք , Հա՛յ ապրինք ։

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊ․ ՆԱՐ—ՊԷՅ *Մատենըք Հայկականք*

---

## 4. ՀԱՅՈՒՆ ԲԱՂԴԸ

Եկաւ ձմեռը ցրտագին
Անցաւ գարունը Հայուն
Մութ մութ ամպեր սև ծածկեցին
Բարձր ճակատը Հայուն ։
Փչեց քամին , ելան հովեր ,
Սառեցաւ շունչը Հայուն ,
Լեռնակուտակ ծածկեց ձիւներ
Հպարտ գլուխը Հայուն ։
Չորցան լեռներ կանանչագեղ ,
Պարարտ դաշտերը Հայուն ,
Չորցան այգիք , պարտէզք շքեղ ,
Սիրուն ծաղկունքը Հայուն ։
Խորշակահար ինկաւ գետին
Նարկիզ շուշանը Հայուն ,
Գլխիկն ի կոր , թերթն ի թփին
Կենսատու վարդը Հայուն ։
Սոքա ամենքը եկան մեռած
Յանպարտելի սիրտ Հայուն ,
Ուր գերեզման մ՚եղաւ փառաց
Քաղցր Հայրենիքը Հայուն ։
Մթնեց պայծառ ու պարզ երկին ,
Գոցեց լուսնակը Հայուն ,
Շիջաւ արևն Հայաստանին ,

Ամպեց աչքերը Հայուն ։
Հեղեղ կապեց, ծովեր լեցաւ
Աղի արցունքը Հայուն,
Սեւ օր եկաւ, սեւ գրուեցաւ
Ճակատագիրը Հայուն ։
Դառնահամբոյր դարեր անցան
Տարին ու կեանքը Հայուն
Օրեր դարձան, մոռցուեցան
Փառքն ու պարծանքը Հայուն ։
Եւ գրուեցաւ ցօղով աչաց
Սուրբ յիշատակը Հայուն.
Յաւերակունս խաւարամած
Ծածկեցաւ բաղդը Հայուն ։
Լալ յուսաբեկ քնարին ցաւած,
Թ' անցան օրերը Հայուն,
Պանդխտութիւն, արցունք ու լաց
Բաժին մնաց հէգ Հայուն ։

Ս. Հ. Մ. ՖԷԼԷԿԵԱՆ *Ընտիր գործեր*

---

## 5. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ազատ Աստուածն այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգեւել ։
Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի
Եւ իմ անզօր թեւերով



Ազատութիւն գրկեցի.
Մինչ գիշերը անհանգիստ
Օրօրոցում կապկապած
Լալիս էի անդադար
Մօրս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել ։
Թոթով լեզուիս մինչ կապերը
Արձկվեցան բացուեցան.
Մինչ ծնողքս իմ ձայնից,
Խնդացին ու բերկրեցան ։
Նախկին խօսքն որ ասացի
Չէր հայր կամ մայր, կամ այլ ինչ
Ազատութիւն, դուրս թռաւ
Իմ մանկական բերանից ։
Ազատութիւն, ինձ կրկնեց
Ճակատագիրը վերեւից.
« Ազատութեան դու զինուոր
Կամիս գրուիլ այս օրից ։
Ո՛հ, փշոտ է ճանապարհդ.
Քեզ շատ փորձանք կ'սպասէ
Ազատութիւն սիրողին,
Այս՝ աշխարհքս խիստ նեղ է ։
— Ազատութիւն, — գոչեցի, —
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ
Թող դաւ դնէ թշնամին
Ես մինչ 'ի մահ, կախաղան
Մինչեւ անարգ մահու սիւն,

*Գիտի զուամ, պիտ' կրկնեմ*
*Անդադար, ազատութիւն ։*

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ (1) *Քնար Հայկական*

---

## Ե. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔ

*Աւաւօտուն դըռնակն է բաց.*
*Ե՛լ, ել արեւդ Հայաստանեայց ։*
*Ահա ելնեն որք 'ի ն 'իքուն,*
*Ու Նահապետն այլ որ անքուն՝*
*Յաստուածազարդն ելնէ հանդէս,*

---

(1) Միքայէլ Նալբանդեանց. կոմս Էմմանուէլ. (1830-1866)՝ նշանաւոր բանաստեղծ եւ լեզուագէտ. մանկութեան օ-րերուն Տէր-Գաբրիէլ Պատկանեանի աշակերտ եղաւ, յետոյ Պէ-տրսբուրգ երթալով իր ուսումն աւարտեց, եւ Լազարեան ճեմարանը բաւական ատեն Հայերէն լեզուի դասախօսութիւն ը-րաւ. 1856 եւ 1862 ին Եւրոպա եւ Հնդկաստան ճամբորդեց, ուր մեծ գումար մը ձեռք ձըգելու կերթար որ ազգին կըտակած էր հարուստ Հնդկաստանցի Հայ մը, եւ այս երկար ճամբորդութե-նէն ետքը իր ամբողջ կեանքը գրականութեամբ անցուց ։

Հիւսիսափայլ ամսագիր հանդիսին (Նազարեանցի խմբագրու-թեամբ) մի փայլուն աստղն եղաւ, մեծ անուն հանեց իր յօդ-ուածներովը ։

Անուանի են իր զանազան քերթուածները որոց մէջ հայրե-նիքն եւ ազատութիւնը իր բանաստեղծական ներշնչման միշտ առարկայ եղած են ։

Ունի նաեւ շատ մը բանասիրական գրուածքներ, ինչպէս Երկրագործութիւնը որ մի ճշգրիտ պատկեր է իր ողջմիտ գաղափա-րաց եւ հասուն խորհրդածութեանց, եւ այլ բազում գործեր, յիշատակարաններ, Թարգմանութիւններ, գրադատումներ ։

Արդարեւ կարժէ որ այսպիսի արժանայիշատակ եւ մեծա-համբաւ Հայ զաւկի մը արձանը կանգնուի ։



*Հայր հայրենեացն ելնէ ի տես ։*
*Ելնէր ելնէր նա մինչ յԱրատս*
*Ջաչերն ածել ընդ չորս բոլորս,*
*Երբն սեաւ գիրակն էր ճակատուն*
*Ոտկունքն արաչ էր քանց այծուն,*
*Յաստուածազարդ ելնէր հանդէս*
*Հայր հայրենեացն ելնէր 'ի տես ։*
*Դուք որ սարերդ 'ի վեր երթայք*
*Ա՜յ իմ սիրուն կորընճուորայք,*
*Գէմ (1) թէ դդալար աչուիդ սիրէք,*
*Նահապետին մըտիկ արէք.*
*Յաստուածազարդ ելէք հանդէս*
*Հայ հայրենեացս ելէք 'ի տես ։*
*Ահա ելանք 'ի մեծ հանդէս.*
*— Հայ հայրենեացս ելանք 'ի տես.*
*Ահա տեսանք դաշխարհն Հայոց*
*Որ ըդդրախտիկն առել ի ծոց*
*Դէմ երկընուց կայր կանգնըման*
*Անդրանկածին մօրըն նըման ։*
*Ահա ելնէր արեւն յամպոց*
*Վարդ կու թափէր յաշխարհն Հայոց.*
*Ցօղըն տեղայր զով ու սիրուն*
*Ջինչ մարգարիտն 'ի սատափուն.*
*Կարմիր կանաչ ծին ծիրանի*
*Գօտի ածուէր Հայաստանի ։*
*Լերանց սարերըն բարձրածայր*
*Ոսկի պըսակ եդան հաւսար.*
*Հայոց գետերն հազարաւոր*
*Իջանէին ճաճանչաւոր.*
*Հազար թէ գետ, բիւր թէ առուի*

---

(1) Գոնէ, գէթ ։

Հայոց ծովակըն այլ աւելի ։
Ա՛յ դրախտի ջրեր, իջէք, իջէք
Զերկիրն Հայոց արբեցուցէք ․
Ահա վտակունք կըրկըջային
Ջուրն ու հովիտ արբենային,
Յամեն կաթէն աստղիկ ծնէր,
Յամեն ծըլէն ծաղիկ ծագէր ։
Ահա տեսանք զծաղկունքն Հայոց
Գոյնն էր երկնից, հոտըն խընկոց ․
Վարդն ու շուշան էին վառման
Հարսնամատերն ի ջուր փըռման ․
Հօրոտ մօրոտն էր տարածել
Ըզտեսողաց աչքըն քաղել ։
Ահա տեսանք զհաւերն Հայոց
Ձայնն հրեշտակի, գոյնն էր ծաղկոց ․
Կռունկ ու արագիլ գային հիտրաց (1),
Ղարիպներուն սիրտըն ճըլխաց ․
Արեգաձագ, սարեկ, արտուտ
Կաքւուկ, պըլպուլ վարդակարօտ ։
Ահա տեսանք մեծ կարաւան
Ի չորս դիհաց ելեր կուգան ․
Քուրդըն կուգայր յարօտ ամռան
Հօտերն ի հետ չարան չարան ․
Աղջկունք առեալ զասըրըն հիւսեն,
Մանկունք ըզսառն աղբիւրս խըմեն ։
Ահա տեսանք ըզվաստակն Հայոց,
Սերմն էր իջել յերկնից ամպոց ․
Հոն որ Ադամ վարէր գուղան (2)
Քանց զքառասուն հասկերըն տան ․

---

(1) Հետ իրերայ, միաբան ։
(2) Մեծ արօր, ութը լծով ։



Հոն որ Աբել զառն ընծայէր՝
Մաքիքն ածեն միշտ ջուխտըկներ ․
Հոն որ զայգին է տընկեր Նոյ՝
Ոսկի ողկոյզքն են խաղողոյ ․
Կաթն այն կըրծքի, գինին բաշկի,
Ջուրն հասխաթ է ամենի ։
Ահա տեսանք զխորանքն Հայոց
Կամար կապեր են յերկնից ծոց ․
Եկեղեցեաց Թիւն հազարով,
Մատրունք սըրբոց չ'են համարով.
Խունկն ծըխէ առտու 'րիկուն,
Աստուած առնու զհոտըն սիրուն ։
Ահա տեսանք զքարերն Հայոց,
Մեր պապերուն մահուան օրոց ․
Գերեզմանները լուռ էին
Խաչվէմքն ի քոմն աղօթէին,
Տէրն ողորմի հանգուցելոց
Եւ ամենայն երկրիս Հայոց ։
Ահա տեսանք զերկիրք պայծառ,
Շըրթներն՝ երկրիս Հայց հաւսար,
Հաւերն ի հունչ, հովերն ի շունչ
Օդըն վառվառ, ջուրն ի մըրմունջ ․
Լուսինկս է ճոխ, արեւս անուշ,
Սարերն 'ի վար իջնումք մեք ուշ ։
Ահա ի գունտն երթայր արեւ
Նահապետին մենք տանք բարեւ ։ —
Ծեր նահապետն այլ ձեզ բարեւ ․
Աստուած վերէն տայ շատ արեւ ․
Ի ժիր գնացէք դուք յայդ հանդէս
Հայ հայրենեացդ ելէք 'ի տես ։

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆԵԱՆ — *Նուագք*

---

## Է. ԻՂՁՔ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Երբոր ցօղին փաղփուն չիթեր գիշերուան
Խոտի՝ թերթի՝ ծաղկի վըրայ կը տեղան ,
Եւ երբ երկինք աստղեր շողան մթավար ,
Ցայտեն արցունք՝ կայծ իմ աչերըս խաւար .
Ի՜նչ , Հայաստա՛ն , քեզ մոռնա՛լ . . . .
Երբէք , այլ սեւ նոճի մ'ըլլալ , քեզ շուք տալ :

Զիս աստղազարդ երկին սփոփել չ'է կարող ,
Մասեաց սարին արտասուալից է նա քօղ ,
Ձեր յիշատակն ինծի համար հեշտագին՝
Նըման կուսին սիրոյ աջքի արցունքին .
Դամբա՛նք , աւերք , ձեզ մոռնա՛լ . . . .
Երբէք , այլ ուղխ մ'արցունք ըլլալ , ձեզ ցօղ տալ

Երկաթ՝ շղթայ՝ բանտ և անդունդք ու վըհեր ,
Ամպրոպ ու շանթ , մահուան զանգակ ու ջահեր .
Զ'է , չ'են կարող պահ մը ձեր վառ յիշատակ
Ծածկել սեւի՝ ու սոսկումի՝ վէմի տակ .
Ազա՛տ օրեր , ձեզ մոռնա՛լ . . . .
Երբէք , այլ հուր մ'ըլլալ , և ձեզ Հայուն տալ :

Զուարթ բնութեան այն կամարներն ծաղկահիւս ,
Բոյր՝ կայծ ու գեղ , նայուածք՝ ժըպիտ սիրուհւոյս ,
Անուշ հովեր՝ արծաթ ալիք վըտակին
Ձեր հուրն սրտէս պահ մը տանել չը կրցին . . . .
Փառա՛ց օրեր , ձեզ մոռնա՛լ . . . .
Երբէք , այլ ձեզ պատրոյք մ'ըլլալ , ու լո՛յս տալ :

Արշալոյսին ոժգոյն աստղեր երբ փայփլին ,
Գողտրը գեղգեղ վարդակարօտ բուլբուլին ,



Բնութեան դաշնակք , ո՜հ , չ'են կրնար նուագեր ,
Ձեզ հառաչք , յոր մաընչէն նոճիներ .
Սեւ սեւ օրեր , ձեզ մոռնա՛լ . . . .
Երբէք , արիւն մ'ըլլալ , և ձեզ կարմիր տալ :

Թերեւս ժպտին Հայոց մըթին սարերը ,
Կամ շունչ ծխեն Սիպերիոյ սառերը ,
Բայց սեւ հոգիք ու սեւ ձանկեր անողոք
Խեղդել կուզան ազատ հոգւոյս իմ բողոք .
Արդարութիւն , քեզ մոռնա՛լ . . . .
Երբէք , այլ սուր մ'ըլլալ , սրտեր քեզ մուտ տալ :

Մինչ ց'երբ գոչեմ , ձայնըս մէկը չը լսեր ,
Հայն իւր ժանգոտ շղթան երբէք չը սարսեր . . . .
Բնաւ ինձ հետ իրաւունք ոչ թոթովեց ,
« Հայ չես » ծաղրեց , և ձայնը գիս չը թողեց .
Հա՛յ ու շղթայ , ձեզ մոռնա՛լ ,
Երբէք , այլ շունչ մ'ըլլալ , ու ձեզ ոգի տալ :

Գ. ԴՈՒՐԵԱՆ — *Ցաղք*

---

## Ը. ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիք . . . . . այս այն վայրն է նուիրական զոր տիեզերաց Արարիչն նշանակած է իւրաքանչիւր ազգի իբրեւ իւր ընտանեկան օթեվանն և իւր բաժի-նըն հողագնտոյս վերայ յորում ամէն էակ իւր տեղն ունի ։ Այս այն սրբազան որրանն է յորում քակ-ուած են իւրաքանչիւր ազգի խանձարուրք , այն տունն յորում իւրաքանչիւր ժողովուրդ սնած աճած և ապրած է իւր նախահարց շիրմաց քով և իւր մա-տաղ սերնդէն շրջապատեալ՝ որ յետոյ քան զինքն

կը սնանի, կ՚աճի և կ՚ապրի այն երանաւէտ վայրաց մէջ ուր իւր հարք կենաց օդն ծծեցին և զորս թողին իւրեան ի ժառանգութիւն ։

Ամէն ազգ, ամէն ժողովուրդ արեգական տակ ունի իւր սեփական հայրենիքն ։ Նա որ արծուոյն օթեվան տուած է երկնաբերձ քարաժայռից մրրկակոծ կատարն, ճնճղկան՝ սաղարթախիտ ծառոց թեւերն, առիւծուն՝ իւր մենաւոր անտառներն յորս իւր մռունչներն ամպագոռ որոտմանց հետ կը մրրցին, մրջնոյն՝ իւր գետնափոր որահներն, և ձկանց մէջ բաժնած է ծովուց անծայր և անյատակ անդունդներն, նա մարդկային ազանց իւրաքանչիւրին ալ իւր բաժինն տուած է երկրագնտիս հողէն, ջրէն և օդէն, և այն հողոյ, ջրոյ և օդոյ բաժինն որ անձնիւր ժողովրդեան յատկացած է երկնքէն՝ նորա հայրենիքն է այն ։

Ի՞նչ կայ առաւել քաղցր, առաւել պաշտելի ազգի մը համար քան իւր հայրենիքն, ո՛չ ապաքէն այնու միայն նա ազգ մի է  ի՛նչ է ծառ մի երբ իւր արմատն իւր հողն չունի, իւր հողն որ կուտայ իւրեան իւր հիւթն, իւր սնունդն. իւր կեանքն, խլէ ծառն երկրէն որ զնա բուսոյց, կը ցամքի այն, կը թափթփին իւր ազազուն տերեւներն զոր հողմն կը սփռէ յերեսս երկրի. տխո՛ւր բեկորք նորա որ երբեմն ախորժ հովանի մի կը սփռէր անդ ուր իւր բընիկ հողոյն հիւթն և բնիկ երկնից արեւն կը վայելէր ։ Այսպէս է նաև ազգերու համար. անդ միայն կ՚ապրին ուր սկիզբն են առած ։ Անդ ամէն ինչ իւրեանց մտաց և սրտին հետ կը խօսի. անդ ամենէն աննշան առարկայք մարդոյն համար խորհրդաւոր լեզու մի ունին. հայրենի երկրին քարն, խոտին շիւղն, առուակին մի ալեակն հազար ու բիւր



անոյշ բաներ կ՚ըսեն և իւր գոյութեան անհրաժեշտ տարերքն կը կազմեն ։ Անդ է զի մարդ, մի առ մի թուելով ամպածրար լեռներն, մթին ու նսեմաստուեր անտառներն, լայնածաւալ հովիտներն, խորաձոր ծործորներն, խայտահոս առուակներն, քաղցր հպարտութեամբ մի իւր լանջքն ուռած, կըսէ. իմ են այս լերինք, իմ են այս անտառք, իմ են այս հովիտք, իմ այս ծործորք, իմ այս առուակք. և յետոյ, անուշակ խոհանաց մէջ ընկղմած ականջ կը դնէ այն անվերջ ու սիրելի խօսից զորս յիշատակօք լի այդ առարկաներն կ՚ըսեն իւրեան ։

Այս լերանց վերայ, կ՚ըսեն, այն որոյ անունն կը կրես՝ իւր ժողովրդեան անկախութեան դրօշն կանգնեց. այս անտառք իւրեանց խորհրդաւոր ըստուերաց տակ կը ծածկեն նախահարցդ սրբազան ոսկերքն. այս հովիտք համակ ներկուած են քո հարց արեամբ զոր իւրեանց երկրին ի սէր թափեցին. այս ծործորոց մէջ քո պապերն ծծեցին զայն օդ զոր դու կը ծծես. այս առուակք իւրեանց մրմունջն խառնած են նոցա երգոց և ողբոց հետ, երբ քեզ նման այս եզերաց վերայ կու գային իւրեանց սրտին գաղտնիքն ու հառաչներն յանձնել այս ալեաց . . . . . ։

Հայրենիքն, չէ, լոկ երկիր մի չէ այն. խորան մի է նա սրբազան՝ մարդկային սրտին համար, խորան մի ուր ամէն կողմ իւր նախնեաց ոտից հետքերն ու մատանց նշաններն կը տեսնէ և որոց կամարք տակաւին նոցա ձայներովն կը թնդան իւր ականջին ։ Արտաքս քան զայն ամէն ինչ օտար է մարդոյն համար. ամէն ինչ իւր քաղցրութիւնն կը կորուսանէ, ամէն ինչ իւր հրապոյրներէն կը մերկանայ ։ Նա որոյ համար բնութեան սահմանմանիքն տուած է բնութիւնն 'ի հայրենիս՝ նոցա մէջ միայն հրապոյր կը

գանէ. Իտալիոյ անամպ ու ջինջ երկինքն և Հելվետիոյ ծաղկաւէտ մարգագետինք դառն աքսոր մի են իւրեան, և Սահարայի բոցակէզ անապատաց թափառական բնակչին նուազ քաղցր է գարնանաշունչ զեփիւռն քան սիմունն հրատոչոր: Այո՛, իրաւամբ ըսաւ, հայրենասէր ոգի մի, «քան զօտար երկրի վարդն անոյշ է հայրենի երկրին փուշ»:

Բայց լոկ հողն, ջուրն և օդն չեն որ հայրենիքն կը կազմեն: Բոլոր ինչ որ ազգի մի յատուկ է, բոլոր ինչ որ իւր սեփականութիւնն է և զայն միւս ազգերէն կ'որոշէ, բոլոր ինչ որ իւր նախնեաց սրբազան աւանդն և ժառանգութիւնն է նուիրական, այն ամենայն հայրենիքն կը կազմէ: Ամէն ինչ որ հայրենի է՝ հայրենեաց մի տարրն է, հայրենիք է այն: Հայրենի լեզուն, հայրենի կրօնքն, հայրենի գրականութիւնն, հայրենի պատմութիւնն, հայրենեաց մասերն են կամ նորա բարոյական կիսամասնն, հոգին հայրենեաց մարմնոյն զոր շնչաւորեն, և ոչինչ նուազ քան զնիւթական հայրենիքն իրաւունք ունին մարդոց սիրոյն և գորովանաց վերայ:

Եթէ նիւթական հայրենիքն այն տաճարն է որ իւր գրկին մէջ կը համախմբէ մի նախահօր սերունդներ, մի և նոյն ազգի զաւակներ, ազգային լեզուն, կրօնքն, գրականութիւնն, պատմութիւնն, այն սուրբ և անբռնաբարելի կապերն են որք յիրեար կը կցորդեն համարիւն եղբայրներ և ազգերու անցեալն, ներկայն և ապագայն մէջտեղ միութեան անջինջ գծերն են: Նիւթական հայրենիք և բարոյական հայրենիք միմեանց ամբողջ են, մին միւսին կը վկայէ, ինչ որ մին կըսէ՝ միւսն զայն կը հաստատէ, և մին այնքան պաշտելի է որքան միւսն, կամ, այսպէս ըսեմ, կարելի չէ զմին սիրել



առանց զմիւսն սիրելոյ: Հայրենեաց այս սէրն բնութիւնն տնկած է մարդկային սրտին մէջ, բնազդումն մի է այն և բնազդմանց ամենէն գեղեցիկն և ամենէն վսեմն: Նախախնամութիւնը իւրաքանչիւր ազգի աստեղց տակ զիւր տեղն սահմանելէ յետոյ, այս զգացումն մարդկային հոգւոյն մէջ դնելով, գոգցես նուիրական պատուար մի քաշած է այդ տեղւոյն շուրջն՝ ազատ կացուցանելոյ համար զայն բռնաբարութեան ճանկերէն: Եւ ստուգիւ ո՞ր պատուար առաւել ամուր և անկործան քան այն հայրենավառ սրտերն որք հայրենի հողն և սեփական երկիրն կը պաշտպանեն օտարին յարձակման դէմ: Կը կործանին ամրակառոյց պարիսպներն, կ'իյնան ապառաժ բերդերն թնդանօթաց աւերիչ հարուածներու տակ, բայց չ'իյնան, չկործանին հայրենասէր սրտերու պարիսպներն, միշտ իւրեանց եռև պահելով զայն զոր կը կոչեն Քաղցր Հայրենիք:

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ *Առաջին տետրակ*

---

## 9. ՀԱՅՐԵՆԵԱՑ ԿԱՐՕՏԸ

Սար ու ձոր ընկած, մէկ չոր թփի տակի
Գետին նայելով՝ մնացել եմ նստած.
Ձեռս ծոցումս, գլուխս մէկ լեռ քարի
Տված՝ լալիս եմ օրս խաւարած:
Ամպերն առաջիս, սարերն ետեւս,
Քեզ մտիկ տալով՝ ա՛յ իմ քաղցր Մասիս՝
Աչի արտասունքով էրված, խորոված,
Երեսիդ նայիմ, մնամ քարացած:

Ծնօղ, ազգականք՝ հեռու ինձանից,
Լուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,
Երա՜բ (1) Երբ կըլի, որ ես ձեզանից,
Իմ կարօտս առնեմ, ձեզ ջան ասելով:
Երաբ ձեր ճտոփն մէկ օր էլ կընկնիմ,
Երաբ ձեր երեսն մէկ օր էլ կը տեսնիմ,
Երաբ ծունկ ծնկի տված՝ ձեզ կասիմ,
Ա՜յ իմ խեղճ ծնողք՝ ձեր ջանին մեռնիմ:
Աչքս ծով դարձաւ՝ ճամբին նայելով.
Մէկ ղուշ որ գլխիս պտիտ ա գալիս,
Թէ երբ մէկ խաբար կհասնի ինձ բարով՝
Հոգոց հանելով ասում եմ, լալիս,
Երաբ գետնի վրայ դեռ սուգ էք անում,
Ձեր կորած որդուն կարօտ մնալով,
Թէ հողի տակը մտած՝ դենջանում (2),
Ինձ թողիք տանջվիմ ախ ախ քաշելով:
Երաբ ձեր ամակն ինձ հալալ արիք,
Երաբ սուրբ բերնով ձեր ինձ օրհնեցիք.
Ծերունի իմ հայր, տարաբաղդ իմ մայր.
Էլ իմ հաւարիս (3) երբ կ'հասնի աշխարհ:
Էն սուրբ անարատ կաթնին ես ղուրբան,
Ձեր լիս (4) ձեռներին, ձեր անօչ լեզվին,
Մէկ բուռն հողի էլ երբ կըլիմ արժան,
Որ գամ ձեր հողումն, քնիմ ձեր միջին:
Էն ինչ օր էր, որ ձեր քաղցր ծոցին,
Գլուխս ձեր դօշին, աչքս խուփ կամ բաց,
Ձեր սուրբ ձեռի վրայ, երեսս բարձին՝
Կամ խաղում էի կամ մնում քնած:
Էն ինչ օր էր, որ մէկ ծառի տակի,

(1) Ո՛վ Տէր, Աստուած իմ: (2) Հանգստանալ:
(3) Օգնութիւն: (4) Լոյս:



Ճոճումն ձեռներս ձեր ճտոփն քցած՝
Ձեր սուրբ երեսին ես համբոյր տալի,
Նանիկ ասելով՝ թողէիք քնած:
Ո՞ւր էն չվաքը (1) էն կանաչ ջրի ափը,
Էն խոտն ու ծաղիկն, էն դաշտն ու տափը,
Որ ձեր առաջին անմեղ խաղայի,
Ուր ձեր բարի սիրտն խաղով բանայի:
Լալիս՝ դուք լայիք ինձ հետ ցաւելով.
Ծիծաղս տեսնելով կամ ձէնս լսելով
Կանչէիք, «արի մատաղ Աղասի ջան,
Երեսիդ մեռնիմ, քո ջանին ղուրբան»:
Ա՜խ՝ էս խօսքերը ինձ կրակ են դառել (2),
Լերդս ու թոքս հիմիկ էրում, խորովում,
Ի՞նչ կըլէր՝ ես էն վախտն էի մեռել,
Ձեր չվաքի տակին, ախ՝ քնել հողումն.
Մէկ բուռն հողի էլ կարօտ եմ մնացել,
Քարափից թէ ցած, կամ ջուրը ընկնիմ,
Ձեր սուրբ երեսը դեռ որ չեմ տեսել,
Ինչպէս ես հանդարտ էս հողը մտնիմ:

Խ. ԱԲՈՎԵԱՆ (3) *Վէրք Հայաստանի*

---

(1) Շուք: (2) Դարձընել, փոխել:

(3) Խաչատուր Աբովեան (1810—1848) դարուս Հայ բանաստեղծներու կարգին մէջ նշանաւոր տեղ մը կը բռնէ երիտասարդ քերթողը որ իր քնարը միայն ազգին նուիրեց եւ իր անչափ ազգասիրութեանն իսկ զոհ գնաց....:

Բազում են իր քերթուածները, մեծ մասամբ անտիպ. որոց մէջ կը յիշուի Վէրք Հայաստանի, մի սրտաշարժ բանաստեղծական վէպ յորում Հայաստանի՝ իր ժամանակի թշուառութեան ճշգրիտ պատկերը կը ներկայէ:

Մեղք որ լեզուն գաւառական ըլլալով տեղ տեղ անհասկընալի է:

Բարեկիշատակ Աբովեան մի ցաւալի մահ ունեցաւ ծագիկ հասակին մէջ. Երեւանէն Թիֆլիզ երթալու ատեն անյայտացաւ.....: Ոչ ոք չի կրցաւ մինչեւ ցարդ գտնել իր հետքը:

# 40. ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիք . . . . . Այն քիչ անուններէն մէկն է այս՝ զոր գրեթէ ամօթ է բացատրել բարեկիրթ և զգօն անձի մը. թէև չըլլայ շատգէտ կամ բանիբուն. գրեթէ մաքէն առաջ սիրտն կու հասնի, կ'ըմբռնէ, կիմանայ զայս. կ'իմանայ զայն նաև երբ չի կրնար քիչ բառով կամ խօսքով բացատրել. մանաւանդ ուր քաղաքական և բարոյական տեսութիւնք՝ ասոր իմաստն այլ այլայլած կամ զանազանած ըլլան:

Արարածոց մէջ՝ որոնց հետ կ'ապրի՝ մարդուս ամենէն յատուկ միանգամայն և ազնիւ ձիրքն է միտք կամ բանականութիւն. որ կ'ուզէ ըմբռնել, ճանչնալ, դատել. իր ծանօթութեանց գլխաւոր առարկայն այլ է նախ ինքն և իր նմանիքը. — մարդկութիւնը: Եւ ինչպէս շուտով մը կ'իմանայ որ ինքն իբրև մարդ ամեն մարդու հաւասարակից է, բայց ամենքն այլ իրմէ զատ զատ մարդիկ են. այսպէս այլ շուտ մը կու ճանչնայ կ'ընտրէ կ'որոշէ անոնցմէ բազմութիւն մը մարդկան՝ որք նման են իրեն այն ամեն բաներով որով որ ուրիշներու չեն նմանիր: Եւ ահա կու ճանչնայ զազգս. և անոնց մէջ իր հա-[illegible] և երկրիս բնակութեան վըրայ ասոր բռնած տեղն այլ՝ **հայրենիք է**: Բնական է մարդուս փնտռել և սիրել զհայրենիս:

Ո՞ւր է հայրենիքն. Կայ ազգ որ ի սկզբանէ պատմական ժամանակաց՝ երկրիս նոյն կողմը մնացեր կեցեր է. այսինքն իր հարքն ու նախահարքն որդւէ որդի միշտ նոյն երկրին վրայ ծներ սներ ու մեռեր են. անոնց ձեռագործ յիշատակաց մէջ և մարմնոց նշխարացը քով կու բնակին մինչև ցայսօր իրենց



վերջին ծնունդքն այլ. — կան ալ՝ որ ուրիշ տեղ ծըներ են, և հիմայ ուրիշ տեղ կ'ապրին, և գուցէ ուրիշ տեղ մ'ալ պիտի մեռնին. իրենց որրանքն ու գերեզմանքն հեռաւոր լերանց և դաշտաց վրայ ձըգուած են, որոց միջոց՝ ուրիշ ազգաց աւելի իրարու մօտիկ օրօրոցք և գերեզմանք կան. Նման մեր Եփրատ գետոյն՝ որ Սև-ծովէն հազիւ աստիճան մը հեռու Բարձր-Հայոց գագաթներէն կու բղխէ, դէպ յարևմուտք և հարաւ վազելով գրեթէ նոյնչափ կու մօտենայ Միջերկրական ծովուն Հայոց ծոցը, և դարձեալ անկից այլ ճամբան փոխելով դէպ յարևելս հարաւախառն՝ կերթայ կու թափի ի հեռաւոր ծոցն Պարսից ի ծով Հնդկաց: Գուցէ այսպիսի ազգաց դժար ըլլայ հայրենիքը ճշդելը:

Սակայն ով կայ՝ որ որչափ այլ պանդուխտ տարագիր և թափառական ըլլայ՝ չունենայ իր սկզբանը հաստատուն կէտ մը: Երկրիս ծայրէն 'ի ծայրը տեղափոխիկ օդաչու և ծովագնաց թռչունք անգամ, արագիլն ու կռունկ և ծիծռունք և սագք, ունեցեր են տեղիկ մը բունիկ մը թէ աշտարակի մը ծայր, թէ երդիք մէկ խորշը, թէ պատի մը ճեղքի մէջ, թէ բարձրածայր ծառոյ մը գագաթ, և թէ վաղուկ կամ անշարժ ջրի մը եզերք, այն է իրենց հայրենիքն. ուր՝ յետ աշխարհաշրջիկ և օդափոխիկ տարագնացութեանց՝ կու դառնան նորածին ընտանեօք, և իրենց ախորժելի եղանակին մէջ երկրորդ անգամ ուրախ կեանք մը կ'անցընեն: Մարդս այլ՝ որ չի գիտեր իր կենաց վերջին կէտը, ուր դադրելն և ուր ընկնալն, գիտէ գոնէ իր սկզբնաւորութիւնը: Կան որք դժբաղդաբար ծնողք ճանչցած չըլլան, բայց կու ճանչնան ծնելական տեղը, քաղաքը, գեղը, այն է իրենց հայրենիքը, և անոր հետ՝ նոյն օրէնքով վար-

ուած տեղուանքն, եթէ ընդարձակ և եթէ ոչ: Կան, ո՜հ խեղճութիւն մարդկութեան, կան որ չեն իմացեր չեն զգացեր ինչ ծնողի մը ծոց, համբոյր և գգուանք, չեն սնած անոր կաթով՝ որոյ արեամբն ծնած են, չեն ճաշակած մօր մը քաղցրութիւն, եղբայր մը իրենց ձեռքէն չէ բռնած, և քոյր մը գիրենք չէ գըրկած. սակայն և այնպիսիք ճանչցած և զգացած են զսէր և զքաղցրութիւն հայրենեաց՝ որ համատարած և անյիշաչար ծնողքի պէս կ'ընդունի կը գգուէ ամեն համազգի և համալեզու. Տեսեր եմ իրեն ծագման անծանօթ երիտասարդն այլ՝ որ իրեն փառք և հաճոյք կու սեպէր պաշտպանել և մեռնիլ իսկ պաշտպանելով այն երկիրը՝ ուր ծներ ուր սներ էր, և ուր իրեն լեզուակից և կրօնակից նմանեացն հետ կապրէր:

Ո՛հ, ինչպէս քաղցր եղած է անոր դարձը՝ յետ բազմամեայ գինուորութեան, հեռի և տարբեր քաղաքաց և բերդից մէջ, և երբեմն յետ օտար աշխարհներ այլ մնելու բանակաց և պատերազմաց մէջ, յետ զանազան դիպուածներէ և վտանգներէ անցնելու. — կամ անոր՝ որ աւելի խաղաղական բաղդի հանդիպելով կամ ուսմանց կամ վաճառաշահութեան կամ ծառայութեան պատճառաւ, կ'երթայ հեռաւոր աշխարհներ և քաղաքներ, զանազան սովորութիւններ, բարքեր, լեզուներ կու տեսնէ և կու ստանայ, և թէ այսպիսի նիւթական շահերու ծրարները կու բերէ այն քաղքին կամ գեղին մէջ՝ ուր իր կենաց ամենէն առջի տարիները և դիպուածները անցած են: Ի՛նչ սքանչելի կ'երեւին այն քաղքին այն գեղին հին և մեծ շէնքերը, իր զուարճութեան դաշտերը և բլրակները. իր խաղուց և փոքրիկ հասակակ-



ցաց ընկերութեան տեղուանքը, այն սրբազան և հասարակաց ժողովարանները՝ ուր իր ծանօթից և ընկերաց հետ կ'երթար՝ եկեղեցւոյ կամ քաղաքային տօն մը, հանդէս մը, պարտք մը կատարելու, և զուարճութիւն ու մխիթարութիւն գտնալու: Ի՛նչ ծանրագին շէնք է այն շէնքը, այն տունը՝ ուր սներ ու մեծցեր էր, և մանաւանդ այն՝ ուր որ ծներ էր . . . Ո՛հ, աշխարհիս մէջ անկէ ցանկալի անկիւն կրնա՞յ ըլլալ. — Ես առաւել՝ եթէ ճանչցած այլ ըլլայ հոն իրեն ծնողք և հարազատներ. — և ևս առաւել՝ եթէ դեռ յոյս ունենայ զանոնք նորէն տեսնելու. — Հապա թէև դեռ տունը չգտած՝ գտնէ այն հարազատները, այն ծնողքը՝ որ ելեր զինքը դիմաւորելու եկեր են, և իբրև զիրար գրկերնուն վրայ առած՝ կու բերեն իրենց ընտանեկան վառարանին կամ սեղանին եզերքը: . . . . . Հոս միայն ընտանեկան և խնամեկան քաղցրութիւն մը չէ. հայրենեաց զգացումն և սէր այլ կայ հոս, որ գրեթէ ոչ պակաս ըզգալի և ախորժ կ'ըլլար՝ նաև եթէ կենդանի յիշատակաց տեղ՝ միայն անկենդան յիշատակարաններ գտներ. մանաւանդ եթէ անոնց մէջ ըլլայ և այն յիշատակարանը՝ որ միջոց մ'է կենաց և մահու և անմահութեան. — գերեզման մը: — Անշուշտ, եթէ կորսուած կամ պահուած ըլլար, բայց և կարելի ըլլար ստակով գտնելու և գնելու, բարեկիրթ սիրտն 'ի պանդխտութենէ դարձած՝ ստացուածքին կէսն այլ կու տար ստանալու համար սիրելւոյն և ընտանւոյն գերեզմանը . . . . . Կրնա՞ր արդեօք այնպէս անկիրք անկրօնք կարծրակուռ սիրտ մը գտնուիլ՝ որ ըսէ. ինչ կընես, ով երիտասարդ, մինչդեռ բաղդ աշխարհիս իր զարմանալեաց և ակնկալեաց դուռը կու բանայ քեզի, դու այդ բաղդին օժանդակ ստակդ մըդ-

պէս զուր կու վատնես , երկու կանգուն կոշտ հող մը , և քանի մը չոր ու պժգալի ոսկորներ գնելու , որոց վրայ չի կրնար մէկն նայիլ առանց զզուանաց : . . . . . . Աղօթենք , Հայկակ , որ այդպիսի ձայն մը քու և նմանեացդ ականջին երբէք չհասնի : — Եկած անցած մարդկութեան ամենէն խղճալի թողած յիշատակն և նշխարն՝ արդարև իր մարմնոյն մնացորդն է . սակայն և քան զայն անգին , ցանկալի և սրբազան բան չկայ երկրիս վրայ՝ այն մարմնոյն հաղորդակից կամ արենակից ներկայ մարդու մը համար , և որչափ սիրելի են այն նշխարքն՝ այնքան և զանոնք պահող տեղն , հողավայրն , գերեզմանն . ըլլայ հոյակապ մահարձանօք չիրիմ մը , ըլլայ պարզ քար մը , կամ թէ բնաւ անքար տափակ հողն , քանի մը ծաղկով , կամ լոկ կանաչ խոտով պատած , և երկճիւղիկ փայտով սեւ խաչով մը նշանուած : — Ծննդեան տեղն կամ տնիկն , և նախնեաց գերեզմանն՝ մարդու երկու հատիկ կէտերն են , որոց մէկուն վրայ պէտք է կեցընէ կարկինը՝ այն սիրտն՝ որ կ'ուզէ ծրագրել սահման մը իրեն հայրենեացը , եթէ չի գիտեր ուրիշ սահման :

Կեանքերնիս արդարև կարճ ընթացք մ'է երկու իջևանատանց միջոց . առջինն՝ օրոց , երկրորդն հողոց . կամ թէ կրնայ ըսուիլ՝ Ծնարան և Քնարան : Սակայն մարդ միթէ միայն ծնանելու և մեռնելու համար եկած է յաշխարհ : — Ոչ . մարդս խոհուն և գործուն էակ է . թէ և քիչ բան կրնայ ընել և քիչ միջոցի մէջ . մէկ իջևան մը ընթանալու չափ . — բայց այդ միջոցն , այդ ընթացքն , և մանաւանդ այդ գործքն է զհայրենիս բովանդակող : Եթէ գործն չըլլար՝ ոչ ծննդեան և ոչ մահու յիշատակք այնպէս սիրելի և սրտալի կ'ըլլային մարդկան . կամ ըրած



գործքերնուն կամ յուսացուած ընելի գործոյն համար է՝ որ այնպէս սիրելի և ցանկալի են մեզ յիշատակք և գերեզմանք հանգուցելոց : Ուրեմն թէ և հայրենեաց կէտք և կեդրոնք կ'երևին այդ ծնարանքն և քնարանքն , սակայն անոնցմով կ'ենթադրուի գործոց յիշատակն , որ է բարոյական կեանք և մարդու և ազգի , որով և հայրենեաց իսկ : Ուրեմն աւելի կերպով մը հոն են հայրենիք՝ ուր որ մեր արենակիցք և լեզուակիցք գործեր են . եթէ ծննդեան և մահուան՝ դիպուածական և կերպով մ'ակամայ յիշատակարանքն իսկ այնքան սիրելի կ'ըլլան , որքան աւելի քննելի և փնտռելի են կենաց յիշատակարանքն՝ ուր ալ որ գործուած ըլլան . եթէ ի սեփական և եթէ յօտար երկրի : Վասն զի կրնայ ըլլալ որ մէկն քաղքի մը մէջ ծնած և մէկէն փոխադրուած ըլլայ ուրիշ տեղ մը , հոն ապրած և գործած . յետոյ ուրիշ քաղաք մ'երթալով՝ հոն ալ մեռած . այսպէս ալ կրնան գտնուիլ ժողովուրդք՝ որ երկրէ մը ծագեր են , հիմայ ուրիշ երկրի մէջ կու բնակին . բայց իրենց և իրենց նահապետաց միջին սերունդքն ալ շատ երկայն ատեն՝ ուրիշ երկիր մը բնակած ըլլան . այս միջին երկիրս կրնայ աւելի իրաւամբք մ'իրենց հայրենիք ըսուիլ , կամ ինչպէս սովորութիւն է ասանկ առթից մէջ անուանել՝ Երկրորդ հայրենիք : Ստոյգ է որ ուր երկրորդ և երրորդ հայրենիք ըլլան՝ կրնայ սիրտն տարակուսիլ և տարուբերիլ . սակայն և այն ատեն հոն կու հանգչի՝ ուր որ աւելի գործոց յիշատակ գտնէ :

Որչափ փափաքելի , որչափ բարեբաստիկ է անոնց վիճակն՝ որ մէկ աչքով կու տեսնեն իրենց իջևանին երկու հանգոյցներն ալ . ծնարանը և քնարանը , հանդերձ միջոցովն՝ որ կրնար ըսուիլ Գոր-

ծարան ։ Ո՛րչափ բարեբաղդ է․ կըսեմ, այն ազգն՝ որ ՚ի սկզբանէ ՚ի վեր իր համալեզու նախնեաց երկրին մէջն է կեցեր․ անկէց դուրս տեղ չի գտներ իր նահապետաց ծնարանը, և հոն կու տեսնէ անոնց քնարանը․ ինչպէս առանձին մարդ մը որ բնակի այն տունը՝ ուր իր հայրըն ու պապըն այլ բնակեր են, և պատրաստէ իր մարմնոյն վերջին հանգստարանը հոն՝ ուր որ այն հայրերն և պապերն այլ կու հանգչին դարերով․ ուր իրենց վրայ հովանացեալ ծառոյն փոքրիկ տերևուց նման՝ որդիք զորդիս փոխանակելով՝ քանի մը կամ շատ ցեղեր իրարու ետևէ ընկեր մնացեր են ։ Կրնանք նախանձելի սեպել երկրիս վրայ այդպիսի ազգի մը բաղդը, որ կու յայտնէ թէ կամ օտար բռնութիւններէ ազատ է մնացեր, կամ մանաւանդ՝ կրցեր է զինքը պաշտպանել անոնցմէ․ իրեն նախնեաց աւանդը պահեր է անոնց նշխարացը քով․ հայրենեաց զգացումն պէտք է որ շատ զօրաւոր ըլլայ այն ազգին վրայ․ ինչու որ աչքովն այլ կու տեսնէ անոնց յիշատակարանները, կու պտըտի անոնց չափած ասպարիզին մէջ, կու գործէ հոն՝ ուր անոնք գործեցին․— իր կեդրոնն և սահմանքն յայտնի են․ հայրենեաց ամեն տեսակ իմաստքըն այլ ամփոփուած են մէկ գծով ոլորած սահմանի մէջ․ գիծ մը՝ որ եռանկեան մը պէս կու միացընէ իր և իր նախնեաց ծնարանին, քնարանին ու գործարանին կէտերը ։ Կրնայ այնպիսին չգիտնալ իր ազգաբանութիւնը, իր հարց կարգաւ յաջորդութիւնը, բայց գիտէ որ հազար տարիով այլ առաջ իր նախահայրն՝ այն երկրին մէջ բնակեր է․ հոն է եղեր իր բոլոր ազգատոհմին նահապետն կամ ազգապետն այլ․ և ինչպէս հիմայ իր համազգի ընկերներն են՝ որ այդ գետինը կու մշակեն, այսպէս երկար դարերով այլ առաջ՝ նոյն արիւն և նոյն լեզուն ունեցող ընկերակիցքն՝ նոյն հողէն նոյնպէս իրենց սնունդ կու հանեն և ՚ի նոյն հող կու դառնան եղեր․— գիտէ որ այն մեծամեծ ծառերն՝ որոց տակ քանի մը հասակ զիրար յաջորդելով նստեր են, իրեն նախահարց տնկածներն են, որոնք նոյնպէս իրենց նախնեաց հինաւուրց ձեռատնկոց տակ խաղցեր և հանգչեր են․— այն ապառաժ լեռներն՝ իրենց կողերէն ընծայեր են իր քաղքին և աշխարհին ամենէն հին շէնքերուն նիւթն այլ, որոց ճարտարապետական ձեւն և արձանագրութիւնք՝ դեռ իր հիմակուան ոճն ու լեզուն կու յիշեցընեն․— այն հին կամուրջը՝ վայրենի ձորակի մը վրայ ձգուած՝ իր գեղին քանի մը երջանիկ նահապետաց ձգածն է․— այն մեծամեծ և հասարակայ կրօնից շէնքերն՝ իր նախնեաց բարեպաշտութեան և մեծագործութեան յիշատակներն են․— այն բարձր և քանդակազարդ կամարքն և կոթողքն՝ իրեն նախնեաց քաջութեան ցուցակքն են և յորդորքն անոնց նմանելու․— այն դաշտերն՝ ուր երբեմն պատերազմաց դրօշք բարձրացան և երբեմն ընկան իրենց դրօշակրաց և անոնց ետեւէն գացողաց հետ, ուր երբեմն յաղթութեան թմբուկքն բոմբեցին, երբեմն յաղթուելու և ետք քաշուելու սըրտակտուր փողն հնչեց, այն ամենն այլ իր նախնեաց թէ արեամբք և թէ քրտամբք ոռոգուեր են ։ Եթէ խնտայ հոն և եթէ լայ՝ անցեալ յիշատակաց համեմատ, խնտումն այլ՝ լացն այլ՝ ոչ միայն սիրով են, այլ և փառօք․ վասն զի քաջութեամբ կռուիլն և պաշտպանելն աւելի արժանաւոր է՝ քան յաղթող գտնուիլն․ միշտ փառք ու պարծանք է իր երկիրն ու իր ազգը սեփական լեզուաւ և օրինօք պահելն․— ունենալ յատուկ և բնիկ լեզու մը, սահման մը,

քաղաքավարութիւն մը, ծէս մը, և յիշատակարաններ, որոնց համար բարեկամ բարեկամի հետ խօսելով կարենան ըսել Ֆրը. այս կատարեալ հայրենիք է, երկրիս ոՙր կողմն այլ որ ըլլայ, ինչ դիրք այլ որ ունենայ։

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ *Յուշիկք Հայրենեաց Հայոց*

---

## ԿԶ. ՍՈՒԳ

*Զեփիւռք դողդոջունք Բոսփոր՝ ափերէն*
*Բարեկամ, անոյշ երգերդ ինձ բերեն.*
*Ներդաշնակ ձայնէդ առնեմ զիմ կարօտ,*
*Ծագէ սեւ սըրտիս մէջ քո առաւօտ (1).*
*Վէրքերուս վերայ աստղունք կը շարես.*
*Մատներուդ ծայրէն վարդ շուշան պէսպէս*
*Բարդ ու բարդ տեղան, շրթունքէդ ալ գութ,*
*Բայց կայծակն ունիս պահած աչքիդ մութ,*
*Ծաղկունք վեր կանգնին ծըծել քոյին շունչ,*
*Հրեշտակք ալ ուզեն սորվիլ քո մրմունջ։ —*

*Ես ալ երգեցի երբեմն եռանդուն,*
*Զիս ալ գըգուեցին յոյս, ծաղկունք, գարուն*
*Բայց աւա՜ղ հիմա սեւ ամպ, սեւ գիշեր*
*Ծածկեց զառաւօտն իմ ծածկեց զաստղեր։*
*Բնութիւն ինձ համար փոխել է շիրիմ,*
*Պաշտած փառքերուս վերայ արդ շրջիմ,*
*Նըման պանդխտին որ ծառերու տակ*
*Նըստի ու զբօսնու գարնան ժամանակ,*

(1) Այս տողը Պ. Թ. Թերզեանի ուղղեալ է, ՚ի պատասխանի իր գրած « Ա----ր եւ Կ-----» անման քերթուածին։



*Բայց աշնան՝ կոխէ արհամարհելով*
*Տերեւքն՝ որ գլխոյն առնէին շուք զով։*

*Երգք հրճուանք անցնին, լոկ մընան վըշտեր,*
*Արև խնդրելով՝ շօշափեմ ըստուեր,*
*Սէր նըշմարելով՝ սիրտ իմ առնու թունդ,*
*Ձեռքըս կարկառեմ, բայց գտնամ անդունդ,*
*Օտար հողու մէջ, սիրտըս կտրած սառ*
*Երթամ լեռնէ լեռ, անտառէ անտառ,*
*Կախուած վըհերուն եզերքէն անվախ*
*Խորերը կուզեմ ընկղմիլ ուրախ.*
*Մթին մէջ միայն վառի սիրտ հոգիս*
*Միայն սուգի մէջ քեզ խնդայ հոգիս։ —*

*Բայց դու անուշակ ձայն ձգած երգես,*
*Հառաչես զուարթ պըլպըլուկին պէս.*
*Դու եկար դարձեալ թըռթըռացընել*
*Մաշած քընարիս եղերական թել.*
*Կայծ մ՚ահա ցայտէ սըրտիս խորերէն,*
*Քաղէ շըրթներէս այս հառաչն հրեղէն։*

*Մի՛ լար, բարեկամ, այն կուսանքն անմեղ*
*Որ կամ ի հրեշտակ փոխին կամ յաստեղ*
*Որ զինչ հունտք ծաղկանց թափին երկրիս ծոց,*
*Եւ անտի բուսնին նոր զարդեր ծառոց.*
*Անոնց տայ Աստուած գեղեցիկ պարգև*
*Որք երկրէս անցնին անվիշտ և թեթև*
*Երեկոյեան դէմ շուշաններ համեստ*
*Մերկանան իրենց ըսպիտակ ըզգեստ.*
*Իսկ կաղնիք աճին տարիներ հազար,*
*Մրրիկներու հետ կռուելու համար։*

*Լա՛ց զանոնք որ կեան, կըրեն վիշտ վըտանգ,*
*Որոց սիրտք մեռած, փոխան ցուրտ դամբանք,*

*Եւ շրթանց վերայ սառած է ծիծաղ*
*Ա՛հ, լռ՛ց, բարեկամ, լռ՛ց զանոնք, աւա՜ղ:*

Մ. ԱՃԷՄԵԱՆ *Ժպիտ եւ արտասուք*

---

## 42. ԻՆՔՆԱՇԽԱՏ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

Աշխարհիս վերայ ո և իցէ մի ազգ և ժողովուրդ, իւր կեանք պահող, տնտեսող ու բարւոքող քրտնաջան մշակն է. իւր արտ վարող մաճակալն է. իւր սերմ ցանող ու հնձող ինքնավարձ աշխատաւորն է. իւր դրախտն ու դարաստան տնկագործող պարտիզպանն է. իւր տուն շինող ճարտարապետն է. իւր ընտանեկան կեանքին պէտքեր հոգացող հայր ու տնտեսն է. իւր հաց ու սեղան պատրաստող մատակարար ձեռքն է. իւր արուեստ հնարող հանճարին աղբիւրն է. իւր գործարանին մեքենաները դարձընող մղիչ ոգին է. իւր անձին մերկութիւնը պատսպարող կտաւագործն է. իւր ամէն շահավաճառութեան վաճառականն և խանութպանն է. իւր դըպրոցներ շինող ու կարգադրող իւր ընկերական հանգանակութիւնն է. իւր մանուկներ կրթող դաստիարակն է. իւր ներկային մէջ գործող ձեռք և ապագային մէջ նախատեսող աչքն է: Վերջապէս ժողովուրդին ինքնաշխատութիւն ամենայն ինչ է. այս աշխարհիս վերայ իւր առանձին յառաջադիմութեան համար:

Պէտք է խելամտի ու ճանչնայ ժողովուրդ թէ իւր կեանքն արդիւնաւորող մի միայն իւր ինքնաշխատութեան ձեռքն է՝, և գիտես, որչափ զօրաւոր և որչափ շահաբեր է:

Մի ազգ և ժողովուրդ եթէ իւր կեանք, բախտ և ազատութիւն ուրիշէ կ'ակնկալէ, այդ շատ բնական ու յայտնի է թէ իբրև երազայոյս պահ մի գիշերուան ծանր քունին մէջ կը խայտայ, և առաւօտ ոչինչ կը գտնէ:



Ժողովուրդ երբ արտաքին հզօր և կարող ձեռքերէն օգնութիւն կ'ակնկալէ, ընդունայն է իւր յոյս: Ժողովուրդ մի երբ ինքնաշխատութենէն դադրելով կսպասէ որ տիրող իշխանութիւն գործէ, կամ երկրին կառավարութեան ձեռօք պատրաստէ իւր հացը, նորա յոյսն եւս ընդունայն է: Վասն զի երկրին իշխանական կառավարութիւն՝ ոչ երկրագործին արտ քաղող մշակն է, ոչ երկաթագործին կռնահարն, և ոչ վաճառականին խանութպան. զի այդ գործերը՝ ժողովուրդի ինքնաշխատութեան բաժինն է, ժողովուրդին անժխտելի ու բնական պարտիքն է, որ իւր հացն ինքնին հոգայ, իւր արտն ինքն քաղէ. ապա թէ ոչ՝ արտն առանց քաղելու կը մընայ, կը կծղի ու կը թօթափին ցորենահատներ, եթէ նա դրացւոյն կամ բարեկամին սպասէ: Այս ճըշմարտութիւն իմ կեանքիս մէջ փորձիւ ճանչցած եմ. դու որ դեռ անփորձ ես, ուշ դիր, ես մի հնոց առակով պատմեմ քեզ:

Արտուտ թռչունն, որ թերևս արտ ուտելէն առեր է այս յարմար անունն, իւր բոյն հասկաւոր արտի մի մէջ դնելով ձագեր հաներ է. Նախատես ձագամայրն միշտ կ'ապսպրէ իւր ձագերուն, որ միտ դնեն արտին տիրոջ թէ ինչ կը խօսի. երբ նա իւր տղուն հետ կուգայ տեսնել թէ արտին հնձելու ժամանակը հասեր է: Առաջին անգամ կը լսեն ձագեր և կը պատմեն իրենց մօրն, թէ հայր իւր տղուն կասէր. Որդեակ, արտը հասնելու մօտ է. գնա խօսիր մեր դրացիներուն թող մեզի յօգն գան, արտն ի միասին քաղեմք: Արտուտն կը պատասխանէ. դեռ

անհոգ կեցէք, քանի որ արտին տէր՝ դրացիներուն օգնութեան կսպասէ, այս արտը չի քաղուիր։ Երկրորդ անգամ մտիկ տալով ձագերն՝ այս կը պատմեն, թէ դեղացին իւր տղուն կասէր. դրացիներ չեկան, գնէ բարեկամներ հրաւիրէ։ Խելացի արտուտն դարձեալ նոյն կը կրկնէ. հանգիստ եղիք, ձագերս, երբ գործը բարեկամներուն մնացեր է, յաւիտեան չի քաղուիր արտը։

Երրորդ անգամ կը պատմեն ձագերն, թէ արտին տէր՝ վա՜չ վա՜չ անելով իւր տղուն կասէր. որդեակ իմ, առ դու քո մանգաղ, և ես, մեք մեր արտը քաղենք, այլ եւս դրացեաց, բարեկամաց սպասել ընդունայն է։ Ուշադիր ձագերն երբ այս վերջին խօսք կը պատմեն իրենց մօրը, մայր կը պատասխանէ։ Այժմ ստոյգ կը հաւատամ, թէ արտը պիտի քաղուի. պէտք է զձեզ տեղափոխեմ։

Այս կրթիչ առակի օրինակէն արդեօք պիտի հասկնա՞յ ու խելաբերի՞ իւրաքանչիւր առանձին մարդ և ժողովուրդ, թէ աշխարհիս դրացիներ ու բարեկամներ, նոքա եւս իրենց արտեր ունին քաղելու. թէ երկրին կառավարութիւն մանգաղ կամ գերանդի չունի. միայն սուր ունի, թնդանօթ ունի, որ պատերազմի դաշտին մէջ մարդիկներ խոտի պէս հնձէ։ Ժողովուրդ թո՛ղ գոհ լինի հազար անգամ, եթէ կառավարութիւն իւր սեպհական պարտիքներ կատարէ, հնձող մշակներու բողոքներ լսէ, զրկեալ ժողովրդի թղթեր կարդայ, դատերն արդարութեամբ տեսնայ.......։

Եթէ այս այսպէս է, նախանձելով Եւրոպական ազգերուն գեղեցիկ օրինակին՝ գիւտեր և արուեստներ հանճարել կուզէ, թո՛ղ նախ դպրոց երթայ, գիտութիւն սովրի, ինքնաշխատութեան մէջ մտնի,



ինչպէս նոքա։ Բայց թէ քաջ քաջ, արագ արագ յառաջադիմել կուզէ դէպի լուսաւոր կեանք, թող ելնէ իւր ոտքով քալէ, իւր ձեռքով գործէ և ինքնաշխատութեան կառքին լծուելով՝ իւր բազկով և՛ ուժով քալէ դէպ ի նպատակն։

Իսկ եթէ կասէ, ոտքեր բոպիկ են, փշահար եղեր են տաժանելի երկրի մը վրայ, ծանրացող երկաթներէն ծունկեր ջախջախուեր են, ես ի մօրէ թէպէտ կայտառ կը ծնիմ, այլ բազուկներուս ուժը ջլատուել են, սարկացած գլուխս միշտ կռփահարուելով ուղեղս ազատ չէ, հանճար և զօրութիւն իւր մէջ մեռեր են։ Այսպէս ոտքէս մինչև ցգլուխս դըրեթէ ես մի անշարժ դիակ դարձեր եմ, հոգիս միայն կը շնչէ և գործող զգայարանքներս յիս սպառած են, ես ինչպէս ինքնաշարժ ինքնաշխատ լինիմ և յառաջ երթամ։

Դորա պէտքն ու դարման և ճարակն ինչ է, գիտես. դպրոցն է, դպրոց, և անյուսահատ ինքնաշխատութիւն. ուրիշ ոչինչ։

Ես կը տեսնեմ զքեզ, այդ քո վիճակիդ նկարագիրը՝ շատ ճշգրիտ է։ Բայդ դու պէտք է անվկանդ մնաս ոգւոյդ մէջ, առանց երբէք լքանելոյ շարունակես ինքնաշխատութիւնդ, գիտնալով որ յառաջդիմութեան ուղին՝ ինքնանուէր շահատակութեամբ կը բացվի։ Ես գիտեմ, որ խոչեր և խութեր կան ճանբուդ վերայ, մի սպասեր որ ամբողջ բարձուին դոքա և դիւրանան քայլերդ։

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

*Միրաք Ն. Սամուէլ*

---

## 43. ԱԶԳԻՆ ՎԻՃԱԿԸ

Ազգութեան հաստատարանը և լծակը է հասարակ ժողովուրդը։ Մի ազգ, թող որքան կամի, հարուստ լինի երեւելի մարդերով, այնու ամենայնիւ այդ ազգի ազգութեան մեքենան շարժվում է հասարակ ժողովրդի վերայ. սա է այդ մեքենայի առանցքը · լծակը և հաստատարանը։

Ազգի մէջ երեւեցած մեծատուններ, իշխանաւորների բարօրութիւնքը չեն կարող տալ ազգային երջանկութիւն, եթէ մասնակից չէ դորան հասարակ ժողովուրդը։ Հասարակ ժողովրդի երջանկութիւնը պիտի երեւի նորա ընտանեկան և տնտեսական ապահովութեան մէջ, նորա խղճմտանքի և բանականութեան ազատութեան մէջ։ Մասնաւոր մարդիկ, շատ անգամ, ոչ թէ միայն չեն կորուսել իւրեանց բարօրութիւնը, երբ նոցա ազգը ենթարկվել է մի թշուառ յեղափոխութեան, այլ մանաւանդ օգուտ են քաղել դորանից և առաւել ապահովել են իւրեանց բարեկենդանութիւնը։

Երբ և իցէ խօսելով ազգի վերայ, միշտ մեր ազգի առաջև ունինք Հայոց հասարակ ժողովուրդը, և ազգ ասելով չենք իմանում այն մի քանի մարդիկը, որ արծաթի սանդուղով վեր էին բարձրացել ազգի մակերեւութից, այլ այն խեղճ և կարեկցութեան արժանի ժողովուրդը, որի վերայ ծանրացել է ազգային ապաբաղդութեան հետեւանքը։ Անմխիթար տխրութիւն է ձգել միշտ իմ սրտի վերայ մտածութիւնը, թէ աշխարհի երեսին գտնված ամենայն ազգի մէջ հասարակ ժողովուրդը ենթարկվում է աւե-



լի ծանր զրկողութիւնների և տառապանքի, մինչ խորտակուած էր նորա ազգութեան մեքենան, քան թէ մասնաւոր մարդիկ, այս, մեծատունք և մատնիչք · սորա հակառակ, ամենափոքր երջանկութիւնը վայելում է հասարակ ժողովուրդը, մինչև անգամ, երբ ներգործում էր ազգութեան մեքենան, քան թէ մասնաւոր մարդիկ, որ դուրս գալով հասարակաց շրջանից, բարձրացել էին սորա հորիզոնից։

Այս բանի պատճառները քննել և բերել յիշատակարանիս մէջ, չունինք համարձակութիւն։ Հարկադրվում ենք այսքան միայն ասել, որ հին բարոյական աշխարհի և հին խելքերի դրութիւնքը չէին կարող այլ հետեւանք դուրս դնել։

Ազգային շինութիւնը, բնական կերպով, պիտի յառաջանայ ցածից–հիմքից · այդ հիմքը է հասարակ ժողովուրդը։ Այն մարդը, որ սիրում է ազգը, որ նուիրում է իւր անձը ազգի բարոյական սպասաւորութեան, պարտական է ծառայել ոչ ազգի կուռքերին, այլ, հասարակ ժողովրդի օգտին։ Հասարակ ժողովրդից կազմվում է ազգութեան մեքենան · լուսաւոր մարդիկ կարող են, և պարտական են միայն ուղղութիւն, զարկ և ընթացք տալ այդ մեքենային։

Մեր ազգութեան մեքենան ջարդված է։

Անմտութիւն էր, եթէ մտածէինք զարկ տալ մեքենային, մինչ նա խորտակված, և նորա գործարանքը ցիր ու ցան և ժանգոտած, չունէր այն ամբողջութիւնը և կազմութիւնը, որ կարողանար շարժվիլ և գործ կատարել։ Ազգութեան մեքենայի հասարակ ժողովրդի վերանորոգութիւնը հնարաւոր է միայն, գիտակցութիւն տնկելով նորա մէջ։

Իսկ գիտակցութիւնը բղխում է լուսաւորութենից ։

Լուսաւորութիւն. ահա մի մեծ և հոյակապ խնդիր, որ ազգի կարողքը և ուսումնականքը պարտական են լուծանել. չկայ աշխարհի երեսին մի այնպիսի բան, որ աւելի հարկաւոր լինէր խաւարից. սա մի զարհուրելի վարագոյր է, որի տակ իրաւունք ունին մարդիկ և մահ ենթադրել ։ Ազգը լուսաւորելու գաղափարը այն ժամանակ միայն կարող է իրագործվիլ, երբ հիմնած ու պահպանված էին բուն ազգային դպրոցներ, որոնց մէջ պիտի լսվէր Հայկական խօսքը, ուր Հայոց բառերով պիտի ներս մտանէին ազգի զաւակների մէջ զանազան լուսաւոր գաղափարք ։ Ազգային չենք ճանաչում այն դպրոցը, ուր հրամայվում է խօսել Ռուսերէն, Ֆրանսերէն, **կամ երբեմն Հայերէն** ....... ։

Դպրոցի ազգայնութիւնը կախված չէ աշակերտների և վարժապետների լոկ հայութենից. լեզուն է, որ մի միայն կարող է այդ վերնագիրը դնել դպրոցի ճակատին. Անհիմն և ամենայն ընդունելութեան անարժան պատճառ է, թէ օտար լեզուներ խօսեցնելով ազգի զաւակներին, պիտի վարժեցնէին նորանց այդ լեզուների մէջ. առաջին հարկաւոր բանը չէ, որ ազգի զաւակը ուսանի օտար լեզուներ. դորա հակառակ, պարտական է նա քաջանալ իւր լեզուի մէջ ։ Հայերը դեռ խօսել չգիտեն, թող ուրեմն Հայ մանուկը, նախ և յառաջ որպէս Հայի զաւակ, ուսանի իւր սեփհական լեզուն և ապա օտարինը ։

Ազգութիւնը յառաջ է, քան թէ ընդհանուր մարդկութիւնը, և ամենայն մարդ իւր ազգութեամբ մտանում է ընդհանուր մարդկութեան մէջ ։ Սուտ է այն լուսաւորութիւնը, որ պիտի լինի օտարի լեզու-



ով. սորա վկայող դառն փորձեր շատ անգամ կատարել է մարդկութիւնը ։ Ազգի հոգին և ազգի սիրտը կարող են իւրեանց յատկութիւնը և որակութիւնը մաքուր պահել մի միայն կերպարանագործվելով ազգային լեզուի ազդեցութեան տակ. այս ճշմարտութիւնս ուրացողը, ուրացող է ազգութեան ։

Դպրոցի օգուտը պիտի հետեւի նորա ուղղութենից, առանց խղճի և մտքի ազատութեան չկայ լուսաւորութիւն ։

Ազգի դպրոցը է այն գործարանը, այն արգանդը, որ յղանում է ազգի գալոց սերունդը. ինչպէս բնական աշխարհի մէջ ծնածը պահում է իւր ծնողի տիպը և բնական որակութիւնքը, այնպէս և աշակերտը կրում է իւր վերայ դպրոցի դրոշմը ։ Կառավարիչքը կամ դաստիարակքը դպրոցների, որ, չը պահպանելով ազգի օգուտը, չարաչար էին գործ դնում իւրեանց պաշտօնատարութիւնը, յանցաւոր են լինում ազգի առաջև, և այս յանցանքի գաղափարը մի միայն կարող է բացատրել այս զարհուրելի բառը **ազգադաւութիւն** ։ Եթէ դպրոցի խորհուրդը և նպատակը համաձայն չէ ազգի էական օգուտներին, եթէ նա մի մեքենայ է, Հայի զաւակի մէջ օտարութիւն պատուաստելու, լաւ է մանուկներին տգէտ Հայ մնալ, քան թէ դառնալ թերակիրթ չհայ ։

Բայց մեր ազգի դրութիւնը այնպէս է, որ նա չէ կարող իւր ներկայ աւերանքի մէջ պատրաստել այնպիսի դպրոցք, որ կարող էին տիեզերական կրթութիւն տալ ազգի զաւակներին, սոքա հարկ և հարկ պիտի դիմեն օտարի դպրոցը և այն տեղ ուսանին ։ Այո, այս իրողութիւն է, բայց ազգային դպրոցները պարտական են բանալ մանուկների միտքը, պինդ տնկել նոցա մէջ ազգութեան սերմը,

վառել նոցա սրտում հայութեան կրակը. մի խօսքով կատարել այն ընտանեկան պարտականութիւնը, որ ծնողք պիտի կատարեն իրենց ազգի օգտի համար, և որ մնացած է երեսի վերայ ընտանեկան դաստիարակութիւն չլինելուց մեր մէջ:

Ընտանեկան կամ մայրենի դաստիարակութեան մէջ է ազգի ապագայի սերմը. բայց մեր ազգի մայրերը տալիս են ազգին կեղեւով միայն Հայ զաւակներ:

Հայ կանայք, ձեր պէս չէին ձեր մայրերը, նոցա սիրտը զարկումէր ազգութեան համար. ազգին հասած հարուածներին, քաջութեամբ մասնակից եղան նոքա, իրենց ամուսինների հետ միասին: Նոքա չուրացան ազգի օգուտները, նոքա այրութիւն ցոյց տուեցին իրենց կանացի կերպարանքի տակ և երբէք չկամեցան, որ նայէի նոցա վերայ, որպէս մի խաղալիկի, կամ, որպէս մի հագնուած զուգնուած պաճուճապատանքի վերայ: Հինգերորդ դարում, երբ Հայոց ընտիր որդիքը զոհ գնացին պարսկական վիշապին, նոցա մայրերը, կանայքը, քոյրերը և դստերքը պակաս չերեւեցան այն քաջերից, որ ազգի պաշտպանութեան համար քաջութեամբ ընկան պատերազմի դաշտում: Նոքա մոռացան իրենց կանացի տկարութիւնը, իրենց փափկասուն կեանքը, դուրս եկան իրենց փառահեղ բնակարաններից և պարզ երկնքի տակ, գետնի վերայ տարածվելով չարչարակից գտանվեցան առաքինի զինւորներին: Ինքեանք հոգացին իրենց պիտոյքը և աղախիններից չպաշտուեցան. մարդ չկար նոցա ձեռքին ջուր ածող կամ այն պարզ կերակուրը եփող, որով ապրումէին: Իրենց ձեռքի արուեստով կերակրուեցան նոքա և տէրութենից նշանակված ռո-



ճիկը ամբողջ հասուցին իրենց կորիչ տղամարդերին: Փոշոտվեցան և ծխոտվեցան սենեակները և առագաստները նորահարսերի, և սարդի ոստայն պատեց նոցա նախկին շքեղութեան վերայ: Շատ ձմեռներ անցան, շատ գարուններ եկան, նոցա հետ միասին և գարնան ծիծեռնակներ, բայց նոցա տղամարդիկը յետ չդարձան. նոքա իրենց այրիութիւնը նախատինք չհամարեցին ինքեանց, այլ մանաւանդ պարծանք, առաքինի ժուժկալութեամբ հարսնանալով երկնաւոր անմահ փեսային: Այսպէս էին մեր հին մայրերը և քոյրերը, այսպէս էին մեր կանայքը, բայց ինչ մնաց այն օրից.....:

Հայ կանայք, ձեր հետ է այսօր իմ խօսքը. ազգի վերանորոգութիւնը և փրկութիւնը լոկ երազ է, եթէ փտած է, եթէ փտած էր այդ ազգի ընտանեկան կեանքը: Տէրութիւնը բաղկանումէ ընտանիքներից և նոցա որակութիւնը, ոչ թէ միայն, ցոլանումէ կառավարութեան վերայ, այլ մեծապէս պատճառ է նորա ապահովութեան կամ կործանութեան:

Մեր ընտանեկան կեանքը նման է մի կեանքի, որ մի միայն կարելի էր անցուցանել պանդոկներում: Մեր ընտանիքների մէջ լսված խօսքերը են կերակրի, հանդերձի, դրօսանքի և այլ զուարճութիւնների խօսքեր, և շատ անգամ այս տղայական բաները հերիք պատճառ են լինում ընտանիքների կարծեցեալ երջանկութիւնը եւս խանգարելու: Ո՞ր է այն ընտանիքը, կամ աւելի լաւ, այն մայրը, որ մօր պէս խօսումէր իւր զաւակների հետ. մեք չտեսանք դեռ եւս, և չտեսնելու պատճառը այն է, որ մեր կանայք կորուսել են իրենց խորհուրդը: Մայրը պիտի ուսուցանէ իւր զաւակներին ազգային լեզուն, մայրը պիտի անկէ տղայական սրտերի մէջ

ազգութեան սերմը այնպիսի խնամով և հոգաբարձութեամբ, որ հիւսիսի ցրտաբեր մրրիկը կամ հարաւի այրող տօթը չկարողանային չորացնել նորանից ծլելու բոյսը: Զաւակների մայրը է գերդաստանի մայր, իսկ գերդաստանների մայրերը ազգի մայրն են: Բայց ինչպէս են մեր ազգի մայրերը ներկայումս, արդեօք իւրեանց կեանքի մէջ մի օր, մի ժամ, մի վայրկեան մտածումեն իւրեանց զաւակների մասին բարոյապէս, մեք պատասխանումենք, ո՛չ:

Նոքա դեռ նոր աշխարհ բերած մանուկը, ըստ մեծի մասին, յանձնումեն օտարազգի դայեակների, Հայի զաւակը աճումէ օտարի կաթով, օտարի լեզուն և հոգին ներս է մտանում նորա մէջ այն կաթի հետ, որ սուրբ չէ մեզ: Հայ տիկինը ամօթ է համարում ինքեան ծիծ տալ իւր զաւակին. ինչպէս կարելի է, որ նա երեխայի պատճառով յետ մնայ խրախճաններից, պարահանդէսներից և դիմակահանդէսներից. թող երեխայն աճէ ուրիշի հոգաբարձութեամբ, եթէ Հայ չլինի, գոնէ մարդ կը լինի, եթէ Հայի կրօնը չիմանայ, գոնէ ուրիշինը կ'իմանայ: Մեր շրթունքը այրվումեն այս խօսքերը կրկնելու ժամանակ, և զայրացած ամօթապարտվումենք մեր խղճմտանքի առաջև, մտածելով, թէ մինչև ո՛ր աստիճան աւերանքի և բարոյական զեղխութեան ընդունակ են դարձել մեր կանայքը:

Աւելորդ էր մի խօսք եւս ասել մայրաքաղաքներում գտնված Հայ կանանց մասին. նոքա վաղ ուրեմն կորած են մեր համար, կորած են և նոցա զաւակները: Նոցա հայութիւնը գուցէ երեւումէ նորանից, որ տարին մի քանի անգամ գնումեն Հայոց եկեղեցի և մինչև անգամ խոստովանութիւնը եւս կատարումեն օտարի լեզուով: Մեք վերջացրել ենք մեր



հաշիւը նոցա հետ. թողնումենք, որ նոքա լողան իւրեանց քրինոլինների մէջ, մոլորութեան մի վէմից, միւս ապառաժին զարկվելով, այլ իրաւունք չենք համարում երես թեքել բոլոր Հայոց ազգի կին մարդերից, որոնցից դեռ եւս յոյս ունինք, և սոցա վերայ սաստիկ զարկումէ մեր սիրտը:

Հայ կանա՛յք, անցաւ այն ժամանակները, երբ մարդիկ նայումէին կանանց վերայ, որպէս ստրուկների վերայ: Անցան այն ժամանակները, երբ կանայք համարվումէին որպէս մի ապրանք, ինչ, կահ, կարասիք, գնելու կամ վաճառելու բան. անցան և յետ գալու չեն միւսանգամ այն ժամանակները, երբ օրէնք տուողները նայումէին կանանց վերայ, որպէս մի ծննդարար գործարանի վերայ, որ զինուոր էր պատրաստում հայրենիքի համար: Անցան այն ժամանակները, երբ կանայք համարվումէին երբեմըն սատանայ և երբեմն հրեշտակ. այժմ, այս մարդասէր դարում, լուսաւորեալ աշխարհը նայումէ կանանց վերայ, որպէս մարդու վերայ: Նա ճանաչել է այժմ այն մեծ և խորախորհուրդ պաշտօնը, որ վիճակել էր Աստուած կանանց ազգին լցուցանելու:

Հայ կանա՛յք, դուք որչափ եւս նոր ժամանակների ծնունդ, այնու ամենայնիւ դուստր կամ թոռներ էք այն մեծահոգի և խնկելի քաջ արմենուհիների, որոնց մասին մի փոքր վերեւում խօսեցինք. մեծ և անմերժելի պարտականութիւն կայ ձեր վերայ նմանել նոցա և հասկանալ ձեր խորհուրդը: Դուք ստեղծուած չէք, որ մի միայն հագվիք, ուտէք, խմէք և քնէք, այլ պարտական էք մայրութիւն առնել և ձեր Հայութիւնը երեւեցնել ձեր զաւակների մէջ. մեք անմահ ենք մեր զաւակներով, ինչպէս մեր նախնիքը կենդանի են մեզանով: Ցի-

չեցէք ձեր ազգութիւնը, ձեր զաւակների գալոց օրերը, յիշեցէք ձեր հին մայրերի քաջածները և աշխատեցէք Հայեր տալ մեզ, ինչպէս ձեր նախնի մայրերը աշխատումէին: Ձեր ցանկութենից և աշխատութենից կախվումէ ծաղկեցնել և փառաւորել այն, որ հազարների արիւնով և բիւրերի արտասուքով պահվել է մինչև այժմ. նոյնպէս ձեր ծուլութենից, անհոգութենից և չհայութենից է կախվում, որ ունայնանան մեր հօրերի և մօրերի քաջածները և մեր բոլորեքեան անյայտանանք, որպէս մի կաթիլ ջուր ահագին ծովի մէջ:

Հայ կանայք, մեր ազգը աւերուել է այժմ, նորան պիտոյ է վերանորոգել. նա թմրել է մի խոր քնով, նորան պիտոյ է զարթեցնել. բայց այս երկու դիպուածում եւս ամենայն ջանք և աշխատութիւնք զուր կ'երթան, եթէ դուք չմերկանաք ձեր վերայից անհոգութեան դատապարտելի քօղը, եթէ դուք չհագնէք հայութիւնը, ոչ որպէս քրինոլին, այլ որպէս գոյն ձեր մարմնի, որ ոչինչ բան չէր կարող քերել հանել ձեր վերայից:

Ամենայն ուսումն և գիտութիւն, դպրոցներում աւանդված, ուշացած են և դժուարաւ կը ներգործեն ձեր զաւակների վերայ, եթէ նոքա ստացած չէին ձեզանից մի ընդունական դաստիարակութիւն:

Ձենք պահանջում ձեզանից այն ընտանեկան դաստիարակութիւնը, որ պահանջելի էր եւրոպացի կանանցից. առ ժամս, մինչև մեր ազգի նոր մայրերը, հերիք է մեզ և շատ շնորհակալ կը լինինք, եթէ դուք ձեր հայկական խատակ կաթի հետ տաք ձեր զաւակներին նախ, մեր լեզուն, երկրորդ հոգով և սրտով հայութիւն, և երրորդ անձնազոհ սէր դէպ ի ազգութիւնը, դէպ ի մեր աղատ կրօնը:



Աշխարհը յառաջ է գնում, վերստին ծաղկումեն թառամած ազգութիւնք, և մեզ արժան է անհոգ չլինել այն պարծանքի մասին, որ սահմանված է Հայութեանը, մարդկութեան մէջ: Հայերը պարտական են լուսաւորվիլ և գործիք լինել Նախախնամութեան ձեռքում, ասիական ազգերի մէջ լուսաւորութիւն տարածելու:

Հայ կանայք, մինչև այժմ, ձեր աղջիկների մասին ձեր հոգաբարձութիւնը այն է եղել միայն, որ պահէք, մեծացնէք, պայծառ և փառաւոր զգեստներով զարդարէք և կօրսետի ու քրինոլինի հարուստ պաշարներով, օր յառաջ ամուսնացնէք նորանց որքան կարելի է մի հարուստ մարդու հետ: Շատ այն է եղել, որ ուշադրութիւն դարձուցած չէք փեսայացուի հասակի, բարոյականութեան, խելքի և բանականութեան վերայ, թողունք, որ շատ անգամ ձեր աղջիկը ոչ թէ միայն չէ սիրել իւր փեսայացուն, այլ և տեսանել չէ կամեցել այն հարուստ, բայց անհաւանելի փեսայացուի երեսը: Այս չէր ձեր մայրենի պարտականութիւնը. դուք ձեր աղջիկներից պիտի նոր մայրեր պատրաստէք գալոց սերունդի համար. դուք, ձեր աղջիկների մէջ պարտական էք տնկել և սնուցանել ազգութեան տունկը և ծնողական սուրբ իրաւունքներով պարտք դնել նոցա վերայ, նոյնը, աւելի աճեցուցած տալ իւրեանց զաւակներին: Տղաների մասին եւս աւելի լաւ չէ եղել ձեր հոգաբարձութիւնը. նոքա ազգի և ազգութեան անունը անգամ չլսած ձեզանից, դուրս են եկել նիւթականութեան ծառայելու: Դուք պարտական էք նոր հայրեր պատրաստել նոցանից և ազգութիւնը, լեզուն և կրօնը յանձնել նոցա, որպէս մի սրբազան և անկողոպտելի աւանդ, կտակելով, որ

տասնապատիկ շահեցուցած յետ տան այդ նուիրական աւանդը իւրեանց զաւակներին :

Հայ կանայք, մեր ազգը մինչև այժմ ապրել է ողորմելի խեղճութեան մէջ. նա մոխիր է կերել հացի տեղ և նորա խմելիքը խառնված է եղած արտասուքով: Բռնակալութեան մուրճերը, այնպէս սաստիկ ջարդել են մեր ազգը, որ մինչև այսօր չէ կարողանում զգաստանալ իւր ուշաթափ վիճակից, քննել իւր անձը, քննել իւր անցածը, իւր ներկան և հոգալ ապագայի մասին: Այս է գլխաւոր պատճառը, որ ամենայն թշուառ վիճակ տանելի է եղել մեր խեղճ և քարուքանդ ազգին. նա, երկար ժամանակ սովորելով այդպիսի դառն բաժակների, մոռացել է աւելի լաւը որոնելու գաղափարը: Ներկայումս, աշխարհի լուսաւորութիւնը, օրէ օր թուլացնումէ բարբուկ ազգերի կերած ծեծերի սաստկութիւնը, այս դարու մարդասէր հոգին դարմանումէ նոցա վէրքերը և բռնելով ցանկացողի ձեռքից հանումէ ցեխից և ապականութենից դէպ ի վեր, դէպ ի մի երջանիկ կեանք :

Մեր ազգը վաղուց մոռացել է ցանկանալ. այո, նա ունեցել է և ունի այս զգացողութիւնը, բայց մի միայն արծաթի և ոսկու վերաբերութեամբ. դորա հակառակ մի բարոյական պարծանքի գաղափար, մի ընդհանուր ազգային շինութեան գաղափար նորա մտքով ևս չէ անցել: Մեզ մնումէ ցանկանալ այդ աստուածատուր գաղափարին. իսկ թէ չյաջողի մեզ իրագործել, այն ժամանակ մեզ յաջորդք պատրաստել և ուխտելով նզովել աւանդել, որ նոքա աշխատին իրագործել այն, անզրդուելի հոգով և ցանկութեամբ, ինչպէս երբեմն Մովսէս ցանկանումէր հանել Աստուծոյ ժողովուրդը աւետեաց երկիրը :



Հայ կանայք, դուք, ինչպէս և բոլոր արարածք, մահկանացու էք. ձեզ յիշատակ չեն, ձեզ փառք չեն ձեր փայլուն գոհարները կամ ուռած քրինօլինները. ձեր պարծանքը և յիշատակը են ձեր զաւակները: Նոցա ձեռքով և նոցա արժանաւորութեամբ պիտի փառաւորվին և անմահանան ձեր անունները. սորա հակառակ, նոցա անարժանութեամբ պիտի մեռանին և ոչնչանան :

Երանի թէ լսելի լինէր ձեզ իմ ձայնը, երանի թէ մի քանի զոհ փրկէին իմ այս արտասուախառն խօսքերը. որքան պիտի մխիթարվէի ես. յոյսիս արեւը մի գրկաչափ աւելի պիտի բարձրանար ազգային փրկութեան հորիզոնի վերայ :

Բայց ներկայումս, կրկնումենք, մինչդեռ չկայ դեռ ևս մէջ տեղում ընտանեկան կամ մայրենի դաստիարակութիւն, այս պատճառով, ազգային դպրոցք պարտական են կատարել այս պաշտօնը քնքուշ խընամով:

Մեր ազգին հարկաւոր է ընդհանուր լուսաւորութիւն, որպէս զի ազգը գիտակցութիւն ստանայ. այս կամ այն մասնաւոր գիտութիւնք չունին այն խորհուրդը, ինչպէս մտածումեն ոմանք: Հայոց ազգը շատ տեղ գրել կարդալ չգիտէ, շատ տեղ կորած է մինչև անգամ և լեզուն. այս պատճառների հիման վերայ, առաջին փոյթը պիտի լինի, նախ և յառաջ կենդանացնել մայրենի լեզուն, ազգի զաւակների սրտի, հոգու և բերանի մէջ, անհետացնել մեր միջից թուրքերէնը, մոլդովաներէնը, վրացերէնը, կամ ուրիշները, որ բռնել են ազգային լեզուի տեղը: Հայաստանի բոլոր գիւղերում և քաղաքներում հաստատել պարզ դպրոցներ, որոնց պաշտօնը էր լեզու

և գիր ուսուցանել ազգի զաւակներին։ Այնպիսի գեղերում, ուր ժողովրդի չքաւորութիւնը արգելառիթ է այս գաղափարի իրագործութեանը . . . . .
. . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Անգլիայի պէս հզօր և լուսաւոր տէրութեան մէջ. գիւղական քահանան զրկվումէ իւր ծուխից, եթէ յանկարծ մի տղայ կամ աղջիկ երևէր նորա ժողովրդի մէջ, որ գրել կարդալ չգիտէր։ Քահանան ունի իւր ծուխի ցուցակը, նա գիտէ, թէ ո՛ր գերդաստանի մէջ քանի զաւակ կայ, և եթէ ծնողք չկամենան իւր ժամանակին ուղարկել իւրեանց զաւակը քահանային, սա իրաւունք ունի դատաւորի ձեռքով պահանջել։

Անտարակոյս, միմիայն Հայոց լեզու ուսանելը մի մեծ բան չէ, և դորանով դեռ ազգը չլուսաւորեցինք, եթէ հասանէինք ևս այդ նպատակին, բայց դա այն առաջին աստիճանն է լուսաւորութեան սանդուղքի, որի վերայ չկոխած, չէ կարելի հետևեալները կոխել։ Մեր ազգի մէջ ոչինչ չկայ, ամենայն բան հարկաւոր է նորից սկսանել. բայց թող չվհատվին փոքրոգի մարդիկ, թէ բան չլինելով, այժմէն իսկ կորած էին Հայերը, ո՛չ. նոքա կորած չեն, այլ միայն գտանվումեն մի այնպիսի չար ճանապարհի վերայ, որի վերջը կորուստ է։

Մարդկութիւնը մի խմորված վիճակի մէջ գտանվումէ ներկայումս, մարդկութեան մէջ երևումէ մեծ գործունէութիւն, մեծ շարժողութիւն. և այն ազգը, որ չկամէր ինքնուրոյնաբար շարժվիլ և գործ կատարել, կուլ կ'երթայ մի ուրիշ աւելի գործունեայ և խելացի ազգութեան. ասացինք, ով ականջ ունի, թող լսէ։

Մի կողմից քահանաներից պահանջելով ազգի



զաւակներին գրել կարդալ ուսուցանել, միւս կողմից անհրաժեշտ են ազգային օրինաւոր դպրոցների հիմնարկութիւնք։ Բայց այս րոպէիս, ինչպէս կարող են հիմնվիլ այդ դպրոցքը, մինչ ոչ արծաթագլուխ կայ և ոչ վարժապետք։ Այս ևս մի ահաւոր խնդիր է, որի լուծումը որքան դժուարին և անհնարին է երևում շատերին, դորա հակառակ մեզ շատ հեշտ։ Այս տեղ հարկաւոր է ազգի կամքը. եթէ սա չէ մեռել կամ չէ դադարել ներգործելուց, և արծաթը կը կանաչի և դաստիարակներ կ'երևեն։ Տարակոյս չկայ, որ այսպիսի դիպուածներում հարկաւոր են վճռական հնարներ. կիսակտուր հնարները ոչ թէ միայն չեն հասուցանում այս նպատակին, այլ մեծապէս վնասակար են և՛ նիւթական և՛ բարոյական կողմից [1]։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ — *Յիշատակարան*

---

(1) Այս տողեր զոր բարեյիշատակ Հեղինակը քսան տարի առաջ կը գրէր, նոյն ատենի ազգին բարոյական ամենավատթար վիճակին ճշգրիտ նկարագիրը կը ներկայէ. բայց դժբաղդաբար այս դիտողութիւնք կրնան տակաւին մասամբ մը արդարանալ . . . . . . . . :

## ՂԶ. ՄԱՅՐ ԵՒ ԴԱՅԵԱԿ

Զգիտեմ, աշխարհիս մեծատանց տիկիններուն այդ մի աղնուականութեան շնորհ ու նշան է, որ մայրական այդ մեծ ու առաջին պարտիքը՝ նուաստութիւն կը համարին. որպէս թէ ամօթ լինէր այն իրենց տիկնութեան և կամ թէ այնպէս կը դատեն թէ մանկան կաթ տալը՝ աղախնական պաշտօն է. և այդ ծառայութիւնը դիեցիկ դայեկներու համար է միայն:

Մարդկային ընկերութեան ընտանեկան կենաց մէջ եթէ անօրինակ զեղծումն մի կայ՝ այս է. եթէ զրկանք մի կայ՝ այս է. որով մայրերը բուն իրենց զաւակները կը հարստահարեն. եթէ բանաւոր մարդ՝ անբան անասնոց առաջ կը նուաստանայ ու կամաչէ՝ այս է: Վասն զի բնութեան իմաստուն Արարիչ ինչպէս մարդոյն՝ նոյնպէս բոլոր կենդանեաց համար գութը՝ հաւասար բաշխեր է:

Թող տեսնան մայրերը, որ առիւծն անտառին մէջ իւր կորիւն կը դարմանէ, կովն՝ իւր հորթիկ, մաքին՝ իւր գառնիկը, հաւ՝ իւր ճտերը, ճնճղուկ՝ իւր ձագերը. այլ եւս իրաւունք ունի՞ մայրն իւր կաթով չսնուցանել իւր զաւակը, որ իւր հոգւոյ հատորիկն է, կամ թէ չը դարմանել այն հարազատ ծաղիկը, որ իւր ծոցէն բուսած է, իւր արմատին ծիլն է. ինչպէս ձեռք է այն մօր ձեռք, որ կը քանցէ այն մատաղ ծիլն իւր բնաբոյս արմատէն և զայն օտար արմատին հիւթով սնուցանել կուզէ:

Դիեցիկ մանուկը կը բողոքէ այդ զրկանաց դէմ, միայն յայնժամ ներելի կը համարուի մօր համար,



երբ ինքն տկար, անառողջ է և կամ կաթին աղբիւրները ցամքած են: Բայց այս պատճառներէն չը կայ ուրիշ մի այլ զօրաւոր պատճառ, որ իրաւունք տայ ծնող մօր, իւր մանուկը ուրիշ մօր կաթով դիելու, որոյ անունը դայեակ կը կոչուի, և ես ճիշդ կը հասկնամ այդ բառին նշանակութիւնը, որ է կաթ վաճառող կին:

Դայեակն եւս անշուշտ նորածին զաւկի ծնող է. ո՛հ, մի տառապեալ մայր է նա. որ անհնարին կարօտութենէն ստիպեալ իւր մանկիկն մի ուրիշ մօր կը յանձնէ նուազ վարձքով, կերթայ կը դեգերի մեծատանց տուները, որպէս զի իւր կաթն աւելի գնով վաճառէ, որ իւր մանկան արդար իրաւունքն է, Ողորմելի որդեգուրկ կին պարտաւորեալ է իւր դայեկութեան վարձքէն՝ մի մասն վարձեալ կնոջ տալ, և մնացեալ մասովն՝ իւր ընտանեկան ապրուստ հոգալ: Ձեզ թողում, Հայոց ճշմարիտ մայրեր, դուք դատեցէք, այս երկու մայրերէն որն է աւելի յանցապարտ, կարօտագին դայեակն, որ առ չքաւորութեանն՝ իւր կաթը կը վաճառէ, թէ հարուստ տիկին, որ սնուցիչ կերակուրներէն լիանալով և յափրանալով՝ թաթաւուն զեղուն լցուած ստինքները աղբիւրի պէս կաթ կը հոսեն, և որ թէպէտ մայրական կոչումն ունի, այլ անխղճաբար կը խցէ այդ կաթնաբուխ ակները: Բարեպաշտ տիկին երկու զրկանք ի միասին կը գործէ. զրկանք մի իւր բնածին մանկան, զրկանք մի եւս դայեկին մանկան, որոյ բաժին կաթն դրամով կը գնէ: Ո՛հ, աղքատիկ մօր կաթն՝ իւր խեղճ տղեկին կեանքն է. արդեօք տիկին մայր՝ իւր մանկան կեանքը փրկելու վշտագին դայեկամօր մանկան կեանքը չի զոհեր: Այո՛, այսպէս աշխարհիս դատաստանը. երբ հզօրները զան-

ղօրներն կը ճմլեն, ղարմանք չէ, որ տխրոջ եախկ-նոջ մանուկը նոյնպէս խանձարուրէն սկսի յաղթուիլ ու ճնշիլ ծառայածին դայեկամօր մանուկը։

Աւա՜ղ, և ա՜հ, որչա՜փ անբնական, որչա՜փ անգթական, և որչա՜փ անարգ ու դժուարատար է դայեկին կեանքն ու վիճակը, որոյ մայրական սիրոյն և գորովոյն վերայ կը բռնանայ թշուառութիւնը, մինչև կստիպուի դժբաղդ կինը թողուլ իւր մայրական զութն, թողուլ իւր արգանդին ծնունդն և երթալ անասնոց կաթի պէս վաճառել իւր կաթն, որով թերևս կարենայ երկու կեանքը միանգամայն պահպանել։

Ո՛հ, բնական ու մայրական սիրոյն գործն է այն, որ հանապաղ կը մորմոքէ կը կրծէ ծնողական աղիքները, երբ կը տեսնայ օտար մանուկ իւր գիրկը, անդին երեւակայութեան մէջ կը յիշէ միշտ իւր մայրաղուրկ մանկիկը, որ աչքէն հեռացած է, մայրական կաթէն ու գրկէն զրկուած է։

Նա կենդանի մայր է, քար չէ, այնչափ կը վշտակրի ու կը դառնանայ սրտին ցաւոց մէջ, որոյ անհնարին դառնութեան չափը՝ միայն մօր սիրտ կարող է զգալ ու չափել։

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ *Գրական ընտանիք*

---

# 15. ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

Խորին տրտմութիւն և դառն վիշտը
Ճնշումէ անձս և մաշում հոգիս.
Արիւն է պատում իմ զգայուն սիրտը,
Տեսնելով թշուառ դրութիւնը ազգիս։
Ո՛վ իմ հայրենիք, խղճուկ Հայաստան,
Մինչև երբ արդեօք այդպէս պիտի մնաս,
Եւ երգիչներիցդ դու միշտ յաւիտեան
Միայն լաց և ողբ պիտի իմանաս։
Եւ դու ազգ Հայոց, պաշտած ինձանից,
Ե՞րբ այն երջանիկ կը գայ ժամանակ,
Որ և դու զարթես այդ քո խոր քընից,
Որ այսքան հարիւր տարիք շարունակ
Կապումէ աչքերդ, քեզանից ծածկում
Քո տկար մարմնի անթիւ վէրքերը,
Սուտ երազներով է փարագուրում
Նուաղած հոգուդ ծածուկ վշտերը։
Հերիք է, ա՜զգ իմ, հերիք է, զարթիր,
Թօթափիր քունը, աչքդ բաց և տես.
Նայիր չորս կողմդ, քո վերայ նայիր,
Ինչ էիր երբեմն և այժմ ինչ ես։
Կար ժամանակ երբ և դու ունէիր
Ազգերի շարքում անուն պատուական,
Հաւատով, ուսմամբ դու ծաղկումէիր.
Ունէիր քեզ գահ, թագ արքայական։
Բայց այդ ազգային պարծանքն ու փառքը
Դու գնահատել սակաւ իմացար,
Հայկից, Արամից քեզ տուած աշխարհքը
Օտարի ձեռքն եղել է աւար.
Կորուսել ես քո ազնիւ բնութիւնը,

Երկպառակութեամբ կեանքդ խանգարվել,
Եւ խաւար, մռայլ տխրութիւնը
Խելքիդ չորս կողմը ծանր քող ձգել:
Բայց քեզ չէ պիտոյ միշտ մնալ այդպէս,
Այդ թմրութեան մէջ, քեզ կորստաբեր.
Երկինքը նոր կեանք է վիճակել քեզ
Ապագայումը և պայծառ օրեր:
Այժմ փոխվել են հանգամանքները.
Ունիս դու բարի և հզօր պաշտպան.
Քանդիր տխրութեան թոյլ կապանքները,
Դիմեր դէպ ի լոյս ազատ, անխափան:

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ *Քնար Հայկական*

---

## 46. ՄԱՀԻ ՊԱՏԻԺԸ

Վերցունենք մահի պատիժը: Ամենէն մեծ ոճիրին օրինաւոր է ամենէն մեծ պատիժը տալ, կ'ասէք. լաւ. Նոյնչափ ուրեմն օրինաւոր է թէ մի աղքատ պարտական իբր գերի ծախենք և նորա գինը առնումք իբր վճար. հոս մի ազատութիւն է որ կը տուժուի, հոն մի կեանք է որ կը տուժուի, և ազատութիւնը կեանքին օրինաւոր վայելումն է. Նոյնչափ ուրեմն օրինաւոր է թէ կամայ վճարեմք նմա որ ակամայ վնասեց մեզ, և ծովը նետենք այն նաւապետը որոյ նաւին մէջէ մի քանի ուղեւորներ կորան ջրասոյզ՝ ալէկոծութիւնի ատեն. և ո՞ւր պիտի երթար այս լուսաւորեալ ընկերութիւնը. ինչ, հազիւ մի քայլ առաջած՝ հինգ հազար տարի ետ երթամք:

Վերցունեմք մահի պատիժը: Ամենէն մեծ պատիժը կը հռչակէր զայն և մարդկային վերջին կարո-



ղութիւնը. այլ քանի՜ ծաղրելի կ'անէք զայդ: Ձեր այս մեծագոյն պատուհանին վրայ կը խնտան դատապարտեալները, չ'էք յիշեր, կառափնատին սանդուղներին վրայ նստած՝ խաղաղ կը ծխէր կամ գարէջուր կը խմէր երբեմն նա որ միայն մի վայրկեան ունէր ապրելի, գինի կը տաք Դուօբմանին, որպէս զի անզգայ լինի արուեստական մահին. կը մերժէ նա ժպտելով, և սանդուղներէն վեր կ'ելնէ թեթևոտն: Թէ դատապարտեալը կը զղջայ, զինքն ի ձէնջ յառաջ կը դատապարտէ նա, և խիղճին դատապարտութիւնը ամէն ճախարակուած արարօղութիւն է հզօրագոյն է, թէ չ'է զղջար, նմա համար մահի պատիժը այնպէս է որպէս թէ չ'էր: Առաջինը իրաւունք ունի թողութիւնի. վերջինին համար տկար է կառափնատը:

Վերցունեմք մահի պատիժը: Թող Օրէնք սոսկում ցոյց տայ ոճրագործին իսկ կեանքը բառնալէ, արիւն թափելէ, և նորա դատը ժողովուրդին թող յանձնէ. հանրային կարծիքը այնպիսի մի հաւաքական ուժ ունի զոր չ'ունի երբէք այն մահական դանակը. հանրային կարծիքն է որ օրէնները կը հեղինակէ և կը վաւերացունէ. ուրեմն հեղինակին թողէք նոցա բարձրագոյն գործադրութիւնը: Երբ մի արիւնոտ յիշատակ ժողովրդային ատեանին յանձնէք, ամէն ձայն պիտի միանայ դատապարտելի համար զայն, և բիւր դատապարտութիւններ աւելի երջանիկ արդիւն կ'ընծայեն քան յանցաւորին միանգամ ընդ միշտ գլխատումը, որ կրնայ հանդիսականներին գութը շարժել: «Գութ» բառը լաւ նշանակեցէք:

Ահա մի երիտասարդ որ պիտի գլխատուի. առողջ է. դեռ շատ օրեր պիտի ապրէր. մի ընտանիք ունի. մի ընտանիք ալ պիտի կազմէր. կ'իջնէ ա-

ըինարբու դանակը, մի ճիչ, մի ձայն, մի մրմունջ կը բարձրանայ. Նորա խարտեաշ կամ սեւ խոպոպները կը ծածանին կենսախայտ արեւի մէջ. մի յետին շարժում, մի ջլաձիգ սարսուռ դէմքին վրայ, և ողբերգութիւնը վերջացաւ . . . . . : Նա, որ ոչինչ կը զգայ այս տեսիլին առջև, ըստ ինձ՝ աւելի ոճրագործ է քան այն ոճրագործը. իսկ որ զգայուն է, որ մարդ է, չը կրնար անտարբեր մնալ. կը զգայ մի սոսկում որ գութի կը դառնայ, մի գութ որ կարեկցութիւնի կը շրջի, մի կարեկցութիւն որ համակրութիւնի կը փոխուի :

Եւ այդ գութն է որ կը վարէ զմեզ յանցաւորին ոճիրը թեթեւցունելի ջանալ, Դռօբմանի եղեռը մեղմացունել և նորա յատկութիւններին խոշորացոյցով նայիլ, մահի պատիժին բարձումը ստանելի համար : Եւ թէ վերնայ օրինական սպանութիւնը, ամեն գըրիչ կը միանայ մարդասպանին դէմ, և կըսկսի կարմիր և սեւ գոյների տակ նկարագրել Բէնքէրի ջարդը, որպէս զի դուրս ցայտէ ոճիրին բոլոր պժգանքը :

Վերցունեմք մահի պատիժը : Իրականութիւն կը պահանջէք և ոչ վերացական փաստեր. չ'է բաւեր ձեզ ապացոյցը լսել, կ'ուզէք մանաւանդ շօշափել 'զայն : Լաւ : Ահա պատմութիւնը, մարդկութիւնին այդ կենսագրութիւնը, ձեզ դէմ կը դաշնակցի մեզ հետ : Քանի դար ետ երթաք քանի առաջէք հնութիւնին բաւիղին մէջ պատմութիւնին թելը բռնած, քանի հեռանաք այս վերածնութիւնի դարէն և Ծնունդների դարերին մօտիք, մի քայլ չը պիտի առնուք առանց մի փաստ գտնելի ձեզ դէմ : — Ձեր հզօրագոյն փաստն է թէ կառափնատին ահաւոր ներկայութիւնը ոճրագործներին թիւը կը պակսեցունէ : Մի ատեն կար, կը լսէք, մի ատեն 'զոր պատմիչնե-



րը « Միջին դար » կ'անուանեն. մի ատեն ուր աշխարհ մի խորհրդաւոր և զարմանալի առանցքի վըրայ կը դլորէր. մի ատեն ուր Կրօնը անգամ, ազգերի այն գթառատ ծնօղը, Մինոլացուլ դարձած էր. կառափնատ չը կար յայնժամ. ոճրագործը չ'ունէր դիւրով գլխատուելի շնորհը. խաւար և խոնաւ բանտի մէջ կը դնէին 'զայն, գելարանի վրայ կը պառկեցունէին 'զայն մերկանդամ, Նորա ձեռքերը և ոտքերը կը պրկէին, երկու դահիճ արջառի ջիլերով կը ծեծէին նորա մարմինը մինչև որ բոլորովին ծածկուէր թուխ կապոյտ գիծերով. և դեռ ինչ քըստմընելի տանջանքներ գիտէին, որոյ հազիւ մի փոքրիկ մասը կը յիշէ Պ. Լէոնաւ Կալլուա. յետոյ, կիսամեռը կացինով կը ջարդէին, կամ չուանով կը խեղդէին, կամ ոտքին մի քար կապած՝ ջուրը կը նետէին. Ադրիական խոհուն կոհակը և Բիւզանդեան երաղօղ ալիքը ինչ մութ վէպեր կը յիշեն և իրարի կը փըսփըսան արդեօք . . . . . : Եւ սակայն, այն տըգէտ դարերին մէջ, ուր այնքան ահաւելի ստորոգելիներ ունի մահի պատիժը, մարդասպանները ամեն տեղ կը վխտային, մինչ այսօր հազուագիւտ են նոքա համեմատապէս : Ուրեմն կառափնատին ներկայութիւնը չ'է որ կը պակսեցնէ յանցաւորները, վարժարանին ներկայութիւնն է, և արդէն ինքնին հետզհետէ անօգուտ լինիլ կը սկսի նա :

Թէ միջին դարի վայրի տանջանքներին առջև մարդասպաններին թիւը աճեցաւ և նոր դարի թեթև տանջանքներին առջև շատ զգալի կերպով նուազեցաւ, իրերին բնական տրամաբանութիւնէն կը հետեւի թէ աւելի եւս պիտի նուազի երբ տապարը վերնայ բոլորովին : Եւ արդարև ամենաստոյգ հա-

չինէր կը ցուցնեն այսօր թէ ոճիրները մեծ մասով վերցած են այն երջանիկ աշխարհներէն որոց մէջ մահի պատիժը ջնջուած է ։ Այս վիճակագրական ճշմարտութիւնին ոչ թէ ուշդնէր կրակոտ Ֆռանսացին, և կառափնատին կարմիր մահիկները խորտակէր իր յեղափոխիչ բազուկովը. Ֆռանսայի, քաղաքակրթութիւնին այն յանդուգն առաջապահին կը սպասէ Եւրոպա. ամօթ Գաղղիական ազատասիրութիւնին՝ թէ տակաւին այսուհետև գուրգուրայ դահիճին վրայ ։ Կառափնատը քաղաքակրթութիւնին խրտուիլակն է. բաւ է որ նա վայրենի աշխարհների մէջ իր բոյնը ունի ։ Մինչև երբ տասիներորդ դարին արեւը մեր վայրագութիւնին կոթողին վրայ պաղ ճաճանչներ սահեցունէ և հին բարբարոսութիւնին յիշատակարանը, միջին դարին մի արիւնոտ բեկորը շառագնիլով լուսաւորէ ։

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ — *Գրական փորձեր* (1)

(1) Մենք համամիտ չենք Պ. Չերազի իր ընտրողական լեզուի մասին, սակայն կը կրկնենք երիտասարդ հեղինակին հետ թէ պէտք է ընդունիլ աշխարհաբարը իբր ժողովրդեան լեզու եւ տալ նմա մի ուղղութիւն. այս է մեր ինչպէս նաեւ ամեն ազգասէր սրտերու փափաքը ։ Արդարեւ Պ. Չերազ լեզուի վերանորոգման խնդրոյն վրայ գրագիտաց ուշը դարձուց իր այս գործովը որ լի է իմաստալից եւ գեղեցիկ երկասիրութեամբք եւ քերթուածներով ։

# ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

## ՀԱՏԸՆՏԻՐՔ

## ԿՐՕՆԱԿԱՆՔ

### Գ. ՏԻՐԱՄԱՅՐՆ ԱՌ ԽԱՉԻՆ

Դըպիրք, բանաւորք, աւետիս ձեզի,
Վերջապէս Արդարն այսօր կը մեռնի.
Սրբազան ժպտով դիմակեալ վագրեր,
Զյոյս ժողովրդոց ծածկեց ձեր ըստուեր.
Ի խաչ է նա . . . ձեզ են փառք ու պահակք . . .
Բայց անդորր է . . . դուք ինչու կը դողաք ։

Ինքըն Պիղատոս ի սրահս արքունեաց
Ի խումբ խնդակից քահանայապետաց,
Ըզգնայ քմծիծաղ, այլ մերթ կանգ կ'առնու . . .
Ցեակոյս սեանց տեսնէ ըստուեր մ'ահարկու,
Զոր մահատիպ դէմս յերանգ բոցաներկ
Կը լուսաւորեն ջահալոյց լապտերք ։
Ահիւ դարձընէ աչերն 'ի ձեռս իւր . . ։
Ճապաղ չիթ մ'արեան դրոշմած կար 'ի սփիւռ . . .
Մեկուսի յանկեան՝ 'ի խունկս և 'ի ջուր
Ճգնի նա լուանալ ձեռքերն . . . այլ 'ի զուր . . . ։

Իսկ հոն՝ Գողգոթայ բըլրոյն յարտեւան՝
Աստուած մը, որդի մը, և մայր իւր կուսան,
Որդին խաչ գամուած, Մայրն 'ի վէրս որդւոյն՝
Անպատում ցաւօք յիրար կը պնդուն ։

Մայրըն գետնաքարշ՝ վարսք 'ի յուս ինկած՝
Ցամաք կիպարին (1) դրկէ ձեռնամած.
Այն կարեկիր սիրտ մը խնդրող աչքեր
Չորս դին տեսնեն լոկ ապառում (2) զօրքեր . . . :

Կըքերէ յուղուած ամբոխներու ծով
Փշրեց յայդ մերկ ժայռ որդի մ'իր մօր քով.
Եւ հիմայ 'ն ծովուն նահանջող ալիք
Հեռուստ կոծելով գոռան կատաղիք :
Իր որդւոյն ամէն նայուածք ու լլկանք
Սրտին մէջ գտնեն երկար արձագանգ :
Այն ամենակոյս մարմինն ու հոգեակ ,
Այն երկնից վարդիւք հիւսուած կերպարանք ,
Այն վարսք ոլորուն՝ Նըշոյլք արփենի
Հողմածուփ ցրուեալ զուսովք վարդածղի ,
Եւ այն մանաւանդ երկնագոյն աչկունք
Ուր կան նըկարուած այնչափ դառնութիւնք ,
Եւ այն հրդեհեալ ցաւոց հառաչանք
Զոր քաղեն սրտէն ղուկին չարչարանք ,
Այն անմեղութեան տագնապն անհնարին ,
Յարտասուս շարժեն զերկիր և զերկին :

Բայց կամաց կամաց Յիսուս կիսամահ
Ծըռէ գլուխ , ցնդի հոգին 'ի մի ահ :
Մայրն 'ի վեր վազէ սիրտ 'ի թունդ . . . տրոփմամբ
Շօշափէ ոտքերն ձեռօք և շրթամբք . . . . :
Անգութ կասկածով հոգին կարեվէր
Չի համարձակիր նայիլ դէպ 'ի վեր .
Դողալով դընէ զունկն 'ի խաչափայտ
Զաւ և տուր շընչոյն լըսելու ընդ հատ :
Ահեղ՝ սեւ լռութիւն իրեն կը գուժէ ,

(1) Կիպարի . Նոճի ։ (2) Անզգամ , անամօթ .



Թէ՝ մայր տարաբաղդ ալ անորդի է .
Կըթոտեալ կըքին ծընկերն , և բերնէն
Իւր ողբոց ուղխերն այսպէս կը վազեն . . . :

« Ա՜հ , զիս ալ , զիս ալ , ո՛վ մահ աննըւէր ,
Ինչո՞ւ որդւոյս հետ մէկտեղ չես հընձեր . . .
Որ գոնէ շիրմին մէջ ալ անոր քով
'Ի մութ լռութեան որրեմ հսկելով :

« Ո՛վ իմ կուսութեանս երկնատունկ ծաղիկ ,
Մօր մը յոյս , կուսի մը տեսիլ գողտրիկ ,
Ա՜հ , սիրտս ու հոգեակ՝ Որդիս և Աստուած ,
Պիտի տեսնէ՞ի զքեզ 'ի խաչ գամուած . . . :

« Գրկացս յորորան երբ կը ժպտէիր ,
Երբ ըստինք 'ի շուրթն ինձ կը նայէիր ,
Պայծառ աչքերուդ մէջ՝ իբրև յերկին՝
Անձկաբեկ նայուածքըս կ'ընկըղմէին . . . :

« Եւ կ'երազէի ըզքեզ Թագաւոր
Ի պատերազմի յաղթական հըզօր ,
Փառօք լուսարձակ իմ ծոցըս դիմել ,
Եւ համբոյրներովս ըզքեզ պըսակել . . . :

« Կամ դալարագեղ յանծանօթ հովիտ
Զուգարնակ ապրիլ 'ի բոյն ոստախիտ ,
Եւ քեզի համար հոգնիմ ու հոգամ
Եւ 'ի կազդուրել մէյ մ'ըզքեզ տեսնամ . . . :

« Գըթութիւն . . . : Այսչափ ցաւոց ժոյժ չունիմ . . .
Խաչափայտն ես դու , և 'ի ճակատն իմ
Շիթ շիթ կաթկաթէ ճապաղեալ արիւն
Անթիւ վէրքերէդ , որդեակ իմ սիրուն . . . :

« Գըթութիւն . . . : Գլուխդ ծըռեր է խոնջեալ
Եւ չիկրնար մայրդ քեզ նեցուկ ըլլալ
Չիկրնար խըզել այդ գամերն , ու գէթ
Իր արցունքներով սըբել քու վէրքերդ :

« Չիկրնար ըզքեզ խաչէն վար առած
Եւ ամփոփելով 'ի ծոցն 'ի հերաց'
Դիմել 'ի լերինս յանտառս ամայի
Ըզքեզ ողբելով գըրկացն 'ի չիրմի . . . :

« Սասանին տարերք . . . ա՜հ , ի՞նչ փոյթ է մօր'
Որ յաւէր դառնան տիեզերք բոլոր . . .
Նըշոյլ մը միայն կուզեմ արեւէն'
Որ կարօտ աչերս զաւակըս տեսնեն . . . :

« Հիմայ իմ աշխարհս' Աստուած ու ամեն յոյս
Ամփոփուած կան , վա՜հ , յայդ աչկունս անլոյս . . .
Յայդ գալկահար այտ ու արիւնոտ ծոցի
Որուն մէջ հոգիս անձկոտ թափառի . . . » :

Եւ հոն ինկաւ Մայրն 'ի կոչկոռս վիմաց
Երկնափթիթ ծաղիկ թառմեալ 'ի վըշտաց . . .
Քովէն գըւարթունք թեւաքօղ' տրտում
Անոր նայէին աչօք ցօղաթուրմ :

Յանկարծ կուսական մտացն յանդիման
Փայլին յընդհանուրս շողք երկնահասան .
Բուրմունք քաղցրախորժ , օդային նըւագք
Քիչ մը կը բուժեն զայն խոցուած հոգեակ .
Անոնց մէջ ըփռեալ ճաճանչս արփենի
Աստուածապատկեր մատչի պատանի .
Սարսռելով դողայ Մայրն ու գետնաքարշ
Կը ճանչնայ զորդին , զըրկէ աղէխարշ .



Եւ իրեն սրտին անթարգման յուզմունք
Փոխուին յանյօդ ձայնս' 'ի քըրքիջս' յարցունք :

« Մայր , — կ'ըսէ Յիսուս' պագնելով ըզնա , —
Ինչո՞ւ լաս անշունչ մարմնոյ մը վըրայ .
Թէ մահ անջատէ զմեզ , այլ մեր հոգին'
Երկու եզերքէն դարձեալ կ'ընդգրկին :
Ես կենաց բաժակըն մինչ 'ի մըրուր
Խըմեցի փըրկել զաշխարհ ընդհանուր .
Բայց դու մի լար , Մայր , զի բաժակն է լի
Եւ մէկ արցունքովդ ալ կը զեղանի . . .
Ո՜հ , զըսպէ ցաւերդ ու երկինք նայէ . . .
Հոն անմահութիւն մեզի կըսպասէ » :

Մայրըն խելացնոր կը սթափի . . . չորս դին
Գայր թեւատարած գիշեր մըթագին .
Դալկահար լուսնի առկայծեալըն ջահ
Ծաւալէ 'նդ հանուրս ըզհրատ կիսանուաղ .
Եւ Յորդանանու ալիք դառնակոծ
Շամբերուն տակէն սողոսկին իբր օձ . . .
Եւ մայրըն դառնայր 'ի տուն մենաւոր
Խաչին տակ թողած ըզսիրտ վիրաւոր .
Եւ անուշ անմեղ վըշտահար հոգին
Գնայր գըլխիկոր յանընկեր ուղին ,
Երբեմն յիշելով կենայր ակամայ
Դարձընէր նայուածքն 'ի բլուր Գողգոթայ . . . :

Թ. ԹԵՐԶԵԱՆ (1) *Բազմավէպ*

---

(1) Թովմաս Թերզեան, Հայ գրագիտաց մէջ նշանաւոր տեղ մը կը բռնէ այսօր : Մեր հանճարեղ բանաստեղծը Մուրատ-Ռափայէլեան վարժարանի այն հին աշակերտներէն է , որոնք Պօլ-

## Զ. ՔԱՀԱՆԱՅ

Այն ով է կանգնած ամբիոնի վրայ,
  Դողդոջուն ձեռքերն երկին ամբարձած,
Գըթառատ աչերն լի արտասուքով,
  Բազմութեան ուշկը դէպի նա դարձած
Որին ամենը ՀԱՅՐ են անուանում,
  Ծանօթ, անծանօթ՝ հաւասար յարգում
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
  Սրտի գաղտնիքը նորան են յայտնում։

Քահանայ է նա, քաւող մեղքերու,
  Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
Հովիւ է անխոնջ Քրիստոսի հօտին,
  Երկնածիր գանձին նա է արթուն դէտ։
Երբ մենք թաթախուած Ադամայ մեղօք
  Եկանք այս աշխարհ լըցեալ ցաւերով.
Ո՞վ սրբեց մաքրեց մեր հին մեղքերը,
  Ո՞վ մեզ սփոփեց իւր սուրբ խօսքերով.

Կամ երբ ժանտախտած, ընկած մահճումը՝
  Մըտատանջ, անյոյս մահ էինք խնդրում,
Պանդխտի նըման ամենից թողած՝
  Ո՞վ մեզ առաջին հասաւ օգնութիւն.
Կամ՝ երբ մոլորուած գառներու նըման,
  Կոյր վազում էինք դէպի խորխորատ՝
Ո՞վ արդեօք այն օր փրկեց մեզ մահից,
  Դիւական գըբէն հանեց անարատ.
Կամ երբ մեղսալիր աչքերըս բընաւ
  Չենք համարձակում երկինք ամբառնալ՝
Որին կանչում ենք միջնորդ հաշտութեան,
  Ումով յոյս ունինք թողութիւն ստանալ.
Եւ կամ՝ ըղձաղած ունայն գործերով,
  Մոռցել են Աստուած, Կըրօն, սուրբ Հաւատ,
Ո՞վ է մեր տեղը մեր մեղաց համար
  Արտասունք թափում աչքէն յորդառատ։

Քահանան է այն և միշտ քահանան,
  Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ,
Որբոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,
  Արտասուաց սրբող, յանցանաց քաւիչ։
Ե՛կ պատուենք, եղբա՛րք, այդ սուրբ քահանան,
  Սիրենք միշտ նորան մանկական սիրով,
Որ ամբողջ գիշեր իւր որդւոց վերայ
  Պատրաստ է հըսկել անքուն աչքերով.
Նա բոլոր կեանքը զոհեց մեզ համար,
  Զ՚ուզեց փառք, պատիւ, ըղձսանք աշխարհիս.
Քանց սուրբ քահանան էլ ով է կարող
  Արդեօք մեզ համար լինել հայր բարի։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ — *Քնար Հայկական*

---

սոյ մէջ երկար տարիներ դաստիարակութեան պաշտօն վարելով նոր սերունդը պատրաստեցին, եւ մասամբ մը Ազգը այսօր ունեցած քիչ շատ լուսաւորութիւնը նոյա կը պարտի․

Անթիւ են իր քերթուածները, որոց մէջ կրնայ արժանապէս յիշուիլ [illegible] ու Խ[illegible], Վ[illegible] Օ[illegible], Ք[illegible] [illegible] եւ ուրիշ մանր մունր գրուածքներ։ Իւր գլուխ գործոցն է Հ[illegible] Ի—Ա[illegible]՝ մի գողտրիկ քնարական վէպ․

Ողբերգութեան մէջ իրեն հաւասարող չկայ․ իւր Արշակ Բ.ը որոյ վէպ՝ ինքն, իսկ եղանակը անուանին Չուխաճեան յօրինեց, գեղեցկագիւս Թատերանուագ մ՚է։ Մ[illegible] Ա[illegible], Մ[illegible], Խ[illegible] Բ. ը մանաւանդ Ս[illegible]ը Հայկական Թատրոնը վերակենդանացուցին. բայց ցաւալի է որ իւր քերթուածներէն խիստ մեծ մասը տակաւին անտիպ կը մնայ․

# Յ. ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՆԱՀԱՏԱԿՆ
# Ի ՀՌՈՎՄ

## Ա.

Խուռն ամբոխ՝ նըման կատաղի ալեաց
Զոր յարուցանեն մըրրիկք 'ի ծովու՝
Կապիտոլինէն 'ի Կոլոսէոն
Դիմեն՝ փոթորկեալք կըրիւք ահարկու :
Է՞ր այդ Բրուտոսի թոռունք ըշտապեն ,
Միթէ բեմ ելած տրիբունն անվըկանդ
Կարտիլինայի մ'ի ճակատ ըմբոստ
Արձակէ պիտի զազատութեան չանդ :
Թէ սանձահարեալ երկրիս մէկ կողմէն
Ապստամբ սուսերք շողացին յեթեր
Եւ Հռովմէական անհեղ լէգէոնք
Արշաւեն պիտի քաղել դափնիներ :
Ոչ · այդ ձեռք անզէն են . — չառաջնորդեր
Փառք այդ վաշտերուն . — մարեր է անմահ
Սէր Ազատութեան : — Ատոնք կը դիմեն
Տեսնել անպաշտպան Քրիստոնեայ մ'ի մահ :
Կանգուն կայ վեհաղն 'ի գունդ Պրետորեանց՝
Վայրագ ամբոխին մէջ այնչափ հանդարտ
Որ չես գիտեր ինքն է դատող թէ նոքա .
Ի՞նքն է թէ նոքա 'ի մահ դատապարտ :
Ձեռք երերահիւս 'ի կուրծըս՝ դիտէ
Զիւր նորածաղիկ կին՝ սեւեր հագած
Որ հեռուանց տրտում իրեն կը նայի
Արիւն արտասուօք աչկունքըն լըցուած :
Եւ հարկ է — հէգ կին — արցունքն իսկ ծածկէ ,



Զի ամբոխն անգութ չորս կողմն է պատեր ,
Ու աւելի անգութ երկու զաւակունք
Հօրերնուն վրայով կընեն հարցմունքներ ,
Այլ ո՞ւր է հայր իւր կամ եղբարք : — Թերեւս
Իրենց արիւնն ալ ներկեց ըզնոյն հող .
Թերեւս իրեն մայրն արդ 'ի գետնափոր
Զաւկին դառնալուն մընայ սիրտ 'ի դող :
Քանի մը զինուորք չանդարձակ դնդին
Դէմք արեւակէզ և սուսերահար
Իրեն կը նային և արցունք վազեն
Այն պղնձակուռ երեսներն 'ի վար :
Այլ փողը գոչաց և ինչ մըրկայոյզ
Արձագանգ տուին գագաթքն և ամբոխ .
Իսկ զինուորն երկնից կայսեր մատչելով
Այսպէս կը խօսի դիմօք անփոփոխ ,
« Կեսար՝ Օգոստոս դու հրամանատար
Ում հընազանդին տիեզերք համայն
Եւ Հռովմ՝ լուր դու ինձ . զի անկեղծ է մարդ
Որ խօսի մէկ ոտք դըրած 'ի դամբան :
« Քեզմէ խնդրելիք մը չունիմ բընաւ .
Դու աշխարհ ունիս՝ դո՞յզն երազ . — իսկ ես
Խաչն ունիմ՝ միա՛կ ճշմարիտ բարիք .
Ես ներել ուսայ՝ դու տանջել գիտես :
« Այլ կը բողոքեմ դարերու դիմաց
Իբրեւ քրիստոնեայ և հռովմայեցի
Քու բռնութեան դէմ : — Հրեշտակ մ'իմ արեամբ
Մատունքըն թաթխած գրէ 'ի քո ճակտի :
« Հիմայ զարկ . այդ քո ցասման փայլակունք
Աստուածներդ միայն յաճիւն կը փոխեն ,
Եւ ճշմարտութիւնն ազատութեան հետ
Յաղթող դուրս կ'ելլեն այդ գետնափորէն :
« Կը կործանի հին աշխարհ , և փլատակք

Ահա ճմլեն զիս . — դուրս կ'արձանանան
Անմահ իրաւունք : Անոնց է պահուած
Բոլոր հանդերձեալն , իսկ դու մէկ օրուան :
« Քեզ համար քանիցս առ եղբարք Սփռէայ
Թափեցի արիւնս 'ի մարտի՝ գիտես :
Մընացորդն յոժար կ'ընծայեմ երկնից
Բայց պէտք էր դու ինքն հեղուս զայն այսպէս :
« Անտրտունջ կ'երթամ արդ 'ի մահ՝ կեսար .
Թէպէտ գէթ անգամ մ'այս սիրտ կարօտցած
Ջերմ համբոյրներով օրհնել կ'երազէր
Եւ գրկել տըղաքս ու կինս անձկայրեաց :
« Թէպէտ կ'ուզէի մայրս . . . ո՛հ սիրտ լըռէ . . .
Վերջին խնդրուածքս յերկնից լոկ այս են
Որ ինձ ոյժ շնորհէ՝ որդւոցըս զթութիւն՝
Քեզի՝ կեսար՝ լոյս , և ներումն յինէն :
Ողջամբ մընացէք՝ եղբարք իմ . յերկինս
Պիտի տեսնուինք դարձեալ յաւիտեան .
Դո՛ւ՝ միայն Աստուած՝ քաւէ նահատակդ .
Ցահեղ պատերազմս այս զօրացուր զայն . . . »

Բ.

Իբրեւ ժայռ 'ի ծով չորս դին մըրկակոծ՝
Կանգնի նահատակն անվեհեր և լուրջ ,
Եւ անկարեկիր կամ ատեցող աչք
Կը տեսնէ միայն վըրան յառեալ չուրջ :
Կը խորհի թերեւս թէ ինչո՞ւ են այդ
Վայրագ խնդութիւնն և ատելութիւն .
Ինքն՝ երկնիւք լցուած հոգին՝ չըմբռներ
Հիմ սէր խնդրողին աշխարհ կուտայ թոյն :
Սակայն հերարձակ կը մատչի արդէն
Լիբիոյ աւազոց թագաւորն ահեղ .



Վայրենի գազանն ոստնըլով մռնչմամբ
Կը մըխէ զճիրանսն 'ի սիրտն այն անմեղ :
Վիրաւոր դիւցազնըն մեռելադէմ
Ձեռքն յերկաթի խաչ տանելով կուրծքին
Կ'իյնայ . — շըրթունք իւր բառեր կը յօդեն .
Ծափ 'ի ծափ զարնէ ամբոխ մոլեգին :
Իսկ առիւծն ըզբաշ ցանած դետնափիւռ
Մըմռալով դառնայ ետ ետ զլխիկոր .
Թաթքն իւր վիթխարի դրօշմեն յաւազ անդ
Արեան ճապաղեաց նըշանս ահաւոր :

Գ.

Գիշեր էր՝ երբ կին մ'երկու տղայոց —
Դեռ նորաբողբոջ — ձեռքէն բռնելով
Եւ գանգուր մազերն ամփոփած՝ կ'անցնի
Քարէ արքունեաց շար 'ի շար սեանց քով :
Անձուկ փողոցներ շըջելով հասաւ
Ի կրկէս՝ ուր դուռն էր բաց իբր որկոր
Գերեզմաններու : Պաղ քիրտն ողողեց
Իր դէմքը . — մըտաւ նա հոն զլխիկոր :
Դիականց 'ի կոյտ մէկը կը բնտռէ .
Բայց մութն անոնց վրայ սփռած է զիւր քօղ :
Ցեղակարծ մէկուն շօշափեց 'ի լանջ
Երկաթաձոյլ խաչ մ'ու սիրտն առաւ դող :
Իր նշանտուքին խաչն էր . ու անոր պէս
Ուրիշ մ'այլ փայլէր իւր ծոցին վըրայ :
Սըբեց արիւններն իրեն մազերով :
Տըղաք ծնրադիր պագնէին ըզնա :
Մունջ կայր երկնաւոր այն գեղեցկուհին .
Ցեց յորդիս իւր՝ յուս չալկած ըզդիակ՝
Կ'երթար դէպ յանտառ մ'ի գերեզմաննոց .

Յերկնից զարմանօք նայէին հրեշտակք ։
Հասնելով հանգոյց անուշ բեռն 'ի հող ։
Նոյնժամայն ծառոց եռեւէն լուսին
Կ'ելնէր . — իր մէկ շողն իբր աղօտ ժըպիտ
Կաթեց 'ի տժգոյն դէմս նահատակին ։
Անձայն իջուցին 'ի փոս . ա՛լ անժոյժ
Տըղաքն սկսան արտասուել . իսկ նա
Դողդոջուն շըթամբք պագնելով երեսն ,
« Ա՛լ հանգիր՝ ըսաւ՝ և ողջամբ մընա .
« Այդ դալարեաց տակ հանգիր՝ իմ հոգիս .
Ո՛ւր ըլլաս՝ սրտիս մէջն ես . Ողջամբ մնա .
Այս խաչը շիրմիդ վըրայ հսկէ թող
Կրկին տեսութեան սուրբ առհաւատչեայ » ։
Եւ զաւակներուն աչքեր սրբելով .
« Ոհ տարապայման մի՛ տրտմիք՝ ըսաւ .
Այսպէս Քրիստոնեայն ահա կը մեռնի .
Ա՛յսպէս՝ որդեակք իմ՝ ձեր հայրն ալ մեռաւ » ։
Ինքը դալկահար , տըղայք անմըռունչ
Դառնային յօթեակն իւրեանց գետնափոր ։ —
Շողայր հորիզոնն Հռոմայ լուսերով
Գինէրբուաց 'ի շուինդն որոտայր բոլոր ։

Թ. ԹԵՐԶԵԱՆ *Անտիպ գործեր*

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Յառաջաբան . . . . . . . . . . . . .

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ՀԱՏԸՆՏԻՐՔ
### ՊԱՏՄԱԿԱՆՔ — ԴԻՒՑԱԶՆԵՐԳԱԿԱՆՔ

1. *Հայկ* (Խորէն Նարպէյ) . . . . . . . . . . 1
2. *Հայ Քաջորդի* (Պէշիքթաշլեան) . . . . 5
3. *Մահ Քաջորդւոյն* ( » ) . . . . . 7
4. *Թաղումն* » ( » ) . . . . . 9
5. *Հայ Քաջուհին* ( » ) . . . . . 10
6. *Տաճատ* (Թ. Թերզեան) . . . . . . . . . . 13
7. *Արայ գեղեցիկ և Նուվարդ* (Նար-պէյ) . . . 15
8. *Տ. Ներսէս Կաթողիկոս* (Մ. Մամուրեան) . . 25
9. *Մահ Թէոդորի Ռշտունւոյ* (Վ. Ալիշան) . . 28
10. *Շուշանն Շաւարշանայ* (Հ. Ղ. Ալիշան) . . 31
11. *Վարդանակերտի յաղթութիւնը* ( » ) . . 40
12. *Մկրտիչ Պէշիկթաշլեան* (Յ. Շիշմանեան) . . 43
13. *Բագրեւանդայ կոխն* (Հ. Ղ. Ալիշան) . . . 47
14. *Մահ Պէշիկթաշլեանի* (Տ. Սրբուհի Երեցեան) 58
15. *Պատերազմ Վարդանանց* (Մ. Գուրեան) . . 63
16. *Քաջ Վարդանի մահը* (Քամառ Քաթիպա) . . 72
17. *Պլպուլն Աւարայրի* (Հ. Ղ. Ալիշան) . . . . 93

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

### ՀԱՏԸՆՏԻՐՔ
### ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ — ՔՆԱՐԵՐԳԱԿԱՆՔ

1. *Հայոց Աշխարհիկ* (Հ. Ղ. Ալիշան) . . . . . 116
2. *Գարուն* (Պէշիկթաշլեան) . . . . . . . . . 124
3. *Վերջին գարուն* (Քամառ Քաթիպա) . . . 125
4. *Զեփիւռ* (Մ. Չերազ) . . . . . . . . . . . 126
5. *Գիշեր* (Ս. Շահազիզեանց) . . . . . . . . 128
6. *Լուսին* (Ռ. Պէրպէրեան) . . . . . . . . . »
7. *Լճակ* (Պ. Դուրեան) . . . . . . . . . . . 131
8. *Մշեցի Հայը* (Գ. Վ. Սրուանձտեանց) . . . . 133
9. *Սասնցոց յուղարկաւորութիւնը*
(Յ. Վ. Մուրատեան) 135
10. *Պատերազմի դաշտը* (Ռ. Պէրպէրեան) . . . 137
11. *Մշեցի Հայոց Նոր տարին* (Գ. Վ. Սրուանձտեանց) 138
12. *Իմ սոխակին* (Քամառ Քաթիպա) . . . . . 142
13. *Սոլ* (Ռ. Պէրպէրեան) . . . . . . . . . . 143
14. *Նկարիչ* (Քամառ Քաթիպա) . . . . . . . 144
15. *Եղիշէ* (Ռ. Պատկանեան) . . . . . . . . . 146
16. *Վանայ մէջ առաւօտ* (Գ. Վ. Սրուանձտեանց) 148
17. *Լուսնկայն գերեզմանցն. Հայոց* (Հ. Ղ. Ալիշան) 149
18. *Նոր տարի* (Ռ. Պատկանեան) . . . . . . . 159
19. *Վանեցի կորիճ* (Քամառ Քաթիպա) . . . . 160
20. *Հայաստանցի Պանդուխտը* (Մ. Նալբանդեանց) 161
21. *Բաղաբերդի Բարայրը* (Մ. Մամուրեան) . . 163
22. *Մշոյ դաշտը* (Գ. Վ. Սրուանձտեանց) . . . 165
23. *Վիպասան* (Գ. Օտեան) . . . . . . . . . . 167
24. *Հրդեհ* (Ռ. Պէրպէրեան) . . . . . . . . . 169



25. *Արաքսի ափանց վրայ* (Քաջբերունի) . . . 170
26. *Ճեմք 'ի Բ****** (Յ. Սեթեան) . . . . . . . 172
27. *Հառաչանք Տարագրելոյ* (Թ. Թերզեան) . . 176
28. *Արաքսի արտասուքը* (Ռ. Տ. Գ. Պատկանեան) 177
29. *Հիւծեալ աղջիկը* (Թ. Թերզեան) . . . . . 181
30. *Երաժշտութիւն* (Ռ. Պէրպէրեան) . . . . . 185
31. *Վաղամեռիկ օրիորդն* (Թ. Թերզեան) . . . . 186
32. *Երգ պանդուխտ պատանեկի* (Պ. Դողոխեան) 189
33. *Մահ օրիորդ Պէադրիսի* (Ռ. Պէրպէրեան) 191
34. *Մուսայ* (Թ. Թերզեան) . . . . . . . . . . 194
35. *Իմ երգը* (Ռ. Տ. Պատկանեան) . . . . . . 200
36. *Իմ կեանքը* (Թ. Թերզեան) . . . . . . . . 201
37. *Իմ մահը* (Պ. Դուրեան) . . . . . . . . . 202
38. *Վշտահար ամուսինն* (Թ. Թերզեան) . . . . 203
39. *Մահ Յակոբ Պալեանի* ( » ) . . . . 208

---

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

### ՀԱՏԸՆՏԻՐՔ
### ԲԱՐՈՅԱԿԱՆՔ — ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՔ

1. *Եղբայր եմք մեք* (Մ. Պէշիքթաշլեան) . . . 213
2. *Միութիւն* (Խորէն Նար-պէյ) . . . . . . 214
3. *Հայ ապրինք* ( » » ) . . . . . . . 217
4. *Հայուն բաղդը* (Ս. Ֆէլէկեան) . . . . . . 219
5. *Ազատութիւն* (Մ. Նալբանդեանց) . . . . . 220
6. *Հայոց աշխարհիկ* (Հ. Ղ. Ալիշան) . . . . . 222
7. *Իղձք առ Հայաստան* (Պ. Դուրեան) . . . . 226
8. *Հայրենիք* (Ռ. Պէրպէրեան) . . . . . . . 227
9. *Հայրենեաց կարօտ* (Խ. Աբովեան) . . . . . 231

**10**. *Հայրենիք* (Հ. Ղ. Ալիշան) . . . . . . . . . 234
**11**. *Սուգ* (Մ. Աճէմեան) . . . . . . . . . . . . 242
**12**. *Ինքնաշխատ յառաջադիմութիւն* (Խ. Հայրիկ) 244
**13**. *Ազգին վիճակը* (Մ. Նալբանդեանց) . . . . 248
**14**. *Մայր և Դայեակ* (Խրիմեան Հայրիկ) . . . . 262
**15**. *Մտածութիւնք* (Գ. Բարխուդարեանց) . . . 265
**16**. *Մահի պատիժը* (Մ. Ջերազ) . . . . . . . . 266

## ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

### ՀԱՏԸՆՏԻՐՔ. ԿՐՕՆԱԿԱՆՔ

**1**. *Տիրամայրն առ Խաչին* (Թովմաս Թերզեան) 271
**2**. *Քահանայն* (Քամառ-Քաթիպա) . . . . . . 276
**3**. *Քրիստոնեայ նահատակն* (Թովմաս Թերզեան) 278

## Ա. ՓԻՓՔՈՒՃԵԱՆԻ

### ԳՈՐԾԵՐԸ


| | Ղրշ. | Փրյ. |
| --- | --- | --- |
| Գործնական Քերականութիւն . . Լըքչէրի ոճով . . . . . . . | 4 | 20 |
| Ճաշակ Հայ Մատենագրութեան . Ծաղկաքաղ . . . . . . . | 10 | |